

Լ.Հ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՐԱՐԱՆԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԻ
«ՎԿԱՅՔ ԱՐԵՒԵԼԻԾԸ»



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ ИМ. М. АБЕГЯНА

Л. А. ТЕР-ПЕТРОСЯН

„ВОСТОЧНЫЕ МУЧЕНИКИ“
АВРААМА ИСПОВЕДНИКА
(ТЕКСТОЛОГИЧЕСКОЕ ИССЛЕДОВАНИЕ)

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1976

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱՐԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Լ. Հ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՔՐԱՀԱՄ ԽՈՍՏՈՎԱՆՈՂԻ
«ՎԿԱՅՔ ԱՐԵԻԵԼԻՑԸ»

(ԲՆԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ)

ԿՎԴ-
627

Մ. Արեղյանի
Հ. Տեր-Պետրոսյանի
17-ի-78



«Վկայք Արևելիցը» V դարի հայ թարգմանական գրականության նվազ ուսումնասիրված հուշարձաններից է: Այն մեծ հետաքրքրություն է ներկայացնում հին հայկական գեղարվեստական արձակի, հայ-ասորական գրական կապերի, ինչպես նաև IV դարում Սասանյան Պարսկաստանի հասարակական-տնտեսական հարաբերությունների պատմության ուսումնասիրման համար:

Աշխատության մեջ աղբյուրադիտական և բնագրագիտական վերլուծության է ենթարկված հայերեն թարգմանությունը, նշված է նրա դերն ու նշանակությունը ասորերեն բնագրի ուսումնասիրման գործում:

70202
S 703(02)—76 54—75

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1976.

Ա. Ի. Ա. Զ. Ա. Բ. Ա. Ն

«Վկայք Արևելից»-ը ասորերենից թարգմանված սրբախոսական երկերի մի ժողովածու է, որը նվիրված է պարսից քրիստոնյաների այսպես կոչված «մեծ հալածանքների» նկարագրությանը¹։ Լինելով ասորական գրականության հնագույն հուշարձաններից մեկը՝ Եփրեմ Ասորու և Ափրահատի երկերի կողքին, այդ ժողովածուն մեծ հետաքրքրություն է ներկայացնում՝ քրիստոնյա Արևելքում դեղարվեստական արձակի ակունքների ուսումնասիրման տեսակետից։

Սրբախոսությունը (hagiographia) իր երկու ավանդական դրսևորումներով (վարքագրություն և վկայաբանություն) ընդհանուր քրիստոնեական գրականության հիմնական տեսակներից մեկն է, որը բնութագրվում է հյուսվածքային միօրինակությամբ և նյութի դարգացման խիստ սահմանված եղանակով։ Սրբախոսության լայն տարածումը բացատրվում է նախ և առաջ նրա գործնական «եկեղեցա-արարողական, կրոնա-բարոյական նշանակությամբ»²։

Վարքերի ու վկայաբանությունների հեղինակները առաջին հերթին նպատակ էին դնում ստեղծել իր կրոնական պարտքը կատարող քրիստոնյա հերոսի կատարյալ կերպարը։ Մյուս կողմից, նրանք ձգտում էին տարածել քրիստոնեական վարդապետության դրույթները և նպաստել հավատացյալների հոգևոր դաստիարակման գործին։ Չնայած իրենց միօրինակությանը և բարոյախոսական միտվածքին, սրբախոսական երկերը սիրով էին

¹ ASM 1—215, AMS 57—396.

² Истоки, стр. 208.

ընկալվում միջնադարյան ընթերցողի կողմից: Նրանք մատչելի էին բոլորին, րանի որ ընթերցվում էին սրբերի և նահատակների տոներին նվիրված կենդեցական արարողությունների ժամանակ: Սրբախոսությունը փաստորեն միակ գրական տեսակն էր (ժողովրդական բանահյուսության կողքին), որ հագուրդ էր ապրիս անդրաճանաչ ժողովրդի լայն շրջանակների ղեղարվեստական պահանջներին: Վարքերն ու վկայաբանությունները պարունակում էին հետաքրքիր կենցաղային պատմություններ, դարմանահրաշարկածներ և սրամիտ հանդուցալուծումներ: Ընթերցողներին և ունկնդիրներին գրավում էին նաև սրբախոսական հերոսների կատարյալ կերպարները, որոնք աչքի էին ընկնում բարոյական կերտվածքի բացարձակ մաքրությամբ, աննկուն կամքով և անձնադոհությամբ:

«Վկայք Արևելից» ժողովածուն պատկանում է սրբախոսական գրականության ամենաշուրջինակ հուշարձանների թվին: Նրա տարբերակիչ դերն են. շարադրանքի անմիջականությունը, կենցաղային միջադեպերի նկարագրության պարզությունը և ավելորդ բարոյասուսուցողական միտվածքի բացակայությունը: Ժողովածուի գլխավոր առանձնահատկություններից է նաև այն, որ նա ամբողջությամբ նվիրված է այնպիսի պատմական իրադարձությունների նկարագրությանը, որոնք նշանակալից դեր են խաղացել պարսից կենդեցու կյանքում: Այս հատկանիշներն են ահա, որ ապահովել են նրա ժողովրդականությունը և տարածումը ամբողջ Մերձավոր Արևելքում: «Վկայք Արևելից»-ի նյութերը չրված են համարյա բոլոր արևելա-բրիտոնական և հունա-լատինական Հայամպուրեններում: Բացի այդ, հնում կատարվել են նաև ժողովածուի հայերեն և հունարեն ամբողջական թարգմանությունները: Շնորհիվ այս հանգամանքի, «Վկայք Արևելից» ժողովածուն հետաքրքիր նյութ է մատակարարում միջնադարում քրիստոնյա Արևելքի ժողովուրդներին միավորող գրական և մշակութային կապերի հետազոտման համար: Հատկապես ուշագրավ է նրա տեղը հայ թարգմանական գրականության հուշարձանների շարքում, որ պայմանավորված է պարսից լծի տակ հայ և ասորի ժողովուրդների դրության նույնությամբ: Վերջին հանգամանքին

վիճակված էր վճռական դեր խաղալ հայ հին գրականության մեջ ժողովածուի հեղինակության և ժողովրդականության ապահովման գործում: «Վկայք Արևելից»-ում հայ ընթերցողը գտնում էր հերոսական սխրագործության և ոտնահարված համոզմունքների անսահման պաշտպանության կենդանի օրինակներ: Ուստի վարմանալի չէ, որ ժողովածուն արժանացել է ամենամաքառող պատմագիրներից մեկի՝ Եղիշեի հատուկ ուշադրությանը, և իր նշմարելի հետքը թողել նրա «Պատմության» մեջ: Այս փաստը, ինչպես իրավացիորեն նշում է Ն. Տեր-Մինասյանը, ցույց է տալիս, որ «Վկայք Արևելից» ժողովածուի թարգմանությունը «բավարարություն է տվել մի պահանջի, որ Ե դարի երկրորդ կեսին մի կենսական անհրաժեշտություն էր հայերի համար»³:

«Վկայք Արևելից» ժողովածուի նշանակությունը, սակայն, չի սահմանափակվում այն բանով, որ հնարավորություն է տալիս որոշակի նյութի հիման վրա հետազոտել ասորական և հայկական սրբախոսության առանձնահատկությունները և լուսաբանել մշակութային առնչություններին վերաբերող որոշ հարցեր: Լինելով նկարագրվող իրադարձություններին ժամանակակից գրական հուշարձան, այն միաժամանակ հազվագյուտ և կարևոր աղբյուր է Սասանյան Պարսկաստանի պատմության ուսումնասիրման համար:

IV դարի պարսից քրիստոնյաների հալածանքները հարուցված էին բարդ հասարակական պատճառներով և պատկանում են սասանյանների պատմության կարևոր իրադարձությունների թվին⁴: Քրիստոնեության ականավոր ներկայացուցիչների ոչնչացումը, եկեղեցիների ավերումը և կղերական կալմակերպությունների վերացումը ուղեկցվում էին ժողովրդական ղանգվածների անողորմ հարստահարմամբ, որը երբեմն տագնապալի բաղաբական իրավիճակ էր ստեղծում Միջագետքի խիտ բնակեցված շրջաններում: Հալածանքների հետևանքով խախտվել էր արհես-

³ Տեր-Մինասյան, Հետազոտություններ, էջ 87:

⁴ See "Labourt, Le christianisme, pp. 43—82: Christensen, L'Iran, pp. 258—315.

տավորները և քաղաքային մյուս արտադրողների առօրյա գործունեությունը: Նկատելի դժվարություններ էին առաջացել նաև երկրի դյուղատնտեսության բնագավառում⁵:

Արքունական դանձարանի ժամանակավոր ուռճացումը ի հաշիվ լրացուցիչ հարկապահանջության և հարուստ քրիստոնյաների ունեցվածքի հափշտակման, հազիվ թի կարողանար փոխհատուցել այն վնասը, որ կրեւ էր երկրի տնտեսությունը: Սակայն, չնայած դրան, հալածանքները մեծ ծավալում ստացան և շարունակվեցին մոտ քառասուն տարի՝ 340—ից մինչև 379 թվականը, Շապուհ Բ արքայի օրոք: Հետադրոտողները նշում են պարսից քրիստոնյաների հալածանքների երկու հիմնական պատճառ՝ ա) տնտեսական, բ) քաղաքական:

ա) Հոռոմեական կայսրության դեմ ավանդական պատերազմը վարելու համար սասանյան տերությանը անհրաժեշտ էին մեծ նյութական միջոցներ, և քանի որ զինվորական ծառայությունը բուն Պարսկաստանի բնակիչների պարտականությունն էր, հարկերի հիմնական ծանրությունը ընկնում էր երկրի բարեբեւ շրջանների, մասնավորապես Միջագետքի բնակչության ուսերին: Իսկ Միջագետքում, ինչպես հայտնի է, կարևոր տնտեսական դիրք էին դրավում քրիստոնյաները: Այդ պատճառով արքայից արքան լրացուցիչ հարկերի պահանջ ներկայացրեց հենց նրանց: Վերջիններս հրաժարվեցին վճարել նոր հարկերը: Այնժամ Շապուհը հանդես եկավ հավատափոխության պահանջով: Չկատարելով նաև արքայի այս ցանկությունը, Միջագետքի և ապա ողջ Պարսից աշխարհի քրիստոնյա բնակչությունը ենթարկվեց խստագույն հալածանքների⁶:

բ) Հավատափոխից լինելով հարևան Հոռոմեական կայսրության բնակիչներին, պարսից քրիստոնյաները զիտվում էին որպես

⁵ Այդ մասին վկայում է «Արրելլայի ժամանակագրությունը», ըստ որի՝ Ադիարենի իշխանությունները նույնիսկ ստիպված էին միառժամանակ հետաձգել հալածանքները «խաղողահավաքի և հնձի» ձախողումից խուսափելու համար (Տե՛ս Mingana, Sources syriaques, p. 50)։

⁶ Տե՛ս Labourt, Le christianisme, p. 45; Пузылевская, Города Ирана, стр. 242, 249.

անհուսալի տարրեր՝ թշնամական գործակալներ: Այդ պատճառով, IV դարի 30—40—ական թվականների պատերազմի պայմաններում ներքին անվտանգությունը ապահովելու համար Շապուհը ձեռնարկեց քրիստոնյաների վանդավածային ոչնչացմանը⁷:

Սակայն, հալածանքների պատճառները վերլուծելիս, չպետք է անտեսել նաև զրադաշտական մոլեռանդության գործոնը⁸: Ճիշտ է, մոգությունը չէր հավակնում իր ուսմունքի համաշխարհային ճանաչմանը, սակայն, առնվազն սասանյան պետության սահմաններում, նա ձգտում էր լիակատար կրոնական տիրապետության⁹: Առանց հաշվի առնելու այս հանգամանքը, Պարսկաստանի ներքին քաղաքականության շատ հարցեր անհասկանալի կմնան: Օրինակ, ելնելով վերոհիշյալ տնտեսական հայացքից, անհնար է պատասխանել այն հարցին, թե ինչու քրիստոնյաների հալածանքների ժամանակ չտուժեցին նաև հրեաները, չէ՞ որ նրանք նույնպես հիմնականում ապրում էին Միջագետքում և նույնպես զգալի դեր էին խաղում երկրի տնտեսական կյանքում: Եվ, ընդհակառակն, համապատասխան ֆաղափական դրդապատճառով չի կարելի բացատրել հրեաների հալածանքները, որոնք անընդհատ կրկնվում էին ամբողջ նախորդ հարյուրամյակի ընթացքում: Իհարկե, կարող են գտնվել որոշակի պատճառներ նաև այս հալածանքների համար, ինչպես, օրինակ, հրեաների համակրանքը տապալված պարթևական հարստության նկատմամբ, կամ նրանց թերացումը իրենց հարկային պարտականությունների կատարման գործում: Սակայն փաստ է մնում այն իրողությունը, որ Պարսկաստանի բոլոր ալլահավատները ժամանակ առ ժամանակ ենթարկվում էին ծրագրված հալածանքների: Զրադաշտական մոլեռանդության էությունը հենց այս կրոնական անհանդուրժողականությունն է:

⁷ St^h Nöldeke, Tabari, S. 68; Duval, La littérature, p. 119; Labourt, Le christianisme, pp. 47—50; Christensen, L'Iran, p. 266; Տեր-Մինասյան, Հետազոտություններ, էջ 282—283; Пузылевская, Города Ирана, стр. 242, 247, 251.

⁸ St^h Sachau, Von den rechtlichen Verhältnissen, S. 72; Տեր-Մինասյան, Հետազոտություններ, էջ 283.

⁹ St^h Christensen, L'Iran, p. 266.

Պատահական չէ, որ ղրադաշտական հոգևորականության ձգտումները երբեմն նույնիսկ հակադրվում էին պետական քաղաքականության շահերին:

«Վկայք Արևելից» ժողովածուն միակ աղբյուրն է, որ լույս է սփռում այս բարդ խնդիրների բազմազան կողմերի վրա: Մյուս պատմական երկերը, մասնավորապես՝ Սողոմոնոսի, Փավստոսի, Եղիշեի պատմությունները և ուշ շրջանի ասորական ժամանակագրությունները, հաղորդում են միայն առանձին տեղեկություններ պարսից հալածանքների մասին: «Վկայք Արևելից»-ը, բացի այն, որ տալիս է իրադարձությունների սպառիչ նկարագրությունը և բացահայտում հալածանքների զրդապատճառները, պարունակում է նաև հետաքրքիր պատմական և կենցաղային մանրամասներ, որոնք լի են Պարսկաստանի հասարակական-տնտեսական կյանքին վերաբերող բազմաթիվ արժեքավոր տեղեկություններով: Ժողովածուն լուսաբանում է հռոմեա-պարսկական քաղաքական հարաբերությունների մի շարք կողմեր, պատկերացում տալիս այն վայրերի աշխարհագրության և տեղաբաշխության մասին, որտեղ ծավալվում են իրադարձությունները, բացահայտում ղրադաշտականության, քրիստոնեություն և հուդայականություն քաղաքական և դավանաբանական համագոյակցության պայմանները, հաղորդում կարևոր տեղեկություններ ղրադաշտականության պաշտամունքային ավանդույթների, քրիստոնեական աղանդների, սասանյան պետության վարչական կառուցվածքի, հարկերի բնույթի, դասավարտական կարգի, արհեստների կազմակերպման, քաղաքների բնակեցման մասին և այլն: Ընդ որում, ինչպես նշում է Ն. Պիգուլևսկայան, հատկանշական այն է, որ «այս հարցերը շոշափված են պատահաբար, կարծես անցողակի, չեն կազմում այդ երկերի (Ժողովածուի-Լ. Տ-Պ.) գլխավոր բովանդակությունը, և հենց այդ պատճառով այդ տեղեկությունները, զրկված այստեղ միտումնավորությունից, մեծ արժեք են ներկայացնում»¹⁰: Սակայն պետք է հաշվի առնել, որ սրբախոսական երկերը հաճախ հաղորդում են սխալ թվականներ,

¹⁰ Пигулевская, Города Ирана, стр. 145—146.

աչրի են ընկնում չափազանցություններով, շինծու պատմություններով, և նրանց պատմական տեղեկությունները ոչ միշտ են վստահություն ներշնչում: Ուստի անհրաժեշտություն է ծագում այդ տեղեկություններին մոտենալ քննադատաբար, ստուգելով նրանց արժանահավատությունը զուգահեռ պատմական աղբյուրների օգնությամբ: Իսկ դրա համար պահանջվում է նախապես նշված երկերը ենթարկել մանրակրկիտ բանասիրական և աղբյուրագիտական քննության, որի խնդիրներն են՝ պարզել հուշարձանի գրության ժամանակն ու հեղինակի անձնավորությունը, վերհանել նրա աղբյուրներն ու հետագա ընդմիջարկությունները և ուղղել բնագրի աղճատված մասերը: «Վկայք Արևելից» ժողովածուի կամ նրա բաղադրամասերի նման վերլուծությանը նվիրված են բաղմաթիվ աշխատություններ, սակայն դրանք տառապում են մի էական թերություն: Հետազոտողները ամենեկին անտեսում են հարցերի նույն շրջանակին վերաբերող թարգմանական նյութը, մասնավորապես ժողովածուի հայերեն թարգմանությանը¹¹: Այնինչ վերջինիս օգնությամբ կարելի էր գտնել մի շարք բանասիրական խնդիրների ճիշտ լուծումը և խուսափել բաղմաթիվ կասկածելի հետևություններից: Անգնահատելի է հայերեն թարգմանության դերը ասորական սկզբնագրի բնագրական քննության և ժողովածուի նախասկզբնական կազմի վերականգնման գործում: Ավելի մեծ արժանիք է այն, որ թարգմանությունը պարունակում է որոշ երկեր, որոնց ասորական սկզբնագիրը չի պահպանվել: Մյուս կողմից, «Վկայք Արևելից» ժողովածուի հայերեն թարգմանության ուսումնասիրումը կարևոր է նաև հայ բանասիրության համար: Հայագիտության առջև ծառացած են ժողովածուի հետ կապված բաղմաթիվ շլուծված հարցեր:

Այս նկատառումներով է որոշված ներկա աշխատության հիմնական ուղղությունը՝ «Վկայք Արևելից» ժողովածուի հայերեն թարգմանության բնագրագիտական և աղբյուրագիտական հետա-

¹¹ Ավրուպական բանասիրներից միայն Պ. Պետերսն է, որ «Վկայք Արևելից» ժողովածուի ասորական սկզբնագրին նվիրված իր ուսումնասիրություններում շատադրոժ է նաև հայերեն թարգմանության մասնակի տվյալները:

դոտումը ասորական և հայ բանասիրության ավելի ընդհանուր խնդիրների ոլորտում¹²։

12 Սկզբնաղբերից և օգտագործված գրականությունից կատարված բոլոր մեզ-բերումները տրվում են մեր թարգմանությամբ։ Ընդ որում, ասորական և հունական բնագրերը թարգմանված են գրաբարով՝ համեմատությունները ավելի ակնառու դարձնելու նպատակով։ Իսկ այն դեպքերում, երբ քննության առարկա է հանդիսանում ոչ թե մեջբերված հատվածի բովանդակությունը, այլ նրա արտահայտման եղանակը՝ անհրաժեշտարար տրվում է նաև ասորական սկզբնաղբերը՝ լատինական տառադարձությամբ։

Հարմարության նպատակով հաճախակի վկայակոչվող հետևյալ աշխատու-թյունները նշվում են հաղավումներով, այն էլ, մեծ մասամբ, բուն շարա-դրանքում։

ԳՏՄ—Արաբահամու խոստովանողի վկայք Արևելից, աշխատասիրությամբ Գ.

Տեր—Մկրտչյանի, էջմիածին, 1921։

ՎՍՀ—Վարք սրբոց հարանց, հ. Ա—Բ, Վենետիկ, 1855։

ՎՎՍ—Վարք և վկայարանությունը սրբոց, հ. Ա—Բ, Վենետիկ, 1874։

AMS—P. Bedjan, Acta martyrum et sanctorum, t. 2, Paris, 1891.

AS.M—E. Assemani, Acta sanctorum martyrum orientalium et occidentalium, Romae, 1 vol., 1748.

BHO—Bibliotheca hagiographica orientalis, Bruxellis, 1910.

PO—2—H. Delehaye, Les versions grecques des actes des martyrs persans sous Sapor II, „Patrologia orientalis“, t. II, Paris, 1907.

PS—2—M. Kmosko, S. Simeon Bar Sabbæ, „Patrologia syriaca“, t. 2, pars I, Parisus, 1907.

SEC—Synaxarium Ecclesiae Constantinopolitanae, Acta sanctorum, Novembris, ed. H. Delehaye, Bruxellis, 1902.

**«ՎԿԱՅՔ ԱՐԵՆԵԼԻՅ» ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ԱՍՈՐԱԿԱՆ ՍԿՋՔՆԱԳՐԻ
ՋԵՌԱԳՐԵՐԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ**

Ասորագիտության մեջ վաղուց արդեն հաստատված է, որ «Վկայք Արենելից» ժողովածուի մեջ մտնող երկերը պատկանում են ալլեալ հեղինակների և գրված են երկար ժամանակի ընթացքում¹։ Ժողովածուի բաժինների մեծամասնությունը գրված է IV դարում, նկարագրվող դեպքերից անմիջապես հետո։ Որոշ հուշարձաններ պատկանում են ավելի ուշ շրջանի՝ V դարի սկզբին։ Դրանով են բացատրվում ժողովածուի ժամանակագրական համակարգի որոշ անհետևողականություններ, ոճի և շարադրանքական կառուցվածքի տարասեռությունը, պատմական անձանց և իրադարձությունների շփոթումը, ինչպես նաև միևնույն դեպքերի նկարագրության կրկնությունները։ Սրանից, իհարկե, չի հետևում, որ ժողովածուի յուրաքանչյուր բաժին ունի իր սեփական հեղինակը։ Որոշ փոխկապակցված երկեր կարող են ստեղծված լինել մի հեղինակի կողմից։ Այդ է վկայում, օրինակ, ժողովածուում իրարից անկախ գրական շարքերի գոյությունը։ Մյուս կողմից, սա ապացույց է այն բանի, որ «Վկայք Արենելից» ժողովածուն ունեցել է իր նախապատմությունը, այսինքն նրա կազմվելուց առաջ արդեն ասորիները փորձեր են կատարել հավաքելու բովանդակությամբ առնչակից սրբախոսական նյութերը։ Ժողովածուում ականներվաբար առանձնանում են երեք այսպիսի գրական շարքեր. ա)

¹ Տե՛ս *Labourt, Le christianisme*, pp. 52—55: *Chabot, Littérature*, p. 42, նաև՝ *Тер-Петросян, Место жития Милеса*, стр. 38—40.

Շմալոն Բար-Սաբբայի վկայաբանության հետ կապված երկերը, բ) Մեկեսի վարքի հետ կապված վկայաբանությունները, գ) ադիաբենցի նահատակների վկայաբանությունները: Բացի այս նյութերից ժողովածուում տեղ են գտել նաև որոշ այլ երկեր: Ժողովածուն բացվում է «մեծ հալածանքների» ղոհների մեծարմանը նվիրված ընդարձակ ներածությամբ և փակվում համառոտ հիշատակարանով, որտեղ հեղինակը տեղեկություններ է հաղորդում իր աշխատանքի հանգամանքների և օգտագործած աղբյուրների մասին: Ժողովածուում ղանաղան աղբյուրների օգտագործման փաստը այնքան ակնհայտ է, որ մասնագետների մոտ վաղուց ի վեր այլևս կասկած չի հարուցում:

Ասորագետները տարակարծիք են մի այլ, ոչ ավելի անկարևոր հարցում՝ ժողովածուի հեղինակի անձը որոշելիս: Այս հարցը հետաքրքրություն է ներկայացնում ոչ թե սոսկ ասորական մշակույթի պատմության ուսումնասիրման տեսակետից, այլ նաև ավելի դործնական և կարևոր խնդիրների, ինչպես, օրինակ, ժողովածուի թվագրման խնդրի լուծման համար:

Արաբալեզու նեստորական ժամանակագիրներ Մարին (XII դ.) և Ամրը (XIV դ.) «մեծ հալածանքներին» նվիրված գրքի կազմումը վերագրում են պարսից եկեղեցու կաթողիկոս Ահային (410—415)²: Սակայն Մարիի «Ժամանակագրության» մեջ հիշատակվում է նաև, որ Մարութա Նփրկերտցին նույնպես զբաղվել է այդ շրջանի սրբախոսական հուշարձանների ժողովմամբ³: Այս տեղեկությունը հաստատվում է ևս մի ասորական աղբյուրով: XIII—XIV դարերի նեստորական գրող Աբդ—Իշոյի մատենագիտական ցանկում նշվում է, որ «Մարութան՝ Նփրկերտի եպիսկոպոսը և հմուտ բժիշկը, գրել է վկայաբանությունների մի գիրք և նահատակներին նվիրված ներբողներ ու երգեր»⁴: Ըստ հայկական աղբյուրների, ժողովածուի հեղինակն է IV դարի հռչակավոր մատենագիր Նփրեմ Ասորին (մեռ. 373 թ.)⁵: Նփրեմը հայ հին

² Տե՛ս Gismondi, Mari, p. 27; Gismondi, Amr et Sliba, p. 15.

³ Տե՛ս Gismondi, Mari, p. 26.

⁴ J. S. Assemani, Bibliotheca orientalis, t. 3, p. 73—74.

⁵ «Վկայք Արևելից» ժողովածուի հայերեն թարգմանության առաջաբանը՝

պսակվում են բացառիկ հաջողությամբ: 407 թվականին Պարսկաստանի բրիտանյա բնակչության և Հազկերտի միջև համաձայնություն է կնքվում, իսկ 410 թվականին Մարութա նփրկերտացուն և Իսահակ Սելեկիացուն հաջողվում է Տիզբոնում գումարել մի ժողով, որն ավարտում է պարսից եկեղեցու վերակառուցման գործը⁸: Եկեղեցական գործունեությունից բացի, Մարութա նփրկերտացին իրագործում է նաև դիվանագիտական առաքելություններ՝ մի քանի անգամ պարսից արքունիք ուղեկցելով բյուզանդական պատվիրակություններ: Աղբյուրները նրան մեծ դեր են հատկացնում բյուզանդա-իրանական հարաբերությունների կարգավորման գործում:

Մարութայի ղեղավորման կարևոր բնագավառներից էր նաև բժշկությունը: Ըստ ավանդության՝ նա շահել էր Հազկերտի բարյացակամությունն ու վստահությունը՝ արքայորդուն մահացու հիվանդությունից փրկելու համար⁹:

Իր բացառիկ դիրքի և հեղինակության շնորհիվ Մարութան հնարավորություն է ստանում շրջագայել ողջ Պարսից աշխարհում և հավաքել «մեծ հալածանքների» նահատակների մասունքները: Այնուհետև բյուզանդական Թեոդոս Բ կայսեր նյութական օգնությամբ վերակառուցում և ամրապնդում է նփրկերտի պարիսպները և ժողովված մասունքները տեղադրում քաղաքի մայր տաճարում: Ի պատիվ այս իրադարձության նփրկերտը վերանվանվում է Մարտիրոսյուխ՝ նահատակների քաղաք¹⁰: Նփրկերտի մասունքների հավաքածուի մասին հաղորդում են Մարութային հիշատակող համարյա բոլոր աղբյուրները¹¹, ուստի այս փաստի արժանահա-

⁸ Տե՛ս Braun, Synhados, S. 5—35; Chabot, Synodicon, pp. 17—36, 253—275.

⁹ Տե՛ս ՎՎՍ—2 24—25:

¹⁰ Նփրկերտ՝ քաղաք Ծուփքում. ասոր. Mayperqat, Mdittā d—Sahde. հուն. Μαργαρίτου, արար. Mayyāfārtiqin.

¹¹ Տե՛ս ՎՎՍ—2 26, 30—31: Երուսաղեմի հայ պատրիարքարանի № 536 (XIII դ.) ձեռագրի հիշատակարանը (Պողարյան, Մայր ցուցակ, հ. 2, էջ 553); Gismondi, Mari, p. 26; Gismondi, Amr et Sliba, p. 14; Jacut's geographisches Wörterbuch, Bd. 4, S. 704; Latyšev, Menologii, p. 154.

649-26

վատությունը անվիճելի պետք է համարել: Հենց այս փաստի հետ է, ըստ երևույթին, կապված «Վկայք Արեւելից» ժողովածուի հեղինակի անձնավորության խնդրի լուծումը, սակայն առայժմ ոչ մի ասորագետ չգրան ուշադրություն չի դարձրել: Մարութան, նահատակների մասունքները հավաքելիս, բնականաբար, պետք է զործ ունենար նաև նույն նահատակների մասին պատմող բանավոր վրուցների և դրական երկերի հետ, որովհետև շատ հաճախ միայն այս աղբյուրներում էին տեղեկություններ պահպանվում նահատակության վայրի և զոհերի գերեզմանների մասին: Նրա նպատակն, անշուշտ, նահատակների հիշատակի հավերժացումն էր: Իսկ դրան կարելի էր հասնել ոչ այնքան մասունքների սրբատեղի կառուցելով, որքան հիշյալ վրուցների պահպանում և գրական երկերի հավաքմամբ: Եթե թերթենք «Վկայք Արեւելից»-ը, ապա անմիջապես կհամոզվենք, որ նա կազմված է ոչ թե գրական, այլ զուտ գործնական նպատակով՝ նահատակների հիշատակի պահպանման համար: Ժողովածուի որոշ նյութեր ամենևին չեն կարող գրական ստեղծագործություններ կոչվել¹²: Նրանք տեղ են գտել ժողովածուի կազմում միայն այն պատճառով, որ տվյալներ են պարունակում հալածանքների առանձին զոհերի մասին: Բաժիններից մեկը նույնիսկ մի պարզ ցուցակ է, որտեղ հիշատակվում են միայն զոհերի և նրանց հալածիչների անունները և նահատակության վայրն ու ժամանակը¹³: Սա ցույց է տալիս, որ ժողովածուն կազմողը հավաքել է այն ամենը, ինչ վերաբերում է «մեծ հալածանքների» նահատակներին, առանց ուշադրություն դարձնելու գրվածքների որակին: Հետևաբար, ինչպես վերը արդեն նշվեց, նա հետապնդել է ոչ թե գրական, այլ գործնական նպատակ՝ հավերժացնել նահատակների հիշատակը: Այդ մասին ուղղակի ասվում է ժողովածուի ներածական ճառում: Ճառագիրը հետևյալ խոսքերով կշտամբում է իր ժամանակակիցներին. «Մեկնեցան ի մէջ առաջնորդքն մահուամբն զոր մեռան վասն

¹² BHO 245, AMS 290; BHO 426, AMS 307.

¹³ Քարթա դը Բեթ-Սլուքի նահատակներ՝ BHO 807, ASM 99—101, AMS 286—289.



մեր, և մեր որ ի նոցա սակս գտաք զշնորհս՝ բնաւ և ոչ զմաստ
ածեմք զնոսա» (ԳՏՄ 46, AMS 59)¹⁴: Այնուհետեւ, բերելով մի
շարք օրինակներ Աստվածաշնչից, նա կոչ է անում ընթերցողներին
հավաքել և պատվի արժանացնել նահատակների ցիրուցան արված
ոսկորները. «Մեռան փրկիչքն սրով փոխանակ մեր, և մեր
փրկեալք նոքաք՝ իբրեւ խառնիխուռն զամենայն ուրուք համարիմք
զոսկերս նոցա» (ԳՏՄ 46, AMS 59): Պետք է ի նկատի ունենալ,
որ սա պատահական քնարական զեղում չէ: Այդ է վկայում
հետեւյալ հատվածը, որտեղ հեղինակը հիմնավորում է նահատակ-
ների մասունքների հավաքման անհրաժեշտութիւնը. «Ոսկերքն
Յակոբայ հաւատացելոյ խնկեցան և պատուեցան ի Յովսէփայ
(ձեռագիր S—Յուսիփայ՝ Լ. S.-Պ.) հաւատարիմ որդւոյ իւրոյ:
Ոսկերքն Յովսէփայ ճշմարտի մեծարեցան և պատուեցան ի
Մովսէսէ ճշմարտ ծառայակցէ: Ոսկերքն Մովսէսի սրբոյ
պատուեցան և ծածկեցան ի ձեռաց սուրբն Աստուծոյ: Նոքա
վասն զի հաւատացին՝ եղեն հաւատարիմք, և զի պատուեցին՝
արժանի եղեն պատուոյ, և մեր զի ոչ պատուեցաք՝ շեղեաք արժա-
նի պատուելոյ ի սուրբ ոսկերացն» (ԳՏՄ 47, AMS 59): Քանի
որ ստույգ կերպով հայտնի է, որ նման ծրագիր իրականացրել է
Մարութան՝ նփրկերտում հավաքելով բազմահազար նահատակ-
ների մասունքները, ապա բնական է ենթադրել, որ այս կոչը
պատկանում է նրան: Ուստի չպետք է անհիմն թվա այն եղրակա-
ցութիւնը, որ ներածական ճառի հեղինակը, հետեւաբար նաեւ
«Վկայք Արեւելից» ժողովածուի կազմողը իսկապէս Մարութա
նփրկերտոցին է: Պատահական չէ, որ ասորի ժամանակագիր Մարին
Մարութա նփրկերտոցու կողմից նահատակների մասունքներ հավա-
քելու և վկայաբանութիւնների ժողովածու կազմելու մասին խոսում
է միենույն նախադասութեան մեջ¹⁵:

Մեծ զժվարութիւնների հետ է կապված Մարութա նփրկերտ-
ցու ժողովածուի նախասկզբնական կազմի որոշումը: Հարցը թեև

¹⁴ Թեև այս և հաջորդ հատվածում հայերեն թարգմանութիւնը բառացի
չի համընկնում ասորական սկզբնագրին, սակայն նրա բովանդակութիւնը
հաղորդում է ամենայն հարազատութեամբ:

¹⁵ S^bu Gismondi, Marl, p. 26.

կարևոր նշանակութիւն ունի, սակայն մատենագրական տվյալներին ներկայիս վիճակում դժվար թէ այն վերջնականապես լուծելու հավանութիւն կարելի է ունենալ:

Այդ պատճառով առայժմ հետազոտողները զբաղվում են ոչ թէ ամբողջ ժողովածուով, այլ սահմանափակվում միայն վկայաբանութիւնների առանձին շարքերի ուսումնասիրությամբ, առանց ուշադրութիւն դարձնելու ձեռագրական ավանդույթի տվյալներին: Այնուամենայնիվ, համադրելով ասորական, հայկական և հունական աղբյուրները, ըստ երևույթին, կարելի է որոշել այն սրբախոսական հուշարձանների մոտավոր շրջանակը, որոնք գոյութիւն են ունեցել արդեն V դարի սկզբին և, հետևաբար, կարող էին մտնել Մարութա նիփրկերտցու ժողովածուի կազմի մեջ:

ա) Ասորական աղբյուրներ. «վկայք Արեւելից» ժողովածուի ասորական սկզբնագիրը պահպանվել է երկու խմբագրութեամբ՝ համառոտ և ընդարձակ: Խմբագրութիւնները տարբերվում են միայն ընդգրկած երկերի թվով, և համառոտը ամբողջովին պարփակվում է ընդարձակի մեջ: Համառոտ խմբագրութիւնը պահպանել են Վատիկանի ասորական ձեռագրերի հավաքածուի № 160 (V—VI դդ.) և 161 (IXդ.) ձեռագրերը¹⁶, ընդարձակը՝ Դիարբեքիի ասորական պատրիարքարանի № 96 (VII—VIII դդ.) ձեռագիրը: Դիարբեքիյան ձեռագիրը այժմ պահպանվում է պատրիարքարանի նոր՝ բաղդադյան նստավայրում¹⁷: Մարբուրգի մատենադարանի արևելյան ձեռագրերի հավաքածուում կա այս ձեռագրի երկհատոր ընդօրինակութիւնը (№ 1256—1257)¹⁸, կատարված 1879 թվականին Մոսկուում¹⁹:

Ժողովածուի համառոտ խմբագրութիւնը պարունակում է հետևյալ նյութերը.

1) Ներածութիւն (BHO 706, AMS 57—122)¹⁹:

2) Շմավոնի վկայաբանութիւնը (համառոտ խմբագրութիւն),

¹⁶ St' u Wiessner, Märtyrererüberlieferung, S. 289.

¹⁷ St' u նույն տեղում, S. 10:

¹⁸ St' u Assfalg, Syrische Handschriften, S. 53—59.

¹⁹ Պակասում է № 160 ձեռագրում:

նահատակության տարին՝ 341 թ. (BHO 1117, AMS 10—36, PS—2 715—778)²⁰:

3) Աղատի վկայաբանությունը, նահատակության տարին՝ 341 թ. (BHO 124, ASM 45—50, AMS 248—254)²¹:

4) Թերբուի վկայաբանությունը, նահատակության տարին՝ 341 թ. (BHO 1149, AMS 54—59, AMS 254—260):

5) Մելեսի վարբը, նահատակության տարին՝ 341 թ. (BHO 772, ASM 66—79, AMS 260—275):

6) Շահդոսդի վկայաբանությունը, նահատակության տարին՝ 342 թ. (BHO 1033, ASM 88—91, AMS 276—281)²²:

7) Բարշեբիայի վկայաբանությունը, նահատակության տարին՝ 342 թ. (BHO 146, ASM 93—95, AMS 281—284):

8) Ներսեսի վկայաբանությունը և Քարբա դը Բեթ-Սլոքի նահատակները, նահատակության տարին 343 թ. (BHO 806, 807, ASM 97—101, AMS 284—289)²¹:

9) Դանիելի և Վարդայի վկայաբանությունը, նահատակության տարին՝ 343 թ. (BHO 245, ASM 103—104, AMS 290):

10) 120 նահատակների վկայաբանությունը, նահատակության տարին՝ 345 թ. (BHO 718, ASM 105—109, AMS 291—295):

11) Բարբաղմենի վկայաբանությունը, նահատակության տարին՝ 346 թ. (BHO 135, ASM 111—116, AMS 296—303):

12) Վկայություն վկայիցն, որ սպանան ուրեք ուրեք, նահատակության տարին՝ 346 թ. (BHO 711, ASM 118—120, AMS 303—306)²²:

13) Հակոբի և Մարիամի վկայաբանությունը, նահատակության տարին՝ 347 թ. (BHO 426, ASM 122, AMS 307)²¹:

14) Թեկդի վկայաբանությունը, նահատակության տարին՝ 347 թ. (BHO 1157, ASM 123—127, AMS 308—313)²¹:

15) Բարխադբըշաբայի վկայաբանությունը, նահատակու-

²⁰ Ա՝ 161 ձեռագիրը պարունակում է Շմավոնի վկայաբանության ընդարձակ խմբագրությունը (BHO 1119, AMS 123—207, PS—2 779—960):

²¹ Պակասում է Ա՝ 161 ձեռագրում:

²² Պակասում է Ա՝ 160 ձեռագրում:

թյան տարին՝ 354 թ. (BHO 138, ASM 129—130, AMS 314—316)²¹,

16) Հոռմեացի գերինների վկայաբանությունը, նահատակության տարին՝ 362 թ. (BHO 375, ASM 134—139, AMS 316—324)²³,

17) 40 նահատակների վկայաբանությունը, նահատակության տարին՝ 375 թ. (BHO 5, ASM 144—160, AMS 325—347)²³;

18) Բաղմայի վկայաբանությունը, նահատակության տարին՝ 375 թ. (BHO 131, ASM 165—167, AMS 347—351):

19) Ահեփսիմայի, Հովսեփի և Այթալահի վկայաբանությունը, նահատակության տարին՝ 379 թ. (BHO 22, ASM 171—203, AMS 351—396);

«Վկայք Արեւելից» ժողովածուի ընդարձակ խմբագրության մեջ (Դիարբեքիրի № 96 ձեռագիր) նշված երկերի կողքին առկա են նաև հետևյալները²⁴.

1) Պուսակի՝ արքունական արհեստապետի վկայաբանությունը, նահատակության տարին՝ 341 թ. (BHO 993, AMS 208—232):

2) Մարթայի՝ Պուսակի դստեր վկայաբանությունը, նահատակության տարին՝ 341 թ. (BHO 698, AMS 233—241):

3) Խուժաստանի նահատակների վկայաբանությունը, նահատակության տարին՝ 341 թ. (BHO 704, AMS 241—248):

4) Հովհանի վկայաբանությունը, նահատակության տարին՝ 344 թ. (BHO 500, AMS—4 128—130):

5) Աբրահամի վկայաբանությունը, նահատակության տարին՝ 344 թ. (BHO 12, AMS—4 130—131):

6) Անանիայի վկայաբանությունը, նահատակության տարին՝ 345 թ. (BHO 372, AMS—4 131—132):

²³ Պակասում է № 160 ձեռագրում:

²⁴ Շմավոնի վկայաբանությունը դիարբեքիրյան № 96 ձեռագրում ներկայացված է ընդարձակ խմբագրությամբ, ինչպես վատիկանյան № 161 ձեռագրում (BHO 1119, AMS 123—207, PS-2 779—960):

Աղյուսակ 1. Ասորական ձեռագրեր

	Վատիկան N° 160 5-6-րդ դդ.	Վատիկան N° 161 9-10-րդ դդ.	Դիմորենսեր N° 96 7-8-րդ դդ.	Բրիտ. Մանչ. N° 14654 5-6-րդ դդ.	Բրիտ. Մանչ. N° 14645 935/36 թ.
Երանույթուն		1	1		
Շմալոն համառոտ խմբ.	3				21
Շմալոն ընդարձ. խմբ.		3	2		
Ազատ	3		4		
Թերբու	4	6	5	h	22
Շահգոսդ		5	6	f	33
Բարբաշմեն	6	8	7		34
Վկայութիւն վկայիցն		9	8		X
120 նահատակներ	5	7	9	l	
Պուսակ			3		
Մարթա			4		
Խումաստանի նահատակներ			4		
Մեկու	7	10	31	b	
Բարշերիա	8	11	32		32
Դանիել և Վարդա	9	12	33		
Ներսիս	11		13		
Բարբա դը Բեթ—Սլորի	11		19		
Նահատակներ					
Հովհան			14		
Աբրահամ			15		
Անանիա			16		35
Հակոբ և Մարիամ	12		17		
Թեկդ	13		18		
Բարխադբըշարբա	14		20	g	
Այվալահա			21		
Հակոբ և Ադատ			22		
Ակեփոսիմա	15	16	25	a	
Հոսմեացի գերիներ		15	12		
40 նահատակներ		13	10		36
Բաղմա	10	14	11	e	
Բաղալ			24		
Գելանի նահատակներ			28—29		

7) Այթալահի վկայաբանությունը, նահատակություն տարին՝ 354 թ. (BHO 29, AMS—4 133—137):

8) Հակոբի և Ադատի վկայաբանությունը, նահատակության տարին՝ 371 թ. (BHO 423, AMS—4 137—141):

9) Բաղալի վկայաբանությունը, նահատակության տարեթիվն անհայտ է (BHO 130, AMS—4 163—165):

10) Գելանի նահատակների վկայաբանությունը (Բրքիշո,

Բրիտ. թանգ. № 12174 1197 թ.	Բրիտ. թանգ. № 17204 5-րդ դ.	Բրիտ. թանգ. № 14665 10-րդ դ.	Բեռլին № 75 1881թ.	Վենսիերի № 2020 1697 թ.	Ուլմիտ ?	Գլիդդերի ձեռ- նագիր ?
60		1	23		×	
64			24			
63			27			
65						
61						
62						
	3			4		×
			38			
			25			

Աբդիշո և այլք), նահատակության տարին՝ 351 թ. (BHO 180, AMS—4 166-169):

11) Գելանի նահատակների վկայաբանությունը՝ շարունակու-
թյուն նախորդի (Շապուհ, Սանատրուկ և այլք), նահատակության
տարին՝ 351 թ. (BHO 1043, AMS—4 169—170)²⁵:

²⁵ Թեև № 96 ձեռագրում ղետեղված է նաև Քարդակի վկայաբանությունը
(BHO 555, AMS 442—507), սակայն այն «Վկայք Արևելից» ժողովածուի

Մարութա նփրկերացու «Վկայք Արեւից» ժողովածուի առանձին բաժիններ հայտնի են նաև մի շարք այլ ընդօրինակություններով: Ասորական սկզբնագրի ձեռագրական ավանդույթի լրիվ պատկերը արտահայտված է աղյուսակ 1—ում²⁶:

Մարութա նփրկերացու ժողովածուի ասորական սկզբնագիրը հրատարակված է երկու անգամ: Առաջին հրատարակությունը իրագործել է Ե. Ասեմանին 1748 թվականին իր նշանավոր «Արեւելյան և արեւմտյան սուրբ նահատակների վարքեր» գրքի առաջին հատորում²⁷: Ասեմանու հրատարակած բնագիրը պատրաստված է վատիկանյան № 160 և 161 ձեռագրերի հիման վրա և ընդգրկում է ժողովածուի համառոտ խմբագրությունը: Ասորական բնագիրը ուղեկցվում է լատիներեն բառացի թարգմանությամբ: Սակայն կազմված լինելով իր ժամանակի բնագրագիրտա-

հետ կապ ունենալ չի կարող, քանի որ հաստատված է, որ կազմված է VI դարում, տե՛ս Duval, La littérature, p. 128; Պ. Պետերսոն այն վերագրում է ավելի ուշ շրջանի, տե՛ս Peeters, Le passionnaire d'Adiabène, pp. 298—302.

²⁶ Աղյուսակը կազմված է ըստ ասորական ձեռագրերի հետևյալ ցուցակների. Wright, Catalogue 1; Wright, Catalogue 2; Sachau, Verzeichnis; Assfalg, Syrische Handschriften (չիարբեքիրյան № 96 ձեռագիրը = ժարբուրդյան մասնադարանի № 1256—1257 ընդօրինակությունը): Վատիկանի ձեռագրացուցակը՝ S. E. Assemani, J. S. Assemani, Catalogus, մեղ անհատ մնաց, այդ պատճառով աղյուսակում օգտագործված են Գ. Վինների և Ա. Բաումշտարկի տվյալները՝ Wiessner, Märtyrerüberlieferung, S. 289; Baumstark, Geschichte, S. 56. Ուրմիայի և Ի. Գլիզիի ձեռագրերի մասին տեղեկությունները քաղված են Պ. Բեջանի ժողովածուի երկրորդ հատորի առաջաբանից՝ AMS, p. IX.

Այս և հաջորդ երկու աղյուսակները կազմված են միասնական սկզբունքով. ա) թվանշաններն արտահայտում են նշված ձեռագրերում նյութերի գրված կարգի համարը ըստ համապատասխան ձեռագրացուցակների նկարագրության: բ) Փարիզի Ազգային գրադարանի հայկական ձեռագրերի դեպքում թվերով նշանակված են ձեռագրերի թերթերը, որովհետև Մակլերի ցուցակում նյութերը դասավորված են ոչ թե ըստ կարգահամարի, այլ ըստ թերթերի. գ) X—ը նշանակում է, որ տվյալ նյութերի կարգահամարը համապատասխան ձեռագրում անհայտ է:

²⁷ Տե՛ս ASM 1—215.

կան սկզբունքներով՝ առանց տարընթերցվածքների և ծանոթագրությունների, Ասեմանու հրատարակությունը այժմ չի կարող բավարարություն տալ գիտական հետազոտության պահանջներին: Ինչպես վկայում է Ժ. Լաբուրը, որը ստուգել է Ասեմանու պատրաստած բնագիրը վատիկանյան № 160 ձեռագրի համեմատությամբ, «նույնիսկ այդ հեղինակի տառադարձությունը հեռու է կատարելությունից»²⁸:

Ժողովածուի ընդարձակ խմբագրությունը հրատարակված է 1891 թվականին Պ. Բեջանի կողմից, նրա՝ «Նահատակների և սրբերի վարքեր» մատենաշարի երկրորդ հատորում²⁹: Հովհանի, Աբրահամի, Անանիայի, Այթալահի, Հակոբի և Աղատի, Բադայի և Գեղանի նահատակների վկայաբանությունները ղեկավարված են մատենաշարի չորրորդ հատորում³⁰: Բեջանի հրատարակության մեջ օգտագործված են Ասեմանու բնագիրը, Դիարբեքիի № 96 ձեռագրի մարբուրգյան ընդօրինակությունը, Բեռլինի № 75, Ուրմիայի և Ի. Գվիդիի ձեռագրերը (տե՛ս աղյուսակ 1): Ժողովածուի ներածության բնագիրը պատրաստելիս Բեջանը օգտվել է նաև վատիկանյան № 161 ձեռագրից³¹: Անանիայի վկայաբանության բնագիրը համեմատված է Բրիտանական թանգարանի № 14645 ձեռագրի հետ³²: Ռեկ ի տարբերություն Ասեմանու, Բեջանը օգտագործել է ղգալիորեն ավելի շատ ընդօրինակություններ, սրա հրատարակությունը նույնպես չի կարող բավարարել ժողովածուի բնագրագիտական ուսումնասիրության պահանջները: Բեջանը տալիս է տարընթերցվածքները, սակայն առանց նշելու նրանց աղբյուր-ընդօրինակությունները: Ավելին, հրատարակիչը ներկայացրել է նույնիսկ ընդգրկված ընդօրինակությունների տալափին ոչ բոլոր տարընթերցվածքները, չի ստացվում այն մասին, որ եվրոպական թանգարանների շատ ձեռագրեր այդպես

²⁸ *Labourt*, i.e. christianisme, p. 55.

²⁹ Տե՛ս AMS 57—396.

³⁰ Տե՛ս AMS—4 128—141, 163—170.

³¹ Տե՛ս AMS, p. 1X.

³² Տե՛ս AMS—4, p. VI.

էլ զուրա են մնացել նրա ուշադրության սահմաններից: Բեջանի հրատարակության գնահատականը նույնպես տվել է Ժ. Լաբուրը. «Բեջանը պատրաստել է մի հրատարակություն, որի բնագիրը երբեմն տարբերվում է Ասեմանու պատրաստած բնագրից, սակայն տարբերակների ընտրությունն այնքան կամայական է և քննական ապարատը այնքան անբավարար, որ այդ հրատարակությունը շատ քիչ օգուտ է տալիս բնագրերի համեմատության համար»³³: Սակայն Բեջանի հրատարակության նման բնույթը բացատրվում է նրա զործնական նպատակով: Ըստ Ժ.-Բ. Շաբոյի՝ Բեջանի նպատակն էր ընթերցանության դրբեր հրատարակել պարսից ասորախոս քրիստոնյաների համար՝ նրանց կրոնական և բարոյական դաստիարակությանը նպաստելու մտադրությամբ³⁴:

Այսպիսով, Մարութա Նփրկերտցու «Վկայք Արեւելից» ժողովածուի ասորական սկզբնագրի գիտական հրատարակության խնդիրը դեռ սպասում է իր լուծմանը: Ժողովածուի բաժիններից առայժմ քննական հրատարակության է արժանացել միայն Շմավոն Բար-Սաբբայի վկայաբանությունը՝ աշխատասիրությամբ Մ. Կմոսկոյի³⁵: Կմոսկոն լույս է ընծայել վկայաբանության կրկնակ խմբագրությունները (համառոտ և բնդարձակ), օգտագործելով նրանց բոլոր հայտնի ընդօրինակություններն ու նախապես հրատարակված բնագրերը³⁶: Նա տվել է նաև վկայաբանության զուգահեռ լատիներեն թարգմանությունը: Կմոսկոյի աշխատանքն աչքի է ընկնում կատարման բարձր մակարդակով և ձեռագրական տվյալների մատուցման ճշգրտությամբ: Մեծ գիտական արժեք է ներկայացնում նաև հրատարակության ներածությունը, որը հանդիսանում է Շմավոնի վկայաբանության խոր պատմա-բանասիրական հետազոտությունը³⁷:

Բացի ձեռագրական ավանդույթից, «Վկայք Արեւելից» ժո-

³³ Labourt, Le christianisme, p. 55.

³⁴ Sh'ou Chabot, Littérature, p. 157.

³⁵ Sh'ou PS—2 661—1047.

³⁶ Համառոտ խմբագրություն՝ PS—2 715—778, բնդարձակ՝ PS—2 779—960.

³⁷ SL'ou PS—2 661—714.

ղովածուի նախասկզբնական կազմի ուսումնասիրման ամենակարևոր աղբյուրների թվին է պատկանում 411 թվականին Եղեսիայում կազմված «Նահատակների ցուցակը»³⁸։ Այդ աղբյուրի տվյալների արժանահավատությունը երաշխավորված է այն հանգամանքով, որ նա պահպանվել է ասորական հնագույն ձեռագրում* թվագրված 412 թվականով (Բրիտանական թանգարան՝ № 12150)³⁹։ «Ցուցակի» վերջին բաժնում նվիրապետական կարգով թվարկված են «մեծ հալածանքների» զոհերի՝ հայրսկուպոսների, քահանաների, սարկավազների և ապա աշխարհականների անունները։ Այս թվարկումը հնարավորություն է տալիս պարզել, թե Մարութայի ժողովածուի մասերից որոնք էին V դարի սկզբում հայտնի Եղեսիայում։ Հետևաբար այն չափազանց արժեքավոր աղբյուր է ժողովածուի տվյալները ստուգելու համար։

բ) Հայկական աղբյուրներ. «Վկայք Արեւից» ժողովածուի հայերեն թարգմանությունը ներկայացված է XII դարի երկու ամբողջական ընդօրինակություններով (Մատենադարանի № 1522 և 3777) և կազմված է հետևյալ մասերից.

1) Հայերեն թարգմանության առաջաբանը՝ «Վկայութիւնք բաղմաց մարտիրոսաց...» (ԳՏՄ 1—4)։

2) Ներածություն՝ «Վկայութիւն բաղմաց սուրբ նահատակաց Արեւելիաց...» (BHO 706, ԳՏՄ 5—94)։

3) Շմավոնի վկայաբանությունը (համառոտ խմբագրություն՝ BHO 1117, ԳՏՄ 95—140)։

4) Աղատի վկայաբանությունը (կցված է նախորդին. BHO 124, ԳՏՄ 141—145)։

5) Բարդիշոյի վկայաբանությունը (BHO 136, ՎՎՍ—1 193—199)։

6) Յազտանդուխտի վկայաբանությունը (ԳՏՄ 157—165)։

7) Մեղեսի վարբը (BHO 772, ԳՏՄ 177—187)։

8) Թերբուի վկայաբանությունը (BHO 1149, ԳՏՄ 150—155)։

³⁸ Sht. u. Nau, Un martyrologe. pp. 11—26.

³⁹ Sht. u. Wright, Catalogue I, part II, p. 631—633 (DCCXXVI—VI).

9) Բարբաշմենի վկայաբանությունը (BHO 135, ԳՏՄ 166—172):

10) Վկայությունն վկայիցն, որ սպանան ուրեք ուրեք (BHO 711, ԳՏՄ 173—176):

Հիշյալ երկու ձառնատիրներում (Մատենադարանի № 1522, 3777) այս նյութերը դասավորված են իրար շափաղանց մոտ՝ հաճախ բոլորովին չընդմիջարկված այլ երկերով: Օրինակ, № 1522 ձառնատրում «Վկայք Արևելից» ժողովածուի նյութերը ըստ հերթականության գրավում են հետևյալ տեղերը՝ 72, 73, 76, 77, 79, 80, իսկ № 3777 ձեռագրում՝ 77, 78, 89, 90, 91, 92, 93 (տե՛ս աղյուսակ 2): Սա ցույց է տալիս, որ հայ մատենագրության մեջ այս նյութերը ոչ թե իրարից անկախ երկեր են համարվել, այլ դիտվել որպես մի ժողովածուի բաղադրամասեր: Դատելով ձեռագրական ավանդույթի տվյալներից, պետք է ենթադրել, որ նախքան ձառնատիրներ թափանցելը «Վկայք Արևելից»-ի հայերեն թարգմանությունը ամփոփված է եղել մի առանձին հատորի մեջ: Այդ մասին պահպանվել է Թովմա Արծրունու ուղղակի վկայությունը. «...որպէս ընթեռնուք ի զիրս Պատմութեան վկայելոցն, որ յԱրևելեայ ասի գրոցն վերագրութիւն»⁴⁰: Եթե Թովման «Վկայք Արևելից»-ը ընթերցեր այլ սրբախոսական երկերի կողքին և այնպիսի դասավորությամբ, ինչպիսին հանդիպում ենք ձառնատիրներում, դժվար թե կռահեր, թե գործ ունի մի անկախ գրքի հետ: Հայերեն թարգմանության, հետևաբար և ասորական սկզբնագրի նախնական կաղմը որոշելու տեսակետից շափաղանց նշանակալից է նաև № 1522 և 3777 ձառնատիրների կապը, որն ակնհայտ է: Վերջիններս իրար են համընկնում ոչ միայն պարունակած նյութերի բովանդակությամբ, այլ նաև նրանց դասավորությամբ, չհաշված որոշ հավելյալ երկերը՝ № 3777 ձեռագրում: Ուստի պետք է ենթադրել, որ կամ հիշյալ ձառնատիրներից մեկը ընդօրինակված է մյուսից (հավանաբար № 3777-ը՝ 1522-ից), կամ նրանք ունեն ընդհանուր աղբյուր: Բոլոր դեպքերում գլխավորն այն է, որ երկու ձեռագրերում էլ առկա են «Վկայք Արևելից»

⁴⁰ Թովմա Արծրունի, Պատմութիւն, էջ 64

ժողովածուի միևնույն նյութերը և զետեղված են միևնույն դասավորությամբ: Սա ցույց է տալիս, որ երկու Ճառնտիրներում որևէ նյութի սոսկական գոյությունն արդեն երաշխիք է այն բանի, որ նա ժողովածուի հայերեն թարգմանության նախասկզբնական կազմի մասերից է: Պատահական շեղումներ, իհարկե, կարող են լինել, սակայն այն երկերը, որոնք պարունակվում են նշված Ճառնտիրներից միայն մեկում, կամ ընդհանրապես դուրս են երկուսից էլ, թեկուզ և մտնում են ասորական սկզբնագրի կազմի մեջ, չի կարելի անվերապահորեն դիտել որպես ժողովածուի հայերեն թարգմանության մասեր: Հայերեն թարգմանությամբ հայտնի է այդպիսի երեք գործ՝ Թեկղի վկայաբանությունը (BHO 1157, ԳՏՄ 189—196), որը առկա է միայն № 3777 ձեռագրում, այն էլ զետեղված բավականին հեռու «Վկայք Արևելից»-ի նյութերից, և Ակեփսիմայի վկայաբանությունն (BHO 22, ԳՏՄ 197—230) ու Մելեսի վարքի համառոտ խմբագրությունը (ՎՎՍ—2 33—37), որոնք ընդհանրապես դուրս են նշված Ճառնտիրների կազմից:

Հայերեն թարգմանության առաջաբանի տվյալներով (ԳՏՄ 2—3), թարգմանված են եղել նաև Շահգոսդի (BHO 1033) և 120 նահատակների (BHO 718) վկայաբանությունները, սակայն նրանք մեզ չեն հասել:

Վերոհիշյալ ամբողջական ընդօրինակություններից բացի «Վկայք Արևելից» ժողովածուի հայերեն թարգմանության առանձին հատվածներ հանդիպում են նաև Մաշտոցի անվ. Մատենադարանի, Երուսաղեմի հայ պատրիարքարանի, վենետիկյան Մխիթարյանների և Փարիզի Ազգային գրադարանի մի շարք ձեռագրերում: Ժողովածուի հայերեն թարգմանության ձեռագրական ավանդույթին կարելի է ծանոթանալ աղյուսակ 2-ի օգնությամբ⁴¹:

Մինչև 1921 թվականին «Վկայք Արևելից» ժողովածուի

⁴¹ Աղյուսակը կազմված է ըստ հայկական ձեռագրերի հետևյալ ցուցակների. Սարգիսյան, Մայր ցուցակ. Պողոսյան, Մայր ցուցակ. Յուզակ Մատենադարանի. Մայր ցուցակ էջմիածնի. Macler, Catalogue:

	Առաջաբան	Գրություն	Շմտիկ	Ազատ	Բարդություն
Երևան, № 1522, 12-րդ դ.	հր—72	հր—72	ծր—52 հգ—73	հգ—73	հգ—76
Երևան, № 3777, 1185/88 թթ.	հէ—77	հը—78	խդ—46	խդ—46	հէ—77
Երևան, № 3782, 12-րդ դ.					
Երևան, № 3787, 13-րդ դ.				×	
Երևան, № 993, 1456 թ.		ձթ—89			
Երևան, № 992, 1651 թ.					
Երևան, № 6196, 1227/1655 թթ.					
Երուսաղեմ, № 1, 1418 թ.					
Երուսաղեմ, № 9, 16-րդ դ.					
Երուսաղեմ, № 173, 1512 թ.					
Վենետիկ, № 200, 1224 թ.			83	×	9
Վենետիկ, № 201, 12—13-րդ դդ.			24	24	
Վենետիկ, № 204, 1215 թ.			15	15	
Վենետիկ, № 218, 1835 թ.					
Վենետիկ, № 228, 1847 թ.		171			
Վենետիկ, № 231, 1860 թ.					9
Վենետիկ, № 232, 1857 թ.		26—28			
Փարիզ, № 111, 12-րդ դ.		84			
Փարիզ, № 117, 1307 թ.					4
Փարիզ, № 118, 14-րդ դ.		275			
Փարիզ, № 120, 14-րդ դ.					
Փարիզ, № 178, 12-րդ դ.					

Հայերեն թարգմանություն ամբողջական հրատարակումը, նրա որոշ մասեր լույս էին տեսել դեռ XIX դարում «Լիակատար վարք սրբոց» (Ավդերյան, 1810—1815), «Սուփերբ հայկականք» (Ալիշան, 1853—1854) և «Վարք և վկայաբանությունք սրբոց» (1874) ժողովածուներում: Դրանք են՝ ժողովածուի ներածությունը (Ճառ ի վկայսն Արևելից)⁴², Շմտվոնի վկայաբանությունը⁴³, Ակհփսիմայի, Հովսեփի և Այթալահի վկայաբանությունը⁴⁴, Մեխսի

⁴² Տե՛ս «Սուփերբ հայկականք», հ. Ի, էջ 55—155: Ներածությունից մի հատված (ի վկայսն Արևելից) հրատարակված է Եփրեմ Ասորու երկերի հետ, տե՛ս Եփրեմ, Մատենադրությունք, հ. 4, էջ 150—152:

⁴³ Տե՛ս «Սուփերբ հայկականք», հ. Ի, էջ 1—54:

⁴⁴ Տե՛ս Ավգերյան, Վարք սրբոց, հ. Ը, էջ 175—223. ՎՎՍ—1 89—102:

Համարային- դասեր	Սկիզբ	Քեղրու	Բարձրագույն	Վկայություն վկայություն	Քեղի	Ավելիսկիմ
հէ—77	հթ—79	հթ—79	ձ—80	ձ—80		
ձթ—89	դ—90	դա—91	դթ—92	դդ—93	ծա—51	×
	ծա—51				ծդ—53	×
	իբ—22				իդ—26	ժդլ—298
	71				դ—4	4—5
					56	
	18					9
						170
						331

վարքի համառոտ խմբագրությունը⁴⁵, Բարդիշոյի վկայաբանու-
թյունը⁴⁶, նշված հրատարակություններում բնագրերի պատրաստ-
ման համար օգտագործված են վենետիկյան ձեռագրերը (տե՛ս
աղյուսակ 2): Ավգերյանը և Ալիշանը՝ Բեջանի նման, հետապնդում
էին դործնական նպատակ՝ պատրաստել ընթերցանության գրքեր,
այդ պատճառով նրանց հրատարակությունները հուշարձանների
բնագրագիտական վերլուծության համար առանձին արժեք չեն
ներկայացնում: «Վարք և վկայաբանությունը սրբոց» ժողովածուում
հրատարակված բնագրերը պատրաստված են ավելի բարձր

⁴⁵ Տե՛ս Ավգերյան, Վարք սրբոց, Ն. Ը, էջ 331—356. ՎՎՍ—2 33—37:

⁴⁶ Տե՛ս ՎՎՍ—1 193—199:

մակարդակով՝ տարընթերցվածքներով և անհրաժեշտ ճշգրտում-
ներով:

1921 թվականին Գ. Տեր-Մկրտչյանի կողմից իրագործված «Վկայք Արևելից» ժողովածուի ամբողջական հրատարակությունը ընդգրկում է հայերենով հայտնի բոլոր երկերը, բացի Բարդիշոյի վկայաբանությունից⁴⁷: Հրատարակության մեջ օգտագործված են այժմ Մաշտոցի անվ. Մատենադարանում պահվող № 1522 (A ընդօրինակություն), № 3777 (B), № 3787 (C) № 3782 (D), № 992 (F), № 993 (H) և Փարիզի Աղգային գրադարանի հայկական հավաքածուի № 111 (P) ձեռագրերը (տե՛ս աղյուսակ 2)⁴⁸: Բացի այդ, ընդգրկված են նաև «Սրբոյն Եփրեմի մատենագրութիւնք» (E), «Սովերբ հայկականք» (S) և «Վարք և վկայաբանութիւնք սրբոց» (W)⁴⁹ ժողովածուներում նախօրոք տպագրված հատվածները: Բնագրերի պատրաստման գիտական մակարդակի տեսակետից հայերեն թարգմանությունը շնորհիվ Գ. Տեր-Մկրտչյանի հրատարակության, գտնվում է անհամեմատ ավելի գերադասելի վիճակում, քան «Վկայք Արևելից»-ի ասորական սկզբնագիրը: Չնայած այն բանին, որ այդ հրատարակության մեջ օգտագործված են հայերեն թարգմանության գոյություն ունեցող ոչ բոլոր ընդօրինակությունները, այնուամենայնիվ այնտեղ արտահայտված են գոնե ընդգրկված ընդօրինակությունների բոլոր տվյալները, մի բան, որ չի կարելի ասել ոչ Ասեմանու, ոչ Բեջանի հրատարակության մասին: Գ. Տեր-Մկրտչյանի հրատարակության միակ թերությունն այն է, որ հայերեն թարգմանությունը չի ստուգված ասորական սկզբնագրով: Դրա հետևանքով ընդօրինակությունների բաղմաթիվ ճիշտ ընթերցվածքներ մնացել են տողատակում, իսկ հիմնական բնագրում տեղ են գտել պատահական, հաճախ աղավաղված ընթերցվածքներ⁵⁰:

⁴⁷ ԳՏՄ 1—248:

⁴⁸ Գ. Տեր-Մկրտչյանը ձեռագրերը նշում է բնականաբար Կարենյան և Դևորյան ցուցակների համաձայն՝ 1522=Կար. 916, 3777=Կար. 919, 3787=Գ. 671, 3782=Գ. 130, 992=Կար. 894, 993=Կար. 920:

⁴⁹ W²-ով նշված են ՎՎՍ-ի տարընթերցվածքները:

⁵⁰ Պետք է ավելացնել, որ ասորական սկզբնագրի հրատարակությունները

դ) Հունական աղբյուրներ. Հունական ձեռագրերում պահպանվել է «Վկայք Արևելից» ժողովածուի ընդամենը վեց բաժին.

1) Թերբուի վկայաբանությունը (BHO 1149, PO—2 439—444):

2) Շահդոսդի վկայաբանությունը (BHO 1033, PO—2 445—450):

3) Աբրահամի վկայաբանությունը (BHO 12, PO—2 450—452):

4) Ալեքսիմայի, Հովսեփի և Այթալահի վկայաբանությունը (BHO 22, PO—2 478—557):

5) Հոռմեացի գերինների վկայաբանությունը՝ Μαρκιανος της Τριζ (BHO 375, PO—2 453—473):

6) Բադմայի վկայաբանությունը (BHO 131, PO—2 473—477):

Այս երկերը ցրված են բաղմամբիվ հունական ձեռագրերում, սակայն նրանցից ոչ մեկում միասնաբար հանդես չեն գալիս: Սիւրյան մի անգամ միենույն ձեռագրում հանդիպում են Թերբուի ու Բադմայի և երկու անգամ՝ Շահդոսդի ու Աբրահամի վկայաբանությունները (տե՛ս աղյուսակ 3)⁵¹: Այդ պատճառով պատահական չէ, որ հետազոտողների առաջ հարց է ծառացած՝ արդյոք այդ երկերը հունարեն են թարգմանված մի ժողովածուի կազմում, թե իրարից անկախ⁵²: Խնդրի լուծումը բարդանում է այն հանգամանքով, որ նախ՝ պահպանված հատվածները կրել են բաղմամբիվ փոփոխություններ, երկրորդ՝ մեզ են հասել երբեք հարուստ զրական ավանդույթի փշրանքները միայն: Ինչպես նշում է հունական բնագրերի հրատարակիչ Հ. Դելայեն, մոտ X դարում ասորական վկայաբանությունների ժողովածուի հունարեն թարգմանու-

նույնպես մեծ օգուտ կարող էին ստանալ հայերեն թարգմանության հետ համեմատվելու դիպքում (տե՛ս մանրամասն զրույս Գ, 6):

⁵¹ Աղյուսակում նշված են միայն այն ձեռագրերը, որոնք օգտագործված են Դելայի կողմից հունական բնագրերի հրատարակության մեջ (րացի վերջինը), տե՛ս PO—2 410—418: Վերջին ձեռագրի մասին տե՛ս *Владимир Рукониси греческие*, стр. 130—139.

⁵² Տե՛ս PO—2 408:

Թյունը զգալիորին ավելի ծավալուն պետք է լիներ, քան այն, որը մեզ է հասել, այլապես անհնարին է բացատրել նրա նյութերի լայն տարածումը բյուզանդական Հայսմավուրքներում և Տոնապատճառներում⁵³։ Իսկապես, բյուզանդական Հայսմավուրքներում հիշատակվում են Մարութա նփրկերտցու «Վկայք Արևելից» ժողովածուի համարյա բոլոր հերոսները⁵⁴։ Կաղմված լինելով մոտ X դարում, բյուզանդական Հայսմավուրքներն, անշուշտ, պարունակում են անհամեմատ ավելի վաղ շրջանի նյութեր և, ըստ էության, իրենցից ներկայացնում են գոյություն ունեցած ընդարձակ սրբախոսական երկերի համառոտագրումները։ Այդ պատճառով նրանք արժեքավոր աղբյուր են «Վկայք Արևելից» ժողովածուի տվյալները ստուգելու համար։ Սակայն հունական աղբյուրների մեջ այս առումով ավելի նշանակալից * դեր է պատկանում Սողոմոնոսի «Նկեղեցական պատմությանը»։ Բյուզանդական պատմագրի նշանավոր երկասիրության երկրորդ գրքում մի քանի ղուլս նվիրված է պարսից քրիստոնյաների «մեծ հալածանքների» նկարագրությանը⁵⁵։ Հայտնի է նաև, որ Սողոմոնոսի Պատմության այս հատվածի աղբյուրը «Վկայք Արևելից» ժողովածուն է։ Մինչև վերջերս սա համարվում էր այն բանի վկայությունը, թե V դարի 40-ական թվականներին (Սողոմոնոսի Պատմության ստեղծման ժամանակ) արդեն գոյություն է ունեցել ժողովածուի հունարեն թարգմանությունը⁵⁶։ Սակայն Պ. Դեվոյի կարծիքով, այս փաստը դեռևս բավական չէ նման եզրակացության համար, քանի որ Սողոմոնոսը տիրապետում էր ասորերենին և կարող էր անմիջականորեն օգտվել ասորական աղբյուրներից⁵⁷։ Այս հարցը իր կաեորությունը հանդերձ մեր նպատակի համար նշանակություն չունի։ Գլխավորն այն է, որ Սողոմոնոսը օգտվել է «Վկայք

⁵³ Տե՛ս PO—2 405.

⁵⁴ Տե՛ս SEC. Նաև՝ Դեկայի կաղմած պարսից նահատակների անվանացանկը՝ PO—2 407—408:

⁵⁵ Տե՛ս Sozomenus Kirchengeschichte, S. 61—69.

⁵⁶ Տե՛ս Baumstark, Geschichte, S. 57. Peeters, Le passionnaire d'Adiabène, pp. 262—263. Peeters, La date, pp. 120, 142. Vööbus, History, p. 214.

⁵⁷ Տե՛ս Devos, Sozomène, p. 444.

	Քերական	Շահագրգիռ	Անբնական	Անբնական	Հոսանքի գրություն	Բազմա
Վենետիկ, սր. Մարկոս № 359, 11-րդ դ.	×					
Վատիկան, հուն. № 1660, 916 թ.	×					
Վիեննա, հուն. № 3, 11-րդ դ.		×				
Փարիզ, № 1452, 10-րդ դ.		×	×			
Փոտոսբուրգի հավաքածու, № 92, 16-րդ դ.		×				
Երուսաղեմ, № 1, 10-րդ դ.		×	×			
Մոսկվա, Սինոդ № 376, 11-րդ դ.			×			
Վատիկան, № 1671, 10-րդ դ.					×	
Վիեննա, հուն. № 45, 11-րդ դ.					×	
Ֆլորենցիա, № 1214, 14-րդ դ.					×	
Վատիկան, № 1669, 10-րդ դ.				×		
Վատիկան, № 866, 12-րդ դ.				×		
Փարիզ, № 1468, 11-րդ դ.				×		
Փարիզ, № 1519, 11-րդ դ.				×		
Վիեննա, հուն. № 5, 11-րդ դ.				×		
Օքսֆորդ № 68, 11-րդ դ.				×		
Վատիկան, № 807, 10-րդ դ.				×		
Փարիզ, № 1537, 11-րդ դ.				×		
Օքսֆորդ, № 43, 12-րդ դ.				×		
Վենետիկ, սր. Մարկոս № 349, 11-12-րդ դ.				×		
Փարիզ, № 1481, 11-րդ դ.				×		
Փարիզ, № 1020, 11-րդ դ.				×		
Փարիզ, № 1487, 11-րդ դ.				×		
Փարիզ, № 1522, 11-րդ դ.				×		
Մոսկվա, Սինոդ № 380, 1021/22 թթ.				×		

Արևելից»-ի նյութերից, քանի որ նրա Պատմությունը ժողովածուի յոյություն հնագույն վկայությունն է: Դրա շնորհիվ նա կարող է անկրկնելի ծառայություն մատուցել ժողովածուի նախասկզբնական կազմը որոշելու գործում: Ուշագրավ է ևս մի հանգամանք. սլավոնից բրիտանյանների հալածանքները նկարագրելիս Սոզոմենոսը բացի «Վկայք Արևելից»-ից օգտագործել է նաև մի շարք այլ աղբյուրներ: Այդ աղբյուրների հիման վրա է կազմված, օրինակ, հալածանքների ժամանակ նահատակված եպիսկոպոսների անվանացանկը⁵⁸: Եպիսկոպոսների մեջ կան այնպիսիք, որոնք Մարուֆա նիսիկներացու ժողովածուում չեն հիշատակվում:

⁵⁸ Տե՛ս Sozomenus, Kirchengeschichte, S. 68.

Համադրելով նշված ասորական, հայկական և հունական աղբյուրների տվյալները, կարելի է գծել «Վկայք Արևելից» ժողովածուի պատմության ընդհանուր պատկերը (տե՛ս աղյուսակ 4)։ Աղյուսակն արտացոլում է որոշ օրինաչափություններ, որոնց վերլուծությունը հնարավորություն է տալիս կարևոր եզրակացություններ անել։

Նշված աղբյուրներից ամենավստահելիները «ժողովածուի հայերեն թարգմանությունը», «Նահատակների ցուցակը» և «Սուղամենոսի Պատմությունն» են՝ շնորհիվ իրենց ճշգրիտ թվադրման։ Հայերեն թարգմանությունը, ինչպես հաջորդ գլխում ցույց կտրվի, կատարված է V դարի 50-ական թվականներին, «Նահատակների ցուցակը» կազմված է 411 թվականին, իսկ Սուղամենոսի Պատմությունը գրված է V դարի 40-ական թվականներին։ Պարզ է, որ այն հուշարձանները, որոնք ընդհանուր են այս երեք աղբյուրների համար, կամ թեկուզ հիշատակվում են նրանցից երկուսի մեջ, կազմում են «Վկայք Արևելից» ժողովածուի հնագույն շերտը։ Շմավոնի վկայաբանության համառոտ խմբագրությունը, Աղատի, Բերբուի, Շահոսդի, Բարբաշմենի, Հովհանի, Աբրահամի, Ակեփսիմայի, 40 նահատակների վկայաբանություններն ու Մեկսի վարքը անկասկած մտնում էին Մարութա Նփրրկերացու ժողովածուի նախասկզբնական կազմի մեջ։ Ըստ երեւոյթին, նույնպես ժողովածուի նախասկզբնական կազմից պետք է համարել այն երկերը, որոնք պահպանված են ասորական սկզբնագրով և հիշատակվում են վերահիշյալ երեք աղբյուրներից գոնե մեկում։ Սակայն այստեղ բացառված չէ, որ այդ հիշատակությունը հետագայի ընդմիջարկություն լինի, թեև դրա հավանականությունը շատ ընչին է, իսկ «Նահատակների ցուցակի» համար բոլորովին անհնարին։ Այդ երկերի թվին են պատկանում՝ ներածությունը, «վկայութիւն վկայիցն», 120 նահատակների վկայաբանությունը, Ներսէհի վկայաբանությունը, Քարթա դը Բեթ-Սլոբի նահատակների ցուցակը, Հակոբի և Մարիամի վկայաբանությունը, Այթալահի վկայաբանությունը, Հակոբի և Աղատի վկայաբանությունը, հուսիսային գերիների վկայաբանությունը և Բաղմայի վկա-

յաբանությունը: Ուշադրություն պետք է դարձնել այն բանին, որ նշված համարյա բոլոր երկերն էլ հիշատակվում են հունական Հայսմավուրքում: Այս հանգամանքը, անշուշտ, կարող է վստահություն ներշնչել նախասկզբնական համարելու նաև այն վկայաբանությունները, որոնք նշված են միայն տվյալ աղբյուրում և պահպանված են ասորական սկզբնաղբյուր, այսինքն՝ Անանիայի և Թեկղի վկայաբանությունները⁵⁹:

Մնացած նյութերը առկա են աղյուսակում նշված վեց աղբյուրներից միայն մեկում՝ կամ ժողովածուի ասորական սկզբնաղբյուր, կամ հայերեն թարգմանության մեջ: Նրանց նախասկզբնականությունը վկայող ոչ մի արտաքին փաստ չկա: Այդ պատճառով յուրաքանչյուր առանձին դեպքում այդ հուշարձանների նախասկզբնականությունը որոշելու համար պահանջվում են լրացուցիչ ապացույցներ, հատկապես ներքին՝ բնագրագիտական վերլուծության տվյալներ: Համենայն դեպս նրանց մեծամասնության առնչությունը «Վկայք Արեւելից» ժողովածուի նախնական կազմին՝ կասկածելի պետք է համարել: Նման եզրակացության ճշտությունը հաստատվում է այն փաստով, որ միայն մի աղբյուրում (ասորական սկզբնաղբյուր) պահպանված Պուսակի, Մարթայի և խուժաստանցի նահատակների վկայաբանությունները իսկապես վերաբերում են ավելի ուշ շրջանի, քան «Վկայք Արեւելից»-ի գրության ժամանակը: Այս հուշարձաններում հիշատակվում են նույնիսկ 428/29 թվականների դեպքեր, մինչդեռ հայտնի է, որ Մարութա նիւրկերոցին մեռած էր դեռ 420 թվականից էլ առաջ⁶⁰: Այսպիսով, Մարութա նիւրկերոցու ժողովածուի կասկածելի բաժինների շարքը պիտի դասել՝ Շմավոնի վկայաբանության ընդարձակ խմբագրությունը, Պուսակի, Մարթայի, խուժաստանցի նահատակների, Բարշեբայի, Դանիելի և Վարդայի, Գելանի նահատակների, Բադայի վկայաբանությունները, որոնք հայտնի են միայն ասորական սկզբնաղբյուր, ինչպես նաև ժողովա-

⁵⁹ Թեկղի վկայաբանությունը թեև կա նաև հայերենով, սակայն V դարի թարգմանություն չէ (տե՛ս ներկա աշխատության գլուխ Դ, 1):

⁶⁰ S^hu AMS 241.

Ժողովածուի ասորերեն սկզբնաղբը	«411 թ. նահատակների ցուցակը»	Ժողովածուի հայերեն թարգմանությունը
Ներածություն Շմավոն համառոտ խմբ. Շմավոն ընդարձ. խմբ. Աղատ Թերբու Շահդոսդ Բարբաշմեն Վկայություն վկայիցն 120 նահատակներ Պուսակ Սարթա Խուժառտանի նահատակներ Մելես Բարշեբիա Դանիել և Վարդա Եներսեհ Բարբա դը Բեթ—Սլորի նահատակներ Հովհան Աբրահամ Անանիա Հակոբ և Մարիամ Թեկդ Բարթաղբըշաբբա Այթալահա Հակոբ և Աղատ Ակեփսիմա Հոռմեացի գերիներ 40 նահատակներ Բաղմա Բաղալ Գեղանի նահատակներ	Sēm'ōn Šahdōsd Barba'šmīn Miles Narsā Yōhanān, Šabūr Yohanān 'Abrahām Ya'qōb men Tellā Barhādbsabbā men Ha- dyab Qasīše men Bet Huzā- yē Badmā	Առաջարան Ներածություն Շմավոն համառ. խմբ. Աղդ Թերբու (կորած է) Բարբաշմեն Վկայություն վկայիցն (կորած է) Մելես Թեկդ Ակեփսիմա Յաղտանդուխտ Բարդիշո

Ժուլի առաջաբանը, Յաղտանդուխտի և Բարդիշոյի վկայաբանու-
թյունները, որոնք պահպանված են միայն հայերեն թարգմանու-
թյամբ:

Մարութա նփրկերտցու «Վկայք Արևելից» ժողովածուի

Ժողովածուի հունարեն թարգմանությունը	Հունական Հայտնաբերվածը	Պողոսյանի հունական սխալագրությունը
Փերթոնի Σαῶν	Συμεών 'Αῤῥά Φερθεύθης Σαῶν	Συμεώνης 'Αῤῥῶθης Ταρθεύθα Βαρβασυμης
	120 μαρτύρων	
	Μίλη	Μίλη
	Νηρῶ 'Ιωάννου. Σαῶν	
'Αβράμης	'Ιωάννου. 'Ιακώβου 'Αβραμίου 'Ανανίου	'Ιωάννης 'Αβράμης
	Θέκλη	
	'Αειθαλῆ 'Ιακώβου καὶ 'Αῤῥῆ	'Αειθαλῆς 'Αῤῥῶν
'Αγεψίμας	'Αγεψίμα ἐν αἰγυπλίῳ	'Αγεψίμας Δουσας. Μαρελθης
''Ια	'Αβδῆ. 'Αβδουσοῦ	'Αβδῆς. 'Αβδουσοῦς
Βαδῖμος	Βαδῖμου	

ուսումնասիրումը սկսվում է Ե. Ասեմանու հրատարակության ներածությամբ (1748)⁶¹: Գիտական խնդիրները ընդգրկվածը և

⁶¹ Տե՛ս ASM XLII—LXXXVI.

փաստական հյուսիս ծավալով Ասեմանու ներածությունը մինչև վերջին ժամանակներս ժողովածուի լավագույն հետազոտությունն էր: Այստեղ մանրամասն քննված են ժողովածուի բաղկացուցիչ մասերի թվագրման, փոխառնչակցության և հեղինակության հարցերը: Ընդ որում վերջին հարցը այս քննության մեջ հատուկ տեղ է գրավում: Ասեմանին «Վկայք Արևելից»-ը դիտում է որպես մի ամբողջական և համասեռ գրական ստեղծագործություն, առանց ուշադրություն դարձնելու նրա բաժինների բովանդակության և ոճի բաղմադանությանը: Ուստի զարմանալի չէ, որ նա ամբողջ ժողովածուի հեղինակությունը վերագրում է Մարութա Նիրիկերտյուն: Ընդհանուր ներածությունից բացի արժանի են հիշատակման նաև մասնակի առաջաբանները, որոնք Ասեմանին տեղադրել է ժողովածուի յուրաքանչյուր բաժնից առաջ: Այս փոքրիկ առաջաբաններում լուսաբանվում է վկայաբանության հերոսի գործունեությունը ժողովածուի և մի շարք այլ ասորական, հունական, ղպտական, լատինական աղբյուրների տվյալներով: Դրա շնորհիվ Ասեմանու հետազոտությունը դեռ մինչև այժմ էլ պահպանում է իր գիտական արժեքը՝ հանգիստանալով «Վկայք Արևելից» ժողովածուի ուսումնասիրման յուրատեսակ տեղեկագիր:

Սակայն չնայած իր բոլոր արժանիքներին, Ասեմանու գործը հետազոտողների կողմից լուրջ արձագանք չգտավ ամբողջ XVIII—XIX դարերի ընթացքում: Սա պետք է բացատրել, իհարկե, ոչ թե հատուկ միտումնավորությամբ, այլ պարզապես ասորագիտության զարգացման պատմությամբ, ի նկատի ունենալով, որ այն ճանաչված գիտություն դարձավ միայն XIX դարի վերջում: Նշված երկու դարերում «Վկայք Արևելից»-ը ունեցավ, սակայն, Ասեմանու բնագրի հիման վրա կատարված ֆրանսերեն թարգմանության կրկնակի (1776, 1852)⁶² և գերմաներեն թարգմանության մի հրատարակություն (1836)⁶³:

Ասեմանու եզրակացությունները ասորագիտության մեջ տիրապետող էին մինչև «Վկայք Արևելից» ժողովածուի երկրորդ

⁶² Lagrange, Les actes, 1776, 1852.

⁶³ Zingerle, Echte Akten.

Հրատարակությունը, որը ձեռնարկվեց Պ. Բեջանի կողմից (1891)⁶⁴: Ճիշտ է, Բեջանը ժողովածուի ուսումնասիրության մեջ որևէ նորություն չմտցրեց, սակայն այն հանգամանքը, որ նա հրատարակեց ժողովածուի նախկինում անհայտ, ընդարձակ խմբագրությունը, շատ բանով նպաստեց այդ հուշարձանի նկատմամբ հետաքրքրության վերածնմանը: Սակայն Բեջանի գործի նշանակությունը չի սահմանափակվում այսքանով. նա ընդհանուր մատենաշարով լույս ընծայեց ասորիների համարյա ողջ սրբախոսական գրականությունը, դրանով ցույց տալով Մարութա Նփրկերտցու ժողովածուի տեղը այդ գրականության մեջ: Եվ XIX դարի վերջում «Վկայք Արևելից»-ի նկատմամբ հետաքրքրության աշխուժացումը շատ բանով պայմանավորված է Բեջանի հրատարակությամբ:

Ժողովածուին հատուկ գլուխ է նվիրում Ռ. Դյուվալը իր «Ասորական գրականություն» ուսումնասիրության մեջ (1899)⁶⁵: Բեկ Դյուվալի գործը այս հատվածում ինքնուրույնությամբ աչքի չի ընկնում, սակայն այն նույնպես նպաստել է Մարութայի երկերի վրա ուշադրության հրավիրմանը: «Ասորական գրականություն» առաջին հրատարակության մեջ Դյուվալը, կրկնելով Ասեմանու եզրակացությունները, պարզապես շարադրում է ժողովածուի հիմնական բաժինների բովանդակությունը: Հետագայում, երրորդ հրատարակության պատրաստման ժամանակ նա Ժ. Լաբուրի աշխատանքների ազդեցությամբ վերանայում է իր հայացքները (1907): Եթե, օրինակ, նախկինում Դյուվալը անվերապահորեն ժողովածուի հեղինակ էր համարում Մարութա Նփրկերտցուն, ապա նոր հրատարակության մեջ օգտագործում է արդեն ղգույշ արտահայտություն՝ «Մարութա Նփրկերտցուն վերադրվող ժողովածու»: Սակայն ժողովածուին նվիրված գլխի բնույթը սրանից չի փոխվում. նրա նպատակը առաջվա պես մնում է ժողովածուի նյութերի հետ ընթերցողներին ծանոթացնելը:

«Վկայք Արևելից» ժողովածուի գիտական ուսումնասիրման

⁶⁴ AMS 57.—396.

⁶⁵ St^e Duval, La littérature, 1899, pp. 129—147; 1907, pp. 119—135.

ճանապարհին կարևոր քայլ հանդիսացավ Ժ. Լաբուրի մենագրությունը՝ նվիրված պարսից քրիստոնեության պատմությանը (1904)⁶⁶։ Տվյալ հարցին Լաբուրը մեծ ուշադրություն է հատկացրել, որովհետև սրբախոսական հուշարձանները նրա մենագրության մեջ օգտագործված ամենակարևոր աղբյուրների թվին էին պատկանում։ Լաբուրի վաստակը Մարութա նփրկերացու ժողովածուի ուսումնասիրման մեջ այն է, որ նա առաջինն էր, որ ժողովածուում տեսավ տարբեր ժամանակ և տարբեր վայրերում ապրած բաղմաթիվ հեղինակների աշխատանքը։ Նա ժողովածուում նկատեց նաև որոշակի տեղական ավանդույթներից բխող առանձին գրական շարքերի առկայությունը։ Ելնելով այս փաստերից, ինչպես նաև Ասեմանու կովանների բնագատությունից, Լաբուրը ժխտեց մինչև այդ գոյություն ունեցող կարծիքն այն մասին, թե ժողովածուն ամբողջապես գրված է մի մարդու ձեռքով։ Լաբուրի մոտ շփմնավորված պետք է համարել միայն այն, որ նա այս նոր տեսության աղբյուրությամբ, բոլորովին ժխտում է նաև Մարութա նփրկերացու դերը ժողովածուի ստեղծման գործում։ Նրա միակ փաստարկն այստեղ՝ V դարի իրադարձությունների մասին XIII—XIV դարերի հեղինակ Աբդ-Իշոյի տեղեկությունների արժանահավատության նկատմամբ ունեցած կասկածն է։ Թեև, ըստ էության, Աբդ-Իշոյի տեղեկությունների անվավերության հնարավորությունը բացառված չէ, սակայն այդ ապացուցելու համար միայն կասկածը բավական չէ, անհրաժեշտ են ուղղակի փաստեր, իսկ այսպիսիք Լաբուրը չի բերում։

Մարութա նփրկերացու «Վկայք Արևելից» ժողովածուի ուսումնասիրման գործում նշանակալից տեղ է դրավում ժողովածուի գլխավոր երկի՝ Շմավոն Բար-Բաբբայի վկայաբանության նոր հրատարակությունը (1907)⁶⁷։ Վկայաբանության երկու խմբագրությունների՝ Մ. Կմոսկոյի պատրաստած քննական բնագիրը հետազոտողներին հուսալի նյութ տրամադրեց բնագրագիտական և աղբյուրագիտական վերլուծության համար։ Այդպիսի

⁶⁶ St'ou Labourt, Le christianisme, pp. 43—82.

⁶⁷ PS.—2 661—960.

վերլուծությամբ առաջինն զբաղվեց հենց ինքը՝ բնագրերի հրատարակիչը։ Բնագրերին կցված հետադոտության մեջ Կմոսկոն քննում է վկայաբանության համառոտ և ընդարձակ խմբագրությունների թվագրման, փոխկապակցության և հեղինակության հարցերը⁶⁸։ Հատուկ ուշադրություն է հատկացված նաև վկայաբանության գլխավոր հերոսի՝ Շամսի Բար-Սաբբայի կենսագրության վերականգնմանը, նրա հասարակական և գրական գործունեության բնորոշմանը և «մեծ հալածանքների» շրջանի իրադարձությունների նկարագրությանը։

«Վկայք Արևելից» ժողովածուին փոքր գլուխներ են հատկացված նաև Վ. Ռայտի (1887)⁶⁹, Ա. Բաումշտարկի (1922 թ.)⁷⁰ և Ժ.-Բ. Շաբոյի (1935 թ.)⁷¹ ասորական գրականության պատմությանը նվիրված աշխատություններում։ Լինելով յուրատեսակ տեղեկագրեր, այս աշխատությունները առանձնապես աչքի չեն ընկնում ինքնուրույն հետադոտական բնույթով։ Ուշագրավ է միայն Բաումշտարկի կարծիքը «Վկայք Արևելից» ժողովածուի այսպես կոչված «նախնական խմբագրություն» մասին, որը իբր հետագայում լրացվել է նոր մասերով։

Երկար ժամանակ «Վկայք Արևելից»-ի ուսումնասիրությունը է զբաղվել Պ. Պետերսը։ 1910 թվականին լույս տեսած մի հոդվածում նա հատուկ քննության է ենթարկում Ազատի վկայաբանությունը և ժողովածուի մի շարք բաժիններ, որոնք տեղեկություններ են պարունակում արքունի ներքինի Ազատի կամ Գուշթազատի մասին⁷²։ Ասորագիտության մեջ մեծ ներդրում է հանդիսանում Պետերսի մի այլ հետադոտություն՝ նվիրված ադիաբենցի նահատակների վկայաբանությունների շարքին (1925)⁷³։ Վերլուծելով սասանյան տերության հյուսիս-արևմտյան շրջաններից ծագող սրբախոսական հուշարձանները, Պետերսը հանդում է այն

⁶⁸ Տե՛ս PS—2 661—714.

⁶⁹ Տե՛ս Раїт, Краткий очерк, стр 32—33.

⁷⁰ Տե՛ս Baumstark, Geschichte, S. 53, 55—57.

⁷¹ Տե՛ս Chabot, Litterature, pp. 40—43.

⁷² Տե՛ս Peeters, Eleutherios.

⁷³ Տե՛ս Peeters, Le passionnaire d'Adiabène.

կորակացության, որ հնում Ադիաբենում գոյություն է ունեցել ինքնուրույն սրբախոսական ավանդույթ, հնարավոր է նույնիսկ՝ ադիաբենցի նահատակների վկայաբանությունների մի ժողովածու, որի փշրանքները պահպանվել են Սողոմենոսի «Եկեղեցական պատմության» մեջ, «Վկայք Արևելից» ժողովածուում, 411 թվականի «Նահատակների ցուցակում» և «Արքեպիսկոպոս Ժամանակագրության»⁷⁴ մեջ։ Պետերսի այս աշխատության մեջ մեծ արժեք են ներկայացնում հատկապես «Ադիաբենյան վկայաբանությունների ժողովածուի» յուրաքանչյուր բաժնին հատկացված առանձին գլուխները։ Այստեղ հեղինակը տալիս է երկերի մանրամասն բանասիրական վերլուծությունը, ինչպես նաև պարզաբանում այդ երկերի պարունակած պատմական տվյալների արժանահավատության հարցը։

Մարութա նվիրերտցու ժողովածուի ուսումնասիրման հետ կապված որոշ հարցեր լուծաբանված են Ա. Վյոբուսի՝ ասորական Արևելքի ճգնաճեղացության պատմությանը նվիրված աշխատության մեջ (1958)⁷⁵։ Հատկապես ուշադրության արժանի են այն գլուխները, որտեղ քննվում են ժողովածուի հեղինակի անձնավորության և Մելեսի սրբախոսական եռապատումի արժանահավատության հարցերը։

Նորագույն ուսումնասիրություններից անհրաժեշտ է նշել նաև Պ. Դելույի մի հոդվածը (1966)⁷⁶, որի նպատակն է պարզել Սողոմենոսի «Եկեղեցական պատմության» մեջ Շմավոն Բար-Սաբբային նվիրված հատվածի աղբյուրը։ Այս խնդրի լուծումը կարևոր է այնքանով, որ ասորական սրբախոսական երկերի և Սողոմենոսի Պատմության առնչությունների պարզաբանումը սկզբունքային նշանակություն ունի Մարութայի «Վկայք Արևելից» ժողովածուի ուսումնասիրման համար։

Ժողովածուին նվիրված աշխատությունների մեջ իր գիտական մակարդակով և հետադոտության եղանակով առանձնանում է

⁷⁴ *St'u Mingana*, Sources syriaques, pp. 1—169.

⁷⁵ *St'u Vööbus*, History, pp. 209—217.

⁷⁶ *St'u Devos*, Sozomène.

դերմանացի ասորագետ Գ. Վիսների վերջինս լույս տեսած մենագրությունը (1967)⁷⁷։ Եթե բոլոր նախորդ հեղինակները բավարարվում էին պատմա-բանասիրական, մասամբ բնագրագիտական ուսումնասիրությունամբ, ապա Վիսները կիրառում է ինչ-որ չափով զուտ գրականագիտական սկզբունք։ Նա կապ է հաստատում ժողովածուի առանձին բաժինների միջև, վերականգնում նրանց ծագման պատկերը, հենվելով բացառապես այդ երկերի գեղարվեստական առանձնահատկությունների վերլուծության վրա։ Զեռագրական ավանդույթը կամ ժողովածուի նյութերին վերաբերող այլ աղբյուրների տվյալները Վիսների համար կարծես երկրորդական նշանակություն ունեն։ Նրա ողջ ուշադրությունը ուղղված է վկայաբանությունների առանձին խմբերի ընդհանուր տարրերի բացահայտմանը և զնահատմանը։ Վիսների աշխատության այսպիսի բնույթը բացատրվում է նրա նպատակով։ Հեղինակն իր առջև խնդիր է դրել, տալ ժողովածուի գրականագիտական վերլուծությունը՝ նրա նյութերի պատմական ուսումնասիրության համար հիմք պատրաստելու նպատակով⁷⁸։ Այս տեսանկյունով մենագրության մեջ քննության են ենթարկված Շմալոն Բար-Սաբբայի և ադիաբենցի նահատակների վկայաբանությունների շարքերը։ Հետաքրքիր է Շմալոնի վկայաբանության համառոտ և ընդարձակ խմբագրությունների «ընդհանուր» սկզբնաղբյուրի վերականգնման փորձը, որը իր ծավալով և նշանակությամբ մենագրության մեջ կենտրոնական տեղ է գրավում։ Սակայն այստեղ հեղինակի ավելորդ մանրախնդրությունը հասցնում է ծայրահեղությունների և անհամոզիչ եզրակացությունների։

Բացի «Վկայք Արևելից» ժողովածուի բանասիրական ուսումնասիրությանը նվիրված աշխատություններից կարելի է նշել նաև որոշ պատմական բնույթի հետազոտություններ, որոնցում այս կամ այն չափով արժարժվում են մեզ հետաքրքրող հարցերը։ Տվյալ հետազոտությունների առանձնահատկությունն այն է, որ այստեղ արդեն ժողովածուի նյութերը հանդես են գալիս ոչ թե

⁷⁷ Sk'us Wiessner, Märtyrerüberlieferung

⁷⁸ Sk'us նույն տեղում, էջ 39։

որպես ուսումնասիրության առարկա, այլ որպես Սասանյան Պարսկաստանի եկեղեցական և հասարակական-տնտեսական պատմության որոշակի աղբյուր: Այս պատմական հետազոտությունների մեջ ժամանակով առաջին տեղը գրավում է Գ. Վեստֆալի աշխատությունը, որը նվիրված է XII—XIV դարերի արաբալեզու ասորի ժամանակագիրներ Մարիի, Ամրի, Սլիբայի և Հովհանի «Եկեղեցական ժամանակագրությունների» քննությանը (1901)⁷⁹: Աշխատության կորիզը կազմում են երկու հիմնական հարց, առաջին՝ նշված ժամանակագրությունների աղբյուրները, երկրորդ՝ նրանց արժանահավատությունը: Եվ նեստորական ժամանակագիրների պատմական տվյալների վավերականությունը ստուգելու համար օգտագործված գլխավոր աղբյուրների թվում հանդես են գալիս «մեծ հալածանքների» շրջանի սրբախոսական նյութերը:

Իրենց հերթին, Մարութա Նիրկերտցու ժողովածուի պատմական տեղեկությունների արժանահավատության և հուսալիության հարցերը քննության են ենթարկված որոշ աշխատություններում, որոնց խնդիրն է պարզել Շմավոն Բար-Սաբբայի մահվան և «մեծ հալածանքների» ձեռնարկման տարեթիվը: Դրանց մեջ հատկապես հիշատակության արժանի են Պ. Պետերսի (1921, 1938)⁸⁰ և Մ. Հիգգինսի (1951, 1955)⁸¹ հոդվածները:

«Վկայք Արևելից» ժողովածուի նյութերի նշանակությունը սասանյան տերության իրավական կարգերի ճանաչման համար հետաքրքիր կերպով վեր է հանված դանիացի արևելագետ Ա. Քրիստենսենի «Սասանյան Իրանի պատմություն» գրքում» (3-րդ հրատ. 1944)⁸²:

Սակայն Սասանյան Իրանի պատմության ուսումնասիրման գործում սրբախոսական հուշարձանների արժեքը ամենից լավ բացահայտված է Ն. Պիգուլևսկայայի հետազոտություններում

⁷⁹ Westphal, Untersuchungen.

⁸⁰ Sh'ua Peeters, Le début; Peeters, La date.

⁸¹ Sh'ua Higgins, Aphraates dates; Higgins, Date.

⁸² Sh'ua Christensen, L'Iran, pp. 299—313.

(1956, 1968, 1970)⁸³: Պիգուլևսկայայի աշխատություններում հատկապես ուշագրավ է այն հանգամանքը, որ նրա բոլոր եզրակացությունները հիմնվում են որոշակի նյութի վրա: Այսպես, «Իրանի քաղաքները վաղ միջնադարում» գրքի «Տուրքերը և հարկերը քաղաքներում» գլուխը գրված է բացառապես Շմավոն Բար-Սաբբայի վկայաբանության տվյալների հիման վրա⁸⁴, իսկ «Քաղաքների բնակեցումը և արհեստների կազմակերպումը» գլխի աղբյուրը Պուսակի վկայաբանությունն է⁸⁵: «Շապուհ Բ և Գուշթադատ խորհրդական» հոդվածում ցույց է տրված Գուշթադատի վկայաբանության նշանակությունը սասանյան արքունիքի առօրյա իրադրությունը պատկերացնելու համար⁸⁶: Մի այլ հոդվածում ընդգծված է Թերբուի վկայաբանության դերը սասանյան պետության դատավարական կարգը վերականգնելու գործում⁸⁷: Ն. Պիգուլևսկայան բացի «Վկայք Արևելից» ժողովածուի նյութերի գործնական կիրառումից մեծ տեղ է հատկացնում նաև նրանց բանասիրական և աղբյուրագիտական վերլուծությանը⁸⁸:

Մարութա Նփրկերտցու «Վկայք Արևելից» ժողովածուի հայերեն թարգմանությանը նվիրված են շատ ավելի քիչ աշխատություններ, քան ասորական սկզբնագրին: Կարելի է նշել ընդամենը երկու հոդված, որոնք հատուկ վերաբերում են տվյալ խնդրին: Դրանք են Հ. Անդրիկյանի փոքրիկ աշխատությունը (1905)⁸⁹ և Ե. Տեր-Մինասյանի զրախոսականը հայերեն թարգմանության հրատարակության առթիվ (1922)⁹⁰: Անդրիկյանի հոդվածում հիմնական ուշադրությունը կենտրոնացած է «Վկայք Արևելից»-ի և Նդիշեի Պատմության կապի բացահայտման վրա: Թեթևակի

⁸³ Տե՛ս *Пигулевская, Города Ирана; Пигулевская, Шапур II; Pigulevskaja, Tarbo.*

⁸⁴ Տե՛ս *Пигулевская, Города Ирана* стр. 242—251.

⁸⁵ Նույն տեղում, էջ 219—225:

⁸⁶ Տե՛ս *Пигулевская, Шапур II*, стр. 101.

⁸⁷ Տե՛ս *Pigulevskaja, Tarbo*, S. 97—99.

⁸⁸ Տե՛ս *Пигулевская, Города Ирана*, стр. 145—149.

⁸⁹ Տե՛ս Անդրիկյան, Արևելեան վկայք:

⁹⁰ Տե՛ս Տեր-Մինասյան, Հետազոտություններ, էջ 65—87:

շողափված է նաև ժողովածուի և Աղաթանգեղոսի Պատմության առնչությունների հարցը: Ինչ վերաբերում է Տեր-Մինասյանի գրախոսությանը, ապա այն հարցերի ավելի լայն շրջանակ է քննարկում, սակայն, ինչպես և սովասելի էր նման փոքրածավալ աշխատանքների դեպքում, այդ հարցերի քննությունը ակնարկային բնույթ է կրում: Այնուամենայնիվ «Վկայք Արևելից» ժողովածուի հայերեն թարգմանության ուսումնասիրության հետ կապված որոշ խնդիրներ Տեր-Մինասյանի հոգվածի շնորհիվ գտել են իրենց լուծումը: Դրանց թվին է պատկանում, օրինակ, Ալեքիսիմայի վկայաբանության և Մելեսի վարքի հայերեն թարգմանության սկզբնաղբի լիզվի որոշումը:

Արժանի են հիշատակության նաև Ն. Բյուզանդացու (1887, 1900)⁹¹, Գ. Տեր-Մկրտչյանի (1896)⁹² և Ա. Վարդանյանի (1922)⁹³ հետազոտությունները, որոնցում այս կամ այն չափով շողափված են Մարութա Նփրկերտցու ժողովածուի հայերեն թարգմանության խնդիրները:

«Վկայք Արևելից» ժողովածուի և Եղիշեի Պատմության առնչություններին մի ամբողջ գլուխ է նվիրված Բ. Կյուլեսերյանի «Եղիշէ» քննական ուսումնասիրության մեջ (1909)⁹⁴:

Արրահամ խոստովանողի կենսագրության և գրական ժառանգության հարցերը քննության են ենթարկված Գ. Տեր-Պողոսյանի (1895, 1896)⁹⁵, Վ. Հացունու (1896)⁹⁶, Ղ. Ալիշանի (1901)⁹⁷, Մ. Օրմանյանի (1912)⁹⁸, Գ. Տեր-Մկրտչյանի (1921)⁹⁹, Հ. Անասյանի

91 Տե՛ս Բյուզանդացի, Քննասէր. Բյուզանդացի, Կորին:

92 Տե՛ս Տեր-Մկրտչյան, Գորիա և Շմոնի վկայից:

93 Տե՛ս Վարդանյան, Ի վկայան Արևելից: Տե՛ս նաև Վարդանյանի մի այլ հոգված՝ նվիրված Գորիայ և Շմոնի վկայաբանությանը, որի թարգմանությունը նույնպես վերագրվում է Արրահամ խոստովանողին (Վարդանյան, Յիշատակ):

94 Տե՛ս Կյուլեսերյան, Եղիշէ:

95 Տե՛ս Տեր-Պողոսյան, Եղիշէ. Տեր-Պողոսյան, Նկատողութիւններ:

96 Տե՛ս Հացունի, Խորհրդածութիւնք:

97 Տե՛ս Ալիշան, Հայապատում:

98 Տե՛ս Օրմանյան, Ազգապատում:

99 Տե՛ս ԳՏՄ, Յառաջարան, էջ XI—XXII:

(1959)¹⁰⁰, Ն. Ակինյանի, Պ. Տեր-Պողոսյանի (1970)¹⁰¹ և այլոց գործերում:

Ժողովածուի հունարեն թարգմանության մասին առաջժամ գույություն ունի միայն մի աշխատություն՝ հունական բնագրերի հրատարակիչ Հ. Դեկայեի հանգամանալից ներածությունը (1907)¹⁰²: Այն համարյա ամբողջապես նվիրված է հունարեն թարգմանության ձեռագրական ավանդույթի բացահայտմանը, սակայն հեղինակի որոշ դիտողություններ արժանի են ուշադրության հասն ժողովածուի ասորական սկզբնագրի առանձին խնդիրների լուծման տեսակետից:

¹⁰⁰ Տե՛ս Անասյան, Հայկական մատենագիտություն:

¹⁰¹ Տե՛ս Ակինյան, Տեր-Պողոսյան, Մատենագրական հետազոտություններ: Հոգվածը Աբրահամ Խոստովանողի մասին գրված ուսումնասիրությունների ընդհանրացումն է:

¹⁰² Տե՛ս PO—2, Préface, pp. 405—419.

ՄԱՐՈՒԹԱ ՆՓՐԿԵՐՏՅՈՒ «ՎԿԱՅՔ ԱՐԵՒԵԼԻՑ» ԺՈՂՈՎԱԾՈՒԻ
ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԻՄԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿԸ, ԺԱՄԱՆԱԿԸ ԵՎ
ԸՆԳՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԻՄԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԸ

«Վկայք Արեւելից» ժողովածուի հայերէն թարգմանութիւնը ընծայվում է V դարի հայ իրականութեան նշանավոր դեմքերից մեկին՝ Աբրահամ Խոստովանողին¹։ Նրա մասին պահպանված են բավականաչափ արժեքավոր տեղեկութիւններ շնորհիվ Եղիշեի² և Փարպեցու³։ Սակայն դրանք հայադիտութեան կողմից գնահատված են ոչ հավասարապէս։ Փարպեցին համարվում է Աբրահամի կենսագրութեան արժանահատ արժեքը, Եղիշեն՝ անվավեր⁴։ Նման տպավորութեան պատճառն այն է, որ Եղիշեի պատումն Աբրահամի մասին ընթանում է վկայաբանութիւններին բնորոշ միջոցներով։ Այստեղ կան ջատագովական երկխոսութիւններ, զանազան չարչարանքների տեսարաններ, նահատակների կամքի

¹ Աբրահամի շուրջ եղած դրականութեան լիակատար ցանկը տե՛ս Անասյան, Հայկական մատենագիտութիւն, էջ 109—116։

² Տե՛ս Տղիշե, էջ 183—192։ Այս հատվածը ճառընտիրներում հաճախ հանդիպում է առանձին՝ «Պատմութիւն սուրբ Խոստովանողացն Աբրահամու և Խորենայ» վերնագրով։

³ Տե՛ս Փարպեցի, էջ 105—106։

⁴ Տե՛ս ԴՏՄ, Յառաջարան, էջ XII. Վարդապետ, Պատմութիւն Հայոց, էջ 207—212։

գովերգում և այլն: Սակայն Եղիշեի Պատմության փաստական կողմը ոչնչով չի հակասում Փարպեցու տեղեկություններին: Այս շափաղանց արժեքավոր աղբյուրները պարզապես լրացնում են մեկը մյուսին:

Աբրահամ Խոստովանողն «էր ի գաւառէն Տայոց ի գեղջէն, որում անուն էր Զենակս»⁵, այդ պատճառով նա հաճախ հայագիտական գրականության մեջ կոչվում է Աբրահամ Զենակացի⁶: Ծընըդյան տարեթիվը հայտնի չէ, սակայն որոշ տվյալներ թույլ են տալիս ենթադրել, որ Աբրահամը ծնված պետք է լինի IV դարի վերջին քառորդի սկզբներին, քանի որ նա մահացել է V դարի 60-ական թվականներին, որի մասին ունենք Եղիշեի վկայությունը⁷, և «ի բարուք ծերութեան», ինչպես հաղորդում է Փարպեցին⁸: Սա հաստատվում է նաև այն իրողությամբ, որ Աբրահամը, ամենայն հավանականությամբ, մեկն է Սահակ-Մեսրոպյան դպրոցի առաջին աշակերտներից, չնայած այդ մասին տեղեկացնում են միայն XIII դարի պատմիչներ Կիրակոս Գանձակեցին և Վարդան Արևելցին⁹: «Վկայք Արևելից» ժողովածուի հայերեն թարգմանության դերագանց մակարդակը վկայում է, որ նրա հեղինակը կատարելապես տիրապետել է ասորերենին և ընդհանրապես եղել է գիտուն ու զարգացած մարդ: Իսկ սա, իհարկե, ենթադրում է երկարատև և կանոնավոր կրթություն, որն այն ժամանակ կարելի էր ստանալ միայն Սահակ - Մեսրոպյան բարձրագույն դպրոցում: Ուստի Աբրահամի պատկանելությունը հայ «երիցագույն թարգմանիչների» խմբին անտարակուսելի պետք է համարել:

Աբրահամի մասին այլևս ոչինչ հայտնի չէ մինչև Վարդա-

⁵ Փարպեցի, էջ 94:

⁶ Զպետք է շփոթել Աբրահամ սարկավագ Արածացու հետ (տե՛ս Եղիշե, էջ 179): Այսպիսի սխալ կատարված է Թովմա Արծրունու Պատմության մեջ (տե՛ս էջ 64) և Եղիշեի Պատմության՝ Ե. Տեր-Մինասյանի հրատարակության անվանադանկում (տե՛ս Եղիշե, էջ 220):

⁷ Տե՛ս Եղիշե, էջ 191, 192:

⁸ Տե՛ս Փարպեցի, էջ 106:

⁹ Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 28. Վարդան Վարդապետ, Պատմութիւն, էջ 51:

նանց պատերազմը, բացի այն, որ նա այդ ժամանակ արդեն ուներ քահանայի աստիճան¹⁰։ Ապստամբության պարտությունից հետո Աբրահամը իր ընկերոջ՝ խորենի հետ, կամավոր կերպով հետևում է գերված հայ նախարարներին և Ղևոնդյանց քահանաներին՝ նրանց անհրաժեշտ ծառայություններ մատուցելով¹¹։ Նրանք ձերբակալվում են և Ղևոնդյանց նահատակության ժամանակ (454) սպանվում Ապար աշխարհի Նյուշասուհ քաղաքի բանտում¹²։

Աբրահամի և խորենի անմեղությունը հաստատելուց հետո իշխանությունները նրանց առաջարկում են հավատափոխ լինել և մեծ պատիվներով վերադառնալ հայրենիք¹³։ Նրանք կտրականապես հրաժարվում են և արիաբար տանում անմարդկային տանջանքները¹⁴։ Այնուհետև կտրում են նրանց ականջները և ուղարկում Ասորեստան աշխարհի Շապուհ գավառը որպես արքունի մըշակներ¹⁵։ Շրջակայքի բրիտոնյաները աքսորյալներին անմիջա-

¹⁰ Տե՛ս Փարսեցի, էջ 94, 105։ Տեր-Պողոսյանի կարծիքով, Աբրահամը քահանա էր արդեն 442 թվականին, Հագկերաթի Բուշանաց արշավանքի ժամանակ (տե՛ս Տեր-Պողոսյան, Եղիշէ, էջ 113)։

¹¹ Տե՛ս Փարսեցի, էջ 94։

¹² Տե՛ս Նդիշ, էջ 183. Փարսեցի, էջ 94։

¹³ Տե՛ս Փարսեցի, էջ 105։

¹⁴ Տե՛ս Նդիշ, էջ 186։

¹⁵ Տե՛ս Փարսեցի, էջ 105. Նդիշ, էջ 186—187։ Շապուհ գավառի անունը աղավաղված է թե՛ Նդիշի Պասմության ձևապերում, թե՛ Փարսեցու «Շահուլ, Շահուլ, Շաուլ, Շալիլ» (տե՛ս Նդիշ, էջ 187) և «Շալիուլ, Շաբուլ» (տե՛ս Փարսեցի, էջ 106)։ Մ. Օրմանյանն առաջարկում է ուղղել Շահուլ (տե՛ս Աղղապատում, էջ 414)։ Մեզ թվում է՝ ճիշտ է Շապուհ։ Շապուհ սասանյանների ժամանակ պաշտոնադես կոչվում էր Քաշկար դավառը, որը մտնում էր Ասորեստան (Սուրիստան) նահանգի՝ որ է Բարեւոն կամ Բեթ-Արամայե, կազմի մեջ՝ Խուժաստանի և Մեշանի հարևանությամբ (տե՛ս Колесников, Иран, стр. 110)։ Նդիշն մի այլ հատվածում ճշգրիտ կերպով որոշում է այդ գավառի տեղագրությունը, թեև կրկնակի անվանման պատճառով Շահուլը և Քաշկարը շփոթմամբ համարելով տարրեր վայրեր. «Անդադար էին ի ձանտղարհորդովիան ընդ նոյն Շահուլ, ընդ Մեշովն և ընդ Քաշկար և ընդ ամենայն Ասորեստան և Խուժաստան» (Նդիշ, էջ 188)։ Այս աշխարհադրական ակնարկը բացարձակապես հաստատում է, որ Շահուլ աղավաղված

պես վերցնում են իրենց հովանավորության տակ: Նրանք կազմակերպված հանգանակությունների միջոցով հավաքում են մեծ գումարներ, որոնցով Աբրահամը և խորենը օգնում են Ապար աշխարհը քսորված հայ նախարարներին¹⁶: Մի տարի անց խորենը, չդիմանալով տաժանակրության ծանր պայմաններին, մահանում է¹⁷: Աբրահամը շարունակում է իր առաքելությունը, «մինչև յերկոտասաներորդ ամսն պատժաւորացն» (462/63 թ.), երբ նախարարների խնդրանքով վերադառնում է Հայաստան¹⁸: Ըստ Փարպեցու, նրան երաշխավորությամբ ազատում են «հուլատացեալք աշխարհին»¹⁹: Աքսորից վեղադառնալուց հետո Աբրահամը հավանաբար երկար չի ապրում, որովհետև նրա մահվան մասին հիշատակվում է արդեն Եղիշեի Պատմության մեջ²⁰, որը, ինչպես հայտնի է, գրված է V դարի 60-ական թվականներին²¹:

Աբրահամի հետաքսորյան գործունեության մասին Եղիշեի և Փարպեցու տեղեկությունները տարբերվում են իրարից: Եղիշեն պատմում է, թե «ընտրեաց իւր տեղի մի զատ յամենայն բազմամբօխ ժողովրդոց և առաքինի եղբարբք երիւք կատարեաց զկեանս իւր մեծաւ ճգնութեամբ»²², իսկ Փարպեցին. «Եւ ձեռնադրեալ յաստիճան կպիսկոպոսութեան աշխարհին Բղնունեաց՝ բազում ուղղութեանց աշխարհին մարդկան լինէր ուսուցիչ, և վախճանէր ի նմին կարգի ի բարուք ծերութեան»²³: Դժվար է նախապատկու-

անվան տակ ենթադրվում է Պարսից Շապուհ գավառը, Հետեաբար, Եղիշեի Պատմության բնագրում պետք է վերականգնել Շապուհ նախնական ձևը, նույնիսկ առանց խախտելու հրատարակության բնագրագիտական սկզբունքները, որովհետև հնագույն ձեռագրերից մեկում պահպանված է Շապուխ ընթերցվածքը (տե՛ս Եղիշե, էջ 187, ձև. Բ):

¹⁶ Տե՛ս Եղիշե, էջ 187—188. Փարպեցի, էջ 106:

¹⁷ Տե՛ս Փարպեցի, էջ 106: Ըստ Եղիշեի, խորենը մահանում է տասն տարի անց (տե՛ս Եղիշե, էջ 188):

¹⁸ Տե՛ս Եղիշե, էջ 188:

¹⁹ Փարպեցի, էջ 106:

²⁰ Տե՛ս Եղիշե, էջ 192:

²¹ Տե՛ս Տեր-Մինասյան, Հետազոտություններ, էջ 194:

²² Եղիշե, էջ 191:

²³ Փարպեցի, էջ 106:

թյուն տալ այս տեղեկություններից մեկին՝ շունենալով որևէ հակաճառություն մյուսի դեմ: Այդ պատճառով չի կարելի նաև Աբրահամին հաստատապես նույնացնել Փարպեցու «Թղթում» հիշատակվող համանուն եպիսկոպոսի հետ²⁴: Հնարավոր է, որ Նղիշերի և Փարպեցու տեղեկությունները ոչ թե հակասում են իրար, այլ հանդիսանում են Աբրահամի գործունեության տարբեր շրջանների արձագանքներ:

Այսպիսով, Աբրահամ խոստովանողի կենսագրության շատ հանդամանքներ մեզ համար սլարվ են, սակայն մի կարևոր հարց, որը մեծ նշանակություն ունի ինչպես հայոց, այնպես և սլարսից իրավունքի և հասարակական-տնտեսական հարաբերությունների պատմության համար, լուրջ վեճի առարկա է դարձել Հ. Մանանդյանի և Խ. Սամվելյանի միջև: Խոսքը վերաբերում է Փարպեցու հետևյալ հիշատակությանը. «մշակութիւն արասցեն ընդ արքունի մշակսն և ի հարկի կայցեն մինչև ցվախճան իւրեանց»²⁵:

Մանանդյանի կարծիքով, Աբրահամը և խորենը դատաւարտւ-ված էին ցմահ լինել արքունի հարկատու մշակներ: Այդ պատճառով Աբրահամին ազատելու համար տեղացի քրիստոնյաները երաշխավորում են վճարել նրանից հասանելիք հարկը, և հավանաբար հավատացյալների այս երաշխավորությունն ունեցել է «համերաշխիքի բնույթ»²⁶. «Իսկ երանելի երէցն Աբրահամ, երաշխավորութեամբ հաւատացելոց աշխարհին, որք զտունս իւրեանց և զարարս փոխանակ ընդ հարկի նորա գրեցին յարքունիս ցվախճան նորա, և կատարեցին ղկարգեալսն անվեհեր յաղագս նորա, արձակեալ ղերանելի այրն՝ եկն ի Հայս»²⁷:

Սամվելյանը, ելնելով հարկ բառի երկակի նշանակությունից, կարծում է, որ «ի հարկի» պետք է հասկանալ ոչ թե հատուցանելի հարկի առումով, որը գրված կլինեք «ի հարկի ծառայութիւն» խոսքերով, այլ նշանակում է հարկադրանք, բռնի ստիպում,

²⁴ Տե՛ս Մխիթնյան, Առաջին թարգմանիչը, էջ 60. ԳՏՄ, Յառաջարան, էջ XIII:

²⁵ Փարպեցի, էջ 105:

²⁶ Մանանդյան, Ֆեոդալիզմը, էջ 157—158:

²⁷ Փարպեցի, էջ 106:

հարկադրական ճնշումն²⁸, և հետևաբար «արքունի մշակ» նշանա-
կում է ստեղծվել, որը պետք է կատարեր արքունական ծանր
աշխատանք: Այս ապացուցելու համար Սամվելյանը բերում է
հետևյալ երկու փաստարկները. ա) Հավատացյալները չէին կարող
երաշխավորել Աբրահամին ցմահ հաստենելիք հարկի հատուցումը,
որովհետև անհնարին էր որոշել այդ հարկի չափը՝ շիմանալով,
թե որքան պիտի տևեր նրա կյանքը: Ուրեմն նրանք Աբրահամին
պարզապես փրկագնել են, իսկ փրկանքով ազատվել կարող էին
միայն ստրուկները և ոչ թե շինականները կամ ճորտերը, որոնք
անպայման կապված էին հողի հետ: բ) Հին աշխարհում ստրուկ-
թյունը կիրառվում էր նաև իբրև պատժական միջոց, նմանապես
ստրուկներին խարում էին: Ուստի պետք է ենթադրել, որ Աբրա-
համն ու խորենը իբրև քաղաքական հանցագործներ՝ թագավորի
դեմ ըմբոստներ, ենթարկվում են խստագույն պատժի՝ ստրուկ-
ության, որի համար էլ խարվում են (կտրում են նրանց ականջ-
ները)²⁹:

Սամվելյանի փաստարկներին պետք է ավելացնել ևս մեկը.
մշակ բառի բազմաթիվ կիրառումները թե՛ հայ ինքնուրույն, թե՛
թարգմանական գրականության մեջ, մասնավորապես Աստվածա-
շնչում, ցույց են տալիս, որ նրա տակ պետք է հասկանալ այն
հողագործին, որը մշակում է ոչ թե իր, այլ ուրիշի հողը՝ կա՛մ
վարձկանի, կա՛մ ստրուկի դերում: Իսկ քանի որ Աբրահամի և
խորենի վարձկան լինելը բացառվում է, ապա Փարպեցու Պատմու-
թյան հիշյալ հատվածում մշակ բառը կարող է նշանակել միմիայն
ստրուկ³⁰:

Աբրահամի կենսագիրները՝ եղիշեն և Փարպեցին, ոչինչ չեն
հաղորդում նրա գրական գործունեության մասին: Սակայն այս

²⁸ Հմմտ. Аѳонц, Армения, стр. 480—481.

²⁹ Տե՛ս Սամվելյան, Իրավունքի պատմություն, էջ 269—291:

³⁰ «Աբրահամ խոստովանողը և իր գրական ժառանգությունը» հոդվածում
ես փորձում էի ասպցուցել հակառակը՝ թե մշակ նշանակում է հարկատու
նոդագործ: Սխալի վրա իմ ուղադրությունը հրավիրեց Գ. Սարգսյանը, որին
հայտնում եմ խորին շնորհակալություն:

հանդամանքը չի խանդարել հայագիտության մեջ միասնական կարծիքի ստեղծմանը այն մասին, որ Աբրահամ Խոստովանողը հանդիսանում է «Վկայք Արևելից» ժողովածուի հայերեն թարգմանության հեղինակը: Այդ կարծիքը լրջորեն հիմնավորված է հետևյալ աղբյուրների վկայությամբ.

1) Թովմա Արծրունու Պատմությունը. Այս հուշարձանում «Վկայք Արևելից» ժողովածուի նյութերի նկարագրությանը նվիրված է մի փոքրիկ հատված. «Շապուհ արքայից արքայ թագաւորեալ՝ բաղում և տնչափ շարիս հասուցանէր ի վերայ Հայոց աշխարհիս և Ասորեստանեայց և Պաղեստինացոց... որպէս ընթեռնուք ի գիրս պատմութեան վկայելոցն, որ Արևելեայ ասի գրոցն վերագրութիւն, զոր շարագրեաց երանելի խոստովանողն Քրիստոսի Աբրահամ ի գեղջէն Արածոյ³¹, որ էր աշակերտ և հետևող սրբոց Ղևոնդեանց, և զսակաւոց քան թէ յուրվից գրեաց տնուանս ի յիշատակարանի տնդ, զՇահդոսդ, որ թարգմանի արքայասէր, և զԳոհշթասդ, որ թարգմանի ներկագործ ծիրանեաց արքայական զգեստու³², և զՇմաւոն եպիսկոպոս, վէմ եկեղեցոյ Քրիստոսի, ընդ նմին և այլ եպիսկոպոսք և քահանայք արք ծ, որ կատարեցան միանգամայն սրով ի միում աւուր ի մեծի ուրբաւ ի զատկին»³³:

IX—X դարերի հեղինակի հաղորդումը ավելի քան շուրսգարչա հնություն ունեցող իրադարձությունների մասին, իհարկե, կարող է տնհամոզիչ թվալ, սակայն տվյալ դեպքում այս հանգամանքը առիթ չի տալիս կասկածել նրա արժանահավատությանը: Թովման շատ լավ ծանոթ է «Վկայք Արևելից» ժողովածուին, բավականին մանրամասն նկարագրում է այն և ճշգրիտ կերպով վերարտագրում նահատակների խրթին անունները: Այս ամենը վկայում է, որ նրա հաղորդումը «Վկայք Արևելից»-ի մասին պատահական չէ և, որ նա իսկապես կարդացել է այդ ժողովածուն: Ակնհայտ է, որ Աբրահամի հեղինակության մասին Թովմայի

³¹ Տե՛ս գլուխ Բ, ծանոթ. 6:

³² Թովման սխալմամբ Գուլթաղատին վերագրում է Շմավոն Բար-Սաբբայի մականունը:

³³ Թովմա Արծրունի, Պատմութիւն, էջ 64—65:

տեղեկությունը հնարված չէ իր կողմից, այլ բաղված է ավելի հին աղբյուրից, կամ պարզապես ժողովածուի այն օրինակը, որ Թովման ուներ իր ձեռքին, կրում էր Աբրահամի անունը:

2) Մատենադարանի № 993 Ճառքնախոր (1456 թ.). Ձեռագիրը բաղմամբիվ այլ երկերի շարքում պարունակում է նաև մի հատված «Վկայք Արևելից» ժողովածուի ներածական ճառից՝ հետևյալ վերնագրով. «Երանելուն Աբրահամու Խոստովանողին ասացեալ ի վկայսն արևելից»³⁴: Այս փաստը մեծ արժեք ունի հատկապես այն պատճառով, որ Աբրահամի հեղինակությունը հավաստված է այնպես, ինչպես սովորաբար նշանակվում են ճառերի հեղինակները հայկական Ճառքնախորներում: Տեղեկությունը գնահատելի է նաև նրանով, որ չի ծագում Թովմայի վերոհիշյալ հաղորդումից, ոչնչով կախված չէ նրանից, քանի որ Թովմայի մոտ Աբրահամի «ի վկայսն արևելից» ճառի մասին հիշատակություն չկա: Պետք է բացառել նույնպես՝ Աբրահամ Խոստովանողին այդ ճառի վերագրման հնարավորությունը: Թեև որոշ հեղինակների գործերի վերագրումը այլ հեղինակների՝ հայկական Ճառքնախորներում հաճախ է հանդիպում, սակայն միայն հրաշքով կարելի էր հայերենով գոյություն ունեցող հարյուրավոր ճառերից Աբրահամին պատահաբար վերագրել հենց «Վկայք Արևելից» ժողովածուի մի հատվածը: Եթե Աբրահամը հարուստ գրական ժառանգություն թողած լիներ, դեռ նման բացատրությունը կարող էր հիմք ունենալ, սակայն «ի վկայսն արևելից» ճառը նրա անվամբ հայտնի միակ երկն է:

3) 1724 թվականի մատենագիտական ցանկը (Մատենադարան, ձեռ. № 2271), որը հրատարակված է երկու անգամ՝ նախ Հ. Այուբյանցի (1795), ասլա Հ. Անասյանի կողմից (1959)³⁵: Ցանկում թվարկված են հնագարում հայերեն թարգմանված օտար

³⁴ Մատենադարանի № 993 ձեռ. = Կարենյան ցուցակի № 920 (տե՛ս Մայր ցուցակ էջմիածնի, էջ 108): Հատվածը հրատարակված է՝ ԳՏՄ 22—25, 27—34:

³⁵ Տե՛ս Այուբյանց, Գիրք զրօսանաց, էջ 191. Անասյան, Հայկական մատենագրություն, էջ LVII:

հեղինակների երկերը, որոնց մեջ, ինչպես սպասելի էր, գտնվում է նաև «Արևելեան վկայիցն պատմութիւնք, զոր թարգմանեցաւ սրբոյն յԱբրահամու Խոստովանողէ մինչ բանդարկեալ կայր ի Պարսիկս սակս խոստովանութեան Սրբոյ Հաւատոյ ի պարսից լեզուէ»։ Ակնհայտ է, որ սա բոլորովին ինքնուրույն, վերոհիշյալ տեղեկություններից անկախ վկայություն է։ Այն որեւէ կապ չունի ոչ Թովմայի, ոչ Ճառընտրի հաղորդումների հետ։ Նրանց ի տարբերություն, այստեղ առաջին անգամ նշվում է, որ Աբրահամը ոչ թե հեղինակել, այլ թարգմանել է «Վկայք Արևելից» ժողովածուն։

Աղբյուրը, ըստ որի կազմված է այս ցանկը, անհայտ է, հավանաբար կորած է XVIII դարում կամ գուցե դեռ պահպանվում է հայկական հաղարավոր ձեռագրերից մեկում, որոնց ոչ կատարյալ նկարագրությունը հնարավորություն չի տալիս գտնել այն։ Ցանկի հեղինակը բացահայտորեն օգտված պետք է լինի ինչ-որ հնագույն աղբյուրից, որովհետև միայն ժողովածուի տվյալներով, առանց կողմնակի վկայությունների, դժվար կլինեիր կռահել, որ այն ոչ թե ինքնուրույն, այլ թարգմանական գործ է։ Իսկ այսպիսի վկայություններ, ինչպես տեսանք, չէին կարող տալ ոչ Թովմայի Պատմությունը, ոչ Մատենադարանի Ճառընտիրը։ Ցանկին հավատալու հիմք չկա նաև մի այլ տեսակետից. նրա բերած համարյա բոլոր մյուս տվյալները համապատասխանում են իրականությանը կամ հայ մատենագրության ավանդույթին։ Տարօրինակ կարող է թվալ գուցե միայն այն փաստը, որ ըստ ցանկի՝ «Վկայք Արևելից»-ի թարգմանությունը կատարված է պարսկերենից։ Սակայն սրան առանձին կարևորություն չպետք է տալ, որովհետև ուշ միջնադարի հեղինակի համար հեշտ չէր դիտնալ, որ Պարսկաստանում երբեք բացի պարսկերենից ուրիշ լեզու էլ է գոյություն ունեցել։ Այդ պատճառով նրա համար չափազանց բնական էր կարծել, որ եթե թարգմանությունը կատարված է Պարսկաստանում, ապա անշուշտ՝ պարսկերենից։

Այսպիսով, բերված երեք վկայությունները, որոնք գրտնրվում են իրարից անկախ աղբյուրներում, հիմք են տալիս լստահորեն պնդել, որ «Վկայք Արևելից» ժողովածուի հայ

Թարգմանիչը իսկապես Աբրահամ Խոստովանողն է³⁶։ Եվ ընդհանրապես հայ մատենագրության պատմության մեջ դժվար է գտնել որևէ հեղինակ՝ ավելի պատշաճ նման դերի, քան նա։ Ինչպես լինը նշվեց, Աբրահամն ինքը «կենդանի մարտիրոս» էր³⁷, գահահարված, այլանդակված, երկար ժամանակ տառապել էր բանտերում, ապրել տաժանակրության մեջ, ընդ որում հենց այն վայրերում, որտեղ հարյուր տարի դրանից առաջ գանգվածաբար նահատակություն էին կրել պարսից քրիստոնյաները։ Աբրահամը հավանաբար ծանոթ էր շատ ասորիների հետ, որոնք կարող էին Թարգմանության համար նրան հանձնարարել «վկայք Արևելից» ժողովածուն։ Այս առթիվ կարելի է հիշատակել Եղիշեի հաղորդումը, ըստ որի, Նյուշապուհում հայերի հետ բանտարկված էին նաև «ասորեստանեայք քրիստոնեայք արք հինգ»³⁸։ Բացի այդ, Ասորեստանում Աբրահամը շարունակ շփվում էր տեղի քրիստոնյաների հետ, որոնք նույնպես ասորի էին։

Կարևոր նշանակություն պետք է տալ նաև Եղիշեի մի այլ

³⁶ Մեսրոպյ Եկիսկուպոսի կարծիքով (տե՛ս ԳՏՄ, Յառաջաբան, էջ XIII), որը պաշտպանել էի նաև ես (տե՛ս. Տեր-Պետրոսյան, Աբրահամ Խոստովանողը, էջ 59), Աբրահամի՝ Թարգմանիչներին դասակից լինելու մասին կողմնակի վկայություն է տալիս նաև մի այլ աղբյուր՝ «Էական դիրքը» (տե՛ս Զուլպյեցի, Տրամարանություն, էջ 154—175. Մովսեսյան, Հնոց-նորոց, էջ 32—87)։ Այս հնագույն անվավերականի մեջ պատմվում է, որ Սահակն ու Մևորոպը Թևոդոս կայսեր մոտ են ուղարկում «Դաւիթ անյաղթ կոչեցեալ փիլիսոփայ և զՄովսէս քերթողահայրն, իմաստասէրն Մամբրէ և հռետորն Աբրահամ, և սոցին նմանակից Պաղոս»։ Թևոդոսն իր հերթին նրանց ուղարկում է Աթենք՝ կատարելագործվելու և Թարգմանություններով պարապելու։ Այնուհետև, զբոսն ավելացվում է. «Արարին և Մամբրէ և Պաղոս և Աբրահամ ճառս ոչ սակաւս պէսպէս խորհրդոց»։ Սակայն ըստ Հ. Աճառյանի և Հ. Անասյանի, Աբրահամ Հոռոտրն ու Աբրահամ Խոստովանողը տարբեր պատմական անձնավորություններ են (տե՛ս Աճառյան, Անձնանունների բառարան, հ. 1, էջ 28. Անասյան, Հայկական մատենադիտություն, էջ 130—131)։ Ըստ Երևույթին, ավելի հավանական պետք է համարել այս կարծիքը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Աբրահամ Զենակացին բոլոր աղբյուրներում (բացի Փարպեցու Պատմությունից) հանդես է գալիս Խոստովանող մականվամբ։

³⁷ Եղիշե, էջ 189։

³⁸ Նույն տեղում, էջ 183։

Հաղորդման, որը, մեր կարծիքով, ուղղակի ակնարկ է այն մասին, թե Աբրահամը խորապես տեղյակ էր արևելից վկաների պատմությանը և ընդունակ էր վերարտադրելու նրանց տանջանքներն ու շարժարանքները, ոքու արիությունն ու աննկուն կամքը: Պատահական չէ, որ աքսորյալ Հայ նախարարները հենց Աբրահամին են ընտրում՝ Հայաստան ուղղարկելու համար, որպեսզի նա իր նահատակի կերպարով, իր օրհնություններով և խրատներով մխիթարի նրանց որբացած ընտանիքները³⁹: Աբրահամի և «Վկայք Արևելից» ժողովածուի կապի մասին անուղղակի վկայություն է նաև այն, որ վերջինիս ազդեցությունը Եղիշեի Պատմության վրա ուժգին կերպով գրսևորվում է հատկապես Աբրահամի վարքի շարադրանքում⁴⁰: Սա ցույց է տալիս, որ Աբրահամի վարքը գրելիս, Եղիշեն գիտակցորեն ավելի հաճախ է դիմել նրա թարգմանությունը՝ ոճական դարձվածքներ, բնորոշ արտահայտություններ, գեղեցիկ համեմատություններ՝ բաղելու համար:

«Վկայք Արևելից» ժողովածուի հայ թարգմանչի անձնավորությունը որոշելուց բացի, կարևոր նշանակություն ունի նաև թարգմանության ժամանակի հարցը: V դարի հայ գրականությունը արդյունք է միասնական ստեղծագործական գործունեության, որտեղ նրա բոլոր ներկայացուցիչները միավորված են բաղաբական, գաղափարախոսական և մշակութային ընդհանուր շահերով: Գրական շարժման այսպիսի նպատակաուղղվածության պայմաններում յուրաքանչյուր նոր երկասիրություն ծանոթություն է ևնթագրում նախորդ ամբողջ հոգևոր ժառանգության հետ: Այդ պատճառով V դարի ցանկացած գործի թվագրման ճշգրտումը ինքնին արդեն նպաստում է հայ գրականության սկզբնավորման շրջանի ավելի խոր ըմբռնմանը: Մասնավորապես «Վկայք Արևելից» ժողովածուի հայերեն թարգմանության ժամանակի որոշումը հնարավորություն կտա լուծելու որոշ խնդիրներ, կապ-

³⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 188—189:

⁴⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 183—192:

ված Եղիշեի Պատմության թվագրման հետ: Դա էական նշանակություն ունի նաև ժողովածուի ասորերեն սկզբնագրի բանասիրական և աղբյուրագիտական հարցերի պարզաբանման համար: Առանց ճշգրիտ թվագրման հայերեն թարգմանությունը չի կարելի օգտագործել ոչ ասորական բնագրի քննության, ոչ էլ նրա նախասկզբնական կազմի վերականգնման համար:

Համընդհանուր կարծիքով, Աբրահամը «Վկայք Արևելից» ժողովածուն թարգմանել է 454—464 թվականների ընթացքում, երբ գտնվում էր պարսկական գերության մեջ: Վերոհիշյալ աղբյուրներից միայն «1724 թվականի մատենագիտական ցանկն» է վկայում այդ մասին. «Արևելեան վկայիցն պատմութիւնք, զոր թարգմանեցաւ սրբոյն յԱբրահամու Խոստովանողէ մինչ Բանդար-կեալ կայր ի Պարսիկս...»⁴¹: Իսկ նոր շրջանի հայագետներից միայն Բ. Կյուլենսերյանն ու Հ. Անդրիկյանն են փորձել բացատրել այդպիսի որոշման ճշտությունը: Առաջինի կարծիքով՝ Աբրահամը 464-ին արդեն թարգմանած պիտի լիներ «Վկայք Արևելից»-ը, քանի որ քսոսից վերադառնալուց հետո «եպիսկոպոս եղավ, և այս զբաղեցուցիչ պաշտոնի բերմամբ, մանավանդ ծեր և խոնջ, չէր կարող նվիրվել թարգմանության»⁴²: Կյուլենսերյանի դատողությունը Աբրահամի՝ հետաքսոսյան շրջանում թարգմանություններով զբաղվելու անկարողության մասին, համոզիչ է: Աքսոսից հետո Աբրահամը այնքան երկար չապրեց էլ, որ կարողանար իրականացնել այդպիսի մեծ աշխատանք: Հարկ է հիշեցնել սակայն, որ Աբրահամը հայրենիք վերադարձավ ոչ թե 464, այլ 462/63 թվականին՝ «յերկոտասներորդ ամն պատժաւորացն»⁴³:

Ի տարբերություն Կյուլենսերյանի, Անդրիկյանը հաջողությամբ որոշում է թարգմանության ժամանակագրական շրջանակի ներքին սահմանը, որից առաջ Աբրահամի թարգմանությունը չէր կարող իրականանալ: Նա համեմատում է Շմավոնի վկայաբանության հայերեն թարգմանության մի հատված Ասեմանու լատիներեն

⁴¹ Անադյան, Հայկական մատենագիտություն, էջ LVI:

⁴² Կյուլենսերյան, Եղիշէ, էջ 141:

⁴³ Եղիշէ, էջ 188:

Թարգմանություն համապատասխան տեղի հետ և նրանց միջև մեծ տարբերություն նկատելով՝ եղրակացնում, որ այդ հատվածը Աբրահամի կողմից փոխառված է Ափրահատի «Զգօն» կոչված գրքի հայերեն թարգմանությունից⁴⁴։ Իսկ Ափրահատի երկը, որը հայ մատենագրության մեջ վերագրված է Հակոբ Մծբնացուն, հետազոտողների կարծիքով, հայերենի է թարգմանված V դարի առաջին կեսին⁴⁵։ Ահա թե ինչ է ցույց տալիս այդ հատվածների համեմատությունը.

Շմավոնի վկ. հայ.
թարգմանությունը

Ափրահատ

Շմավոնի վկ. ասոր.
սկզբնագիրը

...ոչ հոտուն նոցա ճա-
րակել զճարակս կո-
խեալս և ոչ հոտուն
բմպել զջուրս պղտո-
րս և սմբականամս.
(ԳՏՄ 107—108)

...և խաշինք իմ զկո-
խեալն ոտից ձերոց
ճաշակէին, և զջուրս
պղտորեալս ի ձեզ
զսմբականամս բմպէ-
ին⁴⁶.

...կոխեցան ի գթութենէ
առ խաշինս, զի մի ճա-
շակեսցեն զճարակս կո-
խեալս կրկնոց օտարաց
և շարշարեցան ի սիրոյ
առ գառինս, զի մի արբ-
ցեն զջուրս պղտորեալս
ոտից անհատից.

(PS—2 731)

Շմավոնի վկայաբանության և Ափրահատի երկի հայերեն թարգմանությունների կապը այս հատվածում ակնհայտ է։ Ելնելով այս փաստից և ենթադրելով, որ Աբրահամը օգտվել է նաև Ագաթանգեղոսի Պատմությունից⁴⁷, Անդրիկյանը որպես «Վկայք Արեւելից» ժողովածուի հայերեն թարգմանության սկզբնա-
կան ժամկետ ընդունում է 453 թվականը⁴⁸։

Անդրիկյանի թվագրումը բավականին հիմնավորված է և հաստատվում է նաև մի շարք այլ հանգամանքներով։ Օրինակ, թվում է, որ հետեւյալ հատվածում Աբրահամ խոստովանողը

⁴⁴ Տե՛ս Անդրիկյան, Արեւելյան վկայք, էջ 254։

⁴⁵ Տե՛ս Զարբնաբալյան, Մատենադարան, էջ 44. Տե՛ր-Մինասյան, Հետազո-
տություններ, էջ 423։

⁴⁶ Յակոբ Մծբնայ, Զգօն, էջ 195։

⁴⁷ Սակայն Անդրիկյանի բերած օրինակը այս դեպքում համոզիչ չէ։

⁴⁸ Տե՛ս Անդրիկյան, Արեւելեան վկայք, էջ 254։

օգտվել է Եղնիկի «Եղծ աղանդոց» դրքի իմաստասիրական ձե-
վակերպումներից.

Ժողովածուի հայ. քարգմանությունը	եզնիկ	Ժողովածուի ասոր. սկզբնագիրը
Ոչ եթէ արարածք Աս- տուծոյ շար ինչ են բնութամբ, այլ կամք ազատութեանն փոփո- խեն ի պէսպէս շարու- թիւնս:	...չի՛ք ինչ շար բնութե- ամբ, քանզի չիք ինչ շար արարիչ բնութե- ամբ. ...չի՛ք ինչ որ բնութե- ամբ շար է ⁴⁹ .	Ոչ է արարած նորա շար այլ ազատութիւն է դառն: Ոչ է բնութիւն նորա եղծեալ, այլ կամքն եղծեն զնա: Ոչ են բարբ նորա ապա- կանեալ, այլ արարք վաս խռովեն զնա: (AMS 95)

Եթե հայերենը ասորական սկզբնագրի ճշգրիտ թարգմանու-
թյունը լիներ, ապա դժվար թե կարելի էր միայն ընդգծված
համապատասխանությունների հիման վրա նման հետևություն
անել: Աբրահամի և Եղնիկի կապը ավելի այն հանգամանքում
է դրսևորվում, որ մինչդեռ ասորական բնագրում նշված միտքը
արտահայտված է երեք նկարագրական նախադասությամբ,
Աբրահամը, բոլորովին շեղվելով դրանից և, ընդհակառակն,
մոտենալով Եղնիկին, տալիս է մի կուռ իմաստասիրական ձեա-
կերպում: Այսպիսով, այս փաստը նույնապես վկայում է, որ
Մարութա նիբղերտացու ժողովածուի հայերեն թարգմանությունը,
ամենայն հավանականությամբ, կատարված է V դարի երկրորդ
կեսին, քանի որ Եղնիկի երկասիրությունը, ինչպես հայտնի է,
թվագրվում է V դարի 40-ական թվականներով:

«Վկայք Արևելից» ժողովածուի հայերեն թարգմանության
ժամանակը որոշելիս պետք է հաշվի առնել ևս մի կարևոր հանդա-
մանք, որ այդ թարգմանությունը առանձնահատուկ տեղ է գրավում
V դարի հայ թարգմանական գրականության մեջ: Նրա անհրա-
ժեշտությունը թելադրված է կյանքով, 50-ական թվականների
ողբերգական իրադարձություններով: Վարդանանց ապստամբու-

⁴⁹ Եզնիկ, էջ 32, 33:

թյան պարտությունից հետո Հայաստանում ստեղծվեց ճիշտ այնպիսի իրավիճակ, ինչպես Միջագետքում դրանից հարյուր տարի առաջ՝ պարսից բրիտանականների հալածանքների ժամանակ: Զրադաշտական մոլեռանդությունը այս անգամ ամբողջ ուժով ուղղվեց հայ ժողովրդի դեմ: Հավատափոխություն պահանջը ուղեկցվում էր արյունոտ հաշվեհարդարով: Հայ մտավորականությունը, անշուշտ, խիստ մտահոգված էր դեպքերի այդպիսի զարգացմամբ: Պետք էր բարձրացնել ժողովրդի ողին, ամրապնդել նրա կամքը: Իսկ դրա համար անհրաժեշտ էին օրինակներ, աննկունության և գիտակցված արժանապատվության օրինակներ: Հենց այդպիսի նպատակի կոչված էին ծառայելու «Վկայք Արեւելից» ժողովածուի հերոսները: Ժողովածուի հայերեն թարգմանության խոր հեղինակային ոգեշնչումը, հուզական գեղախոսությունը կարելի է բացատրել միայն կյանքի այս ճակատագրական պահանջի առկայությամբ: Պատահական չէ, որ Վարդանանց պատմագիրը՝ Նզիշեն, գտնվում է «Վկայք Արեւելից» ժողովածուի նկատելի ազդեցություն տակ: Դա միաժամանակ տալացուցում է, որ Աբրահամի թարգմանությունը հասել է իր նպատակին:

Այսպիսով, ամբողջ շարագրվածից հետևում է, որ «Վկայք Արեւելից» ժողովածուի հայերեն թարգմանությունը կատարված է 451 թվականից հետո: Ամենայն հավանականությամբ, Աբրահամն իր աշխատանքն սկսել է արդեն արսորում եղած ժամանակ (454 թվականից): Մինչ այդ նա գտնվում էր Նյուշապուհի բանտում և, բնական է, չէր կարող զբաղվել թարգմանություններով: Թարգմանության ժամանակահատվածի վերին սահմանը որոշվում է Նզիշենի հաղորդման շնորհիվ, ըստ որի, Աբրահամը տաժանակրություն մեջ մնաց մինչև «յերկոտասաներորդ ամն պատժաւորացն» (462/63 թ.), երբ նախարարների կողմից ուղարկվեց Հայաստան⁵⁰: Մինչ այդ արդեն, ըստ երևույթին, թարգմանությունն ավարտված էր, որից հետո միայն Աբրահամը թերևս համաձայնի վերադառնալ հայրենիք: Պետք է հիշեցնել, որ Աբրահամը Հայաստան եկավ հայ ժողովրդին մխիթարելու առա-

⁵⁰ Տե՛ս Նզիշեն, էջ 188:

քելությամբ: Իսկ այս մխիթարությունների մեջ, իհարկե, ամենաազդեցիկը «Վկայք Արևելից» ժողովածուի թարգմանությունը կարող էր լինել⁵¹:

Հայագիտության մեջ ավելի բուռն տարածացնությունների տեղիք է տվել Աբրահամի գրական ժառանգության մասին Թովմա Արծրունու մի այլ հաղորդում: Նրա Պատմության երկրորդ դպրության առաջին գլխում⁵² պատմվում է, որ Պարսից Պերոզ թագավորի օրոք դավաճան Շավասպ Արծրունու օգնությամբ Հայաստանում մարզպան է նշանակվում մոգպետ Վնդոն: Սա սկսում է քանդել երկրի եկեղեցիները, հալածել հոգևորականներին, ծանրաբեռն հարկապահանջությամբ հարստահարել ժողովրդին: Բացի այդ, Վնդոն Դվինում կառուցում է մի զրադաշտական մեհյան, որի քուրմ է նշանակում իր որդի Շիրոյին⁵³: Կսելով այդ մասին, Վարդան Մամիկոնյանը զորք է հավաքում և անակնկալ հարձակմամբ հանկարծակիի բերում թշնամիներին: Նա անձամբ թրատում է Շավասպին, Վնդոյին ողջակիզում են Դվինի մեհյանում, իսկ նրա որդի Շիրոյին՝ կախում ատրուշանի վրա: Ապա մեհյանը քանդում են և տեղը եկեղեցի կառուցում, ուր տեղափոխ-

⁵¹ Ե. Տեր-Մինասյանն ավելի է սեղմում «Վկայք Արևելից» ժողովածուի թարգմանության ժամանակը. «Թարգմանությունը պետք է եղած լինի 464-ից առաջ, ավելի ուրոշ՝ 452-ի և 464-ի միջև, հավանորեն, նկատի ունենալով դրա համար պահանջվող ավելի երիտասարդական հասակը և աշխուժը, շուրջ 455—456-ին» (Տեր-Մինասյան, Հեռագրություններ, էջ 136): Այսպիսի թվագրման հավաստիությունը թեև բացառված չէ, բայց անհնարին է ասացուցել:

⁵² Տե՛ս Թովմա Արծրունի, Պատմութիւն, էջ 77—80:

⁵³ Ըստ Թովմայի Պատմության 1887 թ. հրատարակության՝ «և հասնալ Շասասպայ Արծրունույ ամբարշտի յԱրտաշատ հանդերձ մարզպանուն՝ շինեն ի դուռն քաղաքին զորմզդական մեհնանն» (էջ 78): Ըստ Երևութին, այստեղ «ի դուռն քաղաքին» պետք է ուղղել՝ «ի Դուին քաղաքին», որովհետև այդ հաստատվում է Թովմայի Պատմության հետագա ընթացքով և Դրասխանափերտցու վկայությամբ, ըստ որի, Վնդոն մեհյանը կառուցեց Դվինում (տե՛ս Դրասխանափերտցի, Պատմութիւն, էջ 59):

վում է Գյուտ կաթողիկոսի նստավայրը: Այսպիսի հաջող ելույթից հետո հայ նախարարները ուզում են մի ուրիշ Արծրունու՝ «քաջախորհուրդ և իմաստնախորհ» Վահանին «Թագաւորեցուցանել ի վերայ Հայոց»: Սակայն ներքին տարաձայնությունների պատճառով որոշումն ի կատար չի ածվում: Նախարարները, այդ թվում նաև Վահան Արծրունին, համախմբվում են Վարդանի շուրջը, նրան շնորհում «զվերակացութիւն Հայոց. և եղեն հնազանդեալ նմա զամենայն աւուրս Վարդանայ»: Այնուհետև պատմվում է Վահանի սխրանքների մասին, որ նա գործում է Վարդանի կողքին, Ավարայրի ճակատամարտում: Նրանք միասին էլ քաջաբար ընկնում են ռազմի դաշտում: Այս պատմության վերջում Թովման ավելացնում է. «Եւ պատմի այս ի համառօտութեան Աբրահամու խոստովանողի»⁵⁴:

Նախ և առաջ պետք է նշել, որ այս պատմության մեջ տեղ է դրել բացահայտ ժամանակավրիպում՝ դեպքերը տեղի են ունենում Պերոզի օրոք (459—484), մինչդեռ Վարդան Մամիկոնյանը զոհվել էր արդեն 451 թվականին⁵⁵, ի դեպ, սա ժամանակների պատահական շփոթում չէ, բանի որ Թովմայի պատմածում հիշատակվում է նաև Գյուտ կաթողիկոսը, որը զլիավորել է հայ եկեղեցին 461—478 թվականների ընթացքում:

Պատմական անձանց գործերի շփոթումը ընդհանրապես հատուկ է ժողովրդական բանահյուսությանը կամ իրադարձություններից հետո ժամանակների պատմագրությանը: Եվ այս, և այն դեպքում Աբրահամը չէր կարող լինել այսպիսի անստույգ աղբյուրի հեղինակը:

Չնայած այս հանգամանքին, Թովմայի հիշյալ հաղորդումը հայագետների կողմից արժանացել է բազմադան մեկնաբանությունների: Գ. Զարբհանալյանը, Կ. Կոստանյանցը, Ա. Զամինյանը, առանց հատուկ քննության ընդունելով Թովմայի հավաստումը,

⁵⁴ Թովմա Աբծրունի, Պատմութիւն, էջ 80:

⁵⁵ Նկատելով շփոթությունը, Թովման կամ որեէ հետագա խմբագիր Պերոզից հետո թագավորեցնում է Հաղկերտին, որպեսզի Վարդանի մահը ընկնի վերջինիս օրոք, ինչպես եղել է իրականում. տե՛ս Թովմա Աբծրունի, Պատմութիւն, էջ 79):

կարծում են, որ Աբրահամ խոստովանողը իսկապես գրել է մի ինքնուրույն պատմական աշխատություն Վարդանանց պատերազմի իրադարձությունների մասին⁵⁶:

Բ. Կյուլեսերյանը և Վ. Հացունին, ընդհակառակն, հերքում են Թովմայի վկայությունը և աշխատում ապացույցել, որ Աբրահամը ոչ մի «Համառոտություն» էլ չի գրել: Առաջինի կարծիքով՝ «Համառոտություն» վերնագրի տակ Թովման ի նկատի ունի «Վկայք Արևելից» ժողովածուի մի մասը՝ Շմավունի և Գուշթաղատի վկայաբանությունը⁵⁷: Սակայն հարցի այսպիսի լուծումը պետք է համարել թյուրիմացության արդյունք: Նախ, Թովմայի վերոհիշյալ պատմությունը անհնարին էր քաղել Շմավունի վկայաբանությունից, քանի որ նրանց միջև ոչ մի կապ չկա, և երկրորդ, Թովման այնպես լավ գիտեր Աբրահամի «Վկայք Արևելից»-ը, որ չէր կարող այն շփոթել որևէ այլ աշխատության հետ:

Ըստ Հացունու՝ Աբրահամը չէր կարող լինել Թովմայի օգտագործած աղբյուրի հեղինակը, քանի որ վերոհիշյալ պատմության մեջ նկարագրված դեպքերը վերաբերում են ոչ թե Վարդանանց, այլ Վահանանց ժամանակին, և դեպքերի ու դեմքերի նման շփոթություն հնարավոր չէր V դարում⁵⁸: Այս ապացույցելու համար Հացունին իր դատողությունների շրջանակն է ներգրավում նաև Մեսրոպ Երեց Վայոցձորցու՝ «Ներսեսի վարքի» X դարի քաղաքի, հետևյալ հաղորդումը. «Ես Մեսրոպ նուաստ քահանայ... ծաղկաքաղ արարի զգիրքս զայս ի Հայոց մնացորդաց յԱրևելից գրոց. զյաղթութիւն և զվատթարութիւն թագաւորացն Հայոց և Վրաց, և զառաքինութիւն և զսքանչելիս հայրապետաց տոհմից սրբոյն Գրիգոր Լուսաւորչին և զտեսիլ և զկտակ սրբոյն Ներսէսի, և զքաջութիւն և զյաղթութիւն արիական ազգին Մամիկոնէից... եւ արդ զայս հանեալ յԱրևելից գրոց ի Հայոց մնացորդացն պատմութեանց»⁵⁹: Համադրելով այս տվյալները, Հացունին հանգում է

⁵⁶ ՏԵՄ Զարեհանալյան, Դպրութիւն, էջ 296. Կոստանյանց, Հիսուածք, էջ 175. Զամինյան, Եղիշէ, էջ 150—153:

⁵⁷ ՏԵՄ Կյուլեսերյան, Եղիշէ, էջ 144:

⁵⁸ ՏԵՄ Հացունի, Խորհրդածութիւնք, էջ 168—170, 202—206:

⁵⁹ Սովետի հայկական, հ. 2, էջ 138—139:

հետևյալ եզրակացություններին. ա) Գոյություն է ունեցել «հաւա-
քածոյ զանազան պատմութեանց», «Գիրք Արեւելից» ընդհանուր
վերնագրով: Սա պարունակել է Աբրահամի «Վկայք Արեւելից»-ը
և «Մնացորդք Հայոց պատմութեանց»-ը, որը Թովման սխալմամբ
անվանում է «Համառոտութիւն Աբրահամու խոստովանողի».
բ) Այս պատմական երկը Մեսրոպին ընծայել է ստույգ և շահեկան
տեղեկություններ, իսկ Թովմային՝ Վահանի վարքի կեղծիքը:
Ուստի պետք է ենթադրել, որ Մեսրոպի արժանահավատ աղբյու-
րին հինգերորդ դարից հետո կցվել կամ խառնվել է նրա մեջ
Արծրունիների սիրանքների առասպելը, որից օգտվել է Թովման:

Ի տարբերություն Հացունու, Գ. Տեր-Պողոսյանը առասպե-
լական է համարում միայն Վարդանի, Շավասպի, Վնգոյի
ու Շիրոյի պատմությունը, որը իբր Թովման քաղել է ժողովրդական
բանահյուսությունից, իսկ Աբրահամ խոստովանողի «Համառոտու-
թիւնը» Թովմային տեղեկություններ է տվել Վահան Արծրունու
մասին⁶⁰:

Համարյա նույն հայացքն է պաշտպանում նաև Նորայր Բյու-
րանդացին: Ըստ նրա՝ «Աբրահամ թուի թէ զրած է նաև համառօտ
Պատմութիւն մը Վարդանանց պատերազմին, յորմէ կ'առնու
Թովմայ Արծրունի զբաջօրէն մահ Վարդանայ Մամիկոնենի և
Վահանայ Արծրունոյ»⁶¹:

Ինչպես տեսնում ենք, Աբրահամ խոստովանողի պատմագրու-
թիւնը մի բարդ և խառնաշփոթ խնդիր է, որի ճիշտ լուծման համար
անհրաժեշտ է նախապես անել հետևյալ դիտողությունները.

Թովմայի օգտագործած աղբյուրում բացահայտ ժամանակա-
վրիւման առկայութիւնը բացառում է այդ աղբյուրի պատկա-
նելութիւնը Աբրահամ խոստովանողին:

Տեր-Պողոսյանի և Նորայրի կարծիքը, ըստ որի՝ Թովման
Աբրահամի «Համառոտութիւնից» տեղեկություններ է քաղել
միայն Վահան Արծրունու մասին, հիմնավորված չէ: Այս հարցում

⁶⁰ Տե՛ս Տեր-Պողոսյան, նկատողութիւններ, էջ 130—132:

⁶¹ Բյուզանդացի, Կորիւն, էջ 475—476:

իրավացի է Հացունին, որը Թովմայի ամբողջ վերոհիշյալ պատմության համար ճանաչում է մի աղբյուր:

Մեսրոպ Երեցի վկայության ներգրավումը «Համառոտության» խնդրի լուծման համար պետք է համարել ավելորդ: Սրանով Հացունին իզուր բարդացնում է գործը: Նախ, անտրամաբանական է իրար հետ բոլորովին կապ չունեցող երկերի՝ «Վկայք Արևելից»-ի և «Մնացորդաց պատմութեանց» միացումը մի ժողովածուում՝ ընդհանուր վերնագրի տակ: Երկրորդ, Լթե նույնիսկ ենթադրվի այդպիսի համատեղություն, ապա Աբրահամի թարգմանության հետ, որը մեզ է հասել համարյա ամբողջությամբ, պետք է պահպանված լինեին զոնե առանձին մասեր «Մնացորդաց պատմութիւնից»:

Զի կարելի համաձայնել նաև Ալիշանի կարծիքին, ըստ որի՝ «Մնացորդաց պատմութեանց» և «Համառոտության» տակ ենթադրվում է միևնույն աշխատությունը, որի հեղինակն է Աբրահամը⁶²: Այստեղ հաշվի չի առնված այն փաստը, որ Մեսրոպ Երեցի և Թովմայի աղբյուրները բնույթով տարբեր գործեր են՝ «Մնացորդաց պատմութիւնը» արժանահավատ աղբյուր է, «Համառոտությունը»՝ առասպելախառն:

Այսպիսով, նշված դիտողություններից հետո մնում է բացատրել Թովմայի հավաստումը Աբրահամ խոստովանողի «Համառոտության» մասին:

Հայտնի է, որ Թովման կատարելով իր պատմիրատուների՝ Արծրունի իշխանների ցանկությունը, օգտվել է նրանց նախնիների սխրանքները պատմող բանավոր առասպելներից⁶³: Սակայն Վարդանի, Վնդոյի, Շավասպի և Վահանի պատմությունը չի կարելի վերագրել այդպիսի աղբյուրների թվին: Այն, իհարկե, ծագում է ժողովրդական բանահյուսությունից, բայց Թովմային հասել է արդեն գրավոր վիճակում: Դրան ապացույց կարող է

⁶² Տե՛ս Ալիշան, Հայապատմ, էջ 45: 2. Աճառյանը նույնպես «Մնացորդաց Գիրք Արևելից» պատմական աշխատության հեղինակ է համարում Աբրահամ խոստովանողին, (տե՛ս Աճառյան, Հայոց գրերը, էջ 6):

⁶³ Տե՛ս Մ. Աբեղյան, Գրականության պատմություն, էջ 495:

ծառայել այն փաստը, որ տվյալ աղբյուրից օգտվել է նաև Հովհաննես Դրասխանակերտցին⁶⁴։ Անկասկած է նաև, որ Թովմայի օգտագործած աղբյուրը կրում էր Աբրահամ խոստովանողի անունը, և Թովման ինքը չէ, որ կապ է հաստատել այդ աղբյուրի և Աբրահամի միջև։ Իսկ այն, որ հիշյալ պատմությունը առասպելախառն է և չի կարող V դարից ծագած լինել, գեուև չի ապացուցում այդ աղբյուրի բոլոր մասերի անվավերականությունը։ V դարի մի արժանահավատ աշխատության հետադայում կարող էին կցվել անվավեր հատվածներ։ Այնպես որ, Թովմայի հաղորդման հակասությունները չեն բացառում որևէ պատմական երկի՝ Աբրահամին պատկանելու հնարավորությունը։ Մյուս թարգմանիչների՝ Մեսրոպի, Սահակի, Կորյունի, Եղիշիկի և այլոց նման Աբրահամ խոստովանողը նույնպես կարող էր ունենալ ինքնուրույն երկասիրություններ։ Նա գտնվում էր Վարդանանց ապստամբության իրադարձությունների կենտրոնում և, բացի այդ, օժտված գրող էր, այսինքն՝ ուներ համապատասխան պատմական աշխատություն գրելու բոլոր տվյալները։

Աբրահամի պատմագրելու հնարավորության մասին է վկայում նաև Հ. Տաշյանի հետևյալ հաղորդումը. «Աբրահամու անունն ուրիշ պատմութեանց վրայ ալ կը տեսնուի, ի միջի այլոց Պատմութեանց հաւաքման մը վրայ»⁶⁵։

Այսպիսով, հայ մատենագրության տվյալներից կարելի է միայն արձանագրել Աբրահամի կողմից Վարդանանց պատերազմի մասին պատմական աշխատություն հեղինակելու հնարավորության փաստը։ Ավելին պարզել առաջիմ հնարավոր չէ։ Անհայտ է լին՝ Աբրահամի Պատմության բուն բովանդակությունը, եթե, իհարկե, այդ Պատմությունը երբեք գոյություն է ունեցել, և թե՛ նրա թողած ազդեցությունը հայ պատմագրության վրա։ Այդ պատճառով զուր և անիմաստ են բոլոր այն հետազոտողների

⁶⁴ Տե՛ս Դրասխանակերտցի, Պատմություն, էջ 59։

⁶⁵ Կյուլեսերյան, Եղիշիկ, էջ 145։

ջանքերը, որոնք Աբրահամի այդ ենթադրյալ աշխատության մեջ աշխատում են տեսնել Եղիշեի Պատմության աղբյուրը⁶⁶:

Հայ հին գրականության մեջ Աբրահամ խոստովանողի դերը լրիվ պատկերացնելու համար անհրաժեշտ է մի քանի խոսք ասել նաև «Վկայք Արևելից» ժողովածուի թարգմանության հետքերի մասին, չհավանելով սպառել տվյալ խնդրի հետ առնչվող ամբողջ նյութը: Առանձնապես ծավալվելու կարիք չկա հատկապես այն պատճառով, որ «Վկայք Արևելից»-ը հայագիտության մեջ մանրամասն կերպով ուսումնասիրված է հենց այս տեսակետից:

Հետադոստողների հիմնական ուշադրությունը ուղղված է եղել Աբրահամի թարգմանության և Եղիշեի Պատմության կապերի բացահայտմանը: Այս տեսակետից համովիչ արդյունքների են հասել Անդրիկյանը և Կյուլեսերյանը⁶⁷: Համեմատելով «Վկայք Արևելից»-ի և Եղիշեի Պատմության բնագրերը, նրանք հայտնաբերել են բազմաթիվ ընդհանուր դարձվածքներ, արտահայտություններ, նույնիսկ առանձին կապակցված հատվածներ: Կարելի է չհամաձայնել նրանց բերած զուգահեռների մի մասի հետ, սակայն հիմնականում Կյուլեսերյանի և Անդրիկյանի պնդումը անսխալ է: «Վկայք Արևելից»-ի հայերեն թարգմանությունը իսկապես Եղիշեի Պատմության գլխավոր գրական աղբյուրներից մեկն է: Եղիշեն Էրբեմն ընդօրինակում է Աբրահամի ոճը, նրանից փոխառում բնորոշ բառեր, դիպուկ արտահայտություններ և համեմատություններ: Այս ընդհանրությունները մի անգամ ևս հաստատում են, որ Եղիշեի Պատմությունը դրվել է «Վկայք Արևելից»-ի հայերեն թարգմանությունից հետո: Եղիշեն է փոխառում Աբրահամից և ոչ հակառակը, որովհետև նրանց ընդհանրություն-

⁶⁶ Տե՛ս մասնավորապես Տեր-Պողոսյան, Եղիշէ. Տեր-Պողոսյան, Նկատողութիւններ. Զամինյան, Եղիշէ:

⁶⁷ ՏԵ՛ս Անդրիկյան, Արևելյան վկայք, էջ 359—360. Կյուլեսերյան, Եղիշէ, էջ 142—150:

ները ունեն իրենց սկզբնաղբյուրը՝ Մարութայի երկի ասորերեն բնագիրը:

Կյուլեսերյանի կարծիքով՝ Աբրահամի թարգմանությունից օգտվել է նաև Փավստոս Բուզանդը⁶⁸, Այս հարցում նա հիմնվում է նորայր Բյուզանդեցու հեղինակության վրա, որը նկատել է «Վկայք Արևելից»-ում և Փավստոսի Պատմության մեջ նկարագրվող որոշ ընդհանուր իրադարձություններ⁶⁹: Սակայն միևնույն դեպքերի նկարագրությունը իրարից անկախ երկերում դեռևս չի խոսում նրանց կապի մասին, և ինքը Բյուզանդացին իր դիտողություններից չի եզրակացնում, թե Փավստոսն օգտվել է Աբրահամի թարգմանությունից: Կյուլեսերյանը թյուրիմացաբար է նրան այդպիսի կարծիք վերագրում: Փավստոսն իսկապես անդրադառնում է պարսից քրիստոնյաների հալածանքներին⁷⁰, սակայն նրա նկարագրության մեջ բոլորովին այլ կերպ են բացատրված հալածանքների զրգապատճառները և բոլորովին այլ պատմական անձնավորություններ են հանդես գալիս նահատակների դերում⁷¹: Փավստոսի Պատմության և «Վկայք Արևելից» ժողովածուի առնչակցությունը անհարիր է նաև այն տեսակետից, որ նրանք բնագրական որևէ ընդհանրություն չունեն:

Վերջապես, Գ. Տեր-Մկրտչյանը ընդհանուր տեղեր է նշում «Վկայք Արևելից»-ի հայերեն թարգմանության և Աղաթանգեղոսի Պատմության բնագրերում և նույնպես եզրակացնում, որ Աղաթանգեղոսն օգտվել է Աբրահամից⁷²: Սակայն նրա բերած զուգահեռները Թերբուրի վկայաբանության և Հոփսիմյանց կույսերի պատմության միջև՝ համոզիչ չեն: Նա նշում է այնպես նմանություններ, որոնք հատուկ են ընդհանրապես սրբախոսական գրական տեսակին և զանազան տարբերակներով կրկնվում են համարյա բոլոր միասնո վկայաբանություններում: Զի հաստատ-

⁶⁸ Տե՛ս Կյուլեսերյան, *եզիչէ*, էջ 141:

⁶⁹ Տե՛ս Բուզանդացի, *Քննասէր*, էջ 52:

⁷⁰ Տե՛ս Բուզանդ, էջ 135—136:

⁷¹ Այդ մասին տե՛ս Պ. Պետերսի հանդամանակից հոդվածը՝ Peeters, Le dēbut.

⁷² Տե՛ս Տեր-Մկրտչյան, Գորիա և Շմոնի վկայից, էջ 26—29:

վում նաև Անդրիկյանի ենթադրությունը հակառակյունը և նախա-
մասին, որովհետև «Վկայք Արևելից»-ւ պացնում գործողությունը
թարգմանության այն տարրերը: Դժբախտաբար, այս «կատա-
կան Ագաթանգեղոսի Պատմության հուն են ունեցել նաև ուշ շրջանի
չեն պահպանվել⁷³:

Կ հարծիրքն այն մասին, թե

հաճամին կամ

2. ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ արված է

կանու-

Աբրահամ հոստոսիանոզի «Վկայք Արևելից»-ը հայ թարգմանիչ
նական գրականության ամենագեղեցիկ հուշարձաններից մեկից
է: Նա աչքի է ընկնում այնպիսի հարուստ լեզվով, գունեղ ոճով
և սահուն շարադրանքով, որ եթե չլինեին առանձին ասորաբանու-
թյունները, կարելի էր ենթադրել, թե գործ ունենք որևէ հայ
հեղինակի ինքնուրույն երկասիրության հետ: Զարմանալի չէ, որ
Թովման, հիշատակելով «Վկայք Արևելից»-ը, ամենևին չի կասկա-
ծում, թե այն թարգմանված է ասորերենից: Աբրահամի թարգմանու-
թյունը ամբողջապես, նախադասություն առ նախադասություն
հաղորդում է ժողովածուի ասորական սկզբնագրի բովանդակու-
թյունը: Սակայն դա չի կաշկանդում թարգմանչին և նրա գործը չի
զրկում ինքնուրույնությունից ու կենդանությունից:

«Վկայք Արևելից»-ի հայերեն թարգմանությանը բնորոշ են
նշգրտությունը՝ այն հատվածներում, որտեղ ծավալվում են
վկայաբանությունների հիմնական գործողությունները, և ազատու-
թյունը՝ ժողովածուի հոստոսիական մասերում, որտեղ հեղինակը
կովաբանում է իր հերոսներին, նրանց համեմատում աստվա-
ծաշնչյան անձնավորությունների հետ և այլն: Այս հոստոսիական
հատվածները բացի ազատ շարադրանքից նաև զգալիորեն կրճատ-
ված են հայերեն թարգմանության մեջ: Կրճատումներն ի մի
բերված կազմում են մոտ երեսուն էջ ըստ ասորական բնագրի՝
Բեջանի հրատարակության: Սակայն դժվար է որոշել, թե որ
բացթողումներն են կատարված թարգմանչի կողմից և որոնք են
առաջացել գրիչների մեղքով կամ ձեռագրերի քայքայման պատ-

⁷³ Տե՛ս Անդրիկյան, Արևելյան վկայք, էջ 358:

ները ունենալը են թարգմանության մեջ հանդիպում են նաև աննշան
բնագիրը:

Կյուլեաներյանի կարծիքով՝ ճշգրտվածները սովորաբար ավարտ-
օգտվել է նաև Փավստոս Բուզանդի փակումներով, որոնք բացակայում
է նորայր Բյուզանդացու հեղինակության սուրբ և սքանչելի վկայն
«Վկայք Արևելեան» Աստուծոյ մերոյ, որում փառք յաւիտեան.
գրքովոր որոշմ (187): Սակայն այս հավելումները կատարված են
դեպքերի միայն ոչ շրջանում՝ Ճառնախոսների խմբագիրների կողմից՝
խոստովանված սրբախոսական նյութերը միասեռ դարձնելու նպա-
թյունով: Ըն որքան արհեստական են նման ընդմիջարկություն-
ները, երևում է այն բանից, որ հաճախ նրանք կցվում են
վկայաբանության վերջին նախադասությանը՝ նույնիսկ առանց
խմաստային և բերականական կապի հաստատման: Այսպես,
Բարբաղմենի վկայաբանությունը ավարտվում է հետևյալ կերպ.
«Դադարեաց առաջնորդութիւն յեկեղեցեացն Սղակայ և Տիգրանի
սակաւ ինչ աւելի բան զքսան ամ՝ յահէ և յերկիւղէ խիստ հրամա-
նին, որ յաղագս Քրիստոսի նահատակեցան՝ ի վառս և ի գովու-
րին ամենազար տերութեանն: Որում վայելէ փառք իշխանութիւն
և պատիւ յաւիտեան յաւիտենից» (ԳՏՄ 172): Ընդգծված բառերը,
որոնք բացակայում են ասորական սկզբնագրում, որն է ձեռն համա-
ձայնեցված չեն նախորդ նախադասության հետ:

Սակայն ժողովածուի հայերեն թարգմանության բնույթը
որոշում են ոչ այս հավելումները և ոչ էլ վերոհիշյալ կրճատում-
ները: Գեղարվեստական առանձնահատկությունների գնահատման
տեսակետից ավելի կարևոր նշանակություն ունեն բառերի
դասավորության, դարձվածքների և նախադասությունների կա-
ռուցվածքի փոփոխությունները: Այստեղ են արտահայտվում
թարգմանչի միտումներն ու գեղագիտական սկզբունքները:
Ժողովածուի հայերեն թարգմանության և ասորական սկզբնագրի
համեմատությունը բացահայտում է Աբրահամի ստեղծագործական
մոտեցումն իր գործին, հայոց լեզվում ասորական արտահայտու-
թյունների ճշգրիտ համարժեքներ գտնելու նրա ունակությունը:
Աբրահամ խոստովանողը գիտակցաբար «կատարելագործում է»
ժողովածուի բնագիրը: Նա ավելացնում և բաց է թողնում

առանձին բառեր, փոխում նրանց դասավորությունը և նախադասությունների կառուցվածքը, սաստկացնում գործողությունը զանազան օժանդակ միջոցներով: Դժբախտաբար, այս «կատարելագործումներին» մասնակցություն են ունեցել նաև ուշ շրջանի գրիչներն ու խմբագիրները: Անդրիկյանի կարծիքն այն մասին, թե բոլոր այդ փոփոխությունները պատկանում են Աբրահամին կամ ասորական սկզբնագրի այն օրինակին, որից կատարված է հայերեն թարգմանությունը, չի համապատասխանում իրականությանը⁷⁴: Գրիչներն, անշուշտ, այդ շեղումներից շատերի հեղինակն են: Սրան ապացույց կարող են ծառայել ժողովածուի հայերեն ընդօրինակությունների բազմաքանակ տարընթեքվածքները: Իրբեմն կարելի է մատնանշել, թե որոշակի ինչն է ավելացվել կամ բաց թողնվել գրիչների կողմից, որովհետև առանձին ընդօրինակություններում հանդիպում են ընթերցվածքներ, որոնք լրիվ համընկնում են ասորական սկզբնագրին: Սակայն հիմնականում անհնար է պարզել, թե ում են պատկանում այդ փոփոխությունները՝ Աբրահամին, թե գրիչներին: Հաշվի առնելով այդ շեղումների հետևողականությունն ու տրամաբանականությունը, պետք է ենթադրել, որ մեծ մասամբ նրանք արդյունք են թարգմանչի անձնական մոտեցման, սակայն նրանց որոշ մասի հեղինակը այնուամենայնիվ կարող են լինել գրիչները: Այս վերապահումն անհրաժեշտ է «Վկայք Արևելից» ժողովածուի հայերեն թարգմանությունը ճիշտ վերլուծելու և դնահատելու համար: Այնուհետև, հարկ է նշել, որ Աբրահամը իր առջև հառուկ նպատակ չի դրել կրճատել կամ լրացնել ժողովածուի սկզբնագիրը: Սա, անշուշտ, չի նշանակում նաև, որ հայերեն թարգմանության շեղումները սկզբնագրից պատահական բնույթ են կրում: Աբրահամը ղեկավարվում է գիտակցված սկզբունքներով և յուրաքանչյուր որոշակի հատվածում, որոշակի նախադասության մեջ դրանք կիրառում յուրահատուկ մոտեցմամբ, ելնելով հատվածի բովանդակությունից ու նախադասության մտքից: Կրճատելով և ավելացնելով առանձին բառեր ու արտահայտություններ, փոփոխելով

⁷⁴ Տե՛ս Անդրիկյան. Արևելեան վկայք, էջ 254:

նախադասությունների կառուցվածքն ու երանգավորումը, Աբրահամը, ինչպես արդեն մի անգամ նշվեց, իր հայեցողությամբ «կատարելագործում է» ժողովածուի բնագիրը:

Այս դիտողությունների նկատառումով ստորև քննության են ենթարկվում «Վկայք Արեւելից» ժողովածուի հայերեն թարգմանության առանձնահատկությունները և Աբրահամ խոստովանողի թարգմանչական սկզբունքները:

1. Մակդիրների հավելումներ՝ պերճախոսության նպատակով: Այսպես, ասորական սկզբնաղբի «գործովք և արդեամբք»-ի դիմաց հայերեն թարգմանության մեջ ունենք «գործովք առաքինութեան, արդեամբքն փառութեանց» (PS—2 726, ԳՏՄ 103), կամ՝ «սուսերդ» բառի փոխարեն գրված է «սայրասուր սուսերդ» (PS—2 770, ԳՏՄ 134), «խրատուղ» թարգմանված է «վնասակար խրատուղ» (PS—2 770, ԳՏՄ 134) և այլն: Հայերեն թարգմանության մեջ կարելի է հաշվել հարյուրավոր այսպիսի դեպքեր, իսկ հակառակ երևույթը, այսինքն՝ ասորական սկզբնաղբի մակդիրների բացթողումը, հանդիպում է շատ հազվադեպ: Այդ պատճառով տարակուսանք չի կարող լինել այս հավելումների նպատակաուղղվածության նկատմամբ: Դրանք, անշուշտ, կատարված են ժամանակի գեղարվեստական պահանջները բավարարելու համար: Մակդիրների շուրջ գործածությունը ոսկեդարյան հայ գրականության էական գեղարվեստական սկզբունքներից է:

2. Մակբայների, ձայնարկությունների, միջանկյալ բառերի հավելումներ՝ նախադասության գործողությունը սաստկացնելու համար: Օրինակ, ասորական սկզբնաղբի «և զողացուցանէր զտիեզերս ահեղ պատգամաւրն» նախադասությունը հայերեն թարգմանության մեջ սաստկացել է մի շարք բառերի ներմուծմամբ՝ «և զողացուցանէր առհասարակ զամենայն տիեզերս ահեղ պատգամաւրն և սաստիկ սպառնալեալն» (PS—2 738, ԳՏՄ 112), կամ ասորերեն «հրամայեաց և եմուտ զառաջեաւ» նախադասությունը հայերեն թարգմանված է՝ «և տվաղվաղակի ածել զառաջեաւ» (PS—2 751, ԳՏՄ 122): Նման հավելումները, իհարկե, նույնպես ծառայում են պերճախոսության նպատակին, բայց նրանց գլխա-

վոր նշանակությունը երկերի բովանդակության տպավորչության ընդգծումն է: Այս առումով շատ ակնառու է հետևյալ օրինակը: Մեկնսը ողջացնում է պատգարակով իր մոտ բերված մի անդամալուծ կնոջ, և վերջինս՝ «գնաց ի տուն իւր», իսկ հայերեն թարգմանությունն ավելացնում է՝ «գնաց ինքնին ի տուն իւր», ավելի ցայտուն դարձնելով հրաշքի ներգործությունը (AMS 269, ԳՏՄ 184):

3. Հաճախ հավելումները պայմանավորված են՝ ասորական սկզբնագրում կցական դերանվամբ արտահայտված գործողության առարկան որոշակիացնելու անհրաժեշտությամբ: Այսպես, «հար զնա»-ի փոխարեն հայերեն թարգմանության մեջ ունենք «հար զայրն» (AMS 268, ԳՏՄ 182), «ետես զնա» թարգմանված է՝ «ետես զպատահին» (AMS 268, ԳՏՄ 183), «բարձին զնա»՝ «բարձին զկինն» (AMS 269, ԳՏՄ 183):

Ծիշտ այսպես են հաղորդված նաև կցական դերանվամբ արտահայտված հատկացուցիչները՝ ասոր. «բանն նորա»՝ հայ. «բանն Աստուծոյ» (AMS 63, ԳՏՄ 51), ասոր. «զձեռանէ նորա»՝ հայ. «զձեռանէ կնոջն» (AMS 269, ԳՏՄ 184), ասոր. «հրեշտակ նորա»՝ հայ. «հրեշտակ Աստուծոյ» (AMS 265, ԳՏՄ 182) և այլն:

Հաճախակի են որոշակիացվում նաև ինքնուրույն անձնական և ցուցական դերանունները, նախդրով և կցական դերանվամբ արտահայտված անուղղակի խնդիրները: Այսպես, ասորական սկզբնագիրն ունի՝ «մեծազարն այն», հայերեն թարգմանությունը՝ «նահատակն մեծազար» (PS—2 735, ԳՏՄ 110), ասոր. «համբաւ այդ»՝ հայ. «համբաւ մարտիրոսութեանն» (ASM 49, ԳՏՄ 143), ասոր. «երեւցո մեզ»՝ հայ. «երեւցո ծառայից քոց» (AMS 92, ԳՏՄ 74):

Երբեմն որոշակիություն են ստանում նաև գործողության սյարագանքները: Օրինակ, Թերբուի վկայաբանության ասորական սկզբնագիրը սկսվում է հետևյալ խոսքերով՝ «Ի ժամանակին յայնմիկ... հիւանդանայր տիկնաց տիկինն», իսկ հայ թարգմանիչը սյարդաբանում է, թե ինչ է հասկանում հեղինակը «ի ժամանակին յայնմիկ» բառերի տակ՝ «Ի ժամանակին յայնմիկ, իբրև

փառաւորեցաւ Շմաւոն վկայութեամբ, դէպ եղև հիւանդանալ տիկնաց տիկնոջ» (ASM 54, ԳՏՄ 150)⁷⁵:

4. Նախորդ կարգին նշանակութեամբ մոտ են այն հավելումները, որոնք թարգմանչի կարծիքով՝ անհրաժեշտ են ասորական բնագրի անավարտ նախադասութիւնները լրացնելու համար: Այսպէս, սկզբնագրի «և մատուցին զոհս» նախադասութեան դիմաց հայերէն թարգմանութիւնը տալիս է՝ «և մատուցին զոհս ղիւաց» (PS—2 718, ԳՏՄ 97), կամ՝ «մեռցուք միամիտ սրտիւ»-ի փոխարեն՝ «մեռցուք միամիտ սրտիւ վասն հարցն արիւնաց» (PS—2 718, ԳՏՄ 97), իսկ «յարեաւ և վերացաւ փառաւք յերկինս» նախադասութեանը կցված է՝ «և նստաւ ընդ աջմէ Աստուծոյ» (PS—2 746, ԳՏՄ 117): Նշված ասորական նախադասութիւնները, ինչպէս երևում է, թե մտքով, թե քերականորեն ավարտված են: Պարզապէս հայ թարգմանիչը ձգտում է հանրահայտ քրիստոնեական ճշմարտութիւնների օգնութեամբ հասնել բացարձակ պարզութեան. իհարկէ, զոհերը մատուցվում էին ինչ-որ կուռքերի, իհարկէ, մարդիկ նահատակվում էին հանուն հավատի, իհարկէ, Բրիստոսը նստեց «ընդ աջմէ Աստուծոյ»:

5. Հավելումներ՝ աստվածաշնչյան մեջբերումների ճշգրտման, լրացման և նրանց որոշակի աղբյուրների վկայակոչման նպատակով: Հաճախ աստվածաշնչյան մեջբերումները ասորական բնագրում կատարվում են առանց Սուրբ Գիրքը հիշատակելու: Շման դեպքերում հայ թարգմանիչը ավելացնում է հետևյալ կարգի ծանոթագրութիւններ՝ «Եւ ահաւասիկ ասէ Տէր ի ձեռն Իսայայ» (ԳՏՄ 49, AMS 61), «Եւ առաքեալ ասէ» (ԳՏՄ 65, AMS 83), «Ըստ այնմ, որ ասէ» (ԳՏՄ 63, 64, AMS 79, 81) և այլն: Աբրահամը միշտ վկայակոչում է աստվածաշնչյան աղբյուրները և այդ պատճառով զարմանալի է, թե ինչու նա հետևողականորեն բաց է թողնում Պողոսի թղթերի հիշատակումները: Այսպէս, հայերէն թարգմանութեան մեջ բացակայում է ասորական

⁷⁵ Հետաքրքիր է, որ հույն թարգմանիչը նույնպէս ոտիպված է պարզել այս պարագան՝ Τῷ γὰρ τῶν δὲ αὐτῶν ἡμῶν... «ի ժամանակի հալածանաց մերոց» Խոսքերով (PO—2 439).

սկզբնագրի «որպէս գրեալ է երանելին Պաւղոս» նախադասությունը (AMS 71, ԳՏՄ 57), իսկ «երանելին Պաւղոս գրէ» նախադասության դիմաց ունենք՝ «որպէս գրեալ է առաքեալ» (AMS 79, ԳՏՄ 62), «և Պաւղոս ասէ» նախադասությունը դարձել է «առաքեալ ասէ» (AMS 76, ԳՏՄ 61) և այլն:

Այս հանգամանքը հիմք է տալիս ենթադրել, որ Պողոսի թղթերի վկայակոչումներն ասորական սկզբնագրում՝ հայերեն թարգմանությունից հետո կատարված ընդմիջարկություններ են:

6. Հավելումներ՝ պատկերավոր արտահայտվելու նպատակով: Հաճախ ասորական սկզբնագրի չափազանց սլարդ նախադասություններ, հայ թարգմանչին չոր թվալով, հագեցվում են գունագեղ արտահայտություններով: Այսպես, ասորերեն «տեսանիցեմք ղբեզ» նախադասությունը դարձել է «լիցուք արժանի ղբեզ տեսանել» (AMS 96, ԳՏՄ 79), ասոր. «քանզի ասէ առաքեալ»՝ հայ. «քանզի ունկնդիր եղէք առաքելոյ բանին» (AMS 69, ԳՏՄ 55), ասոր. «զթագաւորութիւնս կամի»՝ հայ. «զթագս ի գլուխս կամի» (ASM 116, ԳՏՄ 172): Հայ թարգմանիչը թեև տուրք է տալիս որոշ վերամբարձության, սակայն ելնելով հիշյալ հատվածների բովանդակությունից և ժամանակի դեղարվեստական պահանջներից, նրա այս հակումը հիմնավորված պետք է համարել:

7. Ասորական նախադասությունների և բառակապակցությունների կրճատումները հայերեն թարգմանության մեջ հազվադեպ են և հիմնականում կրում են պատահական բնույթ, ինչպես, օրինակ, tūbānā «երանելի», qaddīšā «սուրբ» և նման այլ բառերի բացթողումները: Սակայն այստեղ նույնպես կարելի է նկատել որոշ օրինաչափություններ:

Սեմական լեզուներին հատուկ բայական ավելադրությունը երբեմն հայերեն թարգմանության մեջ վեր է ածվում սաստկացնող մակբայի: Օրինակ, ասորերեն «մաշէր թուլացուցանէր զմարմինն» նախադասությունը հայերեն թարգմանության մեջ ստացել է «հաւապազ մաշեր զմարմինն» ձևը (AMS 263, ԳՏՄ 178):

Որոշ դեպքերում Աբրահամ խոսրովանողը մի բառով ընդգրկում է ասորերեն նախադասության թվարկված համադաս անդամները: Այսպես, «հրամայեաց և ածին զԲարբաշմեն և զընկերս նորա դառա-

ջեաւ» նախադասութեան փոխարեն նա տալիս է՝ «և հրամայեաց ածել զառաջեաւ զամենեւեան» (ASM 113, ԳՏՄ 168):

Հաճախ հայ թարգմանիչը բաց է թողնում այնպիսի բառեր, որոնք, նրա կարծիքով, անպայման անհրաժեշտ չեն տվյալ միտքը արտահայտելու համար, ինչպես՝ ասոր. «պատասխանի ետ մոգպետն և ասէ ցնոսա»՝ հայ. «ասէ մոգպետն» (ASM 55, ԳՏՄ 152), կամ՝ ասոր. «կերիցեն դարին զազանաց»՝ հայ. «կերիցեն դարին» (ASM 116, ԳՏՄ 172) և այլն:

Աբրահամը շատ տեղին կրճատում է ասորական բնագրի այնպիսի երկարաշունչ արտահայտություններ, որոնք հայերենում կարելի է հաղորդել մեկ-երկու բառով՝ առանց խմաստի նվազագույն փոփոխության: Օրինակ, «ներքինի մի, զոր սիրէր զնա արքայ շատ» թարգմանված է՝ «ներքինի մի սիրելի արքայի» (ASM 50, ԳՏՄ 144):

Աբրահամը մի կողմ է դնում ասորական սկզբնագրի ծանոթագրությունները այնպիսի երևույթների մասին, որոնք քաջածանոթ են հայ իրականությանը: Այս առումով շատ բնորոշ է հետևյալ օրինակը՝ ասորական «օձ մի մեծ, որ անուանեալ կոշի վիշապ»-ի փոխարեն հայերեն թարգմանությունը պարզապես տալիս է՝ «վիշապ մի մեծ» (AMS 265, ԳՏՄ 180): Նման մեկնաբանությունները հայ դիցաբանության հանրահայտ գործող անձերից մեկի՝ վիշապի մասին, հայ ընթերցողի համար, իհարկե, ավելորդ էին⁷⁶:

8. Փոփոխություններ, որոնք կատարված են ժողովածուի բովանդակության տեղայնացման մղումով: Սկզբնագրում հաճախակի են հանդիպում «ժողովուրդս մեր», «եկեղեցիք մեր» և նման այլ արտահայտություններ, որոնք հայերեն թարգմանության մեջ վերարտադրվում են անորոշ կերպով՝ «ժողովուրդն Աստուծոյ», «եկեղեցիք» և այլն: Այսպես, «արկին ի հարկ զժողովուրդն մեր» թարգմանված է «արկին ի հարկ զբիստոնեայսն» (PS—2 727, ԳՏՄ 104), ասոր. «Ու թշնամի... ժողովրդեանս մերոյ»՝ հայ. «Ու թշնամի... ժողովրդեանս Աստուծոյ» (PS—2 770, ԳՏՄ 134),

⁷⁶ Հմմտ. Март, Словарные заметки, стр. 033—034.

ասոր. «սկսան շարախաւսել զմէնջ»՝ հայ. «սկսան շարախաւսել զամենայն քրիստոնէից» (PS—2 738, ԳՏՄ 112):

Հաշվի առնելով նման դեպքերի հաճախակիութիւնը, այս ընդհանրացումները պետք է նպատակամիտօրէն համարել, թէև հայերեն թարգմանութեան մեջ տեղ-տեղ պահպանված են սկզբնաղբի «ազգն մեր», «ի մէնջ» և այլ արտահայտութիւններ: Սրանով Աբրահամն ուղղում է մոտեցնել նկարագրվող իրագործութիւնները հայ ընթերցողին և նրան ավելի հարազատ դարձնել ժողովածուի հերոսներին: Այստեղ, թվում է, հակասութիւն գոյութիւն ունի, որովհետև նման նպատակի, ըստ երևույթին, կարելի էր ավելի լավ հասնել՝ պահպանելով հենց սկզբնաղբի ձևերը: Սակայն Աբրահամը մտածել է այլ կերպ: «Ազգն մեր», «ժողովուրդն մեր» բառերի տակ հասկանալով միայն ասորիներին, նա ցանկացել է «ազգն քրիստոնէից», «ազգն Աստուծոյ» խոսքերով ընդգծել նաև հայ ժողովրդի՝ որպէս քրիստոնեւորթյան մի մասի, առնչութիւնը նկարագրվող դեպքերին:

9. Փոփոխութիւններ՝ առաջացած բնագրի ոճի հայացման հետևանքով: Աբրահամը հաճախ է կիրառում դասական հայ մատենագրութեանը հատուկ ոճական միջոցներ, որոնք ոչ մի կախում չունեն ասորական սկզբնաղբից: Հատկապէս բազմաթիւ են ավելադրույթան դեպքերը: Այսպես, ասորերեն takṭūšā «մարտ» բառի փոխարեն հայերեն թարգմանութեան մեջ ունենք «մարտ պատերազմի», մի արտահայտութիւն, որը չափազանց բնորոշ է V դարի հայ գրականութեանը (PS—2 722, ԳՏՄ 99), ասոր. «համբաւ նոցա» թարգմանված է «լուր համբաւոյ նոցա» (ASM 119, ԳՏՄ 175), իսկ «զհարցուածսն նոցա»՝ «զհարցուածսն և զպահանջսն նոցա» (ASM 119, ԳՏՄ 174): Ավելի հաճախակի է բայական ավելադրութիւնը, օրինակ, ասորական սկզբնաղբի «հհաս նեղութիւն» նախադասութիւնը հայերեն թարգմանութեան մեջ դարձել է «եկն եհաս նեղութիւն» (PS—2 726, ԳՏՄ 103), ասոր. «տապալեացեն զշինուածս»՝ հայ. «եղծցեն տապալեացեն զշինուածս» (AMS 264, ԳՏՄ 179), ասոր. «հասին ի քաղաքն»՝ հայ. «ածին հասուցին ի քաղաքն» (ASM 113, ԳՏՄ 168):

V դարի հայ գրականության բնորոշ ոճական առանձնահատկություններից է նաև այսպես կոչված պեսպիսությունը, որը նույնպես իր արտահայտությունն է գտել «Վկայք Արևելից» ժողովածուի հայերեն թարգմանության մեջ: Այսպես, ասորական սկզբնագրի «հեռացուցին ի հարց և յեղբարց և յաղգատոհմէ» նախադասության «հեռացուցին» (parrešūn) բառի դիմաց հայերեն թարգմանությունը տալիս է միանգամից երեք հոմանիշ բայ՝ «մեկնեցին յեղբարց, մերժեցին ի հարց, հեռացուցին յաղգատոհմէ» (AMS 101, ԳՏՄ 85):

Աբրահամ Խոստովանողի ոճին խորթ չեն նաև կրկնությունները: Հետևյալ հատվածում միևնույն բառը կրկնելով երեք տարբեր նախադասությունների սկզբում, նա հմտորեն ուժեղացնում է նկարագրվող պատկերի ներգործությունը.

Հայ. քաղցամուրյուն

Ասոր. սկզբնագիր

Երբևալ փափկանան ի փափկու-
թեանն Աղենայ...

Փափկանան յԱղեն...

Երբևալ զուարճանան ի վայելչու-
թեան գրախտին...

Զուարճանան ի գրախտին...

Երբևալ լինին ուրախ յանսպառ
յուրախութիւնս արքայութեանն...

Խնդան և վայելեն յարքայութեանն...

(ԳՏՄ 171)

(ASM 116)

Սրան չի հակասում այն հանգամանքը, որ Աբրահամը երբեմն, ընդհակառակն, ոճական անհարիրությունից խուսափելու համար, ասորական սկզբնագրում մոտ հարևանությամբ կրկնված բառերից մեկը փոխարինում է մի այլ բառով: Նման սրբագրությունը լիովին հիմնավորված է, որովհետև այստեղ արդեն կրկնությունները չունեն նախորդ օրինակի ոճական ներգործության ուժը, այլ պարզապես արդյունք են բառերի անհաջող դասավորության: Ասորական սկզբնագրի «զի լիցի պաշտանեայ երկնաուր արքայի իբրև զհրեշտակ երկնաուր» նախադասությունը Աբրահամը դարձնում է «զի լիցի պաշտանեայ Աստուծոյ իբրև զհրեշտակ երկնաուր» (AMS 263, ԳՏՄ 178): Թեև ասորական բնագրում «երկնաուր» բառի կրկնությունը արդարացված է malkā «արքա» և mal ākā «հրեշտակ» նմանահունչ բառերից կազմված բառախաղի

սլատճառով, սակայն հայերենում այդ բառախաղի վերարտադրման անհնարինությունը թարգմանչին ստիպում է հրաժարվել կրկնությունից: Մի ուրիշ տեղ Աբրահամը «ասէ նմա, որ ասէ» նախադասության փոխարեն տալիս է՝ «ասէ ցայրն, որ եկն զնմանէ» (AMS 268, ԳՏՄ 183):

Ոճական տեսակետից Աբրահամը հաջող է վերարտադրում նաև ասորերեն «հրամայեաց և արկին զնոսա», «հրամայեաց և ածին զնոսա» և նման այլ արտահայտություններ, որոնց բառացի թարգմանությունը հայերենում չէր կարող լավ հնչել: Այդ պատճառով թարգմանիչը երկրորդ բայը հաղորդում է անորոշ դերբայով՝ «հրամայեաց արկանել», «հրամայեաց ածել» (AMS 298, 299 ԳՏՄ 168):

Հետաքրքիր են այն դեպքերը, երբ Աբրահամը ձգտում է լիովին արտահայտել առանձին ասորերեն բառերի բազմիմաստությունը: Օրինակ, ասորերեն šarîrā'it բառը կարելի է թարգմանել և «ճշմարիտ», և «հաստատ, ամուր», այդ պատճառով հետևյալ նախադասության մեջ հայ թարգմանիչը տալիս է այս երկու նշանակություններն էլ՝ «ճշմարիտ և հաստատութեամբ ունիմ» սկզբնագրի՝ «հաստատութեամբ ունիմ»-ի փոխարեն (ԳՏՄ 169, ASM 114):

10. «Վկայք Արևելից» ժողովածուի հայերեն թարգմանության մեջ տեղ են գտել նաև որոշ անճշտություններ, սխալ թարգմանության դեպքեր: Սակայն այս սխալներից ոչ մեկը չի կարելի վերագրել թարգմանչի անկարողությանը: Աբրահամը կատարելապես տիրապետում է ասորերենին և փայլուն կերպով թարգմանում սկզբնագրի նույնիսկ ամենաբարդ և խրթին հատվածները: Իսկ կատարված սխալներն այնքան պարզ և աննշան են, որ կարող են բացատրվել միայն թյուրիմացություններով, թարգմանչի հոգնածությամբ, ասորական նախօրինակի վիճակով: Այսպես, Աբրահամը տասնյակ անգամներ ճիշտ է թարգմանում ասորերեն balhōd «միայնակ» բառը, և հանկարծ «բնակեալ էր յայրի միայնակ» նախադասության փոխարեն տալիս է՝ «բնակեալ էր յայրի միոջ» (AMS 265, ԳՏՄ 180): Այսպիսի մանր անճշտություններ հանդիպում են ևս մի քանի անգամ, սակայն Աբրահամ

խոստովանողը հիմնականում շատ ուշադիր է և աշխատում է որքան հնարավոր է ճշգրիտ կերպով վերարտադրել սկզբնագրի բովանդակությունը: Այնուամենայնիվ նրա թարգմանության մեջ կարելի է նշել դեպքեր, երբ սկզբնագրի միտքը ակնհայտորեն աղավաղված է: Օրինակ.

Հայ. քարգմանություն

Ասոր. սկզբնագիր

Ես քաջանուն մեռանիմ, Բանգի գի-
տեմ երէ մեռանելոց եմ, և վատանուն
ոչ առնում յանձն կեալ:

(ԳՏՄ 154)

Ես քաջանուն մեռանիմ, Բանգի ապրե-
լոց եմ (յաւիտեանս՝ Լ. Տ.—Պ.) և
վատանուն ոչ առնում յանձն կեալ:

(AMS 258)

Հայերեն թարգմանության շեղումը ասորական սկզբնագրից այս հատվածում չի կարելի բացատրել թարգմանչի զաղափարա-
միտվածքով: Թարգմանությունն այստեղ ճիշտ չէ ինչպես բնագրա-
կան, այնպես նաև բրիտանական մտայնության տեսակետից: Միջնադարյան սրբախոսի համար մահվան ցանկալիությունը
թելադրվում է ոչ թե նրա անխուսափելիությամբ, այլ հավիտենա-
կան կյանքը ժառանգելու հավատով:

11. Հակառակ «Վկայք Արեւելից» ժողովածուի ոճի հայացման
ուղղությամբ Աբրահամի թափած ջանքերին, հայերեն թարգմանու-
թյան մեջ պահպանվել են նախօրինակ լեզվի բազմաթիվ տարրեր:
Ասորաբանությունները դրսևորվում են հիմնականում հատուկ
անունների վերարտադրման մեջ, հայոց լեզվին խորթ արտահայ-
տություններում և շարահյուսական կառուցվածքներում, բառա-
պատճեններում և փոխառություններում:

ա) Հատուկ անունների վերարտադրման մեջ կարելի է նկատել
հետևյալ օրինաչափությունը: Աբրահամը, որպես կանոն, ասորա-
կան ձևով է հաղորդում այն անունները, որոնք անժանոթ են հայ
ընթերցողին, օրինակ, ասոր. Hadyab—հայ. Խդեաբ (AMS 266,
ԳՏՄ 181), ասոր. Yazdāndukt—հայ. Յազտանդուխտ (AMS 291,
ԳՏՄ 3, 157—165), ասոր. Barba'smīn—հայ. Բարբաշմեն (AMS
296—303, ԳՏՄ 3, 166, 173): Իսկ այն տեղանուններն ու անձնա-
նունները, որոնք ծանոթ են հայ ընթերցողին, վերարտադրվում
են համապատասխան հայկական ձևերով, այսպես, ասոր. Sūriyā

—հայ. Ասորիք (PS—2 731, ԳՏՄ 107), ասոր. Bēṭ Huzāyē—հայ. Խուժաստան (PS—2 739, ԳՏՄ 113), ասոր. Bēṭ 'Aramāyē—հայ. Ասորեստան (AMS 266, ԳՏՄ 181), ասոր. Qūšipōn—հայ. Տիգրոն (PS—2 727, ԳՏՄ 104), ասոր. Šabūr—հայ. Շապուհ (PS—2 727, ԳՏՄ 104) և այլն: Նույն սկզբունքով են արտահայտված նաև բոլոր աստվածաշնչյան հատուկ անունները: Սակայն դեպքեր կան, երբ թարգմանիչը նախկինում հայացած անունների փոխարեն ընդունում է ասորական սկզբնագրի ձևերը: Օրինակ, Կիւռոս անձնանունը «Վկայք Արեւելից» ժողովածուի հայերեն թարգմանության մեջ ասորական Kūrēš-ի ազդեցության տակ դարձել է Քուրեշ (AMS 91, ԳՏՄ 74), իսկ Աֆաար-ը՝ ասորական 'Aḥāb-ի ազդեցության տակ վերածվել է Ախաար-ի կամ Ախայար-ի (AMS 77, 93, ԳՏՄ 61, 75): Սա, ըստ երևույթին, պետք է բացատրել այն բանով, որ Աբրահամը, երկար ժամանակ ապրելով ասորիների մեջ, արդեն վարժվել էր այս անունների ասորական արտասանությանը: Ե. Տեր-Մինասյանը ասորաբանություն է դիտում նաև Յովսէփ անվան Յուսիփ ձևում, որը երկու անգամ հանդիպում է «Վկայք Արեւելից» ժողովածուի հայերեն թարգմանության մեջ (ԳՏՄ 47)⁷⁷: Սակայն այս ձևը, ըստ երևույթին, հետամուտ է, որովհետև նախ՝ ժողովածուի հնագույն ընդօրինակությունները (ԳՏՄ՝ AB) տալիս են Յովսեփայ, երկրորդ՝ ասորերեն Yausep ձևը հայերենում չէր կարող դառնալ Յուսիփ, քանի որ հայկական տառադարձությամբ ասորական երկբարբառները (տվյալ դեպքում au), որպես կանոն, պահպանվում են: Յուսիփ ձևը հավանաբար արդյունք է արաբական ազդեցության (հմմտ. արաբ. Yūsuf-ii):

բ) Հաճախ Աբրահամը ստրկական բառացիությամբ է թարգմանում հայերենին խորթ ասորական արտահայտություններն ու բառակապակցությունները: Օրինակ, ինչպես հայտնի է, դասական հայերենում սովորաբար անձի անունների համար օգտագործվում է ումն, իսկ իրի անունների համար՝ իմն անորոշ դերանունը կամ մի անորոշ հորդը: Ասորերենը չունի այս տարբերակումը և բոլոր դեպքերում գործ է ածում ḥad «մի, ումն» անորոշ հորդը: Սրան

⁷⁷ Տե՛ս Տեր-Մինասյան, Հետազոտություններ, էջ 74—75:

համապատասխան՝ «Վկայք Արեւելից» ժողովածուի հայերեն թարգմանության մեջ նույնպես համատարած գործածվում է մի հոդը: Այսպես, ասոր. mhaymna had rabbā հայ. «ներքինի մի մեծ» (PS—2 750, ԳՏՄ 120), ասոր. gabrā had rabbā հայ. «այր մի առաջ» (PS—2 774, ԳՏՄ 138), ասոր. gabrā had qašyā հայ. «այր մի ստամբակ» (AMS 111, ԳՏՄ 166) և այլն:

Աբրահամը երբեմն ընդօրինակում է ասորական սկզբնաղբի նաև այլ ոճական առանձնահատկությունները, ինչպես՝ ասոր. b-qalil qalil հայ. «առ սակաւ սակաւ» (PS—2 727, ԳՏՄ 104), ասոր. men dūk dūk հայ. «ի տեղեաց տեղեաց» (ASM 112, ԳՏՄ 167) և այլն:

Սկզբունքորեն այսպիսի ձևերը հայերենում հնարավոր են և երբեմն հանդիպում են նաև հայ հեղինակների ինքնուրույն երկերում: Սակայն տվյալ դեպքում, ինչպես նկատել է Ե. Տեր-Մինասյանը, նրանց հաճախակիությունը կարելի է բացատրել միայն ասորական բնաղբի ազդեցությամբ⁷⁸:

դ) Ամենացայտուն ասորաբանությունների թվին են պատկանում «Վկայք Արեւելից» ժողովածուի հայերեն թարգմանության բազմաթիվ բառապատճենումները: Աբրահամը, օգտագործելով հայերենի հարուստ բառակազմական հնարավորությունները, ստեղծում է գեղեցիկ բարդություններ, որոնք ճշտորեն արտահայտում են ասորական բառակապակցությունների իմաստը: Նրա կողմից կազմված որոշ բարդություններ հետագայում տեղ են գտել զրաբարի հիմնական բառապաշարում: Օրինակ, մշտականիս - ասոր. 'amīnat dawšā (ԳՏՄ 48, AMS 60), դառնաշունչ - ասոր. marīrā d-napšā (ԳՏՄ 66, AMS 83), բնական - ասոր. 'akel zar 'onē (ԳՏՄ 86, AMS 102): Ավելի քիչ տարածում են գտել հետևյալ բառերը. մարմնահեղձոյց - ասոր. mħanneq pagrē (ԳՏՄ 53, AMS 67), հոգեհեղձոյց - ասոր. hāneq napšatā (ԳՏՄ 53, AMS 67), հեռատանադէտ - ասոր. hā'er l-rūhqā (ԳՏՄ 54, AMS 68), լուսաշաղէտ - ասոր. hā'er la-qdāmāw (ԳՏՄ 67, AMS 84), լուսնաքիւ - ասոր. ba-d-sahrā (ԳՏՄ 155, AMS 260): Հետևյալ

⁷⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 79:

երկուսը անկայուն բառապատճեններ են՝ գլուխ աշակերտաց-ասոր. *rešā d-talmīdē* (ԳՏՄ 78, AMS 94) և ոչ իմաստուն-ասոր. *lā hakīmā* (ԳՏՄ 168, AMS 299)։

Այս բառաբարդությունների պատկանելությունը Աբրահամ խոստովանողին հավաստվում է երկու փաստով՝ առաջին, որ նրանք հայերենում վկայված չեն «Վկայք Արևելից» ժողովածուի թարգմանությունից առաջ (462/63 թ.)⁷⁹, երկրորդ, որ հայտնի է նրանց սկզբնաղբյուրը՝ ժողովածուի ասորերեն բնագիրը։

«Վկայք Արևելից» ժողովածուի հայերեն թարգմանության մեջ հանդիպում են ասորական ձևերին համապատասխանող նաև այլ բառաբարդություններ, ինչպես՝ ծանրագին-ասոր. *yaqīr tīmī* (ԳՏՄ 59, AMS 75), մահապարտ-ասոր. *hayāb mawtā* (ԳՏՄ 122, PS—2 751), ջրաբու-ասոր. *šāt' maya* (ԳՏՄ 86, AMS 102), մարդակեր-ասոր. *'ākel nāšā* (ԳՏՄ 155, AMS 259) և այլն։ Սակայն սրանք չեն կարող պատկանել Աբրահամ խոստովանողին, որովհետև վկայված են արդեն V դարի առաջին կեսի հայ գրականության մեջ։

դ) Աբրահամը շատ հազվադեպ է առանց թարգմանության թողնում ասորական սկզբնագրի բառերը։ Նրան պատկանում են միայն մի քանի իսկական փոխառություններ, այն էլ գործածված մեկ-երկու անգամ։ Դրանք են՝ զադիշ-ասոր. *gdīšā* «խուրձ, դեղ» (ԳՏՄ 26, 27, Պեշիտտա՝ Զոբ, 5, 26)⁸⁰, արգբեդ-ասոր *arzbed* «բերդապետ» (ԳՏՄ 121, PS—2 750), կոռգպետ-ասոր. *qrogbēd* «արհեստապետ» (ԳՏՄ 139, PS—2 774), տարմալ-ասոր. *tarmāla* «մախաղ» (ԳՏՄ 180, 182, AMS 265, 267), շիփորայ- ասոր. *šīpōrā* «շեփոր» (ԳՏՄ 135, PS—2 771), Ադեն-ասոր. *'dēn* «Եդեն» (ԳՏՄ 171, ASM 115)։ Վերջին երկու բառերը հայերենում վկայված են դեռևս Աբրահամի թարգմանությունից առաջ, սակայն այլ ձևով՝ շեփոր և եդեն։

⁷⁹ «Վկայք Արևելից» ժողովածուի հայերեն թարգմանության բառապաշարի փաստերը ստուգված են «նուր բաղդիբ» և Անադյանի «Արմատական բառարաններով»։

⁸⁰ Դադիշ բառի մասին տե՛ս գլուխ Գ, 2։

Սրանով դեռ չի սահմանափակվում «Վկայք Արևելից» ժողովածուի ասորական սկզբնաղբի և հայերեն թարգմանության բառային առնչակցությունը: Աբրահամը հնարավորության դեպքում աշխատում է անպայման օգտագործել երկու լեզուների համար ընդհանուր բառերը: Այսպես, šaynā բառի իմաստը հաղորդելու համար հայերենի բաղմաթիվ հոմանիշներից (բարգաւաճանք, խաղաղութիւն, հանգստութիւն և այլն) նա մշտապես քնտրում է ասորերենին համահունչ շէն կամ շինութիւն բառը (ԳՏՄ 76, 85, AMS 93, 101 և այլն): Թեև երկու լեզուներն էլ այս բառը փոխառել են միջին պարսկերենից և հայկական շէն-ը գոյություն է ունեցել անկախ ասորական šaynā-ից, այնուամենայնիվ ժողովածուի սկզբնաղբում և հայերեն թարգմանության մեջ նրանց բաղմակի հանդիպակացությունը պայմանավորված է նրանց ընդհանրության գիտակցությամբ: Նման դեպքերը «Վկայք Արևելից» ժողովածուի հայերեն թարգմանության մեջ բավականին մեծ թիվ են կազմում. անդամ- haddāma (ԳՏՄ 81, AMS 97), առիծ- aryā (ԳՏՄ 102, PS-2 723), բիրեղ- bēriḷā (ԳՏՄ 12, Պեշխոտա՝ Եսայի 54, 11), բոսոր- būsar (ԳՏՄ 49, AMS 61), գանձ- gazzā (ԳՏՄ 174, ASM 118), գեհեն- gēhanā (ԳՏՄ 190, ASM 124), գոյն- gawnā (ԳՏՄ 66, AMS 83), գրգռել- garreg (ԳՏՄ 66, AMS 83), դար- dārā (ԳՏՄ 82, AMS 97), եփուդաուր- 'apūda (ԳՏՄ 102, PS-2 726), գէն- zaynā (ԳՏՄ 48, AMS 60), գմրոխ- zmaragdā (ԳՏՄ 59, AMS 75), խարաման- harmānā (ԳՏՄ 69, AMS 85), խաղաղութ- hūthātā (ԳՏՄ 66, AMS 83), կառափ- qarqaptā (ԳՏՄ 113, PS-2 739), կորիւն- gūryā (ԳՏՄ 102, PS-2 723), մարգ- marga (ԳՏՄ 70, AMS 86), մարգարիտ- margānītā (ԳՏՄ 59, AMS 75), մորակ- matrqē (ԳՏՄ 93, AMS 107), շափղ- šbilā (ԳՏՄ 174, ASM 119), շրթ- šīšālitā (ԳՏՄ 168, ASM 113), շփել- šāp (ԳՏՄ 30, AMS 534), պառգամ- petgāmā (ԳՏՄ 108, PS-2 734), տոհմ- tōhmā (ԳՏՄ 85, AMS 101), տպագիւն- tab'a (ԳՏՄ 59, AMS 75), փրկել- praq (ԳՏՄ 153, ASM 57), քանքար- kakkrā (ԳՏՄ 52, ASM 67), քնար- kenārā (ԳՏՄ 60, ASM 76):

Այս բառերը ասորերենի և հայերենի համար ընդհանուր են դարձել տարբեր ճանապարհներով: Նրանց մի մասը երկու լեզու-

ներն էլ փոխ են առել միջին պարսկերենից, մի ուրիշ մասը հունարենից, բայց հիմնականում դրանք արամեերենից և ասորերենից հայերենին անցած բառեր են: Այս բոլոր փոխառությունները կատարվել են «Վկայք Արեւելից» ժողովածուի հայերեն թարգմանության երևան գալուց շատ առաջ: Այդ պատճառով նշված ասորահայ բառային համադրումները հետաքրքրություն են ներկայացնում հիմնականում Աբրահամ խոստովանողի թարգմանչական սկզբունքները վերհանելու համար: Սակայն նրանք ոչ բոլորովին են զրկված լեզվաբանական արժեքից: Որոշ դեպքերում այս համադրումները թույլ են տալիս ճշգրտել փոխառված հայերեն բառերի նշանակությունը, երբեմն նաև՝ ստուգաբանել դրանք: Օրինակ, հայերեն զրգռել բայի արմատը համարվում է անբացատրելի գիռ-ը⁸¹, իսկ այստեղ նկատվում է, որ կապ կա նրա և ասորերեն garreg նույնիմաստ բայի միջև: «Վկայք Արեւելից»-ի հայերեն թարգմանությունը հուշում է նաև խաղտել բայի ստուգաբանությունը՝ այն, ըստ երևույթին, ծագում է ասորերեն hathet բառից⁸²: Այնուհետև, Հ. Աճառյանը պատահական է համարում հայերեն շվիւ և ասորերեն šāp բառերի նմանությունը⁸³, սակայն ժողովածուի սկզբնաղբում և հայերեն թարգմանության մեջ նրանք կանգնած են դեմ-դիմաց:

Այսպիսով, «Վկայք Արեւելից» ժողովածուի հայերեն թարգմանությունը մեծ արժեք է ստանում գրաբարի դասական շրջանի ուսումնասիրման համար⁸⁴:

Դաստիարակվելով Սուրբ Գրքի թարգմանության ավանդույթներով, հայ թարգմանիչները ստեղծեցին մի գեղեցիկ գրականու-

⁸¹ Տէ՛ս Անադյան, Արմատական բառարան, հ. 2, էջ 351:

⁸² իլ արմատը համասեմական է՝ հմմտ. արար. htl, երբ. htl (hathatim)

⁸³ Տէ՛ս Անադյան, Արմատական բառարան, հ. 5, էջ 435:

⁸⁴ «Վկայք Արեւելից» ժողովածուի հայերեն թարգմանության բառասլաշարի ուսումնասիրմանը նվիրված Լև հետեյալ աշխատությունները. Բյուզանդացի, Բառաքնություն. Վադղանյան, Ի վկայսն Արեւելից. Անադյան, Արմատական բառարան:

թյուն, որի պսակն են կազմում Բարսեղ և Նվսեբիոս Կեսարացի-
ները, Հովհան Ոսկեբերանի, Գրիգոր Նազիանզացու, Գրիգոր Նյու-
սացու, Կյուրենդ Աղեքսանդրացու, Ափրահատի, Նփրեմ Ասորու և
այլոց գործերը։ Սրանց շարքում պատվավոր տեղ է զբաղում նաև
Աբրահամ խոստովանողի թարգմանությունը, որի մեջ իրենց արտա-
յուլումն են գտել V դարի հայ գրականության հիմնական թարգման-
չական սկզբունքները՝ ճշգրտությունը և գեղարվեստականությունը։
Աբրահամի թարգմանության ճշգրտությունը պայմանավորված է
Աստվածաշնչի թարգմանության ավանդույթով, որը թելադրում
էր հարգանքով վերաբերվել նախօրինակին և լիովին վերարտադրել
նրա բովանդակությունը։ Հնարավոր է, որ Աբրահամը անձամբ
չի մասնակցել Աստվածաշնչի թարգմանության աշխատանքներին,
բայց դա չի նշանակում, որ նա կարող էր հակառակ գնալ իր
ժամանակի գրական սկզբունքներին։ Ինչ վերաբերում է «Վկայք
Արևելից» ժողովածուի հայերեն թարգմանության գեղարվեստակա-
նությանը, ապա այն նույնպես լիովին ներգաշակում է V դարի
հայ գրականության պահանջներին։ Իսկ նրա առավել ընդգծվա-
ծությունը տվյալ երկում բացատրվում է այն բանով, որ
սրբախոսությունը գործնականում քրիստոնեական արձակի
ամենագեղարվեստական գրական տեսակն էր։

**«ՎԿԱՅՔ ԱՐԵՒԵԼԻՑ» ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՍՈՐԱԿԱՆ ՍԿԶԻՆԱԳՐԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՀԱՄԱՐ**

1. ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԱՆԸ¹

«Վկայք Արեւելից» ժողովածուի հայերեն թարգմանությունը բացվում է մի սեղմ առաջաբանով, որը դրված է հետևյալ վերնագրի տակ. «Վկայությունք բազմաց մարտիրոսաց, որք ի Պարսս կատարեցան, հաղարք հաղարաց և բերք բերուց, զորս այժմ սուղ ինչ պատմեցից՝ զարանց և զկանանց յանուանէ և ապա յետոյ զբաւանդակն. եւ թէ վասն որո՞յ պատճառի եղեն վկայք. Երանելւոյն Եփրեմի յԱրեւելեան Գրոցն ասացեալ զբաւանդակն»:

Այստեղ պատմվում է, որ «յաւուրս Շապհոյ արքայի որդւոյ Արտաշրի՝ եւ հրաման ի Կոստանդիանոսէ բարեպաշտ թագաւորէ շինել զՆրուսաղէմի եկեղեցիսն»: Բոլոր երկրների քրիստոնյաները ցանկութիւն են հայտնում աշակցել այս ձեռնարկութեանը: «Ընծայիւք և հաւատովք» Երուսաղեմ են ժամանում նաև պարսից քրիստոնյաները: Լսելով այս, Շապուհը իր թագաւորութեան երեսուներորդ տարում կատաղի հալածանքներ է սկսում քրիստոնյաների դեմ և ոչնչացնում նրանցից շատերին: Այնուհետև առաջաբանի հեղինակը թվարկում է այն նահատակների անունները, որոնց մասին խոսվում է ժողովածուում, հաղորդում նրանց

¹ ԳՏՄ 1—4,

մահվան ամսաթիվը, որոշ դեպքերում տալիս է նաև վկայաբանութ-
յունների համառոտ բովանդակութունը, նահատակների անվա-
նացանկը ունի հետևյալ կարգը.

Կոշրազդ, նահատակված ապրիլի 13-ին:

Շմաուն՝ «երկու քահանայիւր և ՃԺ արամբբ», նահատակված
ապրիլի 14-ին:

Պուսակ՝ «և դուստր իւր և Ալդ ներբինի», նահատակված
ապրիլի 15-ին:

Շահդուն՝ «Ճ արամբբ», նահատակված ապրիլի 20-ին:

Թերբի՝ «և քույր իւր և աղախինն», նահատակված ապրի-
լի 30-ին:

«Այլ սուրբ արհ Ճ և կանայք Ժ», նահատակված մայի-
սի 10-ին:

Յազատադուխտ՝ «և այլ կանայք», նահատակված մայի-
սի 20-ին:

Բարբաշմէն, նահատակված հունիսի 10-ին:

Մելէս, նահատակված հուլիսի 7-ին:

Թեև առաջին հայացքից, մենք դործ ունենք «Վկայք Արեւելից»
Ժողովածուի կազմին վերաբերող մի շատ կարեւոր տեղեկանքի
հետ, սակայն որոշ նկատառումներ ստիպում են կասկածել նրա
արժանահավատությանը: Այս առաջաբանը, ըստ երևույթին,
բացակայում էր ոչ միայն ժողովածուի ասորական բնագրում,
այլ նաև նրա հայերեն թարգմանության նախասկզբնական կազմում:
Սրանում կարելի է համոզվել հաշվի առնելով հետևյալ փաստերը.

Հալածանքների պատճառների մասին առաջաբանի հաղորդ-
ման մեջ առկա է բացահայտ ժամանակավրիպում՝ Արտաշրի
որդի Շապուհին (241—272) վերագրված են Որմզդի որդի Շապու-
հի (309—379) գործերը: Հալածանքներն իրականում տեղի են
ունեցել Շապուհ Բ-ի ժամանակ և ձեռնարկվել են Կոստանդիանոսի
(306—337) մահից երեք տարի հետո: Այսպիսի սխալ չէին կարող
թույլ տալ ոչ Մարութա Նիրկերտցին, ոչ էլ Աբրահամ Խոստովա-
նողը, որովհետև նրանք քաջատեղյակ են նկարագրվող իրողար-
ձություններին:

Առաջաբանի հետևյալ խոսքերը՝ «այժմ սուղ ինչ պատմեցից...

և ապա յետոյ ղբաւանդակն... երանելւոյն Եփրեմի յԱրեւելեան-
Գրոցն ասացեալ ղբաւանդակն», ցույց են տալիս, որ «սուղ ինչ-
պատմածը» (առաջաբանը) չի մտնում «բաւանդակի» (ժողովա-
ծուի) կազմի մեջ:

Ժողովածուի հեղինակութունը չէր կարող վերագրվել Եփրեմ
Ասորուն V դարում ոչ հայ թարգմանչի, ոչ էլ ասորի խմբագիրների
կողմից, քանի որ թե՛ Եփրեմի գործերը և թե՛ Մարութայի վկայա-
բանությունները այդ ժամանակ շատ հայտնի և ժողովրդական էին:

Առաջաբանի անվանացանկը չի պարունակում համարյա ոչ
մի ճիշտ ամսաթիվ, մինչդեռ Մարութա Նփրկերտցին և Աբրահամ
Խոստովանողը բժախնդիր կերպով հետևում են որոշակի ժամանա-
կագրական համակարգի:

Թերբու նահատակի անունը ժողովածուի հայերեն թարգմա-
նության հնագույն ընդօրինակություններում (Մատենադարանի
№ 1522 և 3777 ձեռագրեր) ունի «Թերբու» ձևը, իսկ առաջաբանի
բոլոր ընդօրինակություններում՝ «Թերբի»: Սա բացառում է
պատահական գրչագրական սխալի հնարավորությունը և վկայում
այս ձևերի ի հայտ գալու օրինաչափությունը:

Մեկսը, ըստ նրա վարքի ասորական սկզբնագրի և հայերեն
թարգմանության, եղիպտոսում այցելում է հռչակավոր Անտոն
անապատականի աշակերտ Ամմոնին, իսկ առաջաբանի տվյալ-
ներով՝ հենց իրեն՝ Անտոնին:

Առաջաբանում վկայված դերբայական դարձվածք՝ «լւեալ
զայս արքայի...» (ԳՏՄ 1) ոչ մի անգամ չի հանդիպում ժողովա-
ծուի հայերեն թարգմանության մեջ: Դրա փոխարեն Աբրահամը
գործ է ածում ստորագասական կապը՝ «իբրև լուաւ զայս արքայ...»: Այնուհետև, Աբրահամի համար սովորական «մի» անորոշ հոգի
փոխարեն (սարգաւագ մի ամպարիշտ) առաջաբանում դրված է
«ոմն» անորոշ դերանունը (սարկաւագ ոմն ամպարիշտ)²:

Աբրահամ Խոստովանողը նահատակության ամսաթիվը
միշտ տալիս է ամիսների հայկական անուններով, իսկ առաջա-
բանում նրանք արտահայտված են լատինական անվանում-

² ԳՏՄ 3: Հմմտ. գլուխ Բ, 2 (11 բ):

ներով: Հոռոմեական ամսանունները հայ գրականության մեջ տարածում են գտել, ըստ երևույթին, սկսած IX—X դարերից, երբ կազմվում էին առաջին հայկական Հայսմափութքները³:

Այսպիսով, ակնհայտ է, որ «Վկայք Արևելից» ժողովածուի հայերեն թարգմանության առաջաբանը հետադայի հավելված է և կազմված է, ամենայն հավանականությամբ, շուրջ X դարում, որովհետև այն առկա է արդեն XII—XIII դարերի իրարից անկախ ձեռագրերում:

Սակայն չի կարելի ասել, թե առաջաբանի հաղորդած նահատակների անվանացանկը զուրկ է որևէ արժեքից: Չնայած իր ուշ ծագմանը, այն մի կարևոր վկայություն է «Վկայք Արևելից» ժողովածուի հայերեն թարգմանության կազմի մասին: Բնական է, որ ցանկում նշված են բոլոր այն վկայաբանությունները, որոնք առաջաբանի գրության ժամանակ մտնում էին ժողովածուի հայերեն թարգմանության կազմի մեջ: Սա նշանակում է, որ մեզ հայտնի է, թե ինչ մասերից էր բաղկացած «Վկայք Արևելից» ժողովածուի հայերեն թարգմանությունը շուրջ X դարում: Բայց ավելին, առաջաբանը հավաստում է ոչ միայն այս փաստը, այլև այն, որ Աբրահամ խոստովանողի գրչին են պատկանում հենց այն վկայաբանությունների թարգմանությունները, որոնք նշված են նահատակների անվանացանկում: Այնպես որ այստեղ որևէ երկի սոսկ վկայակոչումն արդեն վճռական կովան է այն Աբրահամին ընծայելու համար: Իհարկե, եթե առաջաբանի տվյալները դիտվեն մեկուսացված, ապա դժվար թե հնարավոր լինի նրանցից այսպիսի եզրակացության հանգել: Սակայն այլ փաստերի հստկապես բնագրական վերլուծության և ձեռագրական ավանդույթի զուգակցությամբ, առաջաբանը ի հայտ է բերում այնպիսի օրինաչափություններ, որոնք ոչ մի կերպ չեն կարող բացատրվել պատահականությամբ: Ինչպես հաջորդ էջերում կտեսնենք, «Վկայք Արևելից»-ի հայերենով հայտնի 13 բաժիններից չորսը, ըստ բնագրական վերլուծության տվյալների, չէին կարող պատկանել

³ Հմմտ. Անրաբյան, «Տօնապատճառ», էջ 106 (Հոռոմագրին նվիրված հատվածը):

Ժողովածուի հայերեն թարգմանության նախասկզբնական կազմին: Դրանք են Բարդիշոյի⁴ և Թեկղի⁵ վկայաբանությունները, որոնք թարգմանված են ասորերենից IX—XII դարերում և մոտավորապես նույն շրջանում հունարենից թարգմանված Ալեքսիսիմայի վկայաբանությունն⁶ ու Մելեսի վարքի համառոտ խմբագրությունը⁷: Նշված երկերից ոչ մեկը չի հիշատակված առաջաբանի անվանացանկում, որտեղ առանց բացառության թվարկված են Ժողովածուի հայերեն թարգմանության մյուս նյութերը: Նրանցից ոչ մեկը (Բարդիշոյի վկայաբանությունից բացի) չի մտնում նաև Ժողովածուի հայերեն թարգմանության երկու ամբողջական ընդօրինակությունների կազմի մեջ (Մատենադարանի № 1522 և 3777 ձեռագրեր), որոնք նույնպես առանց բացառության ընդգրկում են մյուս բաժինները: Քանի որ հիշյալ չորս երկերը կազմում են Ժողովածուի հայերեն թարգմանության մոտ մեկ երրորդ մասը, ապա չի կարելի այս տվյալները ուշադրության չարժանացնել: Անհավանական է ենթադրել, թե ձեռագրական ավանդույթի, բնագրական վերլուծության և առաջաբանի տվյալները համընկել են երջանիկ պատահականությամբ. այստեղ անպայման պետք է լինի ինչ-որ օրինաչափություն: Օրինաչափությունը, ըստ մեզ, այն է, որ հայերեն թարգմանության մնացյալ մասերը խսկապես գալիս են նրա նախասկզբնական կազմից: Սրան ապացույց կարող է ծառայել այն փաստը, որ վերջիններիս բնագրական վերլուծությունը չի վերհանում որևէ տարր, որը խորթ լիներ V դարի հայոց լեզվին կամ հայ մատենագրությանը: Հարկ է միայն հիշեցնել, որ «Վկայք Արևելից»-ի հայերեն թարգմանության նախասկզբնական կազմին պատկանալու նշան է ոչ միայն որևէ երկի հիշատակումը առաջաբանում, այլ նաև Ժողովածուի երկու ամբողջական ընդօրինակություններում (Մա-

4 Հմմտ. գլուխ Դ, 2:

5 Հմմտ. գլուխ Դ, 1:

6 Հմմտ. գլուխ Դ, 3:

7 Հմմտ. գլուխ Գ, 5:

տենագարանի № 1522 և 3777 ձեռագրեր) նրա առկայության փաստը:

Այսպիսով, առաջարանի և ձեռագրական ավանդույթի տվյալները վճռական նշանակություն են ստանում «Վկայք Արեւելից» ժողովածուի հայերեն թարգմանության առանձին հուշարձանների թվագրման և թարգմանիչների անձնավորությունը որոշելու գործում:

2. «ՎԿԱՅԲ ԱՐԵՎԵԼԻՅ» ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ⁸

«Վկայք Արեւելից» ժողովածուին կցված է մի ընդարձակ ներածություն, որը նվիրված է սրբերի և նահատակների փառաբանմանը: Այն պարունակվում է ասորական սկզբնագրի ղիարբեքիւրյան (№ 96) և վատիկանյան (№ 161) ընդօրինակություններում և հրատարակված է Բեջանի կողմից հետևյալ վերնագրով. «Ճառ առաջին ի փառաւորութիւն և յաղթութիւն սրբոց վկայիցն Արեւելից աշխարհի»⁹: Ներածությունը գրված է ճառագրական տեսակի՝ Արեւելքի քրիստոնեական գրականություններում ընդունված բոլոր առանձնահատկությունների պահպանմամբ: Այստեղ կան հետորական հարցեր և բացահայտություններ, չափազանցված համեմատություններ, աստվածաշնչյան զուգահեռներ և այլն: Օգտագործելով այս հնարանքները, հեղինակն աշխատում է ստեղծել որոշակի հուզական տրամադրություն և նախապատրաստել ընթերցողին ժողովածուի բարոյախոսական բովանդակության յուրացման համար: Փաստական նյութը ներածության մեջ աննշան տեղ է գրավում և որոշ դեպքերում պարզապես կրկնում է առանձին վկայարանություններում պարունակվող տեղեկությունները: Հիմնական ուշադրությունն այստեղ հատկացված է նահատակի ընդհանրացված կերպարի՝ քրիստոնեության համար պայքարող մարտիկի կատարելատիպի, ստեղծմանը: Հեղինակն սկզբում ընդհա-

⁸ AMS 57—122, ԳՏՄ 5—94:

⁹ AMS 57: Որպես վերնագիր Բեջանը ընտրել է ներածության վերջին նախադասությունը՝ իսկական վերնագրի կորած լինելու պատճառով:

նուր տեղեկություններ է հաղորդում «մեծ հալածանքների» մասին, նկարագրում քրիստոնյաների կրած բազմադան տանջանքներն ու շարշարանքները, ասլա անցնում նահատակների փառաբանմանը: Այստեղ առավել ուժգնությամբ են ի հայտ գալիս հեղինակի պերճախոսությունն ու հեռորական տաղանդը: Իրար են հաջորդում հետաքրքիր այլաբանություններ, պատկերավոր համեմատություններ, տեղին կատարված աստվածաշնչյան զրույցների և առասպելների մեջբերումներ:

«Վկայք Արևելից» ժողովածուի ներածության գիտական նըշանակությունը կայանում է, սակայն, ոչ միայն այն բանում, որ այն V դարի ասորական ղեղարվեստական արձակի մի փայլուն նմուշ է, այլ նաև նրանում, որ պատկանում է ժողովածուի ենթադրյալ կազմողին և դրանով իսկ հնարավորություն տալիս լուծել մի շարք կնճռոտ բանասիրական խնդիրներ: Բացի այդ, ներածությունը մեծ նշանակություն ունի նաև սասանյան տերության հասարակական հարաբերությունների պատմության ուսումնասիրման տեսակետից, քանի որ նրա հաղորդած որոշ պատմական տեղեկություններ հայտնի են միայն շնորհիվ այս աղբյուրի:

Դժբախտաբար, ներածության ասորական սկզբնագիրը մեղլրիվ չի հասել: Ձեռագրերի քայքայման պատճառով, ինչպես բացատրում է Պ. Բեջանը, նրա սկզբից բացակայում է մի խոշոր հատված՝ բնագրի մոտ մեկ երրորդ մասը (40 էջ ըստ Բեջանի հրատարակության)¹⁰: Ներածության ամբողջական բնագիրը պահպանվել է, սակայն, հայերեն թարգմանությամբ և հրատարակված է Գ. Տեր-Մկրտչյանի կողմից հետևյալ վերնագրի տակ. «Վկայութիւն բազմաց սուրբ նահատակաց արևելեայց, որ կատարեցան վասըն Քրիստոսի»¹¹: Հայերեն թարգմանության մեջ թեև նույնպես բացեր կան, սակայն նրանք ասորական բնագրի կորստի համեմատ ավելի աննշան են և, բարեբախտաբար, գտնվում են ներածության երկրորդ կեսում¹²: Այս բացթողումները առանձին կարե-

¹⁰ AMS 57:

¹¹ ԳՏՄ 5—94:

¹² Ներածության հայերեն թարգմանության մեջ պակասում են ասորական

վորություն չունեն էլ, որովհետև հայերեն թարգմանության հիմնական արժեքն այն է, որ նա պահպանել է սկզբնագրի կորած հատվածը: Այն ղբաղեցնում է Գ. Տեր-Մկրտչյանի հրատարակության 5-44 էջերը: Սակայն համոզվելու համար, որ հայերեն թարգմանության այս մասը իսկապես ասորական սկզբնագրի կորած հատվածն է և ոչ թե ներածությանը կցված՝ որևէ հայ հեղինակի ինքնուրույն երկ, անհրաժեշտ են լրացուցիչ ապացույցներ: Խնդրի լուծումը դժվարանում է այն հանգամանքով, որ հայերեն բնագրի լեզուն ոչնչով չի մատնում ասորական նախօրինակի գոյությունը, այստեղ համարյա բոլորովին բացակայում է ասորերենի աղբյուրությունը: Բարեբախտաբար, ներածության հայերեն բնագրի այս հատվածը պարունակում է մեծ թվով աստվածաշնչյան մեջբերումներ, որոնց շնորհիվ հնարավոր է դառնում, այնուամենայնիվ, պարզել այս հարցը: Մեջբերումների համեմատությունը Աստվածաշնչի հունարեն (Յոթանասնից), ասորերեն (Պեղիտտա) և հայերեն թարգմանությունների համապատասխան տեղերի հետ, ցույց է տալիս, որ նրանք ամբողջովին համընկնում են ասորերեն թարգմանության ընթերցվածքներին: Սրանից բնականաբար բխում է, որ ներածության հայերեն բնագրի վերահիշյալ հատվածը թարգմանված է ասորերենից: Եթե այդ հատվածի հեղինակը հայ լիներ, ապա նրա կատարած մեջբերումները քաղված պետք է լինեին Աստվածաշնչի հայերեն թարգմանությունից, որը համապատասխանում է հունարեն «Յոթանասնից» օրինակին: Սակայն Աստվածաշնչի հայերեն

սկզբնագրի հետևյալ հատվածները. 72 տող Բեջանի հրատարակության 63—66—րդ էջերում (ԳՏՄ 52), 9 տող 78—րդ էջում (ԳՏՄ 62), 8 տող 79—80—րդ էջերում (ԳՏՄ 63), 17 տող 81—82—րդ էջերում (ԳՏՄ 65), 25 տող 86—87—րդ էջերում (ԳՏՄ 70), 12 տող 89—րդ էջում (ԳՏՄ 71), 8 տող 107—րդ էջում (ԳՏՄ 93), և վերջապես 14 էջից բաղկացած մի մեծ հատված 108—122 էջերում (ԳՏՄ 93՝ վերջին պարբերությունների միջև): Թարգմանչի կամ հետագա խմբագիրների ու գրիչների կողմից կատարված է, ըստ երևույթին, այս բացթողումների միայն մի անշան մասը և դրանք առաջացել են հիմնականում ձեռագրերի վատ վիճակի և քայքայվածության պատճառով:

և հունարեն թարգմանությունները տալիս են ներածության մեջբերումներից և Պեղիտայից բոլորովին տարբեր ընթերցվածքներ: Այս բանում կարելի է համոզվել հետևյալ բնագրական համեմատությունների օգնությամբ:

ա) Եբեմիա, 8, 14 (ԳՏՄ 24)

Ներածության հայ. բնագիրը	Աստվածաշնչի հայ. բարգմ.	Յոթանասնից	Պեղիտայա
...դի Տէր Աստուած կարկեցոյց զմեզ:	... դի Տէր Աստուած մեր ընկեց զմեզ:	...meʃul d-maryā alāhān šattqan. ... դի Աստուած ընկեց զմեզ:	...meʃul d-maryā alāhān šattqan. ... դի Տէր Աստուած կարկեցոյց զմեզ:

Ինչպես երևում է, ներածության հայերեն թարգմանության «կարկեցոյց» բառը չէր կարող բաղվել ոչ Աստվածաշնչի հայերեն, ոչ էլ հունարեն թարգմանությունից, որտեղ այդ բառի փոխարեն դրված է «ընկեց» ἀπεργάζετο: Այն ճշտությամբ համապատասխանում է Աստվածաշնչի ասորերեն թարգմանության ընթերցվածքին՝ šattqan (կարկեցոյց զմեզ):

բ) Եսայի, 26, 20 (ԳՏՄ 38)

Ներածության հայ. բնագիրը	Աստվածաշնչի հայ. բարգմ.	Յոթանասնից	Պեղիտայա
...և թաքիր մինչև փոքր մի անցցէ բարկութիւն իմ:	... թաքիր առ ժամանակ մի, մինչև անցցէ բարկութիւն տեառըն:	...w-ettasā qalil z'ōr 'ad 'ābar rû-gzī. ... թաքիր փոքր մի, մինչև անցցէ բարկութիւն տեառըն:	... թաքիր փոքր մի, մինչև անցցէ բարկութիւն իմ

Այստեղ նույնպես լրիվ համապատասխանություն գոյություն ունի մի կողմից Աստվածաշնչի հայերեն և հունարեն թարգմանու-

թյունների միջև (բարկութիւն տեառն, Կ՝ՕՐԴԿ շարժ), մյուս կողմից ներածության հայերեն բնագրի և Պեշիտտայի միջև (բարկութիւն իմ, rûgzi):

գ) Յոբ, 5, 26 (ԴՏՄ 26)

Ներածության հայ. բնագիրը	Աստվածաշնչի հայ. բարգմ.	Յոբուստեից	Պեշիտտա
Մտցես հանգըս- տեամբ ի դերեզման իրբև զգադիշ, որ կանգնի ի ժամա- նակի:	Եւ երթիցես ի դերեզման իբրև զգադիշ, որ մանակի հնձեալ:	Էլեծօղ օձ և Դձ- բօ անքօ օձօս օձօս ԴձԴ Դձօս Պեշիտտեյոս:	... wa-te'ol niha- 'it l-qabrā 'ayk messaq gdišā b- zabneh.
	Եւ երթիցես ի դերեզման իբրև զհասալ ցորեան ի ժամանակի հնձեալ:	Մտցես հանգըս- տեամբ ի դերեզ- ման իբրև զգա- լիշ, որ կանգնի ի ժամանակի:	

Այս օրինակում ներածության հայերեն բնագրի մեջբերումը Պեշիտտայի հետ համընկնում է արդեն երեք կետում: Այսպես, նրանք տալիս են «մտցես»՝ te'ōl, մինչդեռ Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը և Յոթանասնից օրինակը ունեն «երթիցես»՝ օձօսԿ: «Հանգստեամբ»՝ nīhā'it բառը բոլորովին բացակայում է Աստվածաշնչի հայերեն և հունարեն թարգմանություններից: Իսկ Պեշիտտայի gdišā «խորձ, դեղ» բառը ներածության հայերեն բնագրում պարզապես թողնված է առանց թարգմանության՝ «զադիշ»¹³: Ասորական ազդեցությամբ պետք է բացատրել նաև այն, որ «հնձեալ» հասկացությունը հայերեն բնագրում արտահայտված է «կանգնեմ» բառով («հնձեմ»-ի փոխարեն), ճիշտ այնպես, ինչպես Պեշիտտայի slq (messaq) բայը:

¹³ «Գադիշ» (խորձ, դեղ) բառը հանդիպում է ևս մի անգամ հայերեն թարգմանության այս հատվածում (տե՛ս ԴՏՄ 27):

Ներածության հույ. բնագիրը	Աստվածաշնչի հայ. բարգմ.	Հունարեն սկզբնագիրը	Պեշիտտա
Մատենացին զձեզ հարբ ձեր և եղ- բարբ:	Մատենաշիր և ի ծնողաց և յեղ- բարբ:	Παράδοχσεσθαι δε αυτῷ ὅτι γυνεὺς. αὐτὸς δὲ ἄλογος. Մատենաշիր և ի ծնողաց և յեղ- բարբ:	naslmunkōn den 'abahaykōn w- 'ahaykōn. Մատենացին զձեզ հարբ ձեր և եղ- բարբ:

Ամենաէականն այս հատվածում ներածության հայերեն բնագրի և Պեշիտտայի համընկնումն է ըստ նախադասության ներդրածական կառուցվածքի, այն դեպքում, երբ ավետարանի հայերեն թարգմանության մեջ և հունական սկզբնագրում այդ նախադասությունը ունի կրավորական կառուցվածք: Պատահական չէ նաև, որ ներածության հայերեն բնագրում և Պեշիտտայում «հարբ ձեր»՝ 'abahaykōn բառերից առաջ բացակայում է «և» սաստկական շաղկապը: Այնուհետև, հունարեն γυνεὺς բառի դիմաց հայերենում պետք էր սպասել «ծնող», ինչպես ունենք Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ, և ոչ թե «հարբ», որը համապատասխանում է ասորերեն 'abāhē բառին: Թեև հունարեն γυνεὺς բառը նույնպես երբեմն օգտագործվում է «հայր», իմաստով, իսկ հայերեն «հարբ»-ը, ընդհակառակն, «ծնող» իմաստով, սակայն դա նրանց արմատական և հիմնական նշանակությունը չէ:

Բերված համեմատությունները կասկած չեն թողնում այն բանում, որ «Վկայք Արևելից» ժողովածուի ներածության հայերեն բնագրի քննվող հատվածը թարգմանված է ասորերենից, մանավանդ, որ համապատասխանությունները պատահական չեն և կան ևս մի քանի նման օրինակներ¹⁴: Ներածության հայերեն թարգմա-

¹⁴ Պետք է ավելացնել, որ սկզբնագրի լեզվի որոշումը աստվածաշնչյան մեջբերումների օգնությամբ կարող է էական նշանակություն ունենալ նաև հայ մատենագրության այլ հուշարձանների ուսումնասիրման համար:

նության ասորական ծագումը հաստատվում է նաև նրանով, որ VI դարում կազմված «Քարբա դը Բեթ-Սլոքի ժամանակագրության» մեջ պահպանվել է ասորական սկզբնագրի կորած հատվածի մի փոքրիկ մասը¹⁵։ Այս փաստը, որ հավաստվում է շնորհիվ հայերեն թարգմանության, ինքնին մեծ նշանակություն ունի ասորական գրականության պատմության համար, որովհետև նա խոսում է ասորական սրբախոսության մեջ ժառանգորդական ավանդույթի գոյության և «Քարբա դը Բեթ-Սլոքի ժամանակագրության» քաղաքական բնույթի մասին։ Մյուս կողմից, մենք գործ ունենք բնագրագիտական մի հետաքրքիր երևույթի հետ, երբ երկու ինքնուրույն սկզբնագիր Երկերի կապը հայտնաբերվում է նրանցից մեկի թարգմանության շնորհիվ։ Ինչպես ցույց է տալիս բնագրերի համեմատությունը, «Ժամանակագրության» հեղինակը «Վկայք Արևելից» ժողովածուի ներածությունից բառ առ բառ արտադրել է մոտ երկու էջ (ըստ Բեջանի հրատարակության)¹⁶ քրիստոնյաների մահապատժի եղանակների ամբողջ նկարագրությունը¹⁶։ Արևելքի վրացական համար ստորև բերվում են որոշ հատվածներ այդ բնագրերից.

Ներածության հայ. րարգմ.

Քարբա դը Բեթ—Սլոքի ժամանակագրությունը

Ձի նշ մահ անհնարին էր, զոր ոչ ածին անաւրէն դատաւորն ի վերայ մեծազար վկայիցն, կամ զոր տանջանս դառնութեան թողին լշնամիքն և կեղեցւոյ, և ոչ այնու զճշմարիտ ծառայան Քրիստոսի կտանցին...

Ձկէսս ի քաղց և ի ծարաւ ճղնեցւանէին մինչև ծորէին մարմինքն և մեռանէին։ Ձկէսս զլիսիվայր կախիւոյ՝ ի միջարեայ ժամանակսն սկրաւհանց առնէին և սղանանէին...

Ձի՞նչ մահ դառնագոյն էր, զոր թողին անաւրէն դատաւորքն այն, և ոչ ածին ի վերայ մեծազար վկայիցն, կամ ո՞ր տանջանք մեծագոյնք և շարչարանք խոտագոյնք էին, որ ոչ այնու թշնամիքն և կեղեցւոյ զճշմարիտ ծառայան Քրիստոսի կտանցին...

Ձոմանս ի քաղց և ի ծարաւ ճղնեցւանէին և ծորէին մարմինքն և մեռանէին, և զոմանս զլիսիվայր կախէին ի միջարեայ ժամանակսն և մաշէին մարմինքն և մեռանէին...

¹⁵ AMS 533—535:

¹⁶ AMS 533—535 = ԳՏԽ 28—31:

Եւ ղկէսան շարաշար մորթելով Զոմանս շարաշար մորթելով մաշկա-
 մորթիւն և սպանանէին, և կիսոց սղո- հան առնէին և մեռանէին, ոմանց անո-
 ցար սղոցէին զմէջս և սպանանէին... ղորմ սղոցէին սղոցար զողունս միջաց
 (ԳՏՄ 28—29) և մեռանէին...

(AMS 533—534)

Հայերեն թարգմանության՝ քննության առարկա հատվածի
 ասորական ծագման հավաստմամբ դեռևս չի ապացուցվում, որ
 այն սկզբնագրի կորած հատվածն է։ Այդ մասին արդեն վկայում
 ձև այլ փաստեր։ Նախ և առաջ՝ այս հատվածում նույնպես, ինչ-
 պես ամբողջ ներածության մեջ, պատմվում է «մեծ հալածանքնե-
 րի» իրադարձությունների մասին, ընդ որում նրա հաղորդած
 տեղեկությունները լրիվ համընկնում են «Վկայք Արևելից»
 ժողովածուի բովանդակությանը։ Այսպես, օրինակ, «և կիսոց
 սղոցար սղոցէին զմէջս և սպանանէին» խոսքերը ակնարկում են
 Թերբուի, նրա քրոջ և աղախնի նահատակումը¹⁷, կամ՝ արբունի
 հրովարտականների մասին տեղեկությունները հաստատվում են
 Շմավոնի և Աղատի վկայաբանությունների տվյալներով¹⁸։
 Երկրորդ՝ այս հատվածում, ինչպես ամբողջ ներածության մեջ
 լրկնվում են միևնույն ոճական և գեղարվեստական հնարանները՝
 հոետորական բացականչություններ, խորհրդանշական այլարա-
 նություններ, աստվածաշնչյան զուգահեռներ։ Հատկանշական է,
 որ զուգահեռականության եղանակը ընդհանուր է ամբողջ ներա-
 ծության համար՝ նախ շարադրվում է աստվածաշնչյան դրուցը,
 ապա նրան համադրվում որոշակի պատմական իրադարձության
 նկարագրությունը, որպես՝ այդ դրուցում ենթադրվող մարգա-
 րեական զաղափարի իրականացման փաստ։ Երրորդ, որ չափա-
 ղանց էական է, հայերեն թարգմանության այս հատվածի վերջին
 նախադասության մի մասը պահպանվել է ներածության ասորա-
 կան սկզբնագրի առաջին տողում.

¹⁷ Հմմտ. ԳՏՄ 154:

¹⁸ Հմմտ. ԳՏՄ 112, 141:

Բովբն բորբոքէին, ոսկերիչն ճեպէր . . . hwa. 'umāna sārep hwa, dahba
 գտել, ոսկին ընտրէր, աղտն խոտէր: metbhar hwa wa-sulāna mestde hwa.
 (ԳՏՄ 44) ... էին, ոսկերիչն զտէր, ոսկին ընտրէր,
 և աղտն խոտէր:

(AMS 57)

Հայերեն թարգմանության մեջ պահպանված հատվածի վավերականության հաստատումը մեծ նշանակություն ունի ամբողջ ժողովածուի ճիշտ գնահատման համար, որովհետև այդ հատվածում են գտնվում ներածության հիմնական պատմական տեղեկությունները: Այս տեղեկությունների կարևորությունը պայմանավորված է նրանով, որ ներածությունը ժողովածուի միակ բաժինն է, որն ունի քիչ թե շատ պատմագրական բնույթ: Գրելով իր երկը «մեծ հալածանքների» դադարումից 20-30 տարի հետո, ներածության հեղինակը հնարավորություն ուներ փաստերը դիտել ընդհանրացված, քննադատորեն, ելնելով այդ հալածանքների հետևանքներից: Սրա շնորհիվ ներածության մեջ կան տեղեկություններ, որոնք հայտնի չեն ուրիշ, թեկուզ ավելի հին աղբյուրներից: Ներածության պատմական տեղեկությունները հաճախ տրված են անուղղակի՝ հայտնության պատկերների և խորհրդանշական ալլաբանությունների ձևով: Սա գալիս է, ըստ երևույթին, ոչ այնքան զրական տեսակի պահանջներից, որքան ժամանակի քաղաքական իրավիճակի առանձնահատկություններից: Կազմելով «Վկայք Արևելից» ժողովածուն V դարի սկզբին, երբ պարսից քրիստոնեական եկեղեցին աշխատում էր կարգավորել իր հարաբերությունները սասանյան արքունիքի հետ, Մարութա Նփրկիրտցին չէր կարող ուղղակի հիշատակել տիրապետող հարստության նախնիների դադանությունները: Սակայն այս թափանցիկ քուղարկման տակ զժվար չէ կռահել հեղինակի իսկական մտքերը:

Որոշակի պատմական արժեք ունեն հայերենով պահպանված հատվածի տեղեկություններն այն մասին, որ Պարսկաստանի քրիստոնեյա բնակչությունը IV դարի սկզբին շատ փոքրաթիվ էր և համեստ հասարակական դիրք էր զրավում. «Սերմն սակաւ և անգաւր էր, զոր սերմանեցին աշխարհիս մերոյ մշակք ծրագը-

լուխք» (ԳՏՄ 25): Սա, իհարկե, չի ժխտում այլ աղբյուրներից հայտնի այն փաստը, որ պարսից քրիստոնյաները զգալի դեր էին խաղում երկրի քաղաքային կյանքում, հատկապես արհեստների բնագավառում¹⁹:

Այս հատվածի շնորհիվ հաստատվում են նաև առանձին վկայաբանությունների տեղեկություններն այն մասին, որ հալածանքներն սկզբում ուղղված էին հոգևորականների և եկեղեցու առաջնորդների դեմ (ԳՏՄ 27), ապա միայն արքունի հրովարտակով հալածանքների մատնվեց Պարսկաստանի ողջ քրիստոնյա բնակչությունը (ԳՏՄ 37)²⁰, որ քրիստոնյաները լքում էին իրենց քաղաքներն ու գյուղերը և ապաստան դառնում լեռներում և քարանձավներում (ԳՏՄ 37-38), որ հալածանքները տևել են մոտ քառասուն տարի (ԳՏՄ 24): Վերջին հաղորդումը կարևոր նշանակություն ունի «մեծ հալածանքների» սկզբնական տարեթվի խնդրի լուծման համար, մի խնդրի, որն առաջժամ վիճելի է ասորագետների համար²¹:

Ներածության որոշ տեղեկություններ մեծ նշանակություն ունեն սասանյան տերության իրավական ոլորտի մանրամասները ճշտելու համար, ինչպես, օրինակ, բաղմատեսակ մահապատիժների նկարագրությունը (ԳՏՄ 28-31): Այլ հաղորդումներ պատկերացում են տալիս զրադաշտականության պաշտամունքային ավանդույթների մասին: Շատ հետաքրքրական է այս առումով հետևյալ օրինակը: Նկարագրելով քրիստոնյաների բաղմադան տանջանքներն ու մահապատիժի եղանակները, ներածության հեղինակն ավելացնում է. «Բայց ի միոջէ միայն խորամանկութենէ... պահեցին զերանելի սուրբան, զի հրով զոք ոչ այրեցին, քանզի զհուրն պաշտէին» (ԳՏՄ 31):

Կարևոր վկայություն է նաև այն, որ ըստ ներածության, շատ քրիստոնյաներ հալածանքների պատճառով զրադաշտականություն են ընդունել (ԳՏՄ 41): Հասկանալի է, որ այսպիսի փաստ չէր

¹⁹ Հմմտ. *Пугачевская*, Города Ирана, стр. 243.

²⁰ Հմմտ. *Labourt*, Le christianisme, pp. 56—57.

²¹ Մանրամասն տե՛ս գլուխ Գ, 3:

կարող արձանագրվել վկայաբանությունների մեջ, բանի որ վեջիններս ուղղված են քրիստոնեական հավատի ամենալոռոթյան և նահատակների անսասան կամքի դադափարների հաստատմանը, և այստեղ, ընդհակառակն, նկարագրվում են քրիստոնյաների սխրանքները, իսկ երբեմն նույնիսկ «հեթանոսների» դարձը դեպի քրիստոնեություն: Այդ իսկ նկատառումներով է, որ ներածության հեղինակը ևս քրիստոնյաների ուրացության մասին ստիպված է խոսել այլաբանորեն. «Քաջասիրտը և պնդակամը պատուի և պսակի հասանէին, և վատասիրտը և տաղնապեայր կուրուսանէին զյաղթութիւնն: Դասակը դասակը աւղեաց մտանէին խիզախելով, և պառակը պառակը այծեաց ելանէին սեպեալը գոռովը ուրացութեանն: Մտանէին սուրբք և սպիտակք, և ելանէին աղտեղիք և արինոտք» (ԳՏՄ 41): Ինչ վերաբերում է այս տեղեկության պատմական կողմին, ապա նրանից դատելով, պետք է եզրակացնել, որ Շապուհ Բ-ի հալածանքները, այնուամենայնիվ, հասել են իրենց նպատակին, եթե ոչ սասանյան տերության բոլոր քրիստոնյաների, ապա գոնե նրանցից շատերի նկատմամբ: Մյուս պատմական և սրբախոսական աղբյուրները թեև մանրամասնորեն նկարագրում են հալածանքները, պատմում քրիստոնյաների բռնի տեղահանությունների, շարշարանքների և կոտորածների մասին, երբեմն նույնիսկ բերում զոհերի շափաղանցված թվեր²², սակայն լռության են մատնում քրիստոնյաների ուրացության փաստերը: Այդ պատճառով մինչև հիմա դժվար էր բացատրել, թե ինչու IV դարի 40-ական թվականների ջախջախումից հետո պարսից եկեղեցու վերականգնման համար պահանջվեց ամբողջ յոթանասուն տարի, մինչև որ Մարութա Նփրկերացուն և Իսահակ Սելեկիացուն հաջողվեց գումարել 410 թվականի ժողովը²³: Այնինչ «Վկայք Արևելից» ժողովածուի ներածությունը վկայում է, որ քրիստոնյաների տնտեսական ճնշման և մարմնա-

²² Օրինակ, Սոզոմենոսի տվյալներով, հալածանքների ժամանակ զոհվել է 16000 մարդ (տե՛ս Sozomenus, Kirchengeschichte, S. 69):

²³ Հմմտ. Braun, Synhados, S. 5—35; Chabot, Synodicon, pp. 17—36, 253—275.

կան բնաջնջման՝ Շապուհի վարած եռանդուն քաղաքականությունը
երկրի քրիստոնյա բնակչության ղգալի մի մասին ստիպեց ընդունել
դրադաշտականություն:

Ներածության հայերենով պահպանված հատվածում կա նաև
մի տեղեկություն, որն արժանացել է հայագետների հատուկ
ուշադրությանը. «Որդիք Հայոց վշտատեսաց կոխան փղաց և
երկվարաց լինէին, քանզի արբին և նոքա զբաժակն դառնութեան»
(ԳՏՄ 43): «Որդիք Հայոց» ընթերցվածքի փոխարեն, որը տալիս
են Գ. Տեր-Մկրտչյանի հրատարակության AB ընդօրինակություն-
ները, Տ օրինակում դրված է «Որդիք հարց»: Այս դեպքում, իհար-
կե, նախադասության բովանդակությունը ամբողջովին փոխվում
է: Ինչպես նշում է Գ. Տեր-Մկրտչյանը, «հայոց-հարց շփոթություն
հնարաւոր է միմիայն երկաթագիր օրինակում, և այն այնպիսի
գրչութեան մէջ, որի ուղղագրութիւնը առանց յ-ի է»²⁴: Իսկապես,
երկաթագրում հայոց Ո և Բ տառերը գծագրությամբ միանգամայն
նույնն են (ՀԱՈՅ=ՀԱԲՅ): Ա. Վարդանյանը, չառարկելով հայոց-
հարց բառերի շփոթության հնարավորության դեմ և նույնիսկ
«որդիք Հայոց»-ը լավ ընտրություն համարելով, այնուամենայնիվ
ավելացնում է. «գծախտաբար պակասաւոր է այստեղ ստորի
բնագիրը, որով չենք կրնար վճռականօրէն հաստատել «Հայոց»
տարբերակին հարաւատութիւնը»²⁵:

Սակայն հաշվի առնելով ներքոհիշյալ հանգամանքները, ըստ
երևույթին, չպետք է կասկածել «Հայոց» ընթերցվածքի ճշտու-
թյանը: Նախ՝ «որդիք հարց»-ը տրամաբանորեն անիմաստ
կապակցություն է, քանի որ ուղի բառը արդեն ինքնին պարունա-
կում է սերման հասկացությունը և նրա կողքին հայր բառն
ավելորդ է: Երկրորդ՝ շատ ուշագրավ է «և» շաղկապի առկաու-
թյունը «նոքա» դերանունից առաջ՝ «...քանզի արբին և նոքա
զբաժակն դառնութեան»: Մինչ այդ ներածության մեջ պատմվում
էր պարսից քրիստոնյաների մասին, իսկ այստեղ «և» շաղկապը
ցույց է տալիս, որ խոսքը վերաբերում է արդեն մի այլ ժողո-

²⁴ Տեր-Մկրտչյան, Գորիա և Շմոնի վկայից, էջ 35:

²⁵ Վարդանյան, ի վկայան Արեւից, էջ 273:

վըրդի: Սա հաստատվում է նաև շարադրանքի հետագա ընթացքով՝ հաջորդ պարբերություն մեջ, որտեղ նկարագրվում են «հպարտացեալ Արեւելքի» (Պարսկաստան) հարձակումները Հյուսիսի (Հայաստան), Արեւմուտքի (Հռոմ) և Հարավի (Արաբիա) վրա. «Արեւելք հպարտացեալ ամբարտաւանէին, Արեւմուտք խոնարհեալ հնազանդէին, Հիւսիսի տապաստ անկեալ կոխէր, Հարաւ ի պարտութիւն մատենալ վատթարէր» (ԳՏՄ՝ 43)²⁶: Ելնելով այս հատվածի բովանդակությունից, բնականաբար, նախասկզբնական պետք է համարել «որդիք Հայոց» ընթերցվածքը: Սակայն այստեղ արդեն մի ուրիշ հարց է ծագում. Հայաստանում տեղի ունեցած հալածանքների մասին տեղեկությունը արդյոք պարունակվում էր ասորական սկզբնագրում, թե՞ այն ավելացված է ժողովածուի հայ թարգմանչի կողմից: Եթե այն գալիս է սկզբնագրից, ապա «Վկայք Արեւելից» ժողովածուի ներածությունը միակ արտաքին աղբյուրն է, որ հաստատում է հայ պատմիչների հաղորդումները՝ IV դարի 60-ական թվականներին պարսիկների կողմից Հայաստանում զրադաշտականություն մտցնելու փորձի մասին²⁷: Իսկ եթե այս տեղեկությունն ավելացված է հայ թարգմանչի կողմից, ապա նա պարզապես կրկնում է Փավստոսի տվյալները և առանձին պատմական արժեք չունի: «Որդիք Հայոց...» նախադասությունը, բնական է, կարող էր ընդմիջարկվել Աբրահամ խոստովանողի կողմից՝ Փավստոսի տվյալների հիման վրա, սակայն, ինչպես ցույց է տալիս բնագրական վերլուծությունը, այն լիովին ներդաշնակում է տվյալ հատվածի բովանդակությանը: Այնպես որ, եթե այն թարգմանչի ընդմիջարկությունը համարվի, ապա ընդմիջարկություն պետք է համարվի նաև ամբողջ այս հատվածը, որը սակայն ներածության ամենահարադատ և բնութագրական մասերից է: Այս փաստը իրավունք է տալիս պնդել, որ «Որդիք Հայոց...» նախադասությունը գալիս է «Վկայք Արեւելից» ժողովածուի ասորական սկզբնագրից: Հայաստանի ղեկավարին

²⁶ Հմմտ. Տեր-Մկրտչյան, Դորիա և Շմոնի վկայից, էջ 37:

²⁷ Տե՛ս Բուզանդ, էջ 147—151: Հմմտ. «գարս տային ի կոխումն փղաց» (էջ 148):

Մարութայի իրազեկությանը կասկածելու հիմքեր չկան, որովհետև նախ՝ նրա թեմական կենտրոնը՝ Նփրկերտ քաղաքը, գտնվում էր Հայաստանի հարավային նահանգներից մեկում՝ Ծոփքում, երկրորդ՝ ըստ իր վարքի տվյալների, Մարութան հոր կողմից հայկական ծագում ունեւոր²⁸:

Այս համառոտ ակնարկը ցույց է տալիս, որ «Վկայք Արևելից» ժողովածուի ներածությունը հետաքրքիր աղբյուր է սասանյան Պարսկաստանի հասարակական հարաբերությունների պատմության ուսումնասիրման համար, սակայն նրան մինչ այժմ արժանի ուշադրություն չի հատկացված: Սա պետք է բացատրել, ըստ երևույթին, այն հանգամանքով, որ ասորագետները առայժմ գործ ունենին նրա ոչ ամբողջական բնագրի հետ, և կարելի է հուսալ, որ հայերեն թարգմանության տվյալների ընդգրկումը կնպաստի այս արժեքավոր պատմա-գրական հուշարձանի հետագա ուսումնասիրմանը:

3. ՇՄԱՎՈՆ ԲԱՐ-ՍԱՐԲԱՅԻ ՍՐԲԱՆՈՍԱԿԱՆ ՇԱՐԲԸ

Շմավոն Բար-Սարբայի («որդի նարաւտաներկաց») վկայաբանությունը կազմում է Մարութա Նփրկերտցու «Վկայք Արևելից» ժողովածուի կորիզը: Նրա շուրջը խմբված են մեծ թվով սրբախոսական հուշարձաններ, որոնք ղանազան վկայակոչումներով կապված են Շմավոնի անվան հետ: Այսպես, Թերբուն Շմավոնի քույրն է, Բարբաշմենը՝ նրա քեռորդին, իսկ Շահգոսդը դեպի նահատակություն է ղնում նույն Շմավոնի կոչով: Մի քանի այլ տոհմավորությունների մասին հիշատակում է ուղղակի Շմավոնի վկայաբանության մեջ, ինչպես, օրինակ, Գուշթաղատի, Պուսակի և նրա դստեր մասին: Սակայն այս վկայաբանությունների կապը արտահայտվում է ոչ միայն նրանց հերոսների և Շմավոնի աղգակցության փաստում, այլև, որ ամբողջ կարևոր է, գրական

²⁸ ՎՎՍ—2 17: Վարքի համառոտ հունարեն խմբագրությունը նույնպես Մարութային կոչում է *Σαρανισός* *Σαρανισών τῆς Ἀρμενίας* (տե՛ս *Latyšev, Menologii*, p. 154).

հնարանքների, երկերի կառուցվածքի, բովանդակության առանձնահատկությունների և քրիստոնեական ջատագովության կոմանների ընդհանրության մեջ: Շմալոն Բար-Սաբբայի սրբախոսական շարքի այս ընդհանուր գծերը մանրամասն վերլուծված են Գ. Վիաների մենագրության մեջ²⁹, այդ պատճառով ստորև բնության են ենթարկվում միայն այն հարցերը, որոնք որևէ կերպ առնչվում են «Վկայք Արևելից» ժողովածուի հայերեն թարգմանության հետ:

Շմալոն Բար-Սաբբայի սրբախոսական շարքը բաղկացած է հետևյալ մասերից. ա) նախաբան, բ) Շմալոն Բար-Սաբբայի վկայաբանությունը, գ) Ավատի վկայաբանությունը, դ) Թերբուի վկայաբանությունը, ե) Շահդոսդի վկայաբանությունը, զ) Բարբաշ-մենի վկայաբանությունը, է) վկայութիւն վկայիցն, որ սպանան ուրեք ուրեք, ը) 120 նահատակների վկայաբանությունը: «Վկայք Արևելից» ժողովածուի ընդարձակ խմբագրության մեջ (գիրքերի-րյան № 96 ձևագիր, հրատարակված Բեջանի կողմից) Պուսակի և Մարթայի պատմությունները ներկայացված են առանձին վկայաբանություններով, ավելացված է նաև Խուժաստանի նահատակների վկայաբանությունը³⁰: Վերջին երեք բաժինները այստեղ չեն բն-նրվում, քանի որ նրանք չեն մտնում «Վկայք Արևելից» ժողովածուի նախասկզբնական կազմի մեջ և հայերեն թարգմանության հետ կապ չունեն³¹:

ա) նախաբան³². Շմալոն Բար-Սաբբայի սրբախոսական շարքի նախաբանը նվիրված է պարսից քրիստոնյաների ղրկանքների նկարագրությանը: Ստեղծված իրավիճակը համեմատվում է Մակաբայեցիոց ապստամբության շրջանի իրադարձությունների հետ: Այս պուգահեռի միջոցով նախաբանի հեղինակը հող է պատրաստում իր հերոսի՝ Շմալոն Բար-Սաբբայի և Հուդա Մակաբայեցու համադրման համար: Նման համադրումը հիմնա-

²⁹ Sht'a Wiessner, Märtyrerüberlieferung, S. 40—198.

³⁰ Sht'a գլուխ Ա, աղյուսակ 1:

³¹ Sht'a գլուխ Ա, աղյուսակ 4:

³² ASM 10—17, AMS 123—130, ԳՏՄ 95—108, ՔՏ—2 715—731:

վորվում է այն բանով, որ երկու հերոսներն էլ պայքարում և զոհվում են իրենց ժողովրդի փրկության համար: Նախաբանը գրված է գեղեցիկ լեզվով, շքեղ դարձվածքներով ու արտահայտություններով և լիովին համահունչ է նախորդ՝ ընդհանուր ներածությանը:

Նախաբանի ասորական սկզբնագիրը ներկայացված է կրկնակ ավանդույթով: Ժողովածուի համառոտ խմբագրության մեջ (վատիկանյան № 160 և 161 ձեռագրեր, հրատարակված Ասեմանու կողմից) այն կազմում է Շմավոն Բար-Սաբբայի վկայաբանության մի մասը, իսկ ընդարձակ խմբագրության մեջ (Բեջանի հրատարակություն) նախաբանը տեղադրված է առանձին՝ «Ճառ երկրորդ ի նոյն վկայան» վերնագրի տակ: Վերջին դեպքում պարզորոշ կերպով երևում են հետևողական խմբագրական աշխատանքի հետքերը՝ ժողովածուի ներածությունը վերնագրված է «Ճառ առաջին», իսկ հաջորդ հեղինակային խոսքը՝ համապատասխանաբար՝ «Ճառ երկրորդ»: Սակայն անտրամաբանական է, որ միևնույն ժողովածուն ունենա երկու ծավալուն ներածություն, այդ պատճառով պետք է ենթադրել, որ երկրորդ «նախաբանը» վերաբերում է արգեն ոչ թե ամբողջ ժողովածուին, այլ նրա բաղկացուցիչ մասերից մեկին: Բովանդակությամբ այն համապատասխանում է Շմավոն Բար-Սաբբայի սրբախոսական շարքին: Այդ են վկայում և՛ պարսից քրիստոնյաների ու հրեա ժողովրդի դրույթյան համեմատությունը, և՛ Շմավոնի վկայաբանության գլխավոր հերոսի հիշատակումը: Հետևաբար «Վկայք Արևելից» ժողովածուի ընդարձակ խմբագրության հեղինակի սրբագրությունը անհիմն պետք է համարել: Սա ապացուցվում է ոչ միայն բովանդակության վերլուծության շնորհիվ, այլ նաև հայերեն թարգմանության տվյալներով: Այստեղ նույնպես նշված նախաբանը զբաղեցնում է Շմավոն Բար-Սաբբայի վկայաբանության սկիզբը, ճիշտ այնպես, ինչպես Ասեմանու հրատարակության մեջ³³:

³³ ԳՏՄ 95—108: Կոստյույի հրատարակության մեջ նույնպես նախաբանը Շմավոնի վկայաբանության համառոտ խմբագրության մի մասն է (տե՛ս ՔՏ—2 715—731):

բ) Շմավոն Բար-Սաբբայի վկայաբանությունը³⁴. Պարսից եկեղեցու առաջնորդ, Սելեկիա-Տիզբոն քաղաքի եկիսկոպոս Շմավոն Բար-Սաբբայի վկայաբանությունը հայտնի է երկու խմբագրություն՝ համառոտ և ընդարձակ, որոնց հնագույն բնագրերը պահպանվել են համապատասխանաբար վատիկանյան № 160 (V—VI դդ.) և 161 (IX—X դդ.) ձեռագրերում: Համառոտ խմբագրությունը հրատարակված է Ասեմանու կողմից, ընդարձակը՝ Բեջանի: Կոստկոն տվել է երկու խմբագրությունների քննական հրատարակությունը, օգտագործելով վկայաբանության գոյություն ունեցող բոլոր ընդօրինակությունները³⁵:

Վկայաբանության համառոտ խմբագրության մեջ պատմվում է, որ Շապուհ Բ արքայի պահակալության երեսունմեկերորդ տարում (339/340 թ.) պարսից բրիստոնյաները ծանրաբեռնվում են լրացուցիչ հարկապահանջությամբ: Այս պահանջը բավարարելու պատասխանատվությունը բնականաբար ընկնում էր պարսից բրիստոնյաների միակ ներկայացուցչական կազմակերպության՝ Տիզբոնի եկեղեցու, առաջնորդի վրա³⁶: Սակայն քաղաքի եպիսկոպոսը՝ Շմավոն Բար-Սաբբան, գրում է արքայից արքային, որն այդ ժամանակ գտնվում էր Բեթ-Լապատում, որ բրիստոնյաները ի վիճակի չեն վճարել ավելորդ հարկերը: Իր հերթին Շապուհը Շմավոնին է ուղարկում նախազգուշացումներով և ապառնալիքներով ի մի նամակ, սակայն դրան ի պատասխան նա ստանում է եպիսկոպոսի ծաղրոծանակը: Այնժամ արքան հրամայում է ավերել բրիստոնեական եկեղեցիները, սրի անցկացնել քահանաներին և սարկավազներին, իսկ Շմավոնին՝ «զգլուխ կախարդացն» շտապ հասցնել Բեթ-Լապատ: Հրամանն ի կատար է ածվում անմիջապես: Շմավոնը, երկու ծեր քահանաների ընկերակցությամբ, բերվում է Շապուհի մոտ: Նրան՝ պետական դավաճանության մեղադրանքով, հարցաքննում է հենց ինքը՝ արքայից արքան: Սակայն այս երկուսի միջև ծավալված երկար վիճաբանու-

³⁴ ASM 10—36, AMS 131—207, PS—2 715—959, ԴՏՄ 95—140:

³⁵ Տե՛ս գլուխ Ա, աղյուսակ 1:

³⁶ Հմմտ. *Пизулевская*, Города Ирана, стр. 243—244.

թյունը վերաբերում է արդեն սրբախոսության բնագավառին և առանձին պատմական հետաքրքրություն չի ներկայացնում, եթե, իհարկե, հաշվի չառնվի նրա արժեքը քրիստոնեական ջատագովության կռվանների ճանաչողության համար: Շմավոնը հրաժարվում է զրադաշտականություն ընդունել և ի վերջո հարյուր երկու ալլ նահատակների հետ մահապատժի է ենթարկվում³⁷:

Բացի գլխավոր հյուսվածքային գծից Շմավոնի վկայաբանության համառոտ խմբագրության մեջ տեղ են գտել նաև Գուշթաղատի, Պուսակի և նրա դստեր պատմությունները, որոնք ըստ էության ավելի հետաքրքրաշարժ են, քան բուն Շմավոնի պատմությունը³⁸: Վկայաբանության համառոտ խմբագրությունն աչքի է ընկնում երկարաբանությամբ և վերամբարձ ոճով: Սակայն ընդարձակ խմբագրությունը այս առումով անհամեմատ ավելի զերազանցում է նրան: Այստեղ արդեն հեղինակի ճոռոմաբանու-

37 Ասորագիտության մեջ մինչև որս էլ վեճի առարկա է Շմավոնի մահվան տարեթվի որոշումը: Նման հետաքրքրությունը բացատրվում է հարցի սկզբունքային կարևորությամբ, քանի որ այս տարեթվի վրա է հիմնված «Վկայք Արեւից» ժողովածուի ողջ ժամանակագրական համակարգը, որտեղ Շմավոնի մահը դիտվում է որպես ընդհանուր հալածանքների ազդանշան: Այս խնդրի ուսումնասիրմանը նվիրված են հակադիր տեսակետներ պաշտպանող մի շարք հատուկ աշխատություններ: Հետազոտողներից շատերը, հիմնվելով բուն իսկ ժողովածուի տվյալների վրա, պնդում են, որ Շմավոնի մահապատժը տեղի է ունեցել Շապուհ Բ արքայի երեսներկուերորդ տարում՝ 341 թ. (տե՛ս Nöldeke, Tabari, S. 411: *Labourt*, *Le christianisme*, pp. 50, 68; *Peeters*, *Le debut*, pp. 15—33; *Le passionnaire d'Adiabène*, pp. 266, 295; *La date*, pp. 118—143): Ուրիշները, ելնելով IV դարի հուշակավոր ասորի մատենագիր Ափրահատի հաղորդումներից, Շմավոնի մահվան և «մեծ հալածանքների» սահմադրեծման տարեթիվ են համարում 344 թվականը (տե՛ս Kmosko, PS—2 699—703; *Higgins*, *Aphraates dates*, pp. 270—271; *Date*, pp. 1—32; *Пузылевская*, *Города Ирана*, стр. 147—148; Шапур II, стр. 99): Այս խնդրի բնությունը դուրս է մեր ուսումնասիրության շրջանակներից, միայն թե հարկ է նշել, որ մենք համամիտ ենք առաջին խմբի հետազոտողների կարծիքին՝ ավելի արժանահավատ համարելով «Վկայք Արեւից» ժողովածուի ժամանակագրական համակարգը:

38 Գուշթաղատի մասին տե՛ս *Пузылевская*, *Шапур II*, стр. 98.

թյունը հասնում է իր գագաթնակետին, և վկայաբանությունը ստանում է հոետորական ճառի բնույթ՝ մանվածապատ ալյաբանություններով, աստվածաշնչյան զուգահեռներով և անվերջ ձգձգված երկխոսություններով: Խմբագրությունների տարբերություններն արտահայտվում են, սակայն, ոչ միայն շարադրանդանությամբ, այլ նաև բովանդակության առանձնահատկությունների և պատմական իրադարձությունների նկարագրության մեջ: Օրինակ, Շմալոնի և Շապուհի վերոհիշյալ նամակակցության փոխարեն ընդարձակ խմբագրության մեջ խոսվում է Շապուհի և մայրաքաղաքի իշխանությունների փոխանակած թղթերի մասին, որը պատմական տեսակետից ավելի արժանահավատ է թվում: Այնուհետև, ընդարձակ խմբագրության մեջ, չնայած նրա ճոռոմաբանությանը, փաստերին ավելի շատ ուշադրություն է հատկացված և իրադարձություններն ավելի մանրամասն են ներկայացվում, քան համառոտ խմբագրության մեջ, որի համար շարադրանքի փաստական կողմը կարծես երկրորդական նշանակություն ունի: Այս պատճառով է, որ ընդարձակ խմբագրության մեջ ձևափոխված են նաև Գուշթադատի և Պոստալի պատմությունները: Իսկ վերջինիս դատեր նահատակության մասին հաղորդումը ամենևին բացակայում է ընդարձակ խմբագրության մեջ: Ուշագրություն է գրվում նաև այն փաստը, որ համառոտ խմբագրության հեղինակի խիստ վերաբերմունքը պարսից իշխանությունների և հատկապես Շապուհի նկատմամբ, ընդարձակ խմբագրության մեջ դառնում է ավելի զուսպ և հանդուրժող: Այստեղ արդեն Շմալոնը այն սրբախոսական հերոսը չէ, որը անվախորեն վիճաբանում է հակառակորդի հետ և ծաղրում նրա աստվածությունները: Նա արդեն հարգանքով է խոսում Շապուհի հետ և ամեն անգամ նրա մոտ մտնելիս՝ հեղաբար խոնարհվում, այնինչ ըստ համառոտ խմբագրության Շմալոնը կտրականապես հրաժարվում է երկրպագել Շապուհին: Նույն միտվածքն է նկատվում նաև Շապուհի և Գուշթադատի հակամարտության նկարագրության մեջ:

Շարադրվածից կարող է այնպիսի տպավորություն ստեղծվել, որ քննվող խմբագրությունները իրարից անկախ գրական ստեղծագործություններ են միևնույն հերոսի մասին: Սակայն

շնայած նշված բոլոր տարբերություններին, Շմավոնի վկայաբանության համառոտ և ընդարձակ խմբագրությունների՝ միջև ակնհայտ կապ գոյություն ունի: Երկու խմբագրություններն էլ սահմանափակված են միևնույն հյուսվածքային շրջանակով և լիովին համընկնում են նկարագրվող գեպերի հաջորդականությանմբ: Երկու խմբագրություններում էլ գործում են միևնույն պատմական անձնավորությունները՝ միևնույն հանգամանքներում և միևնույն արարքներով: Սակայն ամենագլխավորն այն է, որ համառոտ և ընդարձակ խմբագրություններում կան ամբողջ փոխկապակցված հատվածներ, որոնք բառ առ բառ համընկնում են իրար, չխոսած այլևս բաղմաթիվ միանման նախադասությունների, արտահայտությունների և դարձվածքների մասին: Սա օրինակներով լուսաբանելն ավելորդ է, որովհետև այդպիսի ընդհանուր հատվածներ կարելի է գտնել բնագրերի համարյա յուրաքանչյուր էջում:

Շմավոնի վկայաբանության համառոտ և ընդարձակ խմբագրությունների փոխհարաբերությունների պարզաբանումը սկզբունքային նշանակություն ունի նրանց պարունակած պատմական տվյալների ճիշտ գնահատման համար: Կախված այն բանից, թե որն է նրանցից հնագույնը և, հետևաբար, մյուս խմբագրության հավանական աղբյուրը, մեծանում է մեկի և, ընդհակառակն, փոքրանում մյուս խմբագրության արժանահավատությունը: Ուստի վարմանալի չէ, որ այս հարցը արժանացել է համարյա բոլոր ասորագետների ուշադրությանը: Հետազոտողների մեծամասնության կարծիքով (Ասեմանի, Վեստֆալ, Լաբուր, Կմոսկո, Բաումշտարկ, Պետերս, Հիգգինս, Պիգուլևսկայա), Շմավոնի վկայաբանության ընդարձակ խմբագրությունը համառոտի հետագա գրական վերամշակումն է³⁹: Կմոսկոն նույնիսկ ձևոնարկել է խմբագրությունների թվագրման մի հետաքրքիր փորձ, հենվելով

³⁹ *St. Assemani*, ASM XXXVII; *Westphal*, Untersuchungen, S. 90; *Labourt*, Le christianisme, p. 49; *Kmosko*, PS—2 687—690; *Baumstark*, Geschichte, S. 56; *Peeters*, La date, pp. 120—121; *Eleutherios*, p. 51; *Higgins*, Date, p. 1; *Пузылевская*, Города Ирана, стр. 146.

հետևյալ փաստերի վրա. ա) ընդարձակ խմբագրություն մեջ զգացվում է Պուսակի և Մարթայի վկայաբանությունների ազդեցությունը, իսկ վերջիններս անկասկած ստեղծված են 428 թվականից հետո, քանի որ նրանցում նկարագրվող վերջին դեպքերը վերաբերում են այդ տարվան⁴⁰. բ) իշխանությունների հանդեպ հեղինակի վերաբերմունքի գաղափարամիտված փոփոխությունը կարող էր տեղի ունենալ ոչ վաղ քան 407 թվականը, երբ Հաղկերտ Ա արքայի և պարսից քրիստոնյաների միջև կնքված հաշտությամբ վերջ տրվեց նոր հալածանքներին⁴¹: Այս փաստերը, Կոստկոյի կարծիքով, վկայում են, որ համառոտ խմբագրությունը կազմված է 407 թվականից առաջ, ընդարձակը՝ 428 թվականից հետո, բայց, ամենայն հավանականությամբ, V դարից ոչ ուշ⁴²:

Հակառակ համընդհանուր կարծիքի, Վիսները վերջերս հանդես եկավ նոր տեսությամբ, որի համաձայն, Շմավոնի վկայաբանության երկու խմբագրություններն էլ ծագում են մի ընդհանուր աղբյուրից, քանի որ ընդարձակ խմբագրությունը պարունակում է այնպիսի լրացուցիչ տեղեկություններ, որոնք չէր կարելի քաղել ոչ համառոտ բնագրից, ոչ էլ որևէ այլ հայտնի պատմական երկից⁴³: Սա ինքնին շատ հետաքրքիր ենթադրություն է, որովհետև երկու խմբագրություններն էլ իրենց պատմական տեղեկությունների տեսակետից հավասար արժեք են ստանում: Իհարկե, տեսականորեն բացառված չէ այդպիսի ընդհանուր

⁴⁰ Տե՛ս Մարթայի վկայաբանությունը՝ AMS 241:

⁴¹ PS—2 687—689: Իշխանությունների հանդեպ վերաբերմունքի փոփոխման գաղափարամիտվածության վրա Կոստկոյից առաջ ուշադրություն է դարձրել լաբուրը: Նրա կարծիքով, այդ փոփոխությունը պատկանում է հետադայի մի հեղինակի, որը գրելով իր երկը խաղաղության շրջանում, երբ արևելյան եկեղեցին կարգավորում էր իր հարաբերությունները արքունիքի հետ, ուզում էր ցույց տալ, որ երկրի քրիստոնյաները նույնիսկ հալածանքների ժամանակ հավատարիմ են մնացել պարսից գահին (տե՛ս Labourt, Le christianisme, p. 49).

⁴² PS—2 690.

⁴³ Տե՛ս Wiessner, Märtyrerüberlieferung, S. 41—43. Պետք է նշել, որ ըստ Վիսների նույնպես ընդարձակ խմբագրությունը կազմված է համառոտից հետո (տե՛ս Wiessner, Märtyrerüberlieferung, S. 48).

աղբյուրի գոյութիւնը, քանի որ համառոտ խմբագրութիւնը ևս, ինչպես ընդունւած է, ականատեսի ստեղծագործութիւնն է: Այն կազմւած է դեպքերից մօտ 50—60 տարի հետո (IV դարի վերջը— V դարի սկիզբը) և, հետևաբար, նրա հիմքում նույնպես ընկած է որևէ աղբյուր⁴⁴: Ուստի այս աղբյուրը կարող էր պահպանւել համառոտ խմբագրութեան կազմումից հետո ևս և հետագայում օգտագործւել նաև ընդարձակ խմբագրութեան հեղինակի կողմից: Սակայն եթե ընդունենք Վիսնիցի ենթադրութիւնը, ապա հետևի՞րական լինելու համար, պետք է համաձայնել նաև, որ այդ ընդհանուր աղբյուրը ինքնին արդեն ավարտուն գրական ստեղծագործութիւն էր: Խմբագրութիւնների ընդհանրութիւններն այնքան էական են, որ այլ ենթադրութեան համար տեղ չեն թողնում: Տարօրինակ է միայն, որ այդպիսի ավարտուն գրական ստեղծագործութիւնը կարիք պիտի ունենար կրկնակ վերամշակման և այնուհետև չքանար: Մանավանդ որ, ինչպես բխում է Վիսնիցի աշխատութիւնից, այդ ընդհանուր աղբյուրը էական մշակման չի էլ ենթարկւել մեզ հասած խմբագրութիւնների հեղինակների կողմից, պարզապես համառոտի խմբագիրը նրանից ավելի քիչ նյութ է բաղել, քան ընդարձակինը: Այսպիսով, Վիսնիցի կարծիքը Շմալոնի վկայաբանութեան խմբագրութիւնների ընդհանուր աղբյուրի մասին, հակառակ հեղինակի ջանքերի և բնագրերի մանրակրկիտ ուսումնասիրութեան, դժվար թե կարելի է հիմնավորւած համարել: Ամենախոցելի տեղը նրա փաստարկումների մեջ այն է, որ նա բոլորովին անտեսում է ընդարձակ խմբագրութեան հեղինակի ստեղծագործական ազատութեան հնարավորութիւնը և չի ընդունում, որ կարող էին գոյութիւն ունենալ նաև մեզ չհասած ուրիշ աղբյուրներ, որոնցով այդ հեղինակը ի վիճակի կլինէր լրացնել համառոտ խմբագրութեան տվյալները:

Իսկ իրականութիւնը պետք է պատկերացնել, ըստ երևույթին, հետևյալ կերպ: Շմալոնի վկայաբանութեան համառոտ խմբագրութիւնը կազմւած է IV դարի վերջում կամ V դարի սկզբին՝ պարսից

⁴⁴ S. L. Peeters, La date, pp. 120, 122.

քրիստոնյաների բանավոր ավանդությունների հիման վրա⁴⁵։ Սկզբնաղբյուրի այսպիսի բնույթի պայմաններում բնականաբար անհնար է, որ իրարից անկախ գրական ստեղծագործությունները ունենալին այդքան էական ընդհանրություններ։ Հետևաբար, ընդարձակ խմբագրությունը իսկապես համառոտի հետագա գրական վերամշակումն է։ Մի շարք հանգամանքներ թույլ են տալիս նույնիսկ որոշել ընդարձակ խմբագրության ստեղծման մոտավոր ժամանակը։ Իրավացի է կոմսկոն, երբ պնդում է, որ Շմավոնի վկայաբանության ընդարձակ խմբագրությունը չի կարող ստեղծված լինել 428 թվականից առաջ։ Սողոմոնոսի «Եկեղեցական պատմությունը» վկայում է, որ այն չի կարող ստեղծված լինել նաև V դարի 40—ական թվականներից առաջ, որովհետև այդ ժամանակ գրելով իր աշխատությունը, Սողոմոնոսը օգտվել է Շմավոնի վկայաբանության համառոտ խմբագրությունից⁴⁶։ Թեև Վիսները այս դեպքում ևս պնդում է, որ Սողոմոնոսը օգտագործել է երկու խմբագրությունների ենթադրյալ ընդհանուր աղբյուրը⁴⁷, սակայն ինչպես ցույց է տալիս Պ. Գեյլի մանրակրկիտ վերլուծությունը, Սողոմոնոսի աղբյուրը անկասկած վկայաբանության համառոտ խմբագրությունն է⁴⁸։ Պետք է հիշեցնել, որ Սողոմոնոսը ամրապնդում էր ասորերենի և կարող էր ինքնուրույնաբար և անմիջականորեն օգտվել ասորական գրականությունից⁴⁹։ Այնպես որ, նրա դիմումը համառոտ խմբագրությանը չի կարելի պատահական համարել։

Շմավոնի վկայաբանության հայերեն թարգմանությունը նույնպես կատարված է համառոտ խմբագրությունից։ Այս փաստն արդեն ստիպում է ընդարձակ խմբագրության գրության ժամանակը հասցնել մինչև V դարի 60—ական թվականներ։ Ինչպես նշվեց ներկա աշխատության երկրորդ գլխում, Աբրահամ Խոստո-

⁴⁵ Տե՛ս Peeters, La date, p. 48.

⁴⁶ Տե՛ս Sozomenus, Kirchengeschichte, S. 61—69.

⁴⁷ Տե՛ս Wiessner, Märtyrerüberlieferung, S. 149—154.

⁴⁸ Տե՛ս Devos, Sozomène, pp. 443—456.

⁴⁹ Տե՛ս Sozomenus, Kirchengeschichte, S. LXV; Devos, Sozomène. p.

մանողը իր թարգմանությունն իրականացրել է ասորի բնակչության շրջապատում և, հետևաբար, Մարութայի «Վկայք Արևելից» ժողովածուի հետ կապված բոլոր հանգամանքները նրան ծանոթ պետք է լինեին: Եթե նա գիտենար ընդարձակ խմբագրության գոյության մասին, ապա կթարգմաներ այն և ոչ թե համառոտը, որովհետև գրական տեսակետից ընդարձակ խմբագրությունը ավելի է համապատասխանում միջնադարյան սրբախոսի գեղարվեստական ճաշակին:

Հետաքրքիր է նաև այն փաստը, որ հունական Հայսմավուրքի պատմությունը Շմավոնի և նրա ընկերակիցների մասին նույնպես կազմված է ըստ վկայաբանության համառոտ խմբագրության⁵⁰: Սա վկայում է, որ նաև բյուզանդական գրականության մեջ Շմավոնի վկայաբանությունը հնում հայտնի էր համառոտ խմբագրության:

Նշված տվյալներին ավելացնելով նաև այն, որ ընդարձակ խմբագրությունը, ի տարբերություն ժողովածուի մյուս բաժինների, աչքի է ընկնում հունարեն բառերի առատությամբ, սկսած է հնթադրել, որ նա կազմված է V դարի վերջին քառորդում, որովհետև հունասիրությունը ասորական գրականության համար բնորոշ դարձավ սկսած այս շրջանից⁵¹: Ավելորդ չէ նշել, որ այսպիսի թվագրումը լիովին համապատասխանում է պատմական իրականությանը: Իշխանությունների հանդեպ վերաբերմունքի փոփոխման անհրաժեշտությունը կարող էր ծագել հենց այս ժամանակ, երբ նեստորական եկեղեցու ամբողջ գործունեությունն ուղղված էր արքայից արքաների համակրանքի և հովանավորության ձեռքբերմանը, իսկ վերջիններս քաղաքական նկատառումներով ընդառաջ էին գնում այս նպատակի իրականացմանը⁵²:

դ) Ազատի վկայաբանությունը⁵³. Վկայաբանության լրիվ վեր-

⁵⁰ SEC 607.

⁵¹ Տե՛ս Duxal, La littérature, pp. 247, 303.

⁵² Տե՛ս Christensen, L'Iran, p. 292. Տե՛ր-Միհրայան, Հետադոտություններ, էջ 346:

⁵³ ASM 45—50, AMS 248—254, ԳՏՄ 141—145:

նագիրն է. «Մարտ պատերազմի բազմաց վկայից և Աղատի՝ ներքինույն արքայի»: Այս երկը բովանդակությամբ սերտորեն կապված է Շմավոնի վկայարանության հետ: Պատմության նյութը Շմավոնի մահապատից հետո ծավալված համընդհանուր հալածանքներն են, որոնք տևում են ամբողջ տաս օր՝ սկսած մեծ Զատիկի ուրբաթից մինչև Զատիկին հաջորդող կիրակին: Այս ընթացքում սրի են մատնվում հազարավոր քրիստոնյաներ, ինչպես հոգևորականներից, այնպես էլ աշխարհիկ բնակչությունից: Կոտորածին պատահաբար զոհ է դնում նաև արքայի սիրելի ներքինի Աղատը: Նրա մահը այնպես է հուզում Շապուհին, որ նա հրամայում է դադարեցնել հալածանքները և սպանել ոչ բոլոր մահ ցանկացողներին, այլ միայն նրանց, ովքեր «վարդապետք իցեն ուսմանն»⁵⁴:

Աղատի վկայաբանության հայերեն թարգմանությունը կորցրել է իր վերնագիրը և կցվել ժողովածուի նախորդ բաժնին՝ Շմավոն Բար-Սաբբայի վկայաբանությանը: Մեկ հասած բոլոր չորս ընդօրինակություններում Աղատի վկայաբանությունը հանդես է գալիս որպես Շմավոնի վկայաբանության բաղկացուցիչ մասը: Սա վկայում է, որ այս փոփոխությունը կատարվել է շատ վաղուց:

⁵⁴ Մեծ դժվարությունների հետ է կապված Աղատ ներքինու անձնավորության որոշումը: Ըստ Պետերսի, Աղատին պետք է նույնացնել Շապուհ Բ արքայի ներքինի Գուլթաղատի հետ, որի մասին հիշատակություններ են պահպանված Շմավոն Բար-Սաբբայի և Մահդուխտի վկայարանությունների մեջ (AMS 1—39), Սողոմոնոսի մոտ և հունական Հայսմավուրբում ('*Flaviméris*): Հնչակավոր ներքինու մասին զրույցը, տարածվելով ամբողջ Պարսկաստանում իր արտացոլումն է գտնում նաև Ադիաբենի տեղական զրական ավանդույթում: Նրա օրինակով այստեղ ստեղծվում է Ադիաբենի կառավարիչ Արտաշիսի պալատում ծառայող Գուլթաղատ ներքինու պատմությունը, որը շարադրված է ներսեհի և Հովսեփի վկայարանության մեջ (AMS 284—286): Այսպիսով, Պետերսի կարծիքով, Աղատ-Գուլթաղատ անուններով բոլոր ներքինիները, որոնց մասին պատմվում է «մեծ հալածանքների» շրջանին վերաբերող սրբախոսական երկերում, ներկայացնում են միևնույն անձնավորությունը, որը չպետք է շփոթել միայն ադիաբենցի Աղատ սարկավազի հետ (Հակոբ Եպիսկոպոսի և Աղատ սարկավազի վկայաբանությունը՝ AMS—4 137—141). *St'au Peeters*, *El-euthérios*, pp. 151—156: *Le passionnaire d'Adiabene*, p. 265; Նաև՝ *Пузылевская*, *Города Ирана*, стр. 141.

Սակայն դժվար է համաձայնել Ե. Տեր-Մինասյանի կարծիքին, ըստ որի, Ազատի վկայաբանությունը կցված է Շմավոնի վկայաբանությանը թարգմանչի կողմից⁵⁵: Աբրահամ խոստովանողը հավատարիմ կերպով հետևում է սկզբնագրի կառուցվածքին և հստակորեն սահմանադատում ժողովածուի բաղադրամասերը: Հետևաբար այս փոփոխության հեղինակ պետք է համարել գրիչներին կամ որևէ անանուն խմբագրի: Ընդ որում, տարօրինակ չպետք է թվա այն փաստը, որ Շմավոնի վկայաբանության եղբայրական նախադասությունը, որտեղ խոսվում է նահատակների մահապատժի մասին, տեղադրված է կցված բնագրից հետո: Սույն աշխատության երկրորդ զլխում նշվեց արդեն, որ այսպիսի եզրափակիչ նախադասությունները հետամուտ են:

Ազատի վկայաբանության հայերեն թարգմանությունը բառացի և ճշգրիտ է, սակայն նրա մեջ պակասում են ասորական սկզբնագրի երկու մեծ հատվածներ⁵⁶ 76 տող Ասեմանու հրատարակության 45—47 էջերում (ԳՏՄ 141) և 9 տող 49-րդ էջում (ԳՏՄ 144): Այս հատվածներն, ըստ երևույթին, բաց են թողնված թարգմանչի կողմից, բանի որ հայերեն բնագրում ձևադրերի քայքայման և շարադրանքի խախտման հետքեր չկան:

դ) Թերբուի վկայաբանությունը⁵⁶. Վկայաբանության մեջ պատմվում է Շմավոն Բար-Սաբբայի երկու քույրերի և նրանց աղայինի մասին, որոնք իբր կախարդությամբ պատճառ են հանդիսացել պարսից տիրուհու հիվանդության: Նրանց դատը վարում են մեծ մոգպետը և արքայի կողմից հատուկ նշանակված երկու նախարար: Սակայն դատավարության ժամանակ մեղադրյալներին դատելու փոխարեն, սրանք սիրահարվում են գեղեցկուհի Թերբուին և իրարից ծածուկ նրան առաջարկություն անում⁵⁷: Մերժում ստանալով, նրանք ղեկուցում են արքային, որ կույսերն իսկապես

⁵⁵ Տե՛ս Տեր-Մինասյան, Հետադոտություններ, էջ 77:

⁵⁶ ASM 54—59, AMS 254—260, ԳՏՄ 150—155, PO—2 439—444:

⁵⁷ Այս պատմությունը Լաբուրն անհավանական է համարում, հաշվի առնելով այն, որ Շմավոն Բար-Սաբբան մեռել է խոր ծերության մեջ և, հետևաբար, նրա քույրը այդ ժամանակ չէր կարող երիտասարդ և գեղեցիկ լինել (տե՛ս Labourt, i.e christianisme, p. 69):

կախարդ են և արժանի մահվան: Այնժամ արքան Թերբուլց և նրա ընկերակիցներից պահանջում է երկրպագել արևին և աշդալիսով խուսափել մահվանից: Սակայն վերջիններս ուրախությամբ ընդունում են նահատակի պատկը:

Թերբուլի վկայաբանությունը արժանացել է հետազոտողների հատուկ ուշադրությանը՝ սասանյան պետության դատավարական կարգի մասին պարունակած արժեքավոր տեղեկությունների շնորհիվ⁵⁸, ինչպես նաև այն պատճառով, որ նա ժողովածուի հազվագյուտ մասերից է, որ պահպանվել է միաժամանակ երեք լեզվով՝ ասորերեն, հայերեն և հունարեն⁵⁹: Վերջին հանգամանքը տառնձնակի հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ հնարավորություն է տալիս համեմատել հույն և հայ թարգմանչի գեղարվեստական սկզբունքները: Վկայաբանության հայերեն բնագիրը Աբրահամ խոստովանողի թարգմանության տմենաբնորոշ նմուշներից է, որը բնութագրվում է բովանդակության ճշգրիտ վերարտադրմամբ, անկաշկանդ, թեթև շարադրանքով և բուն հայերեն շարահյուսական կառուցվածքների, դարձվածքների և արտահայտությունների կիրառմամբ: Հունարեն թարգմանությունը նույնպես աչքի է ընկնում ճշգրտությամբ, թեև ոչ այնչափով, որքան հայերեն թարգմանությունը:

և) Շահդադի վկայաբանությունը⁶⁰. Շմափոն Բար-Սաբբայի մահապատժից հետո Սելեկիա-Տիզբոն բաղաբի եպիսկոպոս է ընտրվում Շահդոսդը, որին, սակայն նույնպես վիճակված չէր երկար վարել այդ պաշտոնը: 342 թվականին նա 128 այլ նահատակների հետ կիսում է իր նախորդի բախտը: Շահդոսդի վկայաբանությունն աչքի չի ընկնում ո՛չ հետաքրքրաշարժ բովանդակությամբ, ո՛չ էլ կենցաղային մանրամասներով: Այն կառուցված է սովորական սրբախոսական կաղապարով և հետապնդում է մի հիմնական նպատակ՝ ստեղծել քրիստոնյա հերոսի կատարյալ կերպարը: Բովանդակության առանձնահատկություններով և

⁵⁸ *Sh'n Pigulevskaia*, Tarbo, S. 97—98.

⁵⁹ *Sh'n Shr*-Միմասյան, Հետազոտություններ, էջ 80—83:

⁶⁰ ASM 88—91, AMS 276—281, PO—2 445—450.

շարադրանդանակով այն սերտ կապի մեջ է գտնվում Շմավոն Բար-Սաբբայի վկայաբանության հետ: Կրկնվում են ոչ միայն քրիստոնեական ջատագովության միևնույն կովանները, այլ նաև առանձին արտահայտություններ և բառակապակցություններ, որոնք վկայում են այս երկերի մոտ ազգակցությունը: Հարկ է ավելացնել նաև, որ Շահդոսդի վկայաբանության մեջ մի քանի անգամ հիշատակվում է Շմավոն Բար-Սաբբայի անունը. վերջինիս կերպարը ժամանակակիցների համար արիության և տոկունության խորհրդանիշ էր դարձել: Հաշվի առնելով այս ամենը, պետք է ենթադրել, որ Շահդոսդի վկայաբանությունը ստեղծված է այն ժամանակ և այն գրական միջավայրում, որոնց արդասիքն են Շմավոն Բար-Սաբբայի սրբախոսական շարքի մնացյալ երկերը:

Ավելի դժվար է թվագրել վկայաբանության հունարեն թարգմանությունը, որը պահպանվել է X—XI դարի Հայսմավուրբնիքում⁶¹: Վերջինս էական տարբերություններ չունի ասորական սկզբնագրից, թարգմանությունն ազատ է, բայց նախադասությունների հաջորդականությունը խախտված չէ:

Շահդոսդի վկայաբանության հայերեն թարգմանությունը կորել է: Պահպանված է միայն նրա առաջին տողը ժողովածուի հայերեն թարգմանության առաջաբանում՝ «զՇահդոս փոխանակ Շմաւոնի...» (ԳՏՄ 2): Այս խոսքերով է սկսվում նաև վկայաբանության ասորական սկզբնագիրը՝ «Եւ եպիսկոպոսն Շահդոսդ, որ փոխանակ Շմաւոնի էր...» (AMS 276): Շահդոսդի վկայաբանության հայերեն թարգմանության գոյությունը կասկածի ենթակա չէ, քանի որ այն հիշատակվում է նաև Թովմա Արծրունու Պատմության մեջ: Ավելին, Թովմայի հաղորդման շնորհիվ պարզվում է նաև, որ Շահդոսդի վկայաբանությունը մտնում էր Աբրահամ խոստովանողի «Վկայք Արևելից» ժողովածուի կազմի մեջ՝ «...երանելի խոստովանողն Քրիստոսի Աբրահամ ...զսակաւուց քան թէ յոլովից գրեաց անուանս ի յիշատակարանի անդ, զՇահդոսդ, որ քարզմանի արեւայսւէր...»⁶²: Ուշագրավ է, որ ընդգծված նախա-

⁶¹ РО—2 411.

⁶² Թովմա Արծրունի. Պատմութիւն, էջ 65:

գասությունը Թովման պարզապես արտագրել է վկայաբանության հայերեն թարգմանությունից: Ասորական սկզբնագրի համապատասխան տեղում ունենք. «Շահդոսդ, որոյ անուն թարգմանի արքայասէր...» (AMS 278), ճիշտ այնպես, ինչպես Թովմայի մոտ: Սա նշանակում է, որ Թովման իսկապես կարդացել է Շահդոսդի վկայաբանության հայերեն թարգմանությունը Աբրահամ Խոստովանոցի թարգմանած «Վկայք Արևելից» ժողովածուի կազմում:

Շահդոսդի համառոտ վկայաբանությունը, որը հանդիպում է հայկական Հայսմալուրքներում, կազմված է ոչ թե ըստ նրա հայերեն թարգմանության, այլ հունական աղբյուրների հիման վրա: Այդ են մատնում «Սադովկ» և «Սալիք» հատուկ անունների ձևերը, որոնցից առաջինը «Շահդոսդ» անվան հունական ձևի տառադարձումն է (Σαδωζ), երկրորդը՝ «Սելեկիա» բաղաբի (Σελ-ηζ)⁶³:

դ) Բարբաշմենի վկայաբանությունը⁶⁴. Հալածանքների վեցերորդ տարում (345) ձերբակալվում է մայրաքաղաքի հաջորդ եպիսկոպոսը՝ Բարբաշմենը, Շմավոն Բար-Սաբբայի բևորդին: Տասնմեկ ամիս անց, 346 թվականի սկզբին, նա 16 այլ բանտարկյալների հետ մահապատժի է ենթարկվում: Ձերբակալության և մահապատժի պատճառ է հանդիսանում մի չարախոսություն, ըստ որի, իբր Բարբաշմենը «հակառակ կայ ուսմանս մերոյ, և զբաղում մարդիկ դարձուցանէ ի պաշտամանէ մոգութեանս (սասոր. սկզբնագիր՝ ի հաւատոյ մերմէ—Լ. Տ.—Պ.)» (ԳՏՄ 166, AMS 296): Սակայն պատմական առումով սա միմիայն զրպարտություն կարող է լինել, քանի որ երկրի բրիտոնյա գործիչները դաժան հալածանքների տարիներին դժվար թե կարողանային առաքելա-

⁶³ SEC 151, 607. Ընդ որում, Σαδωζ-ը ակնհայտորեն ազգավորված ձև է, ճիշտ է՝ Σαδωβ. տե՛ս PO—2 445—450, SEC 150—151: Ուշագրավ է, որ Բար-Հեբրեոսը որպես «Շահդոսդ» անվան հունական ձև ճանաչում է աղավորված Σαδωζ-ը՝ «և յայնք հիմոզ կոչեն դնա» (AMS 278): Ըստ երեւոյթի, Σαδωβ անվան ազգավորումը տեղի է ունեցել աստվածաշնչյան Σαδωζ ձևին նույնացվելու ճանապարհով. հմմտ. Մատթէոս, 1, 14:

⁶⁴ ASM 111—116, AMS 296—303, ԳՏՄ 166—172:

կան զործունեություն ծավալել: Բավական է հիշեցնել Շահդոսդի վկայաբանության հաղորդումն այն մասին, որ նույնիսկ պարսից եկեղեցու առաջնորդը՝ Տիզբոնի եպիսկոպոսը, ստիպված էր իր պաշտոնակիցների հետ թաքնվել իշխանություններից (AMS 276:) Ի միջի այլոց, XIII դարի ասորի նշանավոր մատենագիր Բար-Հեբրեոսի վկայությամբ հենց Բարբաշմենը ընարվում և եպիսկոպոս է ձեռնադրվում գաղտնի կերպով, մի պատահական հավատացյալի տանը (AMS 296)⁶⁵: Հետևաբար, Բարբաշմենը չէր կարող զբաղվել քրիստոնեական հավատի քարոզությամբ և նահատակվել է այլ պատճառով: Իրականում նա մահապատժի է ենթարկվում միայն այն բանի համար, որ ստանձնել էր պարսից եկեղեցու առաջնորդությունը: Այդ են վկայում Շապուհի խոսքերը, ուղղված Բարբաշմենին հարցաքննության ժամանակ. «Ընդ՛էր զհրամանան մերով անցեր և իշխեցեր լինել գլուխ աղգին այնորիկ, զոր ես ատեամ» (AMS 297)⁶⁶: Սպառնալիքն այնքան ահավոր է լինում, որ Բարբաշմենի մահից հետո մայրաքաղաքի եպիսկոպոսական աթոռը ավելի քան քսան տարի թափուր է մնում. «Դադարեաց առաջնորդութիւն յեկեղեցեացն Սղակայ և Տիզբոնի սակաւ ինչ աւելի քան զքսան ամ յահէ և յերկիւղէ խիստ հրամանին» (ԳՏՄ 172, AMS 303): Ըստ Բար-Հեբրեոսի, եպիսկոպոսները հրաժարվում են առաջնորդ ընտրելուց, որովհետև ում ընտրում էին, նրան մահ էր սպասում (AMS 296):

Բարբաշմենի վկայաբանությունը նույնպես կառուցված է ընդունված սրբախոսական կանոններով, առանց նշանակալից պատմական և կենցաղային մանրամասների: Գլխավոր տեղն այստեղ, ինչպես Շմավոն Բար-Սաբբայի սրբախոսական շարքի

⁶⁵ Բար-Հեբրեոսի հաղորդման արժանահավատությանը կասկածելու հիմք չկա, որովհետև ուրիշ՝ ավելի հին աղբյուրներից, նույնպես հայտնի է, որ երբեմն քրիստոնյաները իրենց առաջնորդներին իսկապես թաքուն են ընտրել: Այսպես են ձեռնադրվում, օրինակ, «Արբելայի ժամանակագրության» մեջ հիշատակվող Աբրահամ և Մարան-Ջերա եպիսկոպոսները (տե՛ս Mingana, Sources syriaques, pp. 55, 56):

⁶⁶ Բար-Հեբրեոսի մոտ այս խոսքերն ուղղված են Շահդոսդին (AMS 278):

բուրբ բաժիններում, զբաղեցնում է ջատագովական երկիրստությունը:

Վկայաբանության ասորական սկզբնագիրը ներկայացված է հնագույն ընդօրինակություններով: Սա է պատճառը, որ նրա և հայերեն թարգմանության միջև էական տարբերություններ չկան: Հայերեն թարգմանությունը հարապատրեհն հետևում է ասորական սկզբնագրին, չխախտելով նույնիսկ նախադասությունների հաջորդականությունը: Նրանք տարբերվում են միայն մի կետում՝ մինչդեռ սկզբնագիրը Բարբաշմենի մահը դնում է Kānūn brāy (հունվար) ամսի 9-ին, հայերեն թարգմանությունը այն մի ամբողջ ամսով առաջ է տանում՝ «ար (տոսն և) ինն Փալոց ամսոյ» (AMS 303, ԳՏՄ 172)⁶⁷:

է) Վկայութիւն վկայիցն, որ սպանւն ուրեմ ուրեմ⁶⁸. Իր բնությունով այս երկը հիշեցնում է Ազատի վկայաբանությունը: Այստեղ նույնպես զունեղ լեզվով և վերամբարձ ռճով նկարագրվում են համընդհանուր հալածանքների իրադարձությունները, որոնք այս անգամ ծավալվում են Բարբաշմենի մահից հետո: «Վկայութիւն վկայիցն» նույնպես հայտնի է միայն ասորական սկզբնագրով և հայերեն թարգմանությամբ: Բնագրերը համարյա նույնական են, եթե հաշվի չառնենք Աբրահամի թարգմանությանը բնորոշ աննշան փոփոխությունները: Վկայաբանությունը անքակտելիորեն կապված է նախորդ բաժնի հետ, որովհետև այստեղ նկարագրվող իրադարձությունները թվագրված են Բարբաշմենի մահվան տարեթիվով՝ «ի ժամանակին յորում պսակեցաւ սուրբն Բարբաշմէն...» (AMS 303, ԳՏՄ 173): Ուստի պատահական չէ, որ «Վկայք Արևելից» ժողովածուի հայերեն թարգմանության երկու ամբողջական ընդօրինակություններում (Մատենադարանի № 1522 և 3777 ձեռագրեր) «Վկայութիւն վկայիցն» անմիջապես հաջորդում է Բարբաշմենի վկայաբանությանը:

ը) 120 նահատակների վկայաբանությունը⁶⁹. Հալածանքների

⁶⁷ «Տասն» բառը, անշուշտ, գրչագրական սխալի հետևանք է:

⁶⁸ ASM 118—120, AMS 303—306, ԳՏՄ 173—176:

⁶⁹ ASM 105—109, AMS 291—295:

հինգերորդ տարում (344/345 թ.) Միջագետքի-Սելևկիայում դոհ-ված «111 արանց և 9 կանանց» վկայաբանությունը նույնպես մտնում է Շմավոն Բար-Սաբբայի սրբախոսական շարքի կազմի մեջ, սակայն քանի որ նրա մասին խոսք կլինի հաջորդ ենթագլխում (4. Յազտանդուխտի վկայաբանությունը), այստեղ բավական է նշել հետևյալը: Վկայաբանության հայերեն թարգմանությունը մեղ չի հասել: Այն մասին, որ նա իսկապես թարգմանված է եղել հայերեն, վկայում է «վկայք Արևելից» ժողովածուի հայերեն թարգմանության առաջաբանում պահպանված նրա վերնագիրը՝ «վկայեցին և այլ սուրբ արք ծ և կահայք ժ» (ԳՏՄ 3):

4. ՅԱԶՏԱՆԴՈՒԽՏԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ⁷⁰

Վկայաբանության մեջ պատմվում է Քարբա դը Բեթ-Սլոբցի⁷¹ մի առաքինի կնոջ՝ Յազտանդուխտի մասին⁷², որի ամուսինը ծառայում էր Ադիաբենի⁷³ կառավարիչ Շրդանի պալատում: Նա՝ «յոյժ ճոխացեալ», շարժում է իր ընկերների նախանձը, և վերջիններիս զրպարտությամբ Շրդանի կողմից մահապատժի ենթարկվում: Յազտանդուխտը նրդվում է մինչև կյանքի վերջը սուգ պահել և շամուսնանալ այլ մարդու հետ: Սակայն «քանզի ոչ գոյր իւր դաւակ, որ ժառանգէր զստացուածս իւր», շատ մեծամեծեր կամենում են կնության առնել նրան: Յազտանդուխտն ամեն անգամ մերժում է: Նա մերժում է նաև Աւշնասպին՝ Ադիաբենի մոգպետին, որը բաղմամբիվ, բայց անհաջող փորձերից հետո նույն Շրդանի մոտ զրպարտում է նրան, իբր «կին մի Յազտանդուխտ

⁷⁰ ԳՏՄ 157—165: Տե՛ս նաև *Тер-Петросян, Два памятника*.

⁷¹ Բնագրում՝ Բերուլաֆ ֆադաֆ, որը պետք է ուղղել՝ Բերսլաֆ. հմմտ. *Sht-r*-Միմասյան, Հետազոտություններ, էջ 72:

⁷² Ժողովածուի հայերեն թարգմանության երկու ընդօրինակություններում էլ (Մատենադարանի № 1522 և 3777 ձեռագրեր) Յազտանդուխտ (ասոր. *Yazdandūkt*) անունը պահպանված է Յեզանդուխտ և Յազտադուխտ աղավաղված ձևերով: Այս աղավաղված ձևերի սոսկ համադրումն արդեն հիմք է տալիս նախնական և ճիշտ համարել Յազտանդուխտ ձևը:

⁷³ Բնագրում՝ Խնդաբ, որը Ադիաբենի նահանգի ասորական *Hadyab* (Հեդա-յար) անվան աղավաղված ձևն է: Պետք է լինի՝ Խդեաբ: Հմմտ. ԳՏՄ 181:

անուն... միշտ պահաւք խնդրէ յԱստուծոյն իւրոյ շարութիւն ի վերայ թարգաւորութեան քո, զի զվրէժ առն իւրոյ ի ձեռաց քոց խնդրեսցէ» (ԳՏՄ 159): Շրդանը նրան բերել է տալիս իր մոտ և խիստ զգուշացնում. «Եթէ ոչ դառնաս ի խորհրդոյ այտի, և ի բաց թողուս զսուգ քո, և երկիր պագանես արեգական, հրաման տամ ի վերայ քո, զի շարաշար տանջանաւք և դառն մահուամբ հասցես առ այրն քո» (ԳՏՄ 160): Սակայն Յաղտանդուխտն անդրդվելի է մնում և արժանանում երկնային պսակին:

Առաջին հայացքից կարող է թվալ, թե այս պատմությունը կապ չունի «մեծ հալածանքների» շրջանի իրադարձությունների հետ: Սովորաբար «Վկայք Արեւելից» ժողովածուի վկայաբանություններում նախապես որոշ տեղեկություններ են տրվում համընդհանուր հալածանքների մասին, իսկ Յաղտանդուխտի պատմության մեջ դրանք բացակայում են: Սա դժվարացնում է նկարագրվող իրադարձությունների ժամանակի որոշումը և գործող պատմական անձնավորությունների պարզաբանումը: Այդ պատճառով անհրաժեշտություն է ծագում դիմել տվյալ ժամանակաշրջանին վերաբերող այլ սրբախոսական երկերի տվյալներին: «Վկայք Արեւելից» ժողովածուի բաժիններից մեկում՝ «120 նահատակների վկայաբանության» մեջ⁷⁴, պատմվում է հետևյալը: Հալածանքների հինգերորդ տարում (344/345 թ.), երբ արքայից արքան գտնվում էր Սեւեկիա-Տիգրոն մայրաքաղաքում, երկրի տարբեր շրջաններից բերվում և բանտ են նետվում բազմաթիվ քահանաներ, սարկավադներ, վանական եղբայրներ ու քույրեր: Բանտարկության վեց ամիսների ընթացքում ոմն Յաղտանդուխտ՝ Ադիաբենի Արբելա քաղաքից, շարունակ հոգում է նրանց սննդի և հագուստի կարիքները: Որոշ ժամանակ անց, ծանոթ մի ներքինուց տեղեկանալով բանտարկյալների մոտալուտ մահապատժի մասին, Յաղտանդուխտը մի օր առաջ բանտ է գալիս, մահապարտներին սպիտակ շորեր հագցնում, լվանում նրանց ոտքերը և խրախուսանք ու քաջալերություն կարդում: Մահապատժից հետո նա մարդիկ է վարձում և պատվով թաղում նահատակներին:

⁷⁴ Տե՛ս գլուխ Գ, 3 (ը):

ինչպես երևում է, այս պատմությունը կապ չունի քննության առարկա վկայաբանության բովանդակության հետ: Նրանց ընդհանրությունը միայն այն է, որ և՛ այնտեղ, և՛ այստեղ գործում է միևնույն հերոսահին: Այդ անձնավորությունների նույնությունը ապացուցվում է նրանց կերպարների մի քանի բնորոշ տվյալներով, որոնցից գլխավորը նրանց հաղվագյուտ անվան ընդհանրությունն է: Յագտանդուխտ (ասոր. Yazdandukt) անունը, որ կազմված է միջին պարսկերեն yazdan «աստված» և duxt «գուստր» բառերից, ասորերենում վկայված է միայն «Վկայք Արևելից» ժողովածուի մեջ⁷⁵: Այդ պատճառով չափազանց անհավանական զուգադիպությունմբ միայն նույն իրադարձությունների մասնակից կարող էր դառնալ ևս մի Յագտանդուխտ: Ընդհանուր անունից բացի ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ երկու դեպքում էլ հերոսահին ծագում է Ադիաբենից: Եթե ուշագրություն դարձնենք նաև մի քանի այլ մանրամասների վրա, ինչպես հերոսահինների հարստությունն է և նրանց կապը պալատական աստիճանավորների հետ (չմոռանալով, որ մեկի ամուսինն է պաշտոնյա, մյուսի՝ ծանոթ ներքինին), ապա միանգամայն պարզ կդառնա, որ նրանք իսկապես ներկայացնում են միևնույն պատմական անձնավորությունը: Սակայն չնայած հերոսահին նույնությանը, ըստ երևույթին, Յագտանդուխտի և 120 նահատակների վկայաբանությունները իրարից անկախ երկեր են և պատկանում են տարբեր հեղինակների: Այսպիսի եզրակացություն է թելադրում նախ՝ այն փաստը, որ Յագտանդուխտի վկայաբանության մեջ չի հիշատակված նրա գլխավոր վարմունքը՝ բարեգործությունը, որի անտեսումն անհերելի կլիներ գործին տեղյակ սրբախոսի համար, երկրորդ, որ երկու գործերում էլ Յագտանդուխտը անվանվում է «կին ոմն», այսինքն առանց վկայակոչելու մյուս՝ ծանոթ պատմությունը:

Հերոսահինների նույնության փաստի հաստատումով միաժամանակ ապացուցվում է, որ Յագտանդուխտի վկայաբանությունը, որի ասորական սկզբնագիրը կորած է շատ վաղուց, եթե նույնիսկ չի մտել «Վկայք Արևելից» ժողովածուի կազմի մեջ, գոնե, տնտա-

⁷⁵ SLⁿ Smith, Thesaurus syriacus, p. 1585.

բախույս, միևնույն դրական միջավայրի արգասիք է: Այս առթիվ ուշագրավ է, որ «Վկայք Արեւելից» ժողովածուի հայերեն թարգմանության առաջաբանում Յաղտանդուխտի վկայաբանությանը նախորդում է հենց 120 նահատակների վկայաբանության հիշատակությունը⁷⁶: Բացի այդ, «Վկայք Արեւելից»-ի հետ Յաղտանդուխտի վկայաբանության կապի մասին է խոսում նաև այն փաստը, որ վերջինիս պատմական տեղեկությունները համապատասխանում են ժողովածուի մյուս մասերի, հատկապես «Քարբա զը Բեթ-Սլոբի նահատակների վկայաբանության» տվյալներին⁷⁷: Քարբա զը Բեթ-Սլոբի նահատակները մահապատժի են ենթարկվում 343 թվականին Ադիաբենի կառավարիչ Արտաշի (ասոր. ʾArdašīr) և Քարբա զը Բեթ-Սլոբի մողպետ Ատըր-դոշնասպի (ասոր. ʾAdargōšnasp) հրամանով: Պարզվում է, որ Յաղտանդուխտի վկայաբանության մեջ նույնպես հանդես են գալիս այս պատմական անձնավորությունները, միայն թե ազավազված անունների տակ՝ Շրդան և Աշնասպ: Աշնասպ ձեռք բացատրելը հեշտ է՝ հայերեն ընդօրինակություններում պարզապես պահպանվել է (Աարգ)աշնասպ անվան երկրորդ մասը: Իսկ Շրդան-ը դժվար է բխեցնել Արտաշի անունից: Այնուամենայնիվ դա չի խանգարում նրան նույնացնել վերջինիս հետ՝ մի շատ կարևոր հանգամանքի շնորհիվ: Յաղտանդուխտի վկայաբանության մեջ Շրդանն իրեն անվանում է Շապուհ Բ արքայի եղբայրը. «Երդուեալ ի մեծ աստուածն Արամաղդ և ի բախտ եղբար իմոյ Շապհոյ արքայի...» (ԳՏՄ 160): Հայտնի է, որ Արտաշիը իսկապես Շապուհ Բ արքայի եղբայրն էր: Նույն պատմության տիտղոսով երկար ժամանակ Ադիաբենի վարչական և ռազմական կառավարիչն էր, իսկ եղբոր մահից հետո չորս տարով վերադեցրեց պարսից գահը՝ Արտաշի Բ (379—383)⁷⁸:

Այսպիսով, կասկածից վեր է, որ Յաղտանդուխտի վկայա-

⁷⁶ ԳՏՄ 3:

⁷⁷ BHO 807, ASM 99—101, AMS 286—289.

⁷⁸ Արտաշի մասին տե՛ս Nöldeke, Tabari, S. 70; Labourt, Le christianisme, p. 84; Peeters, Le passionnaire d'Adiabène, p. 264. Ավելի մանրամասն՝ Луконин, Культура Ирана, стр. 147.

բանության մեջ, հարկավ սրբախոսական գունավորումով, նկարագրված են իրական պատմական եղելություններ: Այս փաստը հնարավորություն է տալիս որոշել Յազտանդուխտի մահապատժի թվականը և համապատասխանաբար՝ նրա վկայաբանության հորինման մոտավոր ժամանակը: Այս նպատակով ուշադրություն պետք է դարձնել «Վկայք Արևելից» ժողովածուի հետևյալ ժամանակագրական տվյալներին: Ադիաբենի թագավոր Արտաշրի և Քարքա դը Բեթ-Սլոքի մոգպետ Ատրգոշնասպի համատեղ գործունեության մասին հիշատակվում է միայն Քարքա դը Բեթ-Սլոքի նահատակների մահապատժի առթիվ, որը տեղի է ունենում 343 թվականին⁷⁹: Արտաշիրը, որը շարունակում է կառավարել Ադիաբենը մինչև Շապուհ Բ արքայի մահը (379), ևս մի անգամ հանդես է գալիս 40 նահատակների վկայաբանության մեջ՝ 374/75 թվականների դեպքերի նկարագրության ժամանակ⁸⁰: Իսկ Ատրգոշնասպի անունը այլևս չի հանդիպում ժողովածուի ոչ մի բաժնում, և պետության հյուսիս-արևմտյան շրջանների քրիստոնյա բնակիչների հալածիչների դերում նույն 343 թվականից հանդես են գալիս ուրիշ մոգպետներ և մարդպաններ: Այդ պատճառով պետք է ենթադրել, որ Ատրգոշնասպի գործունեությունը սահմանափակվել է IV դարի 40-ական թվականների սկզբով: Հետևաբար, Յազտանդուխտի մահապատիժը տեղի է ունեցել 341—345 թվականների միջև ընկած ժամանակահատվածում, քանի որ 341 թվականը «մեծ հալածանքների» սկզբնական տարին է, իսկ 345 թվականի հետևելով է Յազտանդուխտի բարեգործության զրույցը⁸¹: Բանտարկված քրիստոնյաներին օգնելու զրույցը կարող էր ստեղծվել միայն Յազտանդուխտի մահից հետո, որովհետև այդ հերոսական, միաժամանակ վտանգավոր արարքի հրապարակային փառաբանումը նրա կենդանության օրոք, պատրաստի հանցանշան կդառնար և նրան կմատներ իշխանությունների ձեռքը: Պետք է կարծել, որ այս զրույցը Ադիաբենում մեծ հռչակ է վայելել, որովհետև այն

⁷⁹ AMS 286—289.

⁸⁰ AMS 325—347.

⁸¹ AMS 291—295.

վերապատմվում է ժողովածուի ևս մի բաժնում: Ակեփսիմայի, Հովսեփի և Այթալահի վկայաբանության մեջ⁸² պատմվում է, իբր 379 թվականին Յազտանդուխտը, կաշառելով բանտապահներին, իր սունն է բերում Հովսեփին և Այթալահին, դարմանում նրանց վերքերը, լվանում ոտքերը և ամեն խնամք տանելուց հետո վերադարձնում նորից բանա: Այս պատմությունն, անշուշտ, փոխ է առնված 120 նահատակների վկայաբանությունից (ժողովածուում կա նույնիսկ դրա վկայակոչումը՝ AMS 379): Այլապես անհնար է բացատրել բացահայտ ժամանակավրիպումը՝ Յազտանդուխտը միևնույն դերում հանդես է գալիս նախ 345 թվականին՝ 120 նահատակների մահապատժի ժամանակ, ապա 379 թվականին՝ Հովսեփի և Այթալահի նահատակության ժամանակ: Սրանից բխում է, որ Յազտանդուխտն ինքը նահատակվել է 379 թվականից հետո, իսկ սա անհար է, քանի որ, ինչպես փերը նշվեց, նա մեռած պետք է լինի 345 թվականից էլ առաջ: Յազտանդուխտի մահը չի կարելի դնել 379 թվականից հետո նաև այն պատճառով, որ ժողովածուի հեղինակի հավաստմամբ իսկ Հովսեփն ու Այթալահը «մեծ հալածանքների» վերջին ղոհներն էին⁸³: Սակայն, չնայած այս հակասություններին, Յազտանդուխտի հիշատակումը Ակեփսիմայի, Հովսեփի և Այթալահի վկայաբանության մեջ, ինքնին շատ հետաքրքիր փաստ է: Այստեղ իր արտացոլումն է գտել այն բանի վկայությունը, որ Յազտանդուխտի անձնավորությունը դարձել էր մի թափառող զրական կերպար, որը հանդես էր գալիս նահատակներին օգնողի և խորախուսողի դերում⁸⁴: Զարմանալի է միայն, թե ինչու այդպիսի ժողովրդականություն վայելող զրույցը վրիպել է Յազտանդուխտի վկայաբանության հեղինակի ուշադրությունից, չէ որ նման հերոսական արարքի նկարագրությունը նրա երկի դարդը կարող էր դառնալ: Սրան կարելի է, ըստ երևույթին միայն մի բացատրություն տալ, որ Յազտանդուխտի վկայաբանությունը գրվել է նրա բարեգործության մասին զրույցի ի հայտ գալուց

⁸² AMS 379.

⁸³ AMS 392—393.

⁸⁴ *St'n Peeters*, *Le passionnaire d'Adiabène*, p. 292.

առաջ: Եթե հաշվի առնենք, որ նման զրույցի ստեղծման և տարածման համար անհրաժեշտ կլինե՞ր առնվազն 10—15 տարի, ապա վկայաբանությունը պետք է թվագրել IV դարի 40—50—ական թվականներով⁸⁵: Նկարագրվող իրադարձություններին՝ վկայաբանության հորինման ժամանակի մոտիկությունն է վկայում նաև այն փաստը, որ Յաղտանդուխտի պատմությունն աչքի է ընկնում այնպիսի կենսագրական և կենցաղային մանրամասների առատությամբ, որոնք պարտադիր չեն կանոնական սրբախոսական հյուսվածքների համար:

Յաղտանդուխտի վկայաբանության հայերեն թարգմանությունը կատարված է, ամենայն հավանականությամբ, «Վկայք Արևելից» ժողովածուի մյուս մասերի հետ, V դարի 50-ական թվականներին և սլատկանում է Աբրահամ Խոստովանողի գրչին: Սա ապացուցվում է ինչպես թարգմանության ոճի և ներքին առանձնահատկությունների վերլուծությամբ, այնպես էլ մի շարք արտաքին փաստերով: Յաղտանդուխտի վկայաբանության հայերեն թարգմանության մեջ կրկնվում են նույն դարձվածքներն ու արտահայտությունները, որոնք հատուկ են Աբրահամի երկասիրության բոլոր մասերին: Նկատվում է ասորերենի նույնօրինակ ազդեցությունը: Կան զեպքեր, երբ Յաղտանդուխտի վկայաբանության առանձին նախադասություններ բառ առ բառ համընկնում են «Վկայք Արևելից» ժողովածուի հայերեն թարգմանության այլ հատվածների հետ: Հատկանշական է նաև, որ, ինչպես Աբրահամի թարգմանության բոլոր մասերում, այնպես և Յաղտանդուխտի վկայաբանության մեջ համարյա բոլորովին բացակայում է դերբայական դարձվածը: Բնագրագիտական տվյալներից բացի, Աբրահամ Խոստովանողի հեղինակությունն է վկայում նաև այն փաստը, որ Յաղտանդուխտի վկայաբանությունը հիշատակված է ժողովածուի հայերեն թարգմանության առաջաբանում (ԳՏՄ 3):

⁸⁵ Զպետք է տարօրինակ թվա այն հանգամանքը, որ այս զրույցը առաջին անգամ հանդիպում է 120 նահատակների վկայաբանության մեջ, որտեղ նկարագրվում են 345 թվականի իրադարձություններ: Այս հրկը նույնպես անմիջականորեն զեպքերից հետո ստեղծված չի կարող լինել:

Ինչպես արդեն նշվել է, առաջաբանում թվարկված են այն հուշարձանները, որոնց թարգմանությունը պատկանում է Աբրահամին⁸⁶: Պատահական չպետք է համարել նաև այն հանդամանքը, որ Յազտանդուխտի վկայաբանությունը առկա է ժողովածուի հայերեն թարգմանության երկու ամբողջական ընդօրինակություններում (Մատենադարանի № 1522 և 3777 ձեռագրեր), գրավելով իր որոշակի տեղը՝ Մեկսի վարբից և Բերբուի, Բարբաշմենի ու «Վկայութիւն վկայիցն» վկայաբանություններից առաջ⁸⁷:

5. ՄԵԼԵՍԻ ՎԱՐՔԸ⁸⁸

Մեկսի վարբը առանձնահատուկ տեղ է գրավում Մարութա նորկերտացու «Վկայք Արևելից» ժողովածուում, տարբերվելով մյուս մասերից՝ գրական տեսակով, շարադրանդանակով և բովանդակությամբ: Այս տարբերությունները մի անգամ ևս հաստատում են, որ «Վկայք Արևելից» ժողովածուն կազմված է զանազան հեղինակների պատկանող աշխատություններից⁸⁹: Այսպես.

ա) Մեկսի վարբն սկսվում է մի յուրահատուկ առաջաբանով, իսկ սա նշան է այն բանի, որ մենք գործ ունենք ինքնուրույն գրական ստեղծագործության հետ, քանի որ ժողովածուի մյուս բաժինները, հազվադեպ բացառությամբ, առաջաբան չունեն: Առաջաբանը նահատակներին նվիրված մի ներբողյան է, որտեղ հեղինակը փառաբանում է իր հերոսներին և տրտնջում, որ ի վիճակի չէ ըստ արժանվույն պատկերել նրանց առաքինությունները: Առաջաբանի բովանդակությունից պարզվում է, որ այն վերաբերում է ոչ թե մի հերոսի, այլ նահատակների մի ամբողջ խմբի: Այսպիսով, «Վկայք Արևելից» ժողովածուում Շմալոն Բար-Սաբբայի և ադիաբենցի նահատակների սրբախոսական շարքերի կողքին առանձնանում է նաև Մեկսի շարբը, որն ընդգրկում է

⁸⁶ Հմմտ. գլուխ Գ, 1:

⁸⁷ Տե՛ս գլուխ Ա, աղյուսակ 2:

⁸⁸ ASM 60—80, AMS 260—275, ԳՏՄ 177—187:

⁸⁹ Հմմտ. գլուխ Ա, էջ 13:

առաջաբանը, Մելեսի վարքը, Բարշեբիայի վկայաբանությունը⁹⁰ և Դանիելի ու Վարդայի վկայաբանությունը⁹¹: Վերջին երկուսը Մելեսի վարքի հետ կապված են հետևյալ ժամանակագրական վկայակոչումներով. «Այն ժամանակ, երբ երանելի Մելեսն արժանացավ պսակի, Պարսից աշխարհում կար մի վանահայր Բարշեբիա անունով» (AMS 281) և «Երանելի Մելեսի մահից երկու տարի անց ձեռքակալվեցին Դանիել քահանան և Վարդա հավատավորը» (AMS 290):

բ) Մելեսի պատմությունը վառ է և այդ պատճառով չի համապատասխան ժողովածուի պահանջներին, որտեղ ընդգրկված են միայն վկայաբանություններ: Սրբախոսության այս երկու ենթատեսակների տարբերությունը շատ հստակ արտահայտված է «Վկայք Արեւից» ժողովածուում: Վկայաբանություններում, որպես կանոն, պատումն սկսվում է նահատակի և նահատակողի հակասության ծագման պահից: Ընդ որում, սովորաբար, նահատակի մասին ոչ մի կենսագրական տեղեկություն չի տրվում: Այնինչ վարքը իսկական կենսագրություն է, որն արտացոլում է հերոսի կյանքի հիմնական փաստերը, դրանք հարստացնելով տեսակին հատուկ անհրաժեշտ մանրամասներով: Այդպես են, օրինակ, Եփրեմ Ասորու, Հակոբ Մծբնացու, Ռաբբուլայի, Մաշտոցի և այլոց վարքերը: Մելեսի վարքը այս առումով ոչնչով չի տարբերվում նրանցից: Վարքի առանձնահատկություններից է նաև այն, որ հեղինակն իր հերոսին հաճախ կապում է ժամանակի հոլակալոր անձնավորությունների հետ: Այսպես, Եփրեմը շփվում է Բարսեղ Մեծի և Հակոբ Մծբնացու, Մար-Ավգենը՝ Միլեսի և Հակոբ Մծբնացու, Մաշտոցը՝ Ակակի և Բաբելասի⁹² հետ: Իհարկե, այս հարաբերություններից շատերը կարող են պատմական լինել, բայց մեծ մասամբ դրանք ստեղծվում են սրբախոսների կողմից՝ իրենց հերոսներին մեծարելու նպատակով: Այս դրական

⁹⁰ ASM 93—95, AMS 281—284.

⁹¹ ASM 103—104, AMS 290.

⁹² Հայագիտության մեջ, նույնացվում է Եղևսիայի Երկու Լպիսկոպոսների՝ Պարիզասի կամ Ռաբբուլայի հետ:

հնարանքում կարելի է նկատել ավետարանական և պարականոն-
ավետարանական գրականությունների ավգեցությունը, որտեղ
շարունակ ընդգծվում է բրիստոնյա քարովիչների և տասներկու
առաքյալների կապը: Վարքերին բնորոշ այս առանձնահատուկ-
ությունը իր արտահայտությունն է գտել նաև Մեկեսի վարքում:
Վերջինս շփվում է հռչակավոր անապատական Անտոնի աշակերտ
Ամմոնի և Հակոբ Մծբնացու հետ: Իսկ վկայաբանություններում
այս հանգամանքը բացակայում է:

դ) «Վկայք Արևելից» ժողովածուի վկայաբանությունների
կորիզը կազմում է ջատագովական երկխոսությունը նահատակի
և նահատակողի միջև, որի օգնությամբ հեղինակը հասնում է
կերպարների բացահայտմանը և բրիստոնեական գաղափարների
տարածմանը: Վարքերում հերոսը նույնպես կարող է երբեմն վի-
ճաբանությունների մեջ մտնել, ճառել, քարոզել, աղոթել և այլն,
բայց նրա կերպարը դրսևորվում է հիմնականում պործողությու-
նների մեջ: Մեկեսը թեև նույնպես ի վերջո նահատակվում է, և կարելի
էր սպասել, թե այս հանգամանքը վարքագրին կստիպեր տուրք
տալ վկայաբանական ավանդույթին և կառուցել երկարաշունչ
երկխոսություններ, այնուամենայնիվ, դրա վրա նա առանձին
սշադրություն չի դարձնում, ելնելով, ըստ երևույթին, վարքագրու-
թյան պահանջներից:

դ) Ժողովածուի վկայաբանությունները բացարձակապես իրա-
պատում են, այնինչ Մեկեսի վարքը, փաստական կողմի արժանա-
հավատությամբ հանդերձ, լի է վանազան հրաշքների և սքանչելիք-
ների նկարագրություններով: Մինչդեռ ժողովածուի մյուս մա-
սերում չենք հանդիպում ոչ մի հրաշքի նկարագրության, Մեկեսի
վարքում դրանք տասից ավելի են: Այսպես, Մեկեսը անեծքով
կործանում է մի ամբողջ քաղաք, պատառոտում ամհհի վիշա-
պին, բորոտություն առաջացնում, քայլում ջրերի վրայով, հեռակա
ողջացնում անդամալուծների և այլն: Հրաշքների նկարագրու-
թյունը նույնպես թեկադրվում է տեսակի պահանջով, որովհետև
վարքագրական հերոսին սովորաբար վերագրվում է քարոզչական,
առաքելական գործունեություն: Իսկ սա ինքնըստինքյան ենթա-
դրում է հրաշքների անհրաժեշտություն՝ հեթանոսներին քրիստո-

նեական հավատի ճշմարտացիության և ամենազորության մեջ համոզելու համար⁹³։ Սակայն տվյալ դեպքում հրաշքների առատությունը պայմանավորված է, ըստ երևույթին, ոչ միայն տեսակի պահանջով, այլ նաև հեղինակի անհատական ճաշակով։ Այդ պատճառով դժվար է ենթադրել, որ Շմավոնի, Գուշթազատի, Թերբուի, Շահդադի, Թեկդի իրապատում վկայաբանություններն ու Մելեսի հրաշապատում վարքը պատկանում են միևնույն հեղինակին։

Մելեսի վարքի թվագրման համար հարկ է կրկին դիմել վարքագրական և վկայաբանական տեսակների տարբերություններին։ Որպես վարքի հեղինակ սովորաբար հանդես է գալիս որևէ ժամանակակից անձնավորություն, հաճախ հերոսի աշակերտը։ Օրինակ, Բարսեղ Մեծի, Մար-Ավգենի և Մաշտոցի վարքերը գրված են նրանց աշակերտների՝ Ելլադիոսի, Մար-Միքայելի և Կորյունի կողմից։ Ինչ վերաբերում է վկայաբանություններին, ապա նրանք կարող են ստեղծվել նաև հետագայում՝ բանավոր զրույցների կամ հուշազրույթությունների հիման վրա, որովհետև նրանց համար կարելիություն չունեն նկարագրվող իրադարձությունների ճշգրտությունն ու հաջորդականությունը։ Պատահական չէ, որ վկայաբանությունների հեղինակները մեծ մասամբ անհայտ են, մինչդեռ վարքագիրները համարյա միշտ իրենց մասին հիշատակություն են թողնում սեփական երկերում։ Մելեսի վարքն, ըստ երևույթին, նույնպես ստեղծված է ժամանակակիցի կողմից, Մելեսի մահից (341) անմիջապես հետո, քանի որ հիմքեր կան կարծելու, որ այն IV դարի երկրորդ կեսին գրված՝ Մար-Ավգենի վարքի աղբյուրն է⁹⁴։ V դարի սկզբին Մելեսի վարքը տեղ է գրավում Մարութա նփրկերտացու ժողովածուում, որովհետև Մելեսը, ինչպես ժողովածուի բոլոր հերոսները, զոհ է գնում պարսից քրիստոնյաների հալածանքներին⁹⁵։

⁹³ Հմմտ. Մարկոս, 16, 17—18։

⁹⁴ AMS—3 376—481։

⁹⁵ Վարքի և վկայաբանության ուրիշ տարբերությունների մասին մանրամասն տե՛ս *Истока*, стр. 67—68, 208—209. Ավուլբեգյան, Մկրչավորումը, էջ 58—77։

Լինելով ասորական գրականության ամենավաղ ստեղծագործություններից մեկը, Մեղեսի վարքը միաժամանակ կարևոր աղբյուր է Պարսկաստանի կրոնական հարաբերությունների պատմության համար: Այն արժեքավոր տեղեկություններ է տալիս սասանյան տերության տարբեր նահանգներում (Վրկան, Էլամ, Մեսենե) քրիստոնեության տարածման, ինչպես նաև պարսից եկեղեցու ներքին կյանքի մասին: Սա նաև միակ աղբյուրն է, որ հիշատակություն է պահպանել Շոշի բնակիչների ապստամբության մասին, որի հետևանքով քաղաքն ավերվել է Շապուհ Բ արքայի կողմից⁹⁶:

IV դարի նշանավոր եկեղեցական գործիչ Մեղես Եպիսկոպոսի կենսագրությունը հայտնի է հիմնականում շնորհիվ նրա վարքի: Նրան հիշատակող մյուս հուշարձանները առանձին հետաքրքրություն չեն ներկայացնում, քանի որ նրանց տվյալները դարձյալ ծագում են վարքից⁹⁷: Սակայն Մեղեսի վարքը ամենևին էլ նրա կենսագրության համակարգավորված շարադրանքը չէ: Ինչպես վերը նշվեց, այստեղ կան շատ հրաշալի դրվագներ և բանահյուսական զրույցներ: Ավելին, մասնագետների կողմից իրավացիորեն կասկածի է ենթարկվում նույնիսկ այնպիսի ճշմարտանման տեղեկությունների հավաստիությունը, ինչպիսին է, օրինակ, Մեղեսի առնչությունը Ամոնի և Հալոբ Մծենացու հետ⁹⁸: Այնուհանդերձ, դժվար է համաձայնել Լաբուրի այն մտքին, թե վարքում խառնված են երկու տարբեր Մեղեսների մասին եղած զրույցներ, որոնցից մեկը վերաբերվում է Մեղես Եպիսկոպոսին, մյուսը՝ Մեղես վանականին⁹⁹: Ավելի հավանական է թվում Ավգերյանի կարծիքը՝ միևնույն Մեղես Եպիսկոպոսի մասին երկու տարբեր զրույցների գոյության վերաբերյալ: Այս զրույցներից առաջինը պատմվում է Մեղեսի վարքում, երկրորդը՝ հայոց «Հառանց վարքում» և զպտական Հայսամավուրքում¹⁰⁰:

⁹⁶ Տե՛ս Nöldeke, Tabari, S. 58.

⁹⁷ Տե՛ս Sozomenus, Kirchengeschichte, S. 68—69; Gismondi Mari, p. 7; Ասորական, հայկական, հունական, զպտական Հայսամավուրքներ:

⁹⁸ Տե՛ս Labourt Le christianisme, p. 72; Vööbus, History, p. 217.

⁹⁹ Տե՛ս Labourt, Le christianisme, p. 72.

¹⁰⁰ Տե՛ս Ավգերյան, Վարք սրբոց, հ. Բ, էջ 353:

Մեկեսը ծնվել է III դարի երկրորդ կեսին պարսից Վրկան աշխարհում: Երիտասարդ հասակում քրիստոնեություն ընդունելով, նա շրջում է երկրի տարբեր նահանգներում: Լինում է Բեթ-լապատում, ապա երեք տարի քարոզում էլամ աշխարհի Շոշ քաղաքում: Այս գործունեության համար, նա բեթլապատցի Գադիյաբի (հայ. Գդեայ) կողմից եպիսկոպոս է ձեռնադրվում: Սակայն Մեկեսի քարոզչությունը Շոշի «հեթանոսների» մեջ հաջողությամբ չի պսակվում, և նա ստիպված է լինում լքել այդ քաղաքը: Այնուհետև նա, ըստ երևույթին, քաշվում է անապատ և ճգնավորական կյանք վարում: Այդ են վկայում ինչպես վարքի տվյալները, այնպես նաև ղպտական Հայսամավուբբը, ըստ որի, Մեկեսը ամբողջ կյանքն անց է կացնում լեռներում և քարանձավներում¹⁰¹: Սակայն հակառակ այս տեղեկության, Մեկեսը երուսաղեմ և Ալեքսանդրիա կատարած այցելություններից հետո, բուռն քաղաքական գործունեություն է ծավալում: Նա որոշ ժամանակ անց է կացնում Մծբինում, նշանավոր Հակոբ եպիսկոպոսի մոտ, և նրան նյութական օժանդակություն ցույց տալիս նոր եկեղեցու կառուցման գործում: Ապա անցնում է Տիվբոն, որտեղ մասնակցում է քաղաքի եպիսկոպոս Պապայի դատավարությանը¹⁰²: Վերջինս մեղադրվում էր այն բանում, որ «հակառակութեամբ կայր ընդդէմ եպիսկոպոսաց բազմաց և անարգէր ղերիցունս և զսարկաւապունս իւրոյ քաղաքին» (ԳՏՄ 181, ԱՄՏ 266—267): Վարքը Մեկեսին մեծ դեր է հատկացնում Պապայի մերկացման և դատապարտման գործում: Մեկեսի մասին՝ որպես Պապայի հակառակորդի, հիշատակվում է նաև կաթողիկոս Դադ-Իշոյի ժողովի (424) արձանագրություններում և Պապայի անվավեր թղթակցության մեջ¹⁰³: Այս բոլոր փաստերը խոսում են իհարկե, Մեկեսի վայելած մեծ հեղինակության մասին:

¹⁰¹ ASM 63.

¹⁰² Վեստֆալը, հիմնվելով Շմավոնի վկայաբանության և Մեկեսի վարքի տվյալների վրա, կարծում է, որ Պապայի դատավարությունը տեղի է ունեցել 313/314 թ. (տե՛ս Westphal, Untersuchungen, S. 60—62, 82—84).

¹⁰³ Տե՛ս Braun, Synhados, S. 51; Chabot, Synodicon, pp. 46, 289—290; Braun, Briefwechsel, S. 163, 546.

Որոշ ժամանակ անց, երբ Պապան արևմտաասորական եպիսկոպոսների օգնությամբ վերականգնում է իր իրավունքները, Մելեսը կրկին հարկադրվում է հեռանալ և ճգնաժողովական կյանք վարել, այս անգամ արդեն Պարսկաստանի հարավային նահանգներից մեկում՝ Մեսենում։ Սակայն սա երկար չի շարունակվում։ Մելեսը նորից եռանդուն քարոզչական գործունեություն է ծավալում և դրա համար էլ վերջ ի վերջո մահապատժի ենթարկվում։ Դա տեղի է ունենում IV դարի քառասնական թվականների սկզբին, երբ Մելեսը գտնվում էր իր հայրենի վրկան աշխարհում։ Երկրի կոստակալը՝ Որմիզդը, ձերբակալում է Մելեսին և նրա երկու աշակերտներին՝ Աբորսամ քահանային¹⁰⁴ ու Սինէ սարկավադին, և մի տարվա բանտարկությունից հետո մահապատժի ենթարկում։ Ըստ ավանդության, Մելեսի մահվան թվականը «մեծ հալածանքների» առաջին տարվա (341) նոյեմբերի տասներեքն է։ Սակայն Լաբուրը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մելեսի անունը առաջինն է «411 թվականի նահատակների ցուցակում»¹⁰⁵, հնարավոր է համարում, որ Մելեսի մահը կարող էր նախորդած լինել «մեծ հալածանքներին»¹⁰⁶։ Սա, իհարկե, բացառված չէ, քանի որ վարքում «մեծ հալածանքների» մասին ակնարկ անգամ չկա։

Մելեսի անձնավորությունը հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն պարսից եկեղեցու, այլ նաև ասորական մշակույթի պատմության համար, քանի որ տեղեկություններ են պահպանվել նրա գրական ստեղծագործության մասին։ Նեստորական եպիսկոպոս Աբդ-Իշոյի մատենագիտական ցանկում նշվում է, որ Մելեսը «գրել է այլևայլ բովանդակության թղթեր և ճառեր»¹⁰⁷։

Մելեսի վարքը ներկայացված է հարուստ ձևազրական ավանդությունով։ Այն պահպանվել է բազմաթիվ ասորական ձեռագրերում, որոնցից հնագույնները ծագում են V դարից (վատիկան-

¹⁰⁴ Հայերեն թարգմանության մեջ Աբորսամ-ը թարգմանչի կամ գրիչների ստուգարանությամբ դարձել է՝ Աբրահամ։

¹⁰⁵ Nau, Un martyrologe, p. 23.

¹⁰⁶ Sbe's Labourt, Le christianisme, p. 72.

¹⁰⁷ J. S. Assemani, Bibliotheca orientalis, t. 3, p. 51.

յան N 160 և Բրիտանական թանգարանի N 17204 ձեռագրեր): Ընդօրինակությունների հնությունն, իհարկե, մեծ չափով տալահովում է բնագրի հարազատությունը:

Մեկեսի վարքի հայերեն թարգմանության մասին հետազոտողների կողմից հակասական կարծիքներ են հայտնված: Նորայր Բյուզանդացին նշում է, որ վարքի «ոճն շատ հեռի է Աբրահամ խոստովանողի ամենաընտիր ոճէն» և թարգմանությունը կատարված է «իւիք իւիք փոփոխութեամբք և զեղջմամբք»¹⁰⁸, Հետագայում Ե. Տեր-Մինասյանն ապացուցեց, որ «Վկայք Արևելից» ժողովածուի հայերեն թարգմանության մեջ պահպանված Մեկեսի վարքը թարգմանված է ասորերենից և հարազատորեն հետևում է սկզբնագրին, «առանց սակայն սրանով որոշելու թարգմանչի և թարգմանության ժամանակի խնդիրը»¹⁰⁹: Այս տարածայնությունների պատճառները պարզելիս, մենք բախվեցինք մի հետաքրքիր փաստի հետ: Մեկեսի վարքի հայերեն ընդօրինակությունների և հրատարակված բնագրերի վերլուծությունը ցույց տվեց, որ գոյություն ունի վարքի երկու թարգմանություն, մեկը՝ ասորերենից, մյուսը՝ հունարենից: Այս հանգամանքն է, որ հայագիտության մեջ թյուրիմացություն է առաջացրել և առիթ հանդիսացել իրարամերձ կարծիքների ստեղծման: Բյուզանդացին և Տեր-Մինասյանը պարզապես տվյալ դեպքում իրենց կարծիքները հիմնավորում են տարբեր բնագրերի տվյալներով:

Մեկեսի վարքի ասորերենից կատարված հայերեն թարգմանությունը պահպանվել է Մատենադարանի N 1522 և 3777 ձեռագրերում, այսինքն՝ «Վկայք Արևելից» ժողովածուի երկու ամբողջական ընդօրինակություններում, և հրատարակված է Գ. Տեր-Մկրտչյանի կողմից (ԳՏՄ 177—187):

Թարգմանությունը հիմնականում բառացի է, սակայն դրանով չի խախտված շարադրանքի սահունությունը: Մասնակի փոփոխություններն ու հավելումները առանձին նշանակություն չունեն: Հայերեն թարգմանության մեջ պակասում են նախօրինակի սկզբի

¹⁰⁸ Բյուզանդացի, *Քննասէր*, էջ 52:

¹⁰⁹ Տեր-Մինասյան, *Հետազոտություններ*, էջ 78—80:

և վերջի հատվածները (երկուական էջ ըստ Բեջանի հրատարակության)¹¹⁰։ Սակայն այս հատվածների բացակայության պատճառները նույնը չեն. վարքի առաջաբանը փոփոխված և կրճատված է, իսկ վերջին երկու էջերը պարզապես կորել են։

Մեկեսի վարքի հայերեն թարգմանության ասորական ծագման ապացույց են բնագրում պահպանված բաղմամբիվ ասորաբանությունները։ Վարքում սկզբնագրի լեզվի հետքերի հայտնաբերման վաստակը պատկանում է Ե. Տեր-Մինասյանին։ Այնպես որ կարելի է բավարարվել նրա փաստարկների կրկնությամբ, կատարելով միայն առանձին լրացումներ¹¹¹։

Առաջինը, որ անմիջապես աչքի է զարնում, այն է, որ թարգմանիչը ստրկորեն պատճենում է հայոց լեզվին խորթ ասորական արտահայտություններն ու բառակապակցությունները, ինչպես, օրինակ, «այր մի աբեղայ»՝ *gabrā had 'abīlā* (ԳՏՄ 180, AMS 265)*, «այր մի միանձն»՝ *gabrā had yihīdāyā* (ԳՏՄ 183, AMS 268), «զխաւոր աբեղայից»՝ *rēšā d-'abīlē* (ԳՏՄ 180, AMS 265)*, «աշտիճանէ յաշտիճան»՝ *men drag la-drag* (ԳՏՄ 179, AMS 264), «յեզրէ յեզր»՝ *men rēš l-rēš* (ԳՏՄ 180, AMS 266)*։ Ինչպես նշվեց ներկա աշխատության երկրորդ գլխում, թեև նման ձևերը հայոց լեզվում հնարավոր են, սակայն նրանց հաճախակիությունը անկասկած պայմանավորված է սկզբնագրի թելադրանքով։

Թերևս ասորական ազդեցություն պետք է դիտել նաև հայերեն թարգմանության «Իմ ժամանակը են» նախադասության մեջ (ԳՏՄ 181)։ Ինչպես երևում է, այստեղ տրամաբանական ենթական արտահայտված է հայերենի համար անսովոր սեռական խնդրով։ Այսպիսի կառուցվածք գրաբարում հանդիպում է միայն անորոշ դերբայով և օժանդակ բայով կաղմված ստորոգյալի դեպքում։ Իսկ նշված միտքը գրաբարում կարող էր հաղորդվել միայն «Ինձ ժամանակը են» ձևով, այսինքն՝ մի նախադասությամբ, որի տրամաբանական ենթական արտահայտված է տրական խնդրով։

¹¹⁰ AMS 260—262, 273—275.

¹¹¹ Տեր-Մինասյանի օինակները տրվում են աստղանիշով։

Ասորական սկզբնագրի Zabnā 'it lī (AMS 266) նախադասության lī տրամաբանական ենթական ունի ընդհանրապես թեքական իմաստ և համապատասխանում է ինչպես հայերեն սեռական (իմ), այնպես և տրական (ինձ) հոլովին: Ճիշտ թարգմանության դեպքում թարգմանիչն, իհարկե, պետք է ընտրեր երկրորդ ձևը, սակայն նրա սխալն ինքնին նշանակալից է այնքանով, որ կատարված է ոչ թե պատահաբար, այլ ասորական շարահյուսական կառուցվածքի ընձեռած հնարավորության շնորհիվ:

Հալերեն թարգմանության հետևյալ առանձնահատկությունները նույնպես ցույց են տալիս, որ այն կատարված է ասորական սկզբնագրից: Շոշ քաղաքի ասորական անվանումը՝ Šūšan birtā-ն, հայերեն թարգմանված է՝ «Շուշանն Աշտարակ» (AMS 264, ԳՏՄ 179)*: Երկու անգամ անփոփոխ է թողնված ասորերեն tarmālā «մախաղ» բառը՝ «տարմալ» ձևով (AMS 265, 267, ԳՏՄ 180, 182)*: Mayšān աշխարհի անունը հայերեն թարգմանության մեջ տվել է «Մելան» ձևը՝ «Մեշան»-ի փոխարեն (AMS 268, ԳՏՄ 183): Իսկ «շ» և «լ» տառերի շփոթություն կարող էր առաջանալ միայն ասորական սկզբնագրից թարգմանվելու դեպքում: Հունական Μεσῆγι ձևը, որի հնարավոր հայկական ձևերն են «Մեսեն» կամ «Մեսան», չէր կարող առիթ տալ նման շփոթության:

Այսպիսով, ակնհայտ է, որ Մելեսի վարքի նշված տարբերակի հայերեն թարգմանությունը կատարված է ասորերենից: Ինչ վերաբերում է թարգմանչի անձնավորության և թարգմանության ժամանակի խնդրին, ապա մեր համոզմամբ, այս դեպքում ևս մենք գործ ունենք Աբրահամ խոստովանողի աշխատասիրության հետ: Այդ են վկայում մեզ արդեն ծանոթ հետևյալ հանգամանքները.

ա) Մելեսի վարքը առկա է «Վկայք Արևելից» ժողովածուի հայերեն թարգմանության երկու ամբողջական ընդօրինակություններում (Մատենադարանի № 1522 և 3777 ձեռագրեր):

բ) Մելեսի մասին հիշատակվում է ժողովածուի հայերեն թարգմանության առաջաբանում, ավելին, այստեղ տրված է նաև վարքի չափազանց համառոտ շարադրանքը (ԳՏՄ 3—4):

Հարկ է նշել, որ այս վկայությունները հաստատվում են նաև բնագրական վերլուծության տվյալներով: Մեկեսի վարքի հայերեն թարգմանությունը լիովին համապատասխանում է Ասեմանու պատրաստած ասորերեն բնագրին, շատ տարբերով շեղվելով Բեջանի հրատարակությունից: Հայտնի է, որ Ասեմանու բնագիրը կազմված է վարքի հնագույն ընդօրինակության հիման վրա (վատիկանյան № 160 ձեռագիր), իսկ Բեջանն օգտագործել է նաև ուշ շրջանի ընդօրինակություններ: Անշուշտ, հայերեն թարգմանության համապատասխանությունը սկզբնագրի հնագույն ընդօրինակությանը ինչ-որ չափով ցույց է տալիս նաև հենց իր վաղեմությունը: Ավելորդ չէ ընդգծել, որ Մեկեսի վարքի հայերեն թարգմանության մեջ իրենց արտացոլումն են գտել Աբրահամ խոստովանողի համարյա բոլոր թարգմանչական սկզբունքները¹¹²:

Մեկեսի վարքի հայերենով հայտնի երկրորդ տարբերակը թարգմանված է հունարենից: Այն պահպանվել է Մատենադարանի № 992 (1651), Երուսաղեմի հայ պատրիարքարանի № 9 (XVI դ.), վենետիկյան Մխիթարյանների № 200 (1224) և № 232 (1857) ձեռագրերում: Հրատարակված է երկու անգամ վենետիկյան ձեռագրերի հիման վրա¹¹³:

Մեկեսի վարքի այս տարբերակը շատ կողմերով տարբերվում է ինչպես ասորական սկզբնագրից, այնպես նաև Աբրահամ խոստովանողի հայերեն թարգմանությունից: Նախ՝ այն ծավալով փոքր է նշված երկու բնագրերից, չնայած ամբողջովին հաղորդում է Մեկեսի վարքի բոլոր դրվագները: Երկրորդ՝ այս տարբերակում տեղ են գտել հույն թարգմանչի անձնական մեկնաբանություններ: Օրինակ, ելնելով այն փաստից, որ Մեկեսի մասին վարքում ասված է «և ի մանկութենէ կնքեալ էր լինել սպասաւոր երկրաւոր արքային» (AMS 263, ԳՏՄ 178), թարգմանիչը եզրակացնում է, որ Մեկեսն սկզբում պարսից բանակի ղեկավար է եղել: Կամ, Շոշ քաղաքը հիշատակելիս, թարգմանիչն ավելացնում է. «ուր Դանիէլ մարգարէ զտեսիլն ետես» (վՎՍ—2 33): Երրորդ՝ այս

¹¹² Հմմտ. գլուխ Բ, 2:

¹¹³ Տե՛ս Ավգուշյան, Վարք սրբոց, հ. Ը, էջ 331—356. վՎՍ—2 33—37:

տարբերակում կրճատված են Մեկեսի հրաշագործությունների նկարագրությունները: Ուշագրավ է նաև այն փաստը, որ այստեղ պատմվում է Մեկեսի և Մար-Ավգենի (բնագրում՝ Մարուգէ) հարաբերությունների մասին: Բացակայելով և՛ ասորական սկզբնաղբում, և՛ Աբրահամի թարգմանության մեջ, այս հատվածը լիովին համընկնում է նույն Մար-Ավգենի վարքում շարադրված Մեկեսի պատմության հետ¹¹⁴:

Մեկեսի վարքի համառոտ հայերեն թարգմանության սկզբնաղբի լեզվի որոշումը առանձին զեմարություն չի ներկայացնում: Քանի որ վարքի հունարեն թարգմանությունը կորած է, այս խնդրի լուծման համար կարևոր նշանակություն էին ստանում Բարսեղյան¹¹⁵ և Կոստանդնուպոլսյան¹¹⁶ Հայսմավուրքներում պահպանված համառոտ հունարեն բնագրերը: Հայերեն թարգմանությունը շատ ընդհանրություններ ունի հատկապես Կոստանդնուպոլսյան Հայսմավուրքի պատմության հետ:

Հայերեն թարգմանության հունական նախօրինակի մասին են վկայում նախ և առաջ հատուկ անունների ձևերը.

Անտոնիոս (ՎՎՍ—2 33)— Ἀντωνιος (SEC 220) — Antōn (AMS 265).

¹¹⁴ Մար-Ավգենի վարքը (AMS—3 376—480, ՎՎՍ—2 83—107) հայ մատենագրության մեջ հայտնի է Հակոբ Մծբնացու անունով, որովհետև վերջինս նրա գլխավոր հերոսներից մեկն է: Այս առթիվ տե՛ս Մելիքյան, Հայաստրական հարաբերություններ, էջ 75: Մեկեսի վարքի հայերեն թարգմանության և Մար-Ավգենի (Հակոբ Մծբնացու) վարքի հայերեն թարգմանության կապը նշված հատվածում ակնհայտ է (ՎՎՍ—2 34—35՝ «Եւ զկնի... տեսանել զմիմեանս» = ՎՎՍ—2 101—102՝ «Զկնի այսորիկ... տեսանել զմիմեանս»): Շատ ղեկներում հայերեն այս թարգմանությունները համընկնում են նույնիսկ բառ առ բառ: Այդ պատճառով պետք է ենթադրել, որ Մեկեսի և Մար-Ավգենի հանդիպման պատմությունը Մեկեսի վարք է ներմուծվել կամ հայ թարգմանչի կողմից, կամ էլ հունարենից թարգմանելու ժամանակ, հաշվի առնելով բնագրերի նույնությունը, վերջինս օգտվել է Մար-Ավգենի (Հակոբ Մծբնացու) վարքի պատարասի հայերեն թարգմանությունից:

¹¹⁵ ASM 61—62.

¹¹⁶ SEC 220—221.

Այստեղ պահպանված է հունական անունների *օհ* ածանցը, որը բացակայում է ասորական ձևում:

Մեկէպօլիս (ՎՎՍ—2 33)—Tēlēpōlīz (SEC 220)—? (AMS 265).

Հունարեն բնագրի Tēlēpōlīz-ը հայերեն թարգմանության մեջ դարձել է Մեկէպօլիս հավանաբար հայոց «Տ» և «Մ» տառերի նմանության պատճառով: Սա սովորական գրչագրական սխալ է և ձեռագրերում պահպանվում է ոչ հազվադեպ:

Փիլիպպոս (ՎՎՍ—2 34)—? (SEC?)—Pāpā (AMS 266).

Սեկեկիա-Տիզբոն քաղաքի եպիսկոպոս Պապայի անունը տարօրինակ կերպով ստացել է Փիլիպպոս ձևը, մինչդեռ ասորերենից կատարված հայերեն թարգմանության մեջ պահպանված է Պապա ձևը (ԳՏՄ 181): Առեղծվածի բանալին տալիս է Մար-Ալզենի վարքի հայերեն թարգմանությունը, որտեղ այս անունը վերարտադրված է Փապպոս և Փիպպոս ընթերցվածքներով¹¹⁷: Ըստ երևույթին, այս վերջին ձևն է, որ գրիչների ստուգաբանությամբ դարձել է Փիլիպպոս:

Տիֆսիփոն (ՎՎՍ—2 35)—Kṯṯṣpōn (SEC 220)—Qtīsipōn (AMS 266).

Ինչպես երևում է, Տիֆսիփոն ձևը կարող էր ստացվել և՛ հունարենից թարգմանվելիս, և՛ ասորերենից: Սակայն, ըստ երևույթին, այս ձևը նույնպես ծագում է հունական բնագրից, քանի որ ասորերենից կատարված հայերեն թարգմանության մեջ ունենք Տիզբոն:

Միստոփարէս (ՎՎՍ—2 36)—Mṣṣpōrṣ (SEC 220)—Hōr-mīzd (AMS 271).

Հայերեն թարգմանությունն այստեղ պահպանել է վրկանի կուսակալի անվան և տիտղոսի (Hōrmīzd Gūprīz) հունական աղ-ճառված ձևը:

Եբբորի (ՎՎՍ—2 36)—Eḇḇōr (SEC 220)—'Abūrsam (AMS 260).

Այստեղ հայերեն և հունարեն թարգմանությունները մի կողմից, իսկ ասորերեն բնագիրը մյուս կողմից, տալիս են բոլորովին տարբեր անուններ:

¹¹⁷ ՎՎՍ—2 102.

Բացի հատուկ անունների ձևերից, հայերեն թարգմանությունն ու հունական Հայսմավուրքի պատմությունը համընկնում են նաև այլ էական կետերում: Այսպես, հայերեն թարգմանության մեջ պահպանված է հույն թարգմանչի ծանոթագրությունը Շոշ քաղաքի մասին.

Հայ. քարգմանություն

Հուն. Հայսմավուրք

...ի Մելեպոլիս, որ Դանիել մարգարէ զտեսիլն ետես:

(ՎՎՍ—2 33)

...εν Τελεπολεια. ενθα ο προφήτης Δανιηλ τὰς οπτασίας εθεάσατο.

...ի Տելեպոլիս, որ Դանիել մարգարէ զտեսիլն ետես.

(SEC 220)

Ինչպես Հայսմավուրքի, այնպես և հայերեն թարգմանության համաձայն, Մելեսը եզրկապտուկում այցելում է ոչ թե Անտոն անապատականի աշակերտ Ամմոնին, այլ հենց իրեն՝ Անտոնին: Այս հատվածում պահպանված է նույնիսկ հունական բնագրի բառերի դասավորությունը.

Հայ. քարգմանություն

Հուն. Հայսմավուրք

...զնաց յԵրուսաղէմ և անտի իջեալ յԱղևքսանդրիա քաղաք և յեզդիպոսս և ետես զմիծն Անտոնիոս զանապատականն.

(ՎՎՍ—2 33)

...ἐλθὼν εἰς Ἱερουσόλυμα καὶ εἰς Ἀλεξανδρείαν πρὸς τὸν μακάριον Ἀντωνιον τὸν γαλιλαῖτον τῆς ἐρήμου.

...զնաց յԵրուսաղէմ և յԱղևքսանդրիա առ Էրանելին Անտոնիոս անապատականն.

(SEC 220)

Պետք է ենթադրել, որ հայերենը հունարենից կատարված բառացի թարգմանություն է: Այդ են վկայում ոչ միայն վերը նշված համեմատությունները, այլ նաև հայ թարգմանչի կողմից հունական բնագրի սխալների կրկնությունը: Օրինակ, երկու բնագրերում էլ Բեթ-Լապատ քաղաքի անունը շփոթված է Մելեսին ձեռնադրող եպիսկոպոսի անվան հետ: Հայերեն թարգմանության բառացիության մասին է խոսում նաև այն փաստը, որ թարգմանիչը պահպանում է նույնիսկ հայ ընթերցողին քաջ հայտնի Տիղբոն քաղաքի անվանման հունական ձևը, սակայն անհարմար-

րությունից խուսափելու համար նա անմիջապես բացատրում է-
«Տիրքսիսիոն ու է Տիսփոն» (ՎՎՍ—2 35):

Հունարենից կատարված հայերեն թարգմանությունը կարելի է թվագրել միայն մոտավորապես: Դատելով լեզվի բնույթից, այս թարգմանությունը պետք է տեղադրել IX—X դարերից հետո, սակայն ոչ ուշ քան XIII դարի սկիզբը, քանի որ նրա հնագույն բնագիրը ընդօրինակված է 1224 թվականին (վենետիկյան Մխիթարյանների № 200 ձեռագիր):

Մեկեսի վարքի հունարեն թարգմանության պատմությունը ունի առաջիմ չլուծված բազմաթիվ խնդիրներ: Ինչպես «Վկայք Արեւելից» ժողովածուի շատ նյութեր, այնպես և Մեկեսի վարքը հունարեն ընդարձակ թարգմանությամբ հայտնի չէ: Սակայն Ա. Վոբուսի կարծիքով, Մեկեսի վարքը գեռես V դարում թարգմանված պետք է լինի հունարեն, քանի որ նրանից օգտվել է Սողոմոնոսը¹¹⁸, Սույն աշխատության մեջ արգեն երկու անգամ նշվել է, որ այս հանգամանքը չի կարող ժողովածուի կամ նրա առանձին բաժինների հունարեն թարգմանության գոյությունն ապացուցել, քանի որ Սողոմոնոսը տիրապետում էր ասորերենին և կարող էր գիմել ուղղակի սկզբնագրին¹¹⁹:

Մեկեսի վարքի հունարեն թարգմանության գոյության խնդիրն ինքնըստինքյան լուծվում է շնորհիվ այն փաստի հաստատման, որ վարքի՝ հայերենով հայտնի տարբերակներից մեկը թարգմանված է հունարենից: Սակայն, դատելով հայերեն թարգմանությունից, պետք է եզրակացնել, որ այս տարբերակի հունական սկզբնաղբյուրը ոչ այնքան աստիճանական բնագրի հարազատ թարգմանությունն է, որքան նրա վերամշակումը:

Ինչպես վերը նշվեց, Բարսեղյան և Կոստանդնուպոլսյան Հայամավորքներում պահպանվել են վարքի երկու համառոտ հունարեն խմբագրություններ¹²⁰: Սակայն այս խմբագրությունները էապես տարբերվում են միմյանցից: Այսպես, ըստ Կոստանդնու-

¹¹⁸ Sht. u. Vööbus, History, p. 217.

¹¹⁹ Sht. u. Devos, Sozomène, p. 444.

¹²⁰ SEC 220—221, ASM 61—62.

սյուլսյան Հայամավորքի, Մելեսին եպիսկոպոս է ձեռնադրում Յդիմաթը, իսկ ըստ Բարսեղյան Հայամավորքի՝ Երզնկայից: Առաջինում Մելեսն այցելում է Անտոնին ('Αντωνιος), երկրորդում՝ Անտոնի աշակերտ Ամմոնին ('Αμμωνιος ιερογυργς 'Αντωνιος): Կոստանդնուպոլսյան Հայամավորքում բացակայում են բաղմաթիվ մանրամասներ, որքան նկարագրվում են Բարսեղյան Հայամավորքում, և առաջինի պատմությունը ծավալով մոտ երկու անգամ փոքր է երկրորդի պատմությունից: Տարբերություններն այնքան նշանակալից են, որ կարելի է ենթադրել, թե Մելեսի վարքը հունարեն է թարգմանվել երկու անգամ, սակայն այդ թարգմանություններից ոչ մեկը ամբողջությամբ մեզ չի հասել:

6. «ՎԱԱՅՔ ԱՐԵՒԵԼԻՅ» ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՀԵՅԵՐԵՆ ԹԱԿԻՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՍՈՐԱԿԱՆ ՆԱԽՈՐԻՆԱԿԻ ԲՆԱԿՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակակից բնագրագիտությունը քննական հրատարակություններ պատրաստելիս ղեկավարվում է արդեն ոչ թե սոսկ ձեռագրական տվյալների արձանագրությամբ, այլ հուշարձանի սկզբնական բնագրի վերականգնման սկզբունքով: Այս տեսակետից կարելիոր նշանակություն են ստանում թարգմանական գործերը, քանի որ նրանք հաճախ հնարավորություն են տալիս վերականգնել այնպիսի նախնական ձևեր, որոնք չեն պահպանվել սկզբնագրի ոչ մի ընդօրինակության մեջ:

Թեև նախօրինակի բնագրական քննության գործում թարգմանության նշանակության մասին շատ է խոսվել, սակայն դա առաջում չի դարձել հասուկ հետազոտության առարկա, և թարգմանության տվյալները այդ նպատակով հաղվադեպ են օգտագործվել: Բնագրագիտության մեջ դեռևս մշակված չեն թեկուզ այն հիմնական սկզբունքները, որոնցով պետք է ղեկավարվել նման աշխատանքի ժամանակ: Ուստի ստորև կատարվող գիտողությունները, որոնք բխում են «Վկայք Արևելից» ժողովածուի ուսումնասիրությունից, կարող են որոշ չափով լույս սփռել այս խնդրի առանձին կողմերի վրա:

Բնագրական ճշգրտումներից առաջ անհրաժեշտ է պարզել թարգ-

մանության բնույթը, որովհետեւ եթե այն ազատ է, ապա հաղիվ թի նրանից կարելի է օգուտ սպասել նախօրինակի բնագիրը վերականգնելու գործում: Իսկ եթե թարգմանությունը ճշգրիտ է, ապա այն մի անգնահատելի միջոց է հետազոտողի ձեռքում՝ սկզբնագրի տվյալները ստուգելու համար: Կարեւոր է նաեւ թարգմանչի սկզբունքների, բնորոշ հակումների, գաղափարամիտվածքի և ոճական նախասիրությունների բացահայտումը: Սա կարող է մեծ շահով օգնել բնագրական համեմատություններում ճիշտ կողմնորոշվելուն:

Բնագրական քննության համար պիտանի են միայն հնագույն թարգմանությունները, որոնք կատարված են հուշարձանի գրվելուց ոչ շատ ժամանակ անց: Այս հանգամանքն ապահովում է թարգմանության մեջ այնպիսի ընթերցվածքների պահպանումը, որոնք տվյալ երկրի ընդօրինակությունների լայն ճյուղավորումից հետո անխուսափելիորեն ենթարկվում են փոփոխությունների: Թարգմանության հնությունը նրան վերապահում է համարյա նույնպիսի արժեք, ինչպիսին ունեն սկզբնագրի լավագույն ընդօրինակությունները¹²¹: Դա նշանակում է, որ եթե թարգմանության ընթերցվածքները համընկնում են սկզբնագրի որեւէ ընդօրինակության ընթերցվածքներին, ապա ավելի մեծ է այս տարբերակների նախասկզբնականության հնարավորությունը, քան մյուս նույնիսկ ավելի հին ընդօրինակություններին: Եթե, օրինակ, բնագրագետի տրամադրությունն տակ դրված է V դարի մի թարգմանություն և սկզբնագրի երեք ընդօրինակություն՝ համապատասխանաբար VII, X և XII դարերի, և որեւէ ընթերցվածքում համընկնում են մի կողմից թարգմանությունն ու ամենաուշ ընդօրինակությունը, մյուս կողմից՝ մնացյալ երկուսը, ապա նախապատվություն պետք է տրվի առաջին տարբերակին:

Երբ թարգմանությունը շեղվում է սկզբնագրի բոլոր ընդօրինակություններից, դեռ այնուամենայնիվ բացառված չէ, որ նա տալիս է ճիշտ՝ նախնական ձևը: Սակայն բնագրագետն այս դեպքում արդեն իրավունք չունի սկզբնագրի ընթերցվածքը փոխարինել

¹²¹ Sté. Duval, *La littérature*, p. 15.

Թարգմանութեան տարբերակով, որովհետեւ վերջինիս նախասկզբնականութիւնը անհնար է ապացուցել: Միայն այն ժամանակ, երբ սկզբնագրի ընթերցվածքը պարզապէս աղավաղված է կամ գտնվում է ուժեղ հակադրութեան մեջ տվյալ հատվածի բովանդակութեան հետ, կարելի է օգտվել Թարգմանութեան ընձեռած հնարավորութիւններէ:

Նախօրինակի բնագրական քննութեան տեսակետից կարելորէ, թէ ինչ ժամանակի են պատկանում Թարգմանութեան ընդօրինակութիւնները: Իհարկէ, որքան հին է ընդօրինակութիւնը, այնքան ավելի շատ օգուտ կարելի է քաղել նրանից: Հին ձեռագրում, բնականաբար, ավելի շատ նախնական ձեւեր են պարունակվում, քան նորում: Սակայն, երբ բացակայում են հնագույն ընդօրինակութիւնները, կորուստը կայանում է միայն վերականգնելովո՞ղ ձեւերի քանակի մեջ, Թարգմանութեան տվյալների արժանահավատութեան վրա այս հանգամանքը խիստ չի ազդում: Ինչպիսի փոփոխութիւններ էլ կրած լինի Թարգմանութիւնը, միևնույն է, ուշ ընդօրինակութիւնների այն ընթերցվածքները, որոնք համընկնում են սկզբնագրի առանձին ձեռագրերի ընթերցվածքներին, ծագում են Թարգմանութեան նախասկզբնական բնագրից: Հարկ է միայն այս դեպքում հաշիւի առնել պատահական համապատասխանութիւնների հնարավորութիւնը:

Թարգմանութիւնը ամենաարդյունավետ օգնութիւնը կարող է ցույց տալ, իհարկէ, այն դեպքում, երբ նրա տարբերցվածքները արձագանք են գտնում սկզբնագրի տառքնէր ընդօրինակութիւններում, և ոչ թէ ամեն անգամ համընկնում են մի որոշակի ընդօրինակութեան ընթերցվածքներին: Սա ինչ-որ չափով նույնպէս կախված է Թարգմանութեան ժամանակից: Երբ Թարգմանութիւնը հին է, ապա այն ընդհանրութիւններ է ունենում ավելի շուտ բոլոր, կամ առնվազն՝ մի շարք, քան որեւէ որոշակի ընդօրինակութեան հետ:

Ինչպէս երևում է նախորդ վերլուծութիւնից, «Վկայք Արեւելից» ժողովածուի հայերեն Թարգմանութիւնը և՛ հնութեամբ, և՛ բնութիւնով լիովին համապատասխանում է նախօրինակի բնագրական քննութեան պահանջներին: Ժողովածուի ստեղծման և հայերեն Թարգմա-

նության իրականացման միջև ընկած ժամանակամիջոցը այնքան կարճ է, որ սկզբնագրի ընդօրինակությունների էական ճշուղավորում չի ենթադրում: Եթե սրան գումարվի նաև հայերեն թարգմանության ճշգրտությունը, մանավանդ, երբ պարզված են նրա առանձնահատկությունները, ապա դժվար թե կարելի լինի գտնել մի ավելի հուսալի աղբյուր՝ սկզբնագրի տվյալները ստուգելու համար:

«Վկայք Արեւելից» ժողովածուի ասորական սկզբնագրի բնագրական բնության գործում հայերեն թարգմանության նշանակության մասին կարող են պատկերացում տալ հետևյալ օրինակները.

ա) Ասորական սկզբնագրի «առէք ձեզ տասն Բաղաբ ի ժառանգութիւն» նախադասությունը հայերեն թարգմանված է՝ «առէք ձեզ տասն Բաղաբ ի ժառանգութիւն» (PS—2 774, ՊՏՄ 138): Առաջին հայացքից թվում է, թե սխալվել է հայ թարգմանիչը, շփոթելով ասորերեն *kakkā* «քանքար» և *karkā* «քաղաք» բառերը¹²², մանավանդ որ նախորդ նախադասության մեջ հիշատակվում է հենց «քանքար» բառը: Սակայն, չնայած դրան, հայերեն թարգմանությունը ավելի մոտ է կանգնած տվյալ հատվածի բովանդակությանը, քան ասորական սկզբնագիրը: Վերոհիշյալ խոսքերով Շմալոն Բար-Սաբբան քաջալերում է նահատակություն ընդունող մահապարտներին, ուստի այստեղ կարող է խոսք գնալ ոչ թե տաս տողանդի (կամ քանքարի) այլ, իհարկե, տաս Բաղաբի՝ երկնային ժառանգության մասին: Հայերեն թարգմանության ընթերցվածքի ճշտությունը հաստատվում է այն բանով, որ նշված նախադասությունը փոքր-ինչ ձևափոխված աստվածաշնչյան մեջքերում է՝ «Լիջիր իշխանութիւն ունել ի վերայ տասն քաղաքի» (Ղուկաս 19, 17):

բ) Շմալոն Բար-Սաբբայի վկայաբանության ասորերեն բնագրի բոլոր ընդօրինակությունները հետևյալ հատվածում տալիս

¹²² Հարկ է նշել, որ լատինական տառադարձությունը չի կարող ճշգրիտ պատկերացում տալ ասորական բառերի գրության նմանության մասին, որովհետև նախ՝ անհնար է հաղորդել նաև տառաձևերը, երկրորդ՝ ինչպես հայտնի է, ասորերենում կարճ ձայնավորները, երկար ձայնավորների մի մասը և բաղաձայների կրկնությունը իրենց պրավոր արտահայտությունը չեն գտնում:

են՝ «Բանգլի դու մեծ ես քան զնա», միայն մի ձևադիր (B) ունի հետևյալ ընթերցվածքը՝ «գիտասջիր», զի դու մեծ ես քան զնա» (PS—2 750): Վերջինիս նախասկզբնականությունը հավաստվում է հայերեն թարգմանությամբ, որտեղ նույնպես «քանզի» բառի փոխարեն դրված է «գիտասջիր» (ԳՏՄ 120): Սկզբնագրի ընդօրինակությունների այս տարրն իրացում էր նույնպես պետք է բացատրել kad «քանզի» և da՝ «գիտասջիր» բառերի թեկուղ խաբուսիկ նմանությամբ:

դ) Parōqā d-‘ālmē «փրկիչն աշխարհաց, մարդկան, ժողովրդոց» ընթերցվածքի փոխարեն սկզբնագրի մյուս ընդօրինակությունները տալիս են՝ Parōqā d-‘ammē «փրկիչն հեթանոսաց», որին համապատասխանում է նաև հայերեն թարգմանությունը (AMS 78, ԳՏՄ 62): Պարզ է, որ ‘ālmē «աշխարհներ, մարդիկ, ժողովուրդներ» բառը չէր կարելի թարգմանել «հեթանոս», ուստի ճիշտ է ‘ammē ընթերցվածքը, որը պետք է սողատակից բարձրացնել հիմնական բնագիր:

դ) Սկզբնագրի «պատուեցի զքեզ խրատու և արդեամբք նախադասությունը հայերեն թարգմանության մեջ դարձել է՝ «պատուեցի զքեզ բանիւք և արդեամբք» (AMS 301, ԳՏՄ 170): Այստեղ նույնպես տվյալ հատվածի բովանդակությանը համապատասխանում է ավելի հայերեն թարգմանությունը, քան ասորերեն բնագիրը, որովհետև նշված խոսքերը բերվում են ի պատասխան հետևյալ պահանջի՝ «ցոյց զսպանող բարսդ քո արդեամբ և մի բանիւք»: Ընդ որում, ասորերեն բնագիրը այս դեպքում արդեն չի տարբերվում հայերեն թարգմանությունից: Դժվար չէ կոհակել, որ նշված շփոթությունը ասորական սկզբնագրում առաջացել է mēlā «բան» և meikā «խրատ» բառերի դրություն նմանությունից:

ե) Mēlā «բան» բառը շփոթվել է նաև մի այլ՝ inertā «թոյն» բառի հետ: Ասեմանու հրատարակած բնագրի «վիրաւորեալ քայնաւն գաշխարհս ամենայն» ընթերցվածքի փոխարեն Բեջանը տալիս է՝ «վիրաւորեալ բանիւք գաշխարհս ամենայն» (ASM 116, AMS 302): Քանի որ Ասեմանու տարբերակը հաստատվում է նաև հայերեն թարգմանությամբ (ԳՏՄ 172), Բեջանի ընտրությունը չի կարող հիմնավորված համարվել:

դ) Ասորերեն «և զնոսա աղաչէին իւրեանց սիրելիքն առնել զարին խաղողոյ» նախադասութեանը հայերեն թարգմանութեան մեջ համապատասխանում է՝ «և զնոսա աղաչէին իւրեանց սիրելիքն ուտել զարին խաղողոյ» (AMS 106, ԳՏՄ 91): Բավական է դիտել այս նախադասութեանը տվյալ հատվածի ամբողջութեան մեջ, որպէսզի պարզ լինի հայերեն թարգմանութեան ճշտութեանը. «Քեզ նեղեցին ուտել միս զոր չէր հրաման ուտել յարինացն, և զնոսա ստիպեցին ուտել արին զոր չէր արէն ուտել: Քեզ հոռոն խրատ սիրելիք քո ուտել զմիս զոր արէն էր ուտել, և ոչ առեր յանձն, և զնոսա աղաչէին իւրեանց սիրելիքն ուտել զարին խաղողոյ զոր էր արէն ուտել՝ և ոչ հաւանեցան» (AMS 106, ԳՏՄ 91): Na'īm n «առնել» և neklīm «ուտել» բառերը նույնպէս կարող են հեշտութեամբ շփոթվել ասորական ձեռագրերում:

Ճշգրտումների այս ցանկը դեռ կարելի է շարունակել և բերել բազմաթիվ նորանոր օրինակներ, որոնք կարող են վկայել ասորերեն բնագրի քննութեան գործում հայերեն թարգմանութեան կարևոր դերի մասին, սակայն նշված փաստերն արդեն բավական պերճախոս կերպով այդ ցույց են տալիս: Ճիշտ է, թարգմանութեան շատ տարրնթերցվածքներ կարող են չհաստատվել քննվող հատվածի բովանդակութեամբ կամ օժանդակ միջոցներով, սակայն բոլոր նրանք արժանի են ուշադրութեան և պետք է հաշվի առնվեն ասորական սկզբնագրի քննական հրատարակութեանը պատրաստելիս:

**«ՎԿԱՅՔ ԱՐԵՒԵԼԻՑ» ԺՈՂՈՎԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՎԱՆ ՇԵՏԱԳԱ
ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. ԹԵԿՎԻ ՎԿԱՅԱՐԱՆՈՒԹՅՈՒՆԸ¹

Վկայաբանության մեջ պատմվում է հետեւյալը: Ադիաբենի կուսակալ Ներսեհ Տամ Շապուհը բռնագրավում է Պաղէ անունով մի հարուստ քահանայի ունեցվածքը և սլայման դնում, որ հարստությունը կվերադարձնի, եթե վերջինս զրադաշտականություն ընդունի: Պաղէն անմիջապէս կատարում է կուսակալի կամքը: Սա, վստահ լինելով քրիստոնյաների հաստատակամության վրա, այդպիսի պատասխան չէր սպասում և չէր էլ ցանկանում, քանի որ նրա համար կարեւոր էր ոչ թե քահանայի հավատաւրացությունը, այլ նրա ունեցվածքի հափշտակումը: Այնժամ Ներսեհը Պաղէին առաջարկում է ևս մի սլայման, թե հարստությունը կվերադարձնի միայն այն դեպքում, եթե նա սպանի հինգ հավատաւոր կանանց՝ Թեկղին, Մարիամին, Մարթային, Մարիամին և Եմեհին²: Նորահավատը կատարում է կուսակալի նաև այս ցանկությունը, տարված իր ունեցվածքը փրկելու մոլուցքով: Ներսեհն, այնուամենայնիվ, չի հրաժարվում իր նպատակից և զաղտնաբար սպանել է տալիս

¹ ASM 123—127, AMS 308—313, ՊՏՄ 189—196:

² Հայերեն Թարգմանության մեջ խոսվում է չորս հավատաւոր կանանց մասին, հավանաբար երկու Մարիամների նույնացման պատճառով: Հմմտ. Տեր-Մինասյան, Հետազոտություններ, էջ 80:

Պառլեմենտին, վախենալով, որ վերջինիս հավատարացության լուրը յհասանի արքային և ինքը կկորցնի հափշտակված հարստությունը: Պետերսի կարծիքով, Թեկղի վկայաբանության մեջ նկարագրված դեպքերը տեղի են ունեցել 347 թվականի սկզբին³:

Թեկղի վկայաբանությունը պատկանում է ադիաբենցի նահատակների սրբախոսական շարքին և նրա ամենահետաքրքիր մասերից մեկն է: Վկայաբանության ասորական սկզբնաղբիրը պահպանված է «Վկայք Արևելից» ժողովածուի և՛ համառոտ, և՛ ընդարձակ խմբագրություններում (համապատասխանաբար՝ վատիկանյան № 160 և դիարբեիրյան № 96 ձեռագրեր): Այս փաստը խոսում է, իհարկե, նրա ծագման հնության մասին, չնայած Թեկղը և նրա ընկերակիցները չեն հիշատակվում ոչ «411 թվականի նահատակների ցանկում», ոչ Սողոմոնոսի «Եկեղեցական պատմության» մեջ (տե՛ս աղյուսակ 4):

Ինչ վերաբերում է վկայաբանության հայերեն թարգմանությանը, ապա հետազոտողների կողմից կասկածի տակ է առնված նրա պատկանելությունն Արրահամ խոստովանողին⁴: Հայերեն թարգմանությունն իսկապես հիմքեր տալիս է նման կասկածի համար, ուստի անհրաժեշտ է այս հարցը մանրամասն քննության ենթարկել:

1) Նախ պետք է բացատրել հայերեն թարգմանության հունական սկզբնաղբյուրի հնարավորությունը, որովհետև բնագրական վերլուծությունը, վերհանելով բաղմամբիվ ասորաբանություններ, ցույց է տալիս, որ վկայաբանությունը հայերեն է թարգմանվել, անկասկած, ասորերենից: Օրինակ, ասորերեն *hēt 'asīre* բառաբարդությունը նշանակում է «ձերբակալվածների տուն», այսինքն՝ բանտ, և հայերեն բանտ բառը ամբողջովին արտահայտում է նրա իմաստը: Սակայն Թեկղի վկայաբանության հայերեն թարգմանության մեջ ասորական այդ բարդության դիմաց ունենք «տուն բանդին» (AMS 313, ՊՏՄ 195): Ասորերենի աղբեցությունը նկատվում է նաև հետևյալ հատվածում.

³ *Sh'w Peeters, Le passionnaire d'Adiabène. p. 275.*

⁴ *Տե՛ս ՊՏՄ, Յառաջարան, էջ XIX. Կյուլեսեյան, Եղիշէ, էջ ԺԵ (հղինակը բերում է Գ. Տեր-Մկրտչյանի կարծիքը անձնական նամակից):*

Յայնժամ սոյն այս անիծեալս և Hayden hū hānā 'awālā wa-brāh d-gehanā...

որդի գեհենին... (ԳՏՄ 190) Յայնժամ նա այս անիծեալս և որդի գեհենին...

(AMS 308)

Թարգմանիչը կրկնում է ասորերեն hū hānā «նա այս» արտահայտությունը երկու նույնիմաստ ցուցական դերանուններով (սոյն այս)՝ սկզբնագրի նախադասության սաստկական երանգը պահպանելու համար:

«Որդի գեհենին» նույնպես ճշտորեն համընկնում է ասորերեն brāh d-gehanā արտահայտության հետ: Սա մի ավելորդ անգամ ցույց է տալիս, որ վկայաբանությունը հայերեն է թարգմանված ասորերենից:

Սակայն Թեղկի վկայաբանության հայերեն թարգմանության ամենաբացահայտ ասորաբանությունը արտահայտված է հետևյալ հատվածում.

Մեզ քաւ լիցի, եթէ յԱստուծոյ Hās lan d-men 'alahan wa-'abudan nestē.

(ԳՏՄ 191) Մեզ քաւ լիցի եթէ զԱստուած զարարիչն մեր (բառացի՝ յԱստուծոյ արարչին մերմէ) ուրանամք.

(AMS 309)

Ուրանամ բայը հայերենում պահանջում է հայցական հոլով, սակայն սովյալ նախադասության մեջ նրա խնդիրը դրված է բացառականով՝ ասորերեն men «ի» նախդրի ազդեցության տակ: Նշված միտքը զրաբարում կարելի էր արտահայտել միայն հետևյալ ձևով. «Մեզ քաւ լիցի, եթէ զԱստուած զարարիչն մեր ուրանամք»:

2) Թեղկի վկայաբանության հայերեն թարգմանությունը մեզ է հասել երկու խմբագրությամբ, որոնք նպատակահարմար է պայմանականորեն կոչել Ա և Բ խմբագրություններ: Ա խմբագրու-

թյունը պահպանվել է Մատենադարանի № 3777 (1185—1188) և վենետիկյան Մխիթարյանների № 201 (XII—XIII դդ.) ձեռագրերում, Բ խմբագրությունը՝ Մատենադարանի № 992 (1651), Երուսաղեմի հայ պատրիարքարանի № 9 (XVI դ.) և № 173 (1512) ձեռագրերում: Երկու խմբագրություններն էլ հրատարակված են Գ. Տեր-Մկրտչյանի կողմից Մատենադարանի (նախկինում՝ Էջմիածնի) ձեռագրերի հիման վրա: Դասիկով ձեռագրական ավանդույթի ավյալներից, Ա խմբագրությունը ավելի վաղ ծագում ունի, քան Բ խմբագրությունը:

Հայերեն թարգմանության վաղ և ուշ խմբագրությունների հիմնական տարբերությունն այն է, որ երկրորդը (Բ) ավելի համառոտ է և աչքի է ընկնում ավելի պարզ և անպաճույճ լեզվով, իսկ վաղ խմբագրությունը (Ա) մոտ է ասորական սկզբնագրին: Կան նաև մի շարք այլ աննշան տարբերություններ, սակայն հիմնականում Ա-ն և Բ-ն միեկնույն խոսքերով վերաբառագրում են վկայաբանության բովանդակությունը: Սա դեռևս չի նշանակում, իհարկե, որ ուշ խմբագրությունը (Բ) անպայման ծագում է վաղագույնից (Ա): Բ-ն պարունակում է առանձին տարրեր, որոնք համապատասխանում են ասորական սկզբնագրին, բայց բացակայում են Ա խմբագրության մեջ: Այսպես, օրինակ.

Ա խմբագրություն

Բ խմբագրություն

Ասոր. սկզբնագիր

Ետում Շապուհ.

(ԳՏՄ 189)

Ներսեհ Տոմ Շապուհ. Narsay Tamsabur.

(ԳՏՄ 189)

(AMS 308)

Ինչպես երևում է, Ներսեհ անունը բացակայում է Ա խմբագրության մեջ, այդ պատճառով վերջինս չէր կարող Բ-ի աղբյուրը լինել: Հետևյալ համեմատությունը նույնպես այդ է վկայում.

Ա խմբագրություն

Բ խմբագրություն

Ասոր. սկզբնագիր

...և տանջել հարիւր հարիւր առն.

(ԳՏՄ 191)

...և միոյ միոյ հարիւր փայտ հարկանել.

(ԳՏՄ 191)

...և տանջեցին զնոսա միոյ միոյ հարիւր փայտ հարկանելով.

(AMS 309)

Պարզ է, որ Բ խմբագրությունն հեղինակը սկզբնազրին համապատասխանող ընդգծված բառերը չէր կարող քաղել Ա խմբագրությունից: Սրանից սակայն չի կարելի եզրակացնել, որ այս խմբագրությունները ասորերենից կատարված անկախ թարգմանություններ են, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նրանք հիմնականում բառացի համընկնում են իրար: Խմբագրությունների համապատասխանությունն այնքան էական է, որ բոլորովին բացառում է կրկնակ թարգմանության հնարավորությունը: Պրանապացույց կարող է ծառայել հետևյալ օրինակը.

Ա խմբագրություն	Բ խմբագրություն	Ասոր. սկզբնագիր
Յայնժամ սոյն այս անիծեալս և որդի զհենին, վասն զի կապեալ էին միտք իւր յիւր աշխարհիս, վաղվադակի փութացեալ արար զկամս նորա:	Յայնժամ անիծեալն այն և որդին զհենին Պօղէ. վասն զի կապեալ կայր միտք իւր յինչը աշխարհիս, վաղվադակի փութացեալ արար զկամս նորա:	Յայնժամ նա այս անիծեալս և որդի զհենին ցանկայր զհարստութիւնս իւր և տենչայր զինչս իւր, զի կիզցի ի նմա (յաւիտեան ի դժոխս՝ Լ. Տ.-Պ.) և արար զկամս (նորա՝ Լ. Տ.-Պ.) ըստ ամենայնի որպէս հրամայեալ էր նմա:
(ԳՏՄ 190)	(ԳՏՄ 190)	(AMS 308)

Ա և Բ խմբագրությունների կապը նույնքան ակնառու է հետևյալ հատվածում.

Ա խմբագրություն	Բ խմբագրություն	Ասոր. սկզբնագիր
Եւ իբրեւ ետես Տում Շապուհ, զի ոչ կարաց բարուրս գտանել ի վերայ նորա և առնուլ զինչըս նորա, խորհեցաւ խորհուրդ շար առանձինն և ասէ ցնա:	Իբրեւ ետես Տում Շապուհ, թէ ոչ կարաց բարուրս գտանել ի նմա և առնուլ զինչս նորա՝ խորհեցաւ խորհուրդ շար առանձինն և ասէ ցնա:	Իբրեւ ետես Տում Շապուհ, թէ ոչ եզիտ պատճառս ի վերայ նորա, զի սպանցէ զնա, խորհեցաւ և ի մտի եդ ասել ցնա:
(ԳՏՄ 190)	(ԳՏՄ 190)	(AMS 309)

Իրարից անկախ թարգմանությունների դեպքում բնագրերի աշխարհի համապատասխանությունը բացարձակապես անհնարին է, քանի որ նշված հատվածները զգալիորեն շեղվում են ասորական սկզբնազրից: Հետևաբար Ա-ն և Բ-ն, հանդիսանալով իրարից

անկախ խմբագրություններ, ծագում են ընդհանուր աղբյուրից, որը Թեկղի վկայաբանության միակ հայերեն թարգմանությունն է:

3) Թեկղի վկայաբանության հայերեն թարգմանությունն աչքի է ընկնում անսահման ազատությամբ: Դրանում առանց լրացուցիչ օրինակների կարելի է համոզվել վերը նշված համեմատությունների օգնությամբ: Թարգմանիչն ավելացնում և բաց է թողնում բազմաթիվ բառեր, վերադասավորում է նախադասությունները, փոխում վերջիններիս կառուցվածքը, հաճախ պարզապես ոչ թե թարգմանում, այլ վերապատմում վկայաբանության բովանդակությունը: Անտեղի կրճատումները երբեմն հանգեցնում են առանձին հատվածների մտքի աղճատմանը⁵: Նույնիսկ աստվածաշնչյան մեջբերումները հայերեն թարգմանության մեջ երբեք չեն էական ձևափոխությունների: Այսպես, օրինակ, թարգմանիչը լրացնում է աստվածաշնչյան ասույթը, որը ասորական սկզբնագրում կիսատ է մեջբերված՝ «Կեր, արբ և ուրախ լեր» նախադասության փոխարեն նա տալիս է. «Անիս բագում բարութիւնս, կեր, արբ և ուրախ լեր» (AMS 313, ԳՏՄ 194)⁶: Մի այլ հատվածում թարգմանիչն ինքն է կատարում աստվածաշնչյան մեջբերում, ելնելով սկզբնագրի բովանդակությունից: Սկզբնագրի «Բայց վայ է մարդոյն, յոյր ձեռն մեք մեռանիմք» նախադասությունը նրան հիշեցնում է ավետարանների հանրահայտ հատվածը, որտեղ ասվում է. «Որդի մարդոյ երթայ որպէս և գրեալ է վասն նորա, բայց վայ է մարդոյն, յոյր ձեռն որդի մարդոյ մատնեսցի» (AMS 311, ԳՏՄ 193)⁷:

Սկզբնաղբյուրի նկատմամբ այսպիսի կամայական վերաբերմունքը, ինչպես ցույց է տրված սույն աշխատության «Հայերեն թարգմանության ընդհանուր բնութագիրը» դրվագում, խորթ է Աբրահամ Խոստովանողին: Բացի այդ.

ա) Թեկղի վկայաբանության հայերեն թարգմանության լեզուն ղզալիորեն տարբերվում է Աբրահամի թարգմանությունների

⁵ Տե՛ս AMS 212, ԳՏՄ 194, տող 89—96:

⁶ Ղուկաս, 12,19:

⁷ Մարկոս, 26,24. Մարկոս, 14,21. Ղուկաս, 22,22:

չեզվից: Այստեղ հանդիպում են Աբրահամի թարգմանությունների համար անսովոր բառեր, արտահայտություններ, դարձվածքներ, ինչպես, օրինակ, դատակնիք (ԳՏՄ 191), բարուր (ԳՏՄ 190), լեռդարեկեմ, ընդելացուցանեմ (ԳՏՄ 194), ածել առաջի իւր (ԳՏՄ 191) և այլն: Վերջին արտահայտության փոխարեն Աբրահամը սովորաբար օգտագործում է ածել ընդ առաջեաւ կամ ածել զառաջեաւ ձևերը (Հմմտ. ԳՏՄ 166, 167):

բ) Ասորերեն *bet 'asirē* բարդությունը (բառացի՝ ձերբակալվածների տուն) Աբրահամ խոստովանողը միշտ թարգմանում է բանդ⁸, իսկ Թեկղի վկայաբանության հայերեն թարգմանության մեջ, ինչպիսի նշվեց, դրա փոխարեն դրված է առն բանդին (AMS. 313, ԳՏՄ 195): Իհարկե, բացառված չէ, որ թարգմանիչը կարող է երբեմն միևնույն բառը արտահայտել տարբեր կերպ, սակայն այդ բանը տեղի է ունենում ընդհանրապես հազվագյուտ բառերի դեպքում: Իսկ սկզբնագրում հաճախակի հանդիպող բառերը, որոնց թվին պատկանում է նաև *bet 'asirē*-ն, սովորաբար թարգմանության մեջ ունենում են իրենց որոշակի համարժեքը:

գ) Ասորերեն *šdal* (կրավ. *ešt(del)*) բայը Աբրահամը նույնպես միշտ, ինչպես նախորդ օրինակում, հաղորդում է մի որոշակի բառով՝ պատրեմ (կրավ. պատրիմ), որը հանդիպում է «Վկայք Արևելից» ժողովածուի հայերեն թարգմանության համարյա բոլոր բաժիններում⁹: Իսկ Թեկղի վկայաբանության թարգմանության մեջ նրան համապատասխանում է դուղակեմ (կրավ. դուղակիմ) բայը¹⁰: Ընդ որում, այս տարբերությունն արդեն ամենևին չի կարելի պատահական համարել, քանի որ դուղակեմ բայը Թեկղի վկայաբանության հայերեն թարգմանության մեջ հանդիպում է երեք անգամ:

դ) «Վկայք Արևելից» ժողովածուի հայերեն թարգմանության բոլոր բաժիններում ուրանամ բայը ճիշտ է օգտագործված՝ հայցա-

⁸ Հմմտ. AMS 256, ԳՏՄ 152. AMS 298, ԳՏՄ 168 և այլն:

⁹ Հմմտ. PS—2 743, ԳՏՄ 116. AMS 300, 301, ԳՏՄ 169, 170:

¹⁰ Հմմտ. Վարդանյան, Ի Վկայսն Արևելից, էջ 288—289:

կան հոլովով ուղիղ խնդրի հետ¹¹, իսկ Թեկղի վկայաբանությանը թարգմանության մեջ այն պահանջում է բացառական հոլովով անուղղակի խնդրի (...Սատուծոյ արարչէն մերմէ ուրանամբ):

Հաշվի առնելով այս նշանակալից տարբերությունները Աբրահամ խոստովանողի թարգմանություններից, պետք է ենթադրել, որ Թեկղի և նրա ընկերակիցների վկայաբանությունը հայերեն է թարգմանված մի այլ և, ըստ երևույթին, ուշ շրջանի հեղինակի կողմից: Նման եղրակացություն ճշմարտացիությունը հաստատվում է այն բանով, որ Թեկղի վկայաբանությունը չի հիշատակվում ժողովածուի հայերեն թարգմանության առաջաբանում¹² և զետեղված է ժողովածուի միայն մի ամբողջական ընդօրինակության մեջ (Մատենադարանի № 3777 ձեռագիր): Մինչդեռ Աբրահամին պատկանող բաժինները անպայման հիշատակվում են առաջաբանում և անպայման ընդգրկվում ժողովածուի հայերեն թարգմանության երկու ամբողջական ընդօրինակություններում (Մատենադարանի № 1522 և 3777 ձեռագրեր): Սակայն մատենագրական տվյալների ներկայիս պայմաններում Թեկղի վկայաբանության թարգմանչի և թարգմանության ժամանակի որոշումը անհնար է լինում: Թեև լեզվի որոշ առանձնահատկություններ հիշեցնում են IX—XII դարերի հայ թարգմանական սրբախոսությունը, բայց դա դեռևս իրավունք չի տալիս վերջնական եղրակացություններ անելու: Կասկած չեն կարող հարուցել միայն երկու փաստ, նախ, որ Թեկղի վկայաբանության թարգմանությունը կատարված է XII դարից ոչ ուշ, քանի որ այն առկա է արդեն նույն դարի ընդօրինակություններում (Մատենադարանի № 3777 և վինետիկյան Մխիթարյանների № 201 ձեռագրեր), երկրորդ, որ թարգմանիչը ծանոթ է «Վկայք Արեւելից» ժողովածուի հայերեն թարգմանությանը, որովհետև նա օգտագործում է Աբրահամ խոստովանողի յուրահատուկ հաւատաւոր և լուսնաթիւ բառերը՝ ասորերեն bat qyāmā և ba-d-sahra բարդությունների դիմաց:

¹¹ Հմմտ. ԳՏՄ 136, 139, 163:

¹² Հմմտ. զլուխ Գ, 1:

Վկայաբանության սկզբում անմիջապես նշվում է, որ դեպքերը առկա են ունենում «մեծ հալածանքների» ժամանակ: Բարդիշու եպիսկոպոսը բռնվում և մահապատժի է ենթարկվում Շապուհ Բ արքայի կողմից: Հերոսի անձնավորության և նահատակության հանգամանքների մասին այլ տեղեկություններ չեն տրվում: Բացակայում են նաև կենցաղային մանրամասները, որոնցով հարուստ են Յազատանդուխտի և Թեկղի վկայաբանությունները: Կառուցված լինելով տեսակին հատուկ կանոններով, Բարդիշույի վկայաբանությունը սրբախոսական զրականության ամենաբնորոշ հուշարձաններից է: Գլխավոր տեղը վկայաբանության մեջ զբաղեցնում է քրիստոնեական ջատագովությունը, որը ծավալվում է Բարդիշույի և Շապուհի երկխոսություններում: Արքան գտվում է զրազաշտական աստվածությունները, Բարդիշուն՝ հակադրում Հիսուս Քրիստոսի մեծությունն ու ամենազորությունը, արքան սպառնում է, Բարդիշուն՝ ծաղրում նրան, արքան տանջանքի է ենթարկում, Բարդիշուն՝ ժպտալով դիմանում տանջանքներին: Նա այնքան հմուտ և համարձակ է վարում հակաճառությունը, որ նույնիսկ խստագույն հարցաքննության ժամանակ նրա քարոզները հասնում են իրենց նպատակին՝ բազմաթիվ «հեթանոսներ» քրիստոնեություն են ընդունում: Զայրացած Շապուհը Բարդիշույի հետ միասին սպանել է տալիս նաև բոլոր նորադարձ քրիստոնյաներին:

Մատենադրական աղբյուրներում տեղեկություններ չեն պահպանվել այն մասին, թե ինչ լեզվով է գրված եղել Բարդիշույի վկայաբանության նախասկզբնական բնագիրը: Ոչ ասորական, ոչ հունա-բյուզանդական գրականություններին ծանոթ չէ անգամ այս եպիսկոպոսի անունը: Որոշակի դժվարությունների հետ է կապված նաև խնդրի լուծումը հայերեն թարգմանության օգնությամբ, քանի որ վերջինս ոչ մի ընդհանրություն չունի Աբրահամ Խոստովանողի թարգմանությունների հետ և բացի այդ, նախօրի-

¹³ ВНО 136, վՎՍ—1 193—199: *St'a* նաև *Тер-Петросян*, Два па-мятника.

նակ լեզվի աղգեցության բացահայտ հետքեր չի նշում: Ուշագրավ է միայն Բարդիշոյ անվան ձևը, որը անկասկած ասորական ծագում ունի: Չնայած վկայաբանության հայկական ընդօրինակություններում հանդիպում են նաև Բարդէս, Բարդիսոյ, Բարդիոյ ձևերը, այնուամենայնիվ նախնական պետք է համարել Բարդիշոյ-ն: Հետաքրքիր է, որ այսպիսի անձնանուն ասորերենում ընդհանրապես վկայված չէ, թեև այն ասորերենի միջոցներով միանգամայն ստուգաբանելի է՝ Bar d-'išo՝ նշանակում է Հիսուսի որդի¹⁴: Նման բացատրությունը բավարար կլիներ, եթե չխանգարեր մի կարևոր հանգամանք: Ասորերենի օրենքներով Bar d-'išo՝ ձևը անձնանուն կարող էր դառնալ միայն այն ժամանակ, եթե կորցնեի ենթակայություն ցույց տվող «d» շաղկապը (nota genitiv), այսինքն՝ եթե դառնար Bar 'išo՝¹⁵: Քերականության լեզվով՝ հատկացական դարձվածքի փոխարինումը շաղկապավոր դարձվածքով, որը սովորական է ասորերենի համար (հմմտ. mal-kā d-Bābel), անձի անուններում ամենևին չի հանդիպում: Ուստի հայերենով վկայված Բարդիշոյ անվան դիմաց ասորերենում պետք է փնտրել մի այլ անձնանուն, որը ամենայն հավանականությամբ. Brīk'īšo՝-ն է: Վերջինս թարգմանվում է Հիսուսից օրհնված և հայերենում վկայված է դեռ V դարից՝ Բրքիշոյ ձևով¹⁶: Ըստ երևույթին այս անվան Բարքիշոյ տառադարձական տարբերակն է, որ քննվող վկայաբանության մեջ դարձել է Բարդիշոյ՝ «բ» և «դ» տառերի դրչագրական շփոթության պատճառով¹⁷:

Սկզբնաղբի լեզվի որոշման համար առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում նաև Բարդիշոյի վկայաբանության հայերեն թարգմանության առաջին նախադասությունը, որը թուղցիկ

¹⁴ Արևմտասորական արտասանությամբ Bar d-'išo՝-ն պետք է կարդալ Bar d-yešū՝:

¹⁵ Ընդ որում, Bar'īšo՝ (= Baryešū՝) անունը բավականին տարածված է ասորիների մեջ:

¹⁶ Հմմտ. Խորենացի, էջ 349, 353. Փարպեցի, էջ 26:

¹⁷ Այսպիսի շփոթությունը բացաված չէ, օրինակ, Բարրաշմենի վկայաբանության մեջ «Ղաղան քաղաք»-ը դարձել է «Ղախան քաղաք»՝ ԳՏՄ 168:

հայացքից աղճատված է թվում. «Յամս Շապհոյ արքայի արար հալածումն սաստիկ» (ՎՎՍ—1 193): Այսպիսի կառուցվածքը կարելի է բացատրել կրկնությունից խուսափելու ձգտումով: Սրանով հանդերձ, այս նախագասությունը շարահյուսորեն սխալ է գրաբարի համար: Այնինչ ասորերենին նախագասության ալտիսի կառուցվածքը ամենևին էլ խորթ չէ, օրինակ, Հովնանի վկայաբանությունը¹⁸ սկսվում է հետևյալ տողերով. «Յամի տասներորդի և ութներորդի թագաւորութեան Շապհոյ պարսից արքայի արար հալածումն սաստիկ» (AMS 39):

Այս երկու փաստերն արդեն բավական են եզրակացնելու համար, որ Բարդիշոյի վկայաբանությունը հայերեն է թարգմանված ասորերենից: Սակայն դրա նկատմամբ կասկածները վերջնականապես ցրվում են շնորհիվ մի այլ, ավելի կարևոր հանգամանքի: Տարբերվելով Աբրահամ խոստովանողի թարգմանություններից շարադրանշանակով, նախագասությունների կառուցվածքով, յուրահատուկ դարձվածքներով, Բարդիշոյի վկայաբանությունը միևնույն այս հատկանիշներով մոտենում է հայ թարգմանական սրբախոսության հուշարձանների մի այլ խմբի: Այս խմբի մեջ մտնում են՝ Մարութա Նփրկերտցու վարքը¹⁹ և Ներսես²⁰ ու Անանուն²¹ արքայորդիների վկայաբանությունները: Բնադրական վերլուծությունը բաղմաթիվ ընդհանրություններ է վերհանում Բարդիշոյի վկայաբանության հայերեն թարգմանության և նշված հուշարձանների միջև: Ընդ որում, համընկնում են ոչ միայն խոսանձին բառեր և բնորոշ արտահայտություններ, այլ նաև ոչ մեծ փոխկապակցված հատվածներ: Այսպես, օրինակ.

Բարդիշոյի վկայաբանությունը

Մառուրայի վաւր

...որք պաշտեն զարարածս և ոչ
զարարիչն որ է օրհնեալ յաւի-
տեանս²². (ՎՎՍ—1 195)

...և պաշտէին զոհիւք զարարածս և
ոչ զարարիչն որ է օրհնեալ յաւիտեանս.
(ՎՎՍ—2 17)

¹⁸ BHO 531, AMS 39—51.

¹⁹ BHO 720, ՎՎՍ—2 17—32:

²⁰ BHO 805, ՎՍՀ—1 360—369:

²¹ BHO 1024, ՎՍՀ—1 369—390:

²² Հմմտ. Լաստիվերտցի, Պատմութիւն, էջ 114. «Ժառայիցին արարածոց, և ոչ արարչին, որ է օրհնեալ յաւիտեանս»:

... և հեռանալ ի բազմաստուած
ծովիկանն մոլորութենէն:

(ՎՎՍ—1 197)

...զի ծանիցեն ամենեքեան, թէ դու
միայն ևս ճշմարիտ Աստուած:

(ՎՎՍ—1 193)

...և ի բազմաստուած մոլորութենէն
մաքրէր:

(ՎՎՍ—2 21)

...և ծանիցեն ամենեքեան, եթէ դու
միայն ևս ճշմարիտ Աստուած:

(ՎՎՍ—2 25)

Կան դեպքեր, երբ առանձին հատվածներ համընկնում են
իրար միանգամից երեք բնագրում, ինչպես.

Բարդիշայի վկայա-
բանությունը

Մարուրայի վարքը

Անանունի վկայա-
բանությունը

... կատարեցան խընդ-
րուածք. (ՎՎՍ—1 197)

...և կատարեաց զամե-
նայն խնդրուածս:

(ՎՎՍ—2 25)

... կատարիչդ ևս խընդ-
րուածոց:

(ՎՍՂ—1 373)

Կամ.

Բարդիշայի վկայա-
բանությունը

Մարուրայի վարքը

Նեբուսենի վկայա-
բանությունը

...որոց անուանք զրեալ
են ի զպրութեան ևե-
նայց²³:

(ՎՎՍ—1 196)

... որոց անուանքն
զրեալ են ի զպրութեան
ևենայց:

(ՎՎՍ—2 31)

... որոց անուանք զրեալ
են ի զիրս զպրութեան
կենայց:

(ՎՍՂ—1 366)

Բնագրերի համեմատությունից սպարդ է դառնում, որ Բար-
դիշայի վկայաբանությունյան հայերեն թարգմանությունը պատ-
կանում է նշված հուշարձանների խմբին²⁴: Հետևաբար, այդ

²³ Հմմտ. Սաղմոս, 69, 29. Յալտնուրիւմ, 20, 15 և 21, 27. Փիլիպպ. 4, 3: Նաև՝
Նիլշէ, էջ 120. Գիրք քղրոց, էջ 8. «Փարսա զը Բեր-Սլոքի ժամանակագրություն»,
AMS 526 և այլն:

²⁴ Ճիշտ է, բերված օրինակների մի մասը պատկանում է քրիստոնեական
դավանաբանության բնագավառին, և ցանկացած սրբախոս կարող էր գրանք
օգտագործել իր երկերում, սակայն այն հանգամանքը, որ նշված դրույթները
այդպես հաճախակի հանդիպում են միայն սրբախոսությունների տվյալ խմբում
և համընկնում են իրար բառացիորեն, անկասկած, վկայում է այդ երկերի
ազգակցական կապի մասին:

Թարգմանությունն իրականացած է մի անձնավորության կողմից, որը միաժամանակ Մարութայի վարքի և Ներսեսի ու Անանունի վկայաբանությունների թարգմանության հեղինակն է: Իսկ Մարութայի վարքի և Ներսեսի ու Անանունի վկայաբանությունների հայ թարգմանիչը հայտնի է: Դա Աղծնիքի Ատոմա վանքի վանահայր Գաղիկ վարդապետն է, որն ապրել է IX դարում: Ըստ տեղեկությունների, Գաղիկը Գրիգոր սարկավազի հետ կապմե է՝ ի պատիվ իր վանքի «Ատոմադիր» կոչված, հայկական առաջին Հայսմավուրբը: Բացի այդ, նա պարապել է նաև սրբախոսական հուշարձանների թարգմանությամբ²⁵: Մարութայի վարքի և Ներսեսի ու Անանունի վկայաբանությունների հայերեն թարգմանության պատկանելությունը Գաղիկին հավաստվում է բնագրերում նրա իսկ թողած հիշատակարաններով: Սրանցից պարզվում է նաև, որ թարգմանությունները կատարված են ասորերենից: Մարութայի վարքի հիշատակարանում նշվում է. «Թարգմանեցաք յասորոյ ի հայ զվկայութիւնս ես հայր Գաղիկ և Գրիգոր սարկաւազ իմ» (ՎՎՍ—231): Իսկ Ներսեսի և Անանունի վկայաբանությունների ընդհանուր հիշատակարանը տալիս է հետևյալ տեղեկությունը. «Ես հայր Գաղիկ թարգմանեցի զպատմութիւնս զայս զորդուոց թագաւորաց երկոցունց յԱսորոց ի մերս» (ՎՎՍ—1 368):

Այսպիսով, կարելի է արգեն ամենայն վստահությամբ նշել, որ Բարդիշոյի վկայաբանության հայերեն թարգմանությունը նույնպես կատարված է ասորերենից, քանի որ Գաղիկը, ինչպես տեսանք թարգմանում էր միայն այդ լեզվից: Այս խնդրի պարզաբանումից հետո ծագում են ուրիշ հարցեր, որոնցից զիստվորներն են՝ Բարդիշոյի վկայաբանության առնչակցությունը «Վկայք Արևելից» ժողովածուի հետ և նրա թվագրումը: Սրանց ի պատասխան ուղղակի տվյալներ չեն պահպանվել, ուստի պետք է դիմել կողմնակի վկայությունների օգնությանը:

²⁵ Գաղիկի մասին տե՛ս Ասողիկ, Պատմութիւն. էջ 160. Ալիշան, Հայապատում, էջ 79. Օրմանյան, Ազգապատում, էջ 982. Անադյան. Անձնանունների բառարան, հ. 1, էջ 431:

Բարդիշոյի վկայաբանութեան և «Վկայք Արեւելից» ժողովածուի նյութերի որոշակի կապի մասին են խոսում նախ և առաջ նրանց բովանդակութեան զլիսավոր տարրերը և կառուցվածքի առանձնահատկութիւնները: Այս առումով հատկապէս կարեւոր է այն հանգամանքը, որ Բարդիշոյի վկայաբանութեան մեջ նկարագրվող իրադարձութիւնները վերաբերում են պարսից քրիստոնեաների «մեծ հալածանքներին» շրջանին: Հալածանքներին նվիրված համարյա բոլոր սրբախոսական նյութերը, ինչպէս դիտենք, V դարի սկզբին Մարութա Նփրկերտացու կողմից ամփոփվում են մի ժողովածուում: Հետագայում, քիչ բացառութեամբ, «Վկայք Արեւելից» ժողովածուն այլեւ չի լրացվում և ընդհանրապէս IV դարի հալածանքներին նվիրված նոր վկայաբանութիւններ չեն գրվում: Ուստի միայն այն փաստը, որ Բարդիշոյի վկայաբանութեան մեջ պատմվում է այդ հալածանքների մասին, արդեն հիմք է տալիս կապ ենթադրել նրա և նույն իրադարձութիւններին նվիրված այլ երկերի միջև: Բացի ընդհանուր նկատառումներից, այս ևն վկայում նաև որոշակի փաստերը: Բարդիշոյի վկայաբանութիւնը աչքի է ընկնում միևնույն այն հատկանիշներով, որոնցով բնութագրվում են «Վկայք Արեւելից» ժողովածուի բոլոր հիմնական բաժինները: Սկզբում տեղեկութիւններ են տրվում համընդհանուր հալածանքների մասին, որին հաջորդում են մեղադրանքի առաջադրումն ու նահատակի ձերբակալութիւնը, ապա բերվում է հարցաքննութեան ամբողջ ընթացքը, տանջանքների նկարագրութիւնը և վերջում՝ համապատասխան բանաձևով հաղորդվում նահատակութեան ամսաթիւը: Գլխավոր տեղը այս հշուտածրային համակարգում պատկանում է հարցաքննութեանը, որը վեր է ածվում սուր դավանաբանական հակաճառութեան՝ վկայաբանութեան հերոսի և դատավորի միջև: Ընդ որում, Բարդիշոյի վկայաբանութեան մեջ օգտագործված են քրիստոնեական ճատագրութեան միևնույն կովանները, որոնցով հակաճառում են «Վկայք Արեւելից» ժողովածուի բոլոր հերոսները: Այդ կովանների թվին են պատկանում, օրինակ, հետեւյալ գրույթները. «յամենեցունց արարչէն արարան. զի նա ասաց և եղեն ամենայն արարածք»

(ՎՎՍ—1 193)²⁶, «ես զտարերս աստուած ոչ գիտեմ» (ՎՎՍ—1 193)²⁷, «մի աստուածութիւն և զօրութիւն» (ՎՎՍ—1 193)²⁸, «անվախճան թագաւորութիւն» (ՎՎՍ—1 193)²⁹, «ես ուրանամ զսնոտի աստուածս ձեր, այլ ոչ զճշմարիտն Աստուած» (ՎՎՍ—1 193)³⁰ և այլն:

Հաշվի առնելով նշված փաստերը, պետք է ենթադրել, որ Բարդիշոյի վկայաբանությունը, եթե նույնիսկ չի գրված «Վկայք Արևելից» ժողովածուի կազմի մեջ մտնող երկերի հեղինակների կողմից, այնուամենայնիվ հանդիսանում է միևնույն գրական միջավայրի և ավանդույթի ծնունդը:

3. ԱԿԵՓՍԻՄԱՅԻ, ՀՈՎՍԵՓԻ ԵՎ ԱՅԹԱԼԱՀԻ ՎԿԱՅԱՐԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ³¹

Վկայաբանությունը նվիրված է «մեծ հալածանքների» վերջին հալտնի ղոհներին և հանդիսանում է «Վկայք Արևելից» ժողովածուի եզրափակիչ բաժինը: Ադիաբենցի հոգևորականներ Ակեփսիման, Հովսեփը և Այթալահը երեք տարվա բանտարկությունից հետո մահապատժի են ենթարկվում 379 թվականին: Ակեփսիմա Լախսկոսոսը մեռնում է կոտանքների տակ, իսկ Հովսեփ քահանային և Այթալահ սարկավագին աշխարհի կուսակալ Շապուհ Տամ Շապուհի հարկադրանքով քարակոծում են տեղի քրիստոնյաները³²:

Վկայաբանությունը կազմված է առաջաբանից, հիմնական մասից և վերջաբանից: Առաջաբանը սովորական ճառ է՝ նվիրված նահատակների մեծարմանը և նրանց առաքինությունների փառաբանությանը: Հիմնական մասում մանրամասն պատմվում է հարցաքննությունների, շարչարանքների, նահատակների և դատա-

²⁶ Հմմտ. AMS 300, տող 5. ԳՏՄ 169, տող 92:

²⁷ Հմմտ. AMS 257, տող 18. ԳՏՄ 153, տող 88—89:

²⁸ Հմմտ. AMS 255, տող 15. ԳՏՄ 151, տող 33—34:

²⁹ Հմմտ. AMS 256, տող 12. ԳՏՄ 152, տող 55:

³⁰ Հմմտ. AMS 257, տող 18. ԳՏՄ 153, տող 88—89:

³¹ ASM 171—203, AMS 351—396, PO—2 478—557, ԳՏՄ 197—236:

³² Վկայաբանության հանգամանից վերլուծությունը տվել է Պետերսը (տե՛ս Peeters. Le passionnaire d'Adiabène, pp. 289—298):

վորենքի անձնավորութեան մասին, ինչպես միշտ, նկարագրվում է վերջիններիս միջև ծագած վիճաբանությունը, որը հարուստ է արժեքավոր պատմական տեղեկություններով և հակաճառության սրամիտ հնարանքներով: Վերջապահը վերաբերում է ոչ այնքան տվյալ վկայաբանությանը, որքան ողջ «Վկայք Արեւելից» ժողովածուին: Հեղինակն այստեղ կարևոր տեղեկություններ է հաղորդում ժողովածուի կազմի և իր օգտագործած աղբյուրների մասին:

Աղեփսիմայի, Հովսեփի և Այթալահի վկայաբանությունը «Վկայք Արեւելից» ժողովածուի երկրորդ բաժինն է՝ Թերբուի վկայաբանության կողքին, որ պահպանվել է միաժամանակ երեք լեզվով՝ ասորերենով, հունարենով և հայեբենով: Ավելին, ինչպես հաղորդում է Պետերսը, գոյություն ունի նաև վկայաբանության վրացական մի խմբագրություն, որը թարգմանված է հունարենից³³:

Աղեփսիմայի, Հովսեփի և Այթալահի վկայաբանության ասորական սկզբնագիրը ընդգրկված է «Վկայք Արեւելից» ժողովածուի բոլոր ամբողջական ընդօրինակություններում, ինչպես նաև մի շարք այլ ասորական ձեռագրերում (տե՛ս աղյուսակ 1):

Շատ ավելի հարուստ ձեռագրական ավանդույթով է ներկայացված վկայաբանության հունարեն թարգմանությունը: Բավական է հիշեցնել, որ միայն Հ. Դեյլայի հրատարակության մեջ օգտագործված է տասնչորս ընդօրինակություն: Սրանք հրատարակչի կողմից բաժանված են չորս խմբի և ներկայացված որպես վկայաբանության հունարեն թարգմանության առանձին խմբագրություններ: Ընդօրինակությունները խմբավորված են հետևյալ կերպ. առաջին խմբագրություն՝ K. վատիկանյան № 1669 ձեռագիր, H. վատիկանյան № 866 ձեռագիր, G. փարիզյան № 1468 ձեռագիր. երկրորդ խմբագրություն՝ N. փարիզյան № 1519 ձեռագիր, B. Վիեննայի № 5 ձեռագիր, L. օքսֆորդյան № 68 ձեռագիր, D. վատիկանյան № 807 ձեռագիր, Q. փարիզյան № 1537 ձեռագիր. երրորդ խմբագրություն՝ C. օքսֆորդյան № 43 ձեռագիր, V. փենսիլվանյան № 349 ձեռագիր. չորրորդ խմբագրություն՝ T. փարիզյան № 1481 ձեռագիր, X. փարիզյան № 1020 ձեռագիր, Y.

³³ St^en Peeters, Le passionnaire d'Adiabène, pp. 296–297.

փարիզյան № 1487 ձևագիր, Շ. փարիզյան № 1522 ձևագիր³⁴։ Սակայն այս բաժանումը զուտ բնագրական է և չի արտացոլում վկայաբանության հունարեն թարգմանության գրական ավանգույթի իրական սլաակերը։ Ակնհայտ է ինչպես առաջին և երկրորդ, այնպես էլ երրորդ և չորրորդ խմբագրությունների միջև եղած ծագումնաբանական կապը։ Այնպես որ, գրական տեսակետից մենք գործ ունենք միայն երկու իրարից հստակ տարբերվող խմբագրությունների հետ։ Առաջինը (ըստ Դեկայնի՝ առաջին-երկրորդը) վկայաբանության հարադաժ թարգմանությունն է ասորերենից, երկրորդը (ըստ Դեկայնի՝ երրորդ-չորրորդը)՝ այդ թարգմանության մետափրաստյան վերամշակումը։ Ակեփսիմայի, Հովսեփի և Այթալահի վկայաբանության հունարեն թարգմանությունը ճշտորեն համապատասխանում է ասորական սկզբնագրին, հասկապես վկայաբանության հիմնական մասում։ Առաջաբանը բավականին կրճատված է, իսկ վերջաբանը բոլորովին բացակայում է։

Ակեփսիմայի, Հովսեփի և Այթալահի վկայաբանության հայերեն թարգմանությունը մանրամասնություններով տարբերվում է և՛ ասորական սկզբնագրից, և՛ հունարեն թարգմանությունից։ Առկա են բաղմամբիվ հավելումներ և բացթողումներ, անձնական մեկնաբանություններ և սրբագրություններ, ինչպես նաև մի շարք այլ շեղումներ նշված բնագրերից։ Օրինակ, հայերեն թարգմանության մեջ պակասում է վկայաբանության և՛ առաջաբանը, և՛ վերջաբանը։ Նրա համառոտ ներածականը³⁵ չի համընկնում ոչ ասորական սկզբնագրի, ոչ հունարեն թարգմանության առաջաբանին։ Բացի այդ, հայերեն թարգմանության մեջ վկայաբանությունը բաժանված է երկու մասի, առաջին՝ Ակեփսիմայի վկայաբանություն, երկրորդ՝ Հովսեփի և Այթալահի վկայաբանություն³⁶։ Սակայն, չնայած այս բոլոր տարբերություններին, նկատելի է,

³⁴ SL^u PO—2 414—418. նաև՝ գլուխ Ա, աղյուսակ 3։

³⁵ ԳՏՄ 197—198, տող 1—32։

³⁶ ԳՏՄ 197—216, 217—236։ Հայերեն թարգմանության առաջին մասն ավարտվում է Ակեփսիմայի մահվամբ, հմմտ. AMS 374։

որ հայերեն թարգմանությունը նկարագրվող դեպքերի հաջորդականությունը և նախադասությունների հերթագայությունը հետևում է հունարեն բնագրին: Այս հանգամանքը, բնականաբար, դեռևս բավական չէ պնդելու համար, որ Ակեփսիմայի, Հովսեփի և Այթալահի վկայաբանությունը հայերեն է թարգմանված հունարենից, քանի որ բացառված չէ դեպքերի միևնույն հաջորդականություն և նախադասությունների միևնույն հերթագայություն ունեցող որևէ ասորերեն բնագրի գոյություն հնարավորությունը: Ուստի դարձանալի չէ, որ տվյալ հարցի շուրջ հայագիտության մեջ հայտնվել են իրարամերժ կարծիքներ: Առաջինը Նորայր Բյուզանդացին է, որ ելնելով ոճական առանձնահատկությունների զնահատումից, կասկածի տակ է առել վկայաբանության հայերեն թարգմանության պատկանելությունն Աբրահամ խոստովանողին, առանց սակայն շոշափելու նախօրինակ լեզվի հարցը³⁷: «Վկայք Արեւելից» ժողովածուի հայերեն թարգմանության հրատարակչի՝ Գ. Տեր-Մկրտչյանի կարծիքով, Ակեփսիմայի, Հովսեփի և Այթալահի վկայաբանությունը թարգմանված է հունարենից և այն էլ «համեմատաբար շատ ուշ» շրջանում³⁸: Հակառակ նշված կարծիքներին, Ա. Վարդանյանը պնդում է, որ «հայ բնագիրը հուստարմօրէն կը հետևի ասորի բնագրին և կը պահէ դեռ Աբրահամ խոստովանողին ինքնատիպ լեզուին կնիքը, ուր չկայ ոչ մեկ հետք յունաբանութեան»³⁹: Իսկ հայերեն թարգմանության և ասորական սկզբնագրի տարբերությունները նա բացատրում է «անխիղճ ընդօրինակողի մը» միջամտությամբ, որը իբր խիստ փոփոխություն է ենթարկել հայերեն թարգմանության նախասկզբնական բնագրիը⁴⁰: Ըստ Ե. Տեր-Մինասյանի, հայերենը թեև բառացի չի համընկնում հունարեն բնագրին, այնուամենայնիվ, թարգմանված է հունարենից, որի մասին վկայում են հատուկ անունների ձևերը⁴¹: Տեր-Մինաս-

³⁷ Տե՛ս Բյուզանդացի, Քննասէր, էջ 52:

³⁸ Տե՛ս Կյուլեսերյան, Նդիշէ, էջ ԺԵ (հեղինակը բերում է Գ. Տեր-Մկրտչյանի կարծիքը անձնական նամակից):

³⁹ Վարդանյան, Ի Վկայան Արեւելից, էջ 272:

⁴⁰ Տե՛ս նույն տեղում:

⁴¹ Տե՛ս Տեր-Մինասյան, Հետազոտություններ, էջ 83:

յանը համադրում է հետևյալ անունները. Ակեփսիմա-հուն. 'Axeψ:μαζ-ասոր. 'Aqebšmā, Այիթալայ-հուն. 'Aε:ψαλζ-ասոր. 'Aytalāhā, Ադրաֆուսիթ, Ուրաֆաւ կամ 'Էսֆոֆաւ-հուն. 'Aḡṛa-γῶσφι կամ 'Aḡṛa-γῶσφ-ասոր 'Adorkūrkašid կամ 'Adarkūrkašār, Դերաֆուր-հուն. 'Aḡṛa-γῶσφ-ասոր. 'Adaršabur, Զիրուդ-հուն. Շարօն-ասոր. Zārādhušt, Դանդուլ-հուն. 'Izdaxdun-ասոր. Yazdandukt⁴², Ելնեկով այս համեմատությունից, Ե. Տեր-Մինասյանը եզրակացնում է. հատուկ անունների նման ձևերը հայերեն բնագրում կարող էին ի հայտ գալ միայն հունարենից թարգմանվելու դեպքում, սակայն նա հնարավոր է համարում, որ «նրանցից մի քանիսը կարող էին նաև հետազայում հունացման ենթարկված լինել»⁴³: Այս վերջին վերապահումը բավականին իջեցնում է հատուկ անունների համեմատության արժեքը, և հօգուտ հունական սկզբնագրի բերած փաստարկներից ամենահամոզիչը մնում է հետևյալը. հայերեն թարգմանության մեջ մարերի աշխարհի ասորական անվանումը հունարեն բնագրի միջնորդությամբ դարձել է Դաթիդմադան (ասոր. 'atra d-māday կամ 'atrā d-bēt māday, AMS 371): Հունարեն թարգմանության համապատասխան տեղում ունենք «ε:ζ πατριδα Βηθμαδαν» (PO—2 522): Հայ թարգմանիչը «πατρι-δα բառի վերջին վանկը կարդացել է հաջորդ բառի հետ, և այսպիսով ստացվել է ձա-Βηθμαδαν ձևը:

Վարդանյանի և Տեր-Մինասյանի աշխատությունները լույս են տեսել միաժամանակ՝ 1922 թվականին, ուստի, բնականաբար, հեղինակները հնարավորություն չեն ունեցել ծանոթանալ հակադիր կարծիքներին և ժխտել կամ ընդունել դրանք: Բացի այդ, Տեր-Մինասյանն ինքը դեռ լրիվ համոզված չէ, որ Ակեփսիմայի, Հովսեփի և Այթալահի վկայաբանությունը թարգմանված է հունարենից, պարզապես նա այդ համարում է «ավելի հավանական»⁴⁴: Այս հանգամանքը պահանջում է ավելի մանրամասն քննել վկայաբանության հայերեն թարգմանության սկզբնագրի լեզվի հարցը:

Բացի Տեր-Մինասյանի նշած օրինակներից, Ակեփսիմայի, Հովսեփի և Այթալահի վկայաբանության հայերեն թարգմանության

⁴² Նույն տեղում, էջ 83—84:

⁴³ Նույն տեղում, 83:

⁴⁴ Նույն տեղում, էջ 85:

մեջ կան նաև այլ, և ավելի կարևոր, պարագաներ, որոնք վկայում են, որ թարգմանությունն իսկապես կատարված է հունարենից: Դրանք, առաջին հերթին, բառապատճենումներն են: Օրինակ, բանտապան բարդությունը հունարեն *θεσπεσιος* բառի ճշգրիտ պատճենն է (ԳՏՄ 222, PO—2 527): Ասորերեն *rabb bet 'asirē* բառակապակցությունը (AMS 379) հայերենում պետք է զանաք բանտապան: Իսկ բանտապան իմաստն արտահայտելու համար ասորերենում օգտագործվում է պարզապես *naṭrā* բառը, որը ասորերենից կատարված թարգմանություններում միշտ վերարտադրվում է հայերեն պահապան բառով:

Հայերեն թարգմանության ամենամալարիշտ բառը նույնպես ստեղծված է հունարեն *ἄσπετος* բառի նմանակությամբ, որը *ἄσπετος* ածականի գերադրական աստիճանն է (ԳՏՄ 203, 207, PO—2 519, 520): Ասորերենում ածականի գերադրական աստիճանը հատուկ քերականական ձևավորում չունի: Այն կազմվում է սովորաբար նկարագրական եղանակով, ինչպես, *rašī' men kul naš* և հայերենում ունի իր համարժեքը՝ «ամալարիշտ քան զամենայն մարդիկ»:

Հայերեն թարգմանության հունական սկզբնաղբյուրի վկայությունն է նաև հետևյալ օրինակը: Ըստ հայերեն թարգմանության, Ահեփսիմայի ձերբակալությունը տեղի է ունենում «չերեֆհարիր-րորդի և թնեռորդի յամի հալածանաց մերոց» (ԳՏՄ 198), մինչդեռ ասորերեն և հունարեն բնագրերը տալիս են *ba-šnat tlātīn wa-šba' da-rdūpyan* և *ἑνὶ τῷ τριακοντῷ καὶ ἐβδόμῳ ἐτεῖ τῶν βασιλέων ἡρώδου...*, այսինքն՝ «չերեսներորդի և թնեռորդի յամի հալածանաց մերոց» (AMS 361, PO—2 517): Հայ թարգմանիչը սխալվել է հունարեն *τριακοντὸς* «երեսներորդ» և *εβδόμῳ* «չերեֆհարիրորդ» բառերի գրությունն նմանության պատճառով: Ասորերենից թարգմանության դեպքում այդպիսի սխալի հավանականությունը անհամատ ավելի փոքր է, քանի որ *tlātīn* «երեսուն» և *tlātmā* «չերեֆհարիր» բառերը հստակորեն տարբերվում են իրարից:

Հունարեն բառերի գրության նմանությունից է բխում նաև հայերեն թարգմանության հետևյալ սխալը: Ասորերեն և հունարեն բնագրերի «ես հրամայեցիք բժշկաց» նախադասության փոխարեն (*pāqed nā l-'aswātā* և *καλεῖω ἰατροῦς*-AMS 377, PO—2 526)

հայերեն թարգմանությունը տալիս է «ես կոչեցից բժիշկս» (ԳՏՄ 220): Հայերեն թարգմանության այս շեղումը բացատրվում է հունարեն $\chi\epsilon\lambda.\epsilon\acute{\iota}\omega$ «հրամայում եմ» և $\chi\alpha\lambda.\epsilon\omega$ «կանչում եմ» բառերի նմանությամբ: Մինչդեռ ասորերեն $pāqed nā$ բայը չի կարելի շփոթել $qārē nā$ բայի հետ:

Եվ վերջապես հետևյալ հատվածը այլևս ոչ մի կասկած չի թողնում, որ Ակեփսիմայի, Հովսեփի և Այթալահի վկայաբանության հայերեն թարգմանությունը կատարված է հունական նախօրինակից.

Հայ. քարգմանություն	Հուն. քարգմանություն	Ասոր. սկզբնագիր
...բահանայն Յովսէփի ի գեղջէն, որ կոչի Բիթլաթուբա, որ քարգմանի Գևալ Դպրաց.	...Ἰωσήφ ...περὸ τῆς ἐρημίας ἀπὸ τοῦ γένους Βεϋθλὰθ οὐζῆα, ἐρημ- τῆς ἐρημίας καὶ τῆς Κἀλὴ γῆρας. (PO-2 519)	Yausep qašišā d-Bēt Kātūbā qritā. Յովսէփ բահանայն ի Բեթ- թաթուրա գեղջէ. (AMS 265)

Ընդգծված ծանոթագրությունը ասորական սկզբնագրում բնականաբար բացակայում է, քանի որ ասորի ընթերցողի համար ավելորդ կլիներ հիշատակվող տեղանվան ստուգաբանությունը: Մինչդեռ նրա առկայությունը հայերեն և հունարեն թարգմանություններում միանգամայն անհրաժեշտ և տրամաբանական է: Սա, իհարկե, դեռևս չի խոսում հայերեն և հունարեն թարգմանությունների կապի մասին, քանի որ հայ թարգմանիչը կարող էր նաև ինքնուրույնաբար Bēt Kātūbā-ն թարգմանել «Գեաղ Դպրաց»: Սակայն Բիթ-լ-աթուրա ձևը մատնում է, որ այս անունը հայերենին է անցել այնուամենայնիվ հունարեն թարգմանության միջնորդությամբ:

Այսպիսով, նշված փաստերն անառարկելիորեն ապացուցում են, որ Ակեփսիմայի, Հովսեփի և Այթալահի վկայաբանության հայերեն թարգմանությունը կատարված է հունարենից: Ավելին, բնագրերի համեմատությունը նույնիսկ հնարավորություն է տալիս պարզել, թե որոշակիորեն որ հունական նախօրինակից է կատարված հայերեն թարգմանությունը: Վերջինս ակնհայտորեն համապատասխանում է վկայաբանության առաջին հունական խմբագրության (ըստ Դեկայեի՝ առաջին-երկրորդ) DLQ ընդօրինակու-

ԱՎԱՐՏ

Մեր ձավոր Արևելքի քրիստոնյա ժողովուրդները միջնադարում միավորված էին տնտեսական, քաղաքական և մշակութային սերտ կապերով: Այդ պատճառով տեղական միջավայրից ծագող ցանկացած նշանակալից հասարակական և մշակութային երևույթ իր արտացոլումն էր գտնում նաև հարևան ժողովուրդների կյանքում: Սա առանձնապես ցայտուն կերպով դրսևորվում է գրականության բնագավառում, այն աստիճան, որ ժամանակակից բանասիրության մեջ նույնիսկ ստեղծվել է Արևելքի քրիստոնեության ընդհանուր գրականություն հասկացությունը: Հունա-բյուզանդական, ասորական, հայկական, վրացական, ղպտական, եթովպական և քրիստոնյա-արաբական գրականությունների համար ընդհանուր էին ոչ միայն տեսակային առանձնահատկությունները, գեղարվեստական չափանիշները և գաղափարական հիմքերը, այլ նաև նրանց գործնական նպատակներն ու խնդիրները: Սրանով չի բացասվում, անշուշտ, նշված գրականությունների ինքնատիպությունը: Անհնար է անտեսել, օրինակ, ասորական գրականության կրոնա-դավանաբանական բնույթը, հայ գրականության ընդգծված հայրենասիրությունը և աշխարհիկ շունչը, քրիստոնյա-արաբականի՝ ապաղզային բովանդակությունը և այլն: Սակայն բնորոշը նրանց համար ոչ թե տարբերությունները, այլ ընդհանրություններն էին, որոնք առաջացել էին կյանքի միևնույն պայմանների թելադրանքի և փոխազդեցությունների միջոցով: Պատահական չէ, որ առանձին գրականությունների նշանավոր գործերը թարգմանության շնորհիվ դառնում էին այս միասնական մշակութային միջավայրի բոլոր ժողովուրդների սեփականությունը:

Հայ հին գրականության խնդիրների շարքում իր նշանակու-

թյամբ չափազանց կարևոր տեղ է գրավում հայ-ասորական մշակութային առնչությունների հարցը: Բյուզանդական մշակույթի դերը հայ ինքնուրույն գրականության զարգացման գործում, հունաբան դպրոցի կազմավորումն ու գործունեությունը բավականին մանրամասն քննված են Ն. Ադոնցի, Հ. Մանանդյանի և այլոց աշխատություններում¹: Դժբախտաբար, նույնը չի կարելի ասել հայ-ասորական հարաբերությունների ուսումնասիրման մասին: Հայագիտությունն առաջժմ ի վիճակի չէ պատասխանելու այն հարցին, թե հայ մշակույթի ո՞ր տարրերն են ծագում ասորականից: Բացառություն են կազմում միայն լեզվաբանական տվյալները, որոնց համաձայն՝ զրաբարում հաշվվում է մոտ երկու հարյուր ասորական փոխառություն²: Իրենց լուսաբանությունն են ստացել նաև հայ-ասորական եկեղեցական հարաբերությունները՝ Ն. Տեր-Մինասյանի արժեքավոր մենագրության մեջ³: Ինչ վերաբերում է հայ-ասորական գրական կապերին, ապա աչտաեղ շատ բան դեռևս հիմնվում է միայն ենթադրական դատողությունների վրա: Սա պետք է բացատրել, ըստ երևույթին, այն պատճառով, որ առաջժմ ասորա-հայ թարգմանական գրականության հուշարձանները հատուկ ուսումնասիրության առարկա չեն դարձել: Մինչդեռ սրանից է կախված ընդհանրությամբ հայ-ասորական բանասիրության հետագա զարգացումը: «Վկայք Արևելից» ժողովածուի հայերեն թարգմանության ուսումնասիրությունը ցույց է տալիս նման հետադրությունների կարևորությունը և հեռանկարայնությունը, քանի որ ասորական գրականության դասական շրջանի համարյա բոլոր գործերը հնում թարգմանված են հայերեն: Կարելի է նշել, օրինակ, Ափրահատի, Ծփրեմ Ասորու, Իսահակ Անտիոքացու, Հակոբ Սրճեցու, Ինչպես նաև ասորական մշակույթի մի շարք այլ ականավոր ներկայացուցիչների հրկասիրությունները:

¹ Адонц, Дионисий Фракийский, 1915. Մանանդյան, Յունաբան դպրոցը, 1928. Մուրադյան, Հունաբան դպրոցը, 1971:

² Տե՛ս Աճառյան, Լեզվի պատմություն, էջ 331—355:

³ Տեր-Մինասյան, Հայոց եկեղեցու յարաբերությունները, 1908:



РЕЗЮМЕ

Агиографический сборник Маруты Майферкатского, условно названный в армянской филологии «Восточные мученики», является одним из наиболее ранних произведений сирийской литературы (начало V в.). Свободный от существенных внешних влияний и от строгих рамок канонизированных сюжетных схем, он представляет большой интерес для изучения истоков беллетристических жанров в сирийской литературе. Сборник имеет также ценность редкого и очень важного источника по социально-политической истории Ирана IV в. Эти достоинства обеспечили ему широкую популярность на всем Ближнем Востоке. Материалы сборника Маруты Майферкатского разбросаны почти по всем восточным и греко-латинским синаксариям. Кроме того, в древности были сделаны также его полные переводы на армянский и греческий языки. Армянский перевод выполнен в 454—463 гг. Авраамом Зенакаи Исповедником. Обстоятельства греческого перевода еще не выяснены.

Изучение агиографии в современной науке охватывает два основных аспекта—*филологический*, который включает критику текста, определение литературных источников, анализ языка и стиля произведений, и *исторический аспект*, затрагивающий вопросы идентификации действующих исторических лиц, хронологии, исторической географии, социальных и бытовых отношений и т. д.

Текстологическое изучение сборника Маруты Майферкатского имеет свою историю, однако сопоставительный анализ сирийского оригинала и армянского перевода с привлечением

данных греческой версии, проводится впервые. Как показывает опыт предшествующих работ, наилучшее решение филологических проблем, возникающих при изучении памятников средневековых литератур Ближнего Востока, обеспечивается именно при таком сопоставительном анализе разноязычного материала. Народы, населявшие этот регион, были объединены тесными экономическими, политическими и культурными связями. Поэтому любое более или менее значительное социально-экономическое и культурное явление, исходившее из какой-либо местной традиции, находило свое отражение и в жизни соседних народов. Это особенно ярко проявилось в литературе, притом настолько, что позволяет говорить о существовании в некоторой степени общей христианской литературы на Ближнем Востоке. Общими для греко-византийской, сирийской, армянской, грузинской, коптской и эфиопской литератур были не только жанровые особенности, художественные критерии и идеологические основы, но и их практические цели и задачи. Кроме того, почти все выдающиеся произведения отдельных литератур благодаря переводам древних мастеров становились достоянием всех народов этой единой культурной среды. Поэтому изучение памятников литератур Ближнего Востока изолированно, без учета общих для всех литератур явлений, не только обедняет результаты исследований, но и нередко порождает ошибочные выводы и теории. Лучшей тому иллюстрацией является история изучения сборника Маруты Майферкатского. Предшествующие работы, как правило, ограничивались либо изучением отдельных разделов и циклов сборника, либо отдельных его версий. Всесторонний подход к материалам сборника дает возможность решить многие вопросы, остававшиеся ранее неясными и для сирологов, и для арменистов.

В первую очередь следует отметить значение армянского перевода для восстановления первоначального состава сборника. Решение этой проблемы одним только данными сирий-

ской письменности почти не возможно, так как оригинал сборника представлен двумя редакциями, значительно отличающимися друг от друга по объему. Армянский перевод и греческие источники позволяют определить примерный круг тех агнографических памятников, которые существовали еще в начале V в., и следовательно, могли войти в первоначальный состав сборника Маруты Майферкатского. Роль армянского перевода при восстановлении первоначального состава сборника этим еще не ограничивается. Более важным его достоинством является то, что он сохранил два интереснейших раздела сборника (мартирии Иаздандухт и Бардишо), оригиналы которых утрачены. В армянском переводе сохранилась также утраченная часть сирийского оригинала гомилетического предисловия к сборнику, отличающаяся ценными сведениями по социально-экономической истории сасанидского государства.

